



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտահաջործված է «Մտեղծագործական համայնքեր
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա կյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2679

85
F - 43



2011

85
F-43

EL 7

ԱԽՎԻԾ ԲԵԼԼԻՔԾ

Բ Ա Ն Տ Տ Ք Ի Մ


ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Ա. ԻՒԹԻՒԺԵԱՆ

Հ Յ Ո Ւ Ա Ն Ի Մ Ա Ս Ի Մ Ա Ր Ա Ր Ո Յ Ո

ԶԻՒԴԻ Ի Ա Յ

1 8 6



35711-4. L.



19001-59

R

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԹԱՐԴԱՌԱՆ ԶԻՒՆ

Դարուս Եւրոպական մատենագրաց դասուն մէջ նշանաւոր տեղ մը բռնած է Ախլիքի Բէլիքո Խոտալացին՝ իր այս ընտիր գործովը :

Հայրենասիրութեան կենդանինահատակ, իր կենաց ամեննէն գեղեցիկ օրերուն եւնոր սկըսած գրագիտական համբաւի մը փառաւորյուներուն մէջէն յանկարծ յափչտակուելով տասնամեայ դժնդակ բանտարկութեամբ կը տառապի, եւ, իր այս երկարատեւ չարչարանաց պատմութիւնը կը գրէ՝ գողարիկ բայց վսեմ պարզութեամբ, առանց տրտունջ մը բերնէն հանելու իր դատապարտողացը դէմ, առանց իր դահճներն անիծելու եւ առանց վրէժիւնդրութեան զզացում մը սրտին մէջ տածելու : Ընդ հակառակն, կրած անըմբերելի տառապանքը սրտին բարոյական կրթութեամը ծառայեցընելով . կրօնի ու վիլիառիայութեան մէջ կը

ՀԱԿԱՋՈՎԱՑ

ՃՎՃԱՐՔԻՑ

դանէ իր միախթարութիւնը , եւ անանկ սքանչելի համբերատարութեան ու անյիշաչարութեան օրինակ մը կընծայէ , որուն նմանը քըրիստոնէութեան առջի դարերուն մէջ միայն տեսնուած է :

Այսպիսի ընտիր գիրք մը՝ որ Եւրոպական ամեն լեզուներու թարգմանուած է եւ ամեն տարի միլիոնաւոր օրինակ կը տպուի , մինչեւ հիմա շատոնց պէտք էր մեր լեզուին ալ թարգմանուած ըլլալ : Այս պակասը մննք փորձեցինք լեցընել՝ ընթերցասէր ազգայնոց դոյզն ծառայութիւն մը մատուցանելու բաղձանքով . եւ կը յուսանք որ մեր այս բաղձանքը ներելի կընէ մեր թարգմանութեան թերութիւնները , եթէ ներուելու չափ թեթեւ դատուելու բաղդնուննան Ազգիս դրագիտացը առջեւ :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

Աւս յիշատակադիրները արդեօք
ինձի համար խօսելու ունայն քաղձանքո՞վ
մը դրեցի : Կը յուսամ թէ այնպէս չէ . Եւ
որչափ մէկը կրնայ ինքզինք դատել , կը
հաւատամոր աւելի աղնիւ նպատակ մը ու-
նեցած եմ . այն է՝ դժբաղդին օդնութիւնը
նել՝ կրած վլուտերս եւ ամենամեծ դժբաղդու-
թեանց մէջ անգամ դտած միսիթարութիւն-
ներս անոր ցուցընելով . — վկայել որ իմ երկար
տառապանացս մէջ՝ մարդկութիւնը սովորա-
բար ցոյց տրուածին չափ անիրաւ , ներողա-
մուութեան անարժան եւ վեհ հոգիներէ զուրկ
չդտայ . — հրաւիրել աղնիւ սիրտերը որ չա-

անն զմարդիկ՝ այլ սիրեն, բայց անհաշտ ա-
տելութեամբ՝ հալածեն անարդ ստախօսու-
թիւնը, վատասրառութիւնը, նենդաւորութիւ-
նը, մէկ խօսքով որ եւ է բարոյական վատթա-
րութիւնները . — Կրկնել սա ծանօթ՝ բայց յա-
ճախ մոռցուած ճշմարտութիւնը . « Կրօնքն
» ու վիլխոտիայութիւնը զօրաւոր կամք եւ
» հանդարա դատողութիւն կը պահանջեն
» մենէ . առանց այս երկու պայմաններուն
» ոչ արդարութիւն կընայ ըլլալ, ոչ արժա-
» նապատութիւն եւ ոչ հաստատուն ոկրղ-
» բոնք :

PUSHR UP



ԳԼՈՒԽՆ Ա.

1820 հոկտեմբեր 15 ուրբաթ օրը Միլանի մէջ բռնուեցայ ու. Ամսթա Մարկերիթա տարուեցայ : Կէս օրը երեք ժամ՝ անցած էր : Երկար հարցաքննութիւն մը ըրին խնծի այն օրը մինչեւ իրիկուն եւ ուրիշ օրեր ալ : Բայց ասոր վրայօք բան մը չպիտի ըսեմ . սիրուհին հարստահարեալ տարփաւորի մը պէս՝ որ ազնուաբար ոխ կը պահէ անոր դէմ՝ ես ալ քաղաքականութիւնը ուր էնէ հոն կը թողում եւ ուրիշ բանի վրայ կը խօսիմ :

Այն ձախորդ ուրբաթին իրիկունը ժամը
իննին՝ ոստիկանութեան դիւանադպիրը դիս

* Cum G. papaemerg.

բանուալետին յանձնեց . ան ալ ինծի յառ
կացեալ սենեալը զիս տանելով՝ քաղաքա-
վարութեամբ առաջարկեց որ ժամացոյցս ,
ստակս եւ գրպանիս մէջ ինչ որ ունէի իրեն
յանձնեմ՝ ժամանակին Նորէն ինձի տրուելու-
ալայմանաւ . Յետոյ յարդանօք բարի գիշեր
մաղթեց ինծի :

« Կեցի , սիրելիս , ըսի . ես այսօր ճաշ չեմ
ըրած . քիչ մը ուտելիք բերել տուէք ինծի :

— Հիմա . պանդոկին հոս մօտ է , եւ ովհատի
տեսնէք , պարոն , ի՞նչ պատուական գինի :

— Գինի՞ , չեմ խմեր :

Այս պատասխանիս վրայ Ախնօր Անձիո-
վինօ* ապէեցաւ ու երեսս նայեցաւ յուսալով
թէ կատակ կընէի : Բանտապետները որ գի-
նետուն կը բոնեն՝ գինի չխմող բանտարկ-
եալները սաստիկ կատեն :

— Ստուգիւ չեմ խմեր :

— Կը ցաւիմ վրանիդ . միայնութիւնը
ձեզ՝ լլրկնապատիկ սվիտի վշտացընէ . . .

Եւ տեմնելով որ մտքիս վրայ հաստատ
եմ , դուրս ելաւ : Կէս ժամ չանցած՝ ճաշս
եկաւ : Քանի մը պատառ կերայ , դաւաթ մը
ջուր խմեցի , ու զիս մինակ թողուցին :

* Բանտապետին անունն է :

Սինեակո գետնի հաւասար էր եւ բակին
վրայ կը նայէր։ Մէկ քովս բանտ , միւս քովս
բանտ , վրաս բանտ , զիմացս բանտ։ Պատու-
հանին վրայ կը թնած՝ քիչ մը ժամանակ պա-
հապաններուն երթեւեկը եւ ոմանց բան-
տարկելոց կատաղի երդերը մտիկ ըրի։

Կը մտածէի . — Ասկէց դար մը առաջ այս
տեղ կուսանաց վանք էր . հոս բնակող սուրբ
եւ ասլաշխարող կոյսերը կրնայի՞ն երբէք ե-
րեւակայել թէ իրենց խուցերն այս օրուան օրս
չէ թէ կանացի, հեծութիւններով ու սաղմու-
երգութիւններով պիտի հնչէին, այլ հայհոյու-
թիւններով ու ամօթալի երգերով, եւ թէ ամեն
տեսակ մարդիկ պիտի պարունակէին՝ շատը
շղթայի կամ դլխատութեան սահմաննեալ։
Ասկէց դար մը ետքն ալ ո՛վ դիտէ ո՛վ սլիտի
բնակի այս խուցերուն մէջ . Ո՛վ արագաստ-
հութիւն ժամանակի . ո՛վ մշտնջենաւոր շար-
ժականութիւն իրաց . Չեզ նկատով կը նայ՝
թախծիլ թէ որ բաղդը իրեն ժաղակէ դաղըի ,
թէ որ բանտի մը մէջ թաղուած է , թէ որ
կախաղան ելլելու վաճնգի մէջ է . Երէկ աշ-
խարհի ամենէն երջանիկ մահկանացուներէն
մէկն էի ես . այսօր՝ զիս կենաց կապող քաղց-
րութիւններէն մէկն ալ չունիմ . ոչ աղատու-
թիւնունիմ, ոչ կարեկից բարեկամներ եւ ոչ

յոյս : Այս , անվսելքութիւնէ յուսալը . ևս
հոսկէ չպիտի դուրս ելեմ՝ բայց եթէ առա-
ւել սոսկալի բանտերու մէջ ձգուելու կամ
դահճի ձեռքը մատնուելու համար : Ուրեմն
իմ մահուանս հետեւեալ օրը ես պալատի մը
մէջ վախճանած եւ վառաւոր յուղարկաւո-
րութեամբ դերեզման տարուած մարդէ մը
տարբերութիւն չունիմ : -

Ժամանակի վախուստին վրայ ըրած այս մը-
տածութիւններս՝ սիրտս կը զօրացընէին . Բայց
երբոր միտքս եկան հայրս , մայրս , երկու եղ-
բայրներս , երկու քոյրերս , եւ ուրիշ ընտա-
նիք մը որ խմբնիս պէս կը սիրէի , փիլիսոփա-
յական խորհրդածութիւնները չկրցան ուժ
ունենալ վրաս : Աիրտս ելաւ եւ տղու մը պէս
լացի :

ԳԼՈՒԽԻ Բ .

Երեք ամիս առաջ Թուրինո դացեր , եւ
բազմամեայ բաժանումէ մը ետեւ նորէն տե-
սեր էի սիրելի ծնողքս , եղբայրներէս մէկը

Եւ երկու քոյրերս։ Անը ընտանիքը միշտ շատ
կը սիրէին իրար։ Զաւակ մը չկայ որ իր հօր-
մէն ու մօրմէն ինձմէ աւելի բարիք տեսած
ըլլայ։

Ո՞հ, այն պատկառելի ծերունիներն այս
անդամ տեսած ատենա ո՛րչափ սիրտս ելաւ։ Երբ
երեւակայածէս աւելի ծերացած դտայ զա-
նոնք։ Ո՛րչափ կուզէի այն ժամանակը որ մէկ
մ'ալ չթողում զանոնք եւ իմ ամենն փոյթս ա-
նոնց ծերութիւնն ախովնիլու նուիրեմ։ Ո՛րչափ
դժուարս կուզար երբ Թուրինօ կեցած մէկ
քանի օրերուս միջոցին՝ պարտականութիւններ
կատարելու համար հայրենի յարկէն կը հե-
ռանայի, որով խիստ քիչ ժամանակ կը մը-
նար ամենասիրելի ծնողացս հետ կենակցելու։
Խեղճ մայրս դառն տիրութեամբ մը կըսէր.
«Ո՞հ, մեր Ախլիլոն մեզ տեսնելու համար ե-
կած չէ Թուրինօ»։ Այն առաւօտուն որ Թուրի-
նօէն Ախլան վերադարձայ, բաժանումնիս խիստ
արտմագին եղաւ։ Հայրս կառք նատաւ ու մը-
ղոն մը տեղ ինձի ընկերացաւ։ Ետքը մինակ
ետ դարձաւ։ Ետեւս կը դառնայի զինքը
տեսնելու համար։ կուլայի, եւ մօրս ինձի
տուած մասնին կը համբուրէի։ Այն աստիճան
սաստիկ արտմութիւն երբէք զգացած չունէի
ծնողքէս հեռացած ատենա։ Առանց հառա-

տալու նախազգացմանց՝ կը դարմանայի որ
տրամաւթեանս չէի կրնար յաղթել, եւ սոս-
կալով կըսէլք . « Ի՞նչ է այս կարդէ դուրս
անձկութեանս պատճառը » : Ինձի կը թուէր
թէ ապագայ մեծ դժբաղդութիւն մը կ'զգայի :

Հիմա բանտին մէջ կը յիշէի այն զարհու-
րանքն ու անձկութիւնը : Կը յիշէի երեք տ-
միս առաջ ծնողացս ինձի ըսած ամենէն մանր
խօսքերը : Մօրս սա տրամունջը թէ՝ « Ո՞հ, մեր
Աիլիիօն մեղ տեսնելու համար եկած չէ թուրի-
նօ՝ » կը ծանրանար սրտիս վրայ : Ինքինքն կը
մեղադրէի որ հաղարապատիկ աւելի դորով չեմ
ցուցցած անոնց : Զիրենք ո՞քափ կը սիրեմ,
ու ո՞քափ պաղութեամբ զրուցեցի այս խօսքը
իրենց : Զիրենք յաւխտեան չպիտի տեսմէի ,
ու իրենց սիրելի դէմքերը յագենալու չափ
չնկատեցի , եւ սիրոյս նշաններն յայտնելու
այնչափ ժլատութիւն ըրի : — Այս մասնու-
թիւնները կը տանջէին հոգիս :

Պատուհանը լիակեցի , եւ ժամ մը ստր-
տեցայ սեննեկիս մէջ՝ կարծելով թէ զիշերն ի
ըստն չպիտի հանդէի : Ետքը պառկեցայ ու
խոնջութենէս քունս տարաւ :

ԳԼՈՒԽ Գ.

Բանտի մէջ առաջին դիշերն արթնալը
սոսկալի բանէ : « Ըլլալիք բա՞նէ , կըսէի ևս
ինծի , ուր ըլլալս յիշելով , ըլլալիք բա՞նէ .
Ե՞ս հոս : Երազ չէ՞ արդեօք : Բայց վերջապէս՝
երէկ էր որ բռնուեցայ . երէկ էր որ այն երկար
հարցաքննութիւնը ինծի եղաւ , որ վաղն ալ
պիտի շարունակուի . եւ մինչեւ ե՞րբ . մարդ
չդիտէ : Երեկ իրիկուն էր ուրեմն որ նաջելէս
առաջ այնչափ լացի՝ ծնողքս միտքս բերելով :

Հանգիստը , խորին լուռութիւնը , կարճ
քունը՝ մտքիս զօրութիւնը կազդուրելով
տրամութեանս ուժն ալ հարիւրապատիկ ա-
ւելցուցած կերեւէին . Միտքս դրազեցընող
ուրիշ բան չգտնուելով , անհաւատալի ազ-
դուռութեամբ մը երեւակայութեանս առջեւ
կը նկարուէր իմ ամեն սիրելիներուս մանա-
ւանդ հօրս ու մօրս զգալիք սաստիկ ցաւը՝ երբ
իմ բանտարկութիւնս իմանային :

Հիմա դեռ հանգիստ կը քնանան , կըսէի
ևս ինծի , կամ թերեւս նստեր զորովանոք զիս
կը մտածեն՝ առանց ուր ըլլալս կասկածելու .
Երանի՝ թէ զժբաղդութեանս լուրը թու-

ըմնո չհասած՝ Աստուած վերցրներ զանոնք
աշխարհէս։ Ո՞վ պիտի զօրութիւն տայ անոնց՝
այս հարուածիս դիմանալու։»

Ներսէս ձայն մը դիտես թէ կը պատաս-
խան էր։ «Ան որ ամեն վշտացեալներն օգնու-
թեան կը կոչեն, ան որ կը սիրեն եւ իրենց
սրտին մէջ կըզգան, ան որ զօրութիւն կու-
տար մօր մը իր որդւոյն ետեւէն Գողգոթա-
երթալու եւ անոր խաչին տակը կենալու, ան
որ դժբաղդներուն բարեկամն է, մահկանաց-
ուած ըարեկամն է։»

Այս առաջին վայրկեանն եղաւ ուր կրօն-
քը սրտիս յազթեց։ այս ըարիքը որդիական
սիրոյս արդիւնքն էր։

Մինչեւ այն ժամանակը՝ առանց թշնամի
բլլալու կրօնքի՝ քիչ եւ դէշ կը հետեւէի ա-
նոր։ Այն հասարակ առարկութիւնները՝ որ
կրօնի դէմ մարտընչողներուն սովորական դէն-
քերն են՝ մեծ կշիռ մը չունէին իմ աչքիս,
բայց հաղար կերպ սովուստական տարակոյա-
ներ հաւատքս կը տկարացընէին։ Արդէն կր-
կար ժամանակէ ՚ի վեր Աստուծոյ դոյութեա-
նը վրայ երկմտելէ դադրածէի, եւ անդադար
կըսէի մտօքս որ եթէ Աստուած կայ, անոր ար-
դարութեան հարկաւոր հետեւանքն է որ այս
անիրաւ աշխարհիս մէջ տառապող մարդուն։

համար հարկաւ ուրիշ կեանք մը պիտի ըլլայ .
ասկէ բնականարար կը ծաղի այս երկրորդ
կեանքին բարութեանցը բաղձալու բացար-
ձակ պատճառը . ասկէ կը ծաղի Աստուծոյ եւ
ընկերին սիրոյն վրայ հիմնեալ բարեպաշտու-
թիւն մը եւ վեհանձնական զոհերով ինքզինք
ազնուացընելու անընդհատ պէտքը Արդէն
երկար ժամանակէ 'ի վեր ասոնք կը յիդյեղէի
մտացն մէջ եւ կը յաւելցընէի . «Ե՞նչ է քրիս-
տոնէութիւնը՝ եթէ ոչ մշտնջենաւոր ձդում
մը 'ի կատարելութիւն . եւ կը զարմանայի որ
քրիստոնէութեան էութիւնն այսպէս անա-
րատ , այսպէս փփլխառիայական եւ այսպէս
անմարտընչելի կերպով յայտնուելէ ետեւ ,
ժամանակ մը գայ ուր փիլխառիայութիւնը հա-
մարձակի ըսելութէ « այսուհետեւ ես անոր
տեղը պիտի անցնիմ : -Եւ ի՞նչպէս պիտի անց-
նիս , մոլութիւն սովորեցընելով . անշուշտ ոչ .
այլ առաքինութիւն ուսուցանելով : Ուրեմն
Աստուծոյ եւ ընկերին սէրը պիտի սովորեցը-
նես . ուրեմն ճշդիւ քրիստոնէութեան սով-
որեցուցածը պիտի սովորեցընես : »

Թէպէտ եւ այս էր իմ զգացումն շատ տա-
րիներէ 'ի վեր , այսու ամենայնիւ և զրակացը-
նելէ կը խորշէի : «Արդարախոհ եղիր ուրեմն .
քրիստոնեայ եղիր . ա'լ մի գայթակղիլ զեդ-

ծումներէ . ա'լ մի դոքծածեր չարամառութիւնը եկեղեցւոյ վարդապետութեան մէկ քանի դժուար հասկընալի կէտերուն վրայ . վասն զի դլսաւոր կէտար սա է եւ առկէ աւելի դըրական բան մը չկայ . « Աիրէ զԱստուած եւ ընկերու »²³

Այս եզրակացութիւնն հանելը վերջապէս բանտին մէջ որոշեցի , եւ ըրի . Այսու ամենայնիւ կը վարանէի մտածելով թէ հիմա առաջուանէն աւելի կրօնասէր ըլլալս խացողները իրաւոնք կը դանեն՝ զիս կեղծ բարեպաշտ եւ դժբաղդութեամբ նուաստացեալ մարդ մը համարելու . Բայց զգալով որ ես ոչ կեղծաւոր էի եւ ոչ նուաստացեալ , միտքս դրի որ ա'լ բանի տեղ չդնեմ այս կերպ կշտամբանքները , եւ առաջադրեցի քրիստոնեայ ըլլալ եւ հրատարակել զիս այսուհեան .

ԳԼՈՒԽ Դ .

Այս առաջադրութեանս վրայ՝ ժամանակ անցնելէ ետեւ կրցայ անխախտ կենալ . բայց բանտարկութեանս առաջին զիշերն սկսայ

մտածել տառը վրայ եւ վերոցիշեալ որոշումն ընել : Առառան դէմ դաղափարներս աւելի հանդարս էին եւ դարմացայ այս բանին : Տակաւին ծնողացո եւ ուրիշ սիրելիներուն վրայ կը խորհեի , բայց անոնց հողւոյն զօրութեանը վրայ ա'լ չէի յուսահատեր , եւ ուրիշ պարագաներու մէջ անոնց վրայ դտած վեհանձն զգացումներս միաժքս ընթելով կը մխիթարուեի :

Խնչո՞ւ համար քիչ մը յառաջ այնչափ խոռվեր էի՝ անոնց կրելիք մտատանջութիւնը մտածելով , եւ հիմա այսչափ վստահութիւն կունենամ անոնց արխութեանը վրայ : Ասանկ գոփոխութիւն մը հրա՞շք էր արդեօք , կամ Աստուծոյ նոր հաւատալուս բնական արդասի՞քն էր : — Հրաշք կամ ոչ , ինչպէս կուզեն անանկ թող կոչեն կրօնքին վսեմ եւ սայդ բարերարութիւնը :

Կէս զիշերին երկու պահապան զիս նայելու եկեր ու խիստ տխուր դտեր էին : Առաւօտուն նորէն եկան ու զիս հանդարս ու դուարի՛ դտան :

« Այս գիշեր , Պարոն , քարբի դէմք ունէիք , ըստ Թիրօլա* , հիմա բոլորովին ուրիշ կը տեսնեմ ձեզ եւ ուրախ եմ : Ասի նշան մ'է որ

* Պահապաններուն մէկո՞ն անունն է :

դուք աւազակ չէք . ներեցէք այս խօսքիս . վասն զի այն տեսակ մարդիկը (ես հին ըլլալով այս արհեստիս մէջ դիտղութիւններս կրնան կշիռ ունենալ) իրենց բանտարկութեան երկրորդ օրն աւելի կը կատղին . Ընչախոտ կը քաշէք : — Սովորութիւն չունիմ , բայց չեմ մերժեր ձեր հրամցուցածը : Խակ ձեր ըրած դիտողութեանը գալով , ներեցէք ինձ ըսելոր ձեզի պէս խելացի երեւոյթ ունեցող մարդու խօսք չէ : Թէ որ ևս այս առաւօտ գիշերուան պէս քարրի դէմք չունիմ , այս փոփոխութիւնն անհոգութեան կամ մօտաւոր աղատութիւն մը երազելու եւ ինքողինքս յուսով խարելու նշան մը չկրնա՞ր համարուիլ :

— Թերեւս կը հաւատայի ատոր , Պարոն , եթէ դուք ուրիշ սպատճառներու համար բանտարկուած ըլլայիք , բայց տէքութեան գործերու համար՝ այս օրուան օրս հնարաւոր չէ մտածել թէ ձեր բանտարկութիւնը մէկէն 'ի մէկ կրնայ լմննալ . եւ դուք ալ ատանի պատիր յուսով մը խարուելու չափ պարզամիտ չէք : Ներեցէք , ընչախոտ մ'ալ կը քաշէք :

— Տուէք : Բայց ի՞նչպէս ատանի դըռարթ դէմք մը կրնայ ունենալ մէկ մարդ մը որ յարաժամ դժբաղդներու մէջ կապրի :

— Պիտի կարծէք անշուշտ թէ ուրիշ

վշտայը անզգայ ըլլալէ յառաջ կուղայ . շիտակը ըսելով ես ալ հաստատութեամբ չեմ զիտեր . բայց կը հաւաստեմ ձեղ թէ շատ անդամ սիրտս կը կտրտի երբոր մէկուն լալը կը տեսնեմ . ուստի երբեմն ինքզինքս զուարթ կը ձեւացընեմ որպէս զի խեղճ բանտարկեալներն ալ ծիծաղեցընեմ :

— Բարեկամ , միտքս խորհուրդ մը կուղայ որ եկած չէր երբէք , այն է թէ մէկ մարդ մը կրնայ բանտապանի արհեստը բանիլ ու խիստ բարի մարդ ըլլալ :

— Արհեստը բան մը չըներ , Պարոն . Սա կամարէն անդին՝ որ բակին միւս ծայրը կը տեսնէք՝ ուրիշ բակ մը եւ ուրիշ բանտեր կան՝ ամենն ալ կանանց յատկացեալ : Հոն բանտարկեալ կանայքը . . . դիւրաւ կը հասկընաք . . . անառակ կիներ են : Արդ , Պարոն , մէջերնին անանկներ կան որ սրտի կողմանէ հրեշտակներ են . եւ թէ որ դուք բանտապան ըլլայիք . . .

— Ե՞ս . » եւ խնդացի բարձրաձայն :

Թիրոլա շիտթեցաւ մնաց եւ խօսքը նլումընցուց : Թերեւս կը մտածէր որ ես բանտապան ըլլայինէ դժուար կըլլար ինծի այն թըլշուառ կիներէն մէկուն վրայ սէր չձգել :

Հարցուց թէ ի՞նչ կուղէի նախաճաշի

համար : Յետոյ դուրս ելաւ եւ քանի մը
վարկեան ետքը խահուէ բերաւ :

Ուշաղըութեամբ երեսը կը նայէի խորա-
մանկ ժաղիտով մը որ ըսել կուզէր . « Ինձմէ
տումսակ մը կը տանի՞ք ուրիշ տարաբաղդ
բանտարկեալի մը , իմ Բիէռօ բարեկամիա : »
Թիրօլա ալ ուրիշ ժաղիտով մը պատասխանեց
ինձ , որ կը նշանակէր . « Ոչ , Պարոն , եւ թէ
որ ընկերներուս մէկուն առանկ բան մը
առաջարկէք եւ ան ալ հաճի , զգուշացէք որ
ձեզ չմատնէ :

Հաւաստի չեմ բոլորովին իրարու միտք
հասկըցած ըլլանուս վրայ . Սա միայն զիտեմ
որ տասն անգամ պատրաստուեցայ կաոր մը
թուղթ եւ մատիտ մը իրմէ խնդրելու , եւ
չհամարձակեցայ . վասն զի աչուրներուն մէջ
բան մը կար որ կը թուէր թէ ինձի աղդարա-
բութիւն կընէր մէկու մը չվստահելու , մանա-
ւանդ իրմէ ուրիշի բնաւ երբէք



անուշը ես ուր ու մարդունց եւ անցութէ^ւ
առաջ սկզբանի, մի ճանու ով պայծ ու անցութէն
առաջանալու ով պայծ մարդունց օհու ըստ

Նթէ Թիրօլա ցուցըցած բարեսրտու. Ենանը հետ այնպիսին նկատոր նայուածք մը չունենար, թէ որ իր դիմաց գծագրութիւնն աւելի աղնուակերպ եղած ըլլար, անշուշտ կը համարձակէի զանի գեսազան ընելու ինձի, եւ թերեւս սոսմասակ մը կը դրկէի բարեկամիս, որ յարմար ժամանակին ձևոքը համելով կարող կըլլար իր ըրած մէկ անփո՞նեմութիւնը դարմանելու, եւ թերեւս կընար աղատել, չէ թէ զինքը, որովհետեւ արդէն խեղճը չափազանց պլըտկած էր, ոյլ ուրիշ շատ ոնձինք, ինչպէս նաեւ զիս :

Բայց համբերութիւնն ։ Առանկ պիտի ըլլայ եղեր ։

Զիս կամ շեցին հարցաքննութիւնս շաբունակելու, եւ այն օրը մինչեւ իրիկուս եւ ուրիշ քանի մը օրեր տեսեց՝ միայն ճաշի ժամանակները դուրս հանելով,

Այս հարցաքննութեան ժամանակ՝ օրեւ-
րը շուտով կանցնէին ինձի համար, այնչափ,
միտքս զբաղած էր անհատնում պատասխան-
ներ դանելու դանագան վայրենոց, եւ ճա-



շերում ժամանակն ու իրիկուըներն ալ ինձի
հարցուած բաներուն եւ տուած պատաս-
խաններուս վրայ կը մտածէի , ինչպէս նաեւ
այն ամեն կէտերուն վրայ որ հաւանականա-
բար տակաւին պիտի հարցուէին ինձի :

Առաջին շարթուն վերջը ձախորդ դէպք
մը պատահեցաւ որ դիս շատ վշտացուց խեղճ
թիէոս բարեկամս փափաքելով ինձի պէօ որ
հաղորդակցութիւն մը մէջերնիս հաստատէ ,
տոմսակ մը գրեր ու ինձի զրկեր էր՝ չէ թէ
պահապաններուն մէկուն ձեռօք՝ այլ դըժ-
բաղդ բանտարկեալի մը՝ որ մեր սենեակնե-
րուն մէջ ծառայելու կուգար պահապաննե-
րուն հետ . Վաթուուն-եօթանասուն տարե-
կան մարդ մըն էր՝ չեմ գիտեր քանի՛ ամիս
բանտարկութեան դատապարտեալ :

Վրաս դանուած դնուասեղով մը մատ-
ներուս մէկը ծակեցի , արիւնովս քանի մը
տող պատասխան գրեցի եւ այն տոմսակը
բերող մարդուն տուի : Դժբաղդաբար խեղճը
դիտուելով բոնուեցաւ , տոմսակը վրայէն
դանուեցաւ , եւ եթէ չեմ սխալիր՝ չարաչար
ծեծ կերաւ : Լալու աղաղակ մը լսեցի եւ ինձի
այնպէս եկաւ որ այն դժբաղդ ծերունիին
ձայնն էր . ալ անկէ ետեւ մէկ մ'ալ չտեսայ
զանի :

Ատեանը կանչուելով սարսափեցայ երբ
ինձի ցուցըցին գրած տոմսակս , եւ գոհութիւն
Աստուծոյ որ մէջը մնդի համար վտանգաւոր
բանմը չկար , այլ պարզ ողջունի պէս բան մըն
էր : Հարցուցին ինձի թէ ինչո՞վ հաներ էի ար-
խնա . գնտասեղս առին եւ ծիծաղեցան վրանիս
որ ասանկ ինքինքնիս ձեռք առւինք : Բայց
ես , ո՞հ , չէի ծիծաղեր . ու քիո առջեւն էր
միշտ ծեր թղթարերը Յօժարութեամբ յանձն
կառնուի պատժուիլ անոր տեղը , եւ երբ ա-
նոր լալուն ձայնը լսել կարծեցի , սիրաս ար-
տասուօք լցուեցաւ :

Քանի մը անգամ փուճ տեղը լուր հար-
ցուցի անոր համար բանտապետին եւ պահա-
պաններուն : Գլուխնին թոթուելով կըսէին .
« շատի եղաւ անոր . . . ալ մէկ մ'ալ շկրնար
ընել . . . հիմա քիչ մը աւելի հանդիսատ է : »
Ասկէց աւելի բան մը չէին հասկըցըներ :

Առդեօք ըսել կուզէին թէ ողորմելին նեղ
բանախ մը մէջ արդիլուած էր . կամ թէ դա-
ւազանին տակը կամ կերած ծեծին ցաւերուն
շիմանալով մնոե՞ր էր :

Օր մը ինձի այնպէս թուեցաւ թէ բակին
անդիի . կողմը կամարին ներքեւ զանի տե-
սայ՝ կընակը փայտ բեռցած : Աիրուս թնտաց
որպէս թէ եղբայրս էր տեսածո :

Երբոր հարցաքննութեանս չարչարանքը
վերջացաւ եւ օրերս դրաւող զբաղմունքը
չմնաց, այն ժամանակը առանձնութեան ծան-
րութիւնը դառնապէս դդացի :

թէպէտ թոյլ արուեցաւ ինծի Աստուածաշունչ մը եւ Տամնթէ մը քովսուննալու . եւ բանտապետն ալ հաճեցաւ որ ուղած գիրքս առնում իր գրքատունէն, որուն մէջ Սրուտէրիի ու Բանձնիի քանի մը միւլասանութիւններէն եւ ուրիշ քանի մը աւելի անշահ գիրքերէ զատ բանչկար, այսու ամմնայնիւ մը տքըս չափաղանց յուղեալ ըլլալուն՝ չէի կրնար որ եւէ գիրք մը ուշադրութեամբ կարդալ, Ամեն օր Տանթէի մէկ երգը գոյ կընէի . բայց այս վարժութիւնո այնչափ մն քենայարարէր, որ ըրած ատմես՝ աւելի իմ տարաբաղդութեանը, վրայ կը մտածէի քան թէ Երդին տողերուն վրայ . Նոյնը կըլլար նաև ուրիշ գրքեր կարդացած ատենս ալ՝ 'ի բաց առեալ Սուրբ Գրոց մէկ քանի հասուածները . Այն երկնային գիրքը՝ որ միշտ շատ սիրած էի ինքինքս անհառատ կարծած ժամանակս ալ, աւելի եւո

յարդութեամբ կը կարդայի հիմա : Բայց դարձնեալ՝ յօժարամտութեանս հակառակ՝ շատ անդամ կը պատահէր որ անմտադրութեամբ եւ տուանց հասկընալու կը կարդայի : Քիչ քիչ կարող եղայ աւելի խորին մտածելու անոր վրայ եւ օր քան դօր աւելի համառնելու :

Այս ընթերցումը երբէք կոյր կրօնասիրութեան հակումմը չաւելցուց վրաս , այն սխալ հասկցուած կրօնասիրութիւնը կուղեմ ըսել որ կարճամիտ կամ մոլեռանդ կընէ մարդը : Ընդհակառակն ինձի կը սովորեցընէր սիրել զԱստուած եւ զմարդիկ , արդարութեան եւս քան զեւս յաղթանակելուն փափաքիլ եւ մոլութիւնը ատել՝ միանդամայն ներելով չարերուն : Վրիտոնէութիւնը՝ փոխանակ հեղձուցանելու այն բարի սկզբունքները որ փիլիսօփայութիւնը կրնար ծնուցած ըլլալ որտիս մէջ , ընդհակառակն անոնց ուժ կուտար եւ կը զօրացընէր՝ աւելի վսեմ , աւելի զօրաւոր ապացոյցներով :

Օրին մէկը կարդալով թէ անդադար ազօթք ընել ոլէտք է , եւ ճշմարիտ աղօթքն ալ հեթանոսաց նման շատխօսութիւն քնելու վրայ չկայանաք , այլ պարզութեամբ զԱստուած պաշտելու՝ թէ՛ բանիւ եւ թէ՛ դործով , եւ ջանալու որ թէ՛խօսքերնիս եւ թէ՛դործերնիս

մինոր սուրբ կամաց կատարումն ըլլան , միտքը դրի այն մշտամոռնչ աղօթքը սրախ մըտօք 'ի դործ դնել , այսինքն մտքէս չանցունել այնպիսի խորհուրդ մը որ Աստուծոյ կամացը հպատակելու բաղձանքով վառեալ չըլլայ :

Ես միշտ համառօտ աղօթքներն ընտրած եմ աղօթքիս մէջ , չէ թէ երկար աղօթքներն արհամարհելուս համար , (ընդհակառակն խիստ օդպատէտ կը համարիմ զանոնք , եւ անհատից տրամադրութեանը համեմատ՝ աստուածապաշտութեան վրայ անոնց ուշադրութիւնը հաստատ պահելու համար քիչ կամ շատ անհրաժեշտ) , այլ կը տեսնեմ որ երկար աղօթքներ ընելու յարմար չեմ առանց մտադրութիւնս կօրսնցընելու եւ առանց աստուածապաշտութիւնը մոռնալու :

Զիս շարունակաբար Աստուծոյ առջեւդնելու ուշադրութիւնս՝ փոխանակ մտքիս համար ձանձրալի աշխատութիւն մը եւ երկիւղի առիթ ըլլալու՝ քաղցր բան մը կերեւէր ինձ . Մտածելով միշտ թէ Աստուած քովերնիս է , 'ի մեղէ , կամ մանաւանդ մենք'ի նմա ենք , միայնութեան սոսկումը օքքան զօր կը թեթևար ինձի համար «Ամենալաւ ընկեր մը չունի՞մմի քովս » կըսէի ես ինձի , եւ սիր-

ալս կը համողարտեցընէի , կը մրմնջէի ու կը սուլէի բերկրութեամբ եւ խանդադատանօք :

—Մի թէ , կըսէի ես ինձի , չէ՞ր կիրար տենալ մը գալ վրաս ու զիս գերեզման դնել : Բարեկամներս՝ մահս ողբալէ ետեւ՝ քիչ քիչ զօրութիւն պիտի գանէին զիս այլ եւս չտեսնելնուն համըերելու : Արդ՝ գերեզմանին տեղ բանտ մը զիս կլլեց . պէ՞տք է հաւատամ թէ Աստուած նոյն զօրութիւնը չպիտի սպարզեւէ անոնց :

Արտս ջերմնոանդ մաղթանքներ կընէր անմնց համար՝ երբեմն արտասուախառն , բայց այն ողբերն ալ խառն էին քաղցրութեամբ : Զատատ վստահութիւն ունէի որ Աստուած ուժ կուտար անոնց՝ ինչպէս ինձի : Այս վըստահութիւնս սուտ չելաւ :

ԳԼՈՒԽ Է

Աղատ ապրիլը բանտի մէջ ապրելէն շատ աղէկ է . ասոր ո՞վկը տարակուսի : Եւ սակայն բանտարդելութեան թշուառութիւններուն մէջ անդամ , երբոր մէկ մարդ մը մտածէ թէ Աստուած հոն ներկայ է , թէ աշխարհիս ու-

բախութիւնները վաղանցուկ են, թէ ճշմարիա
երջանկութիւնը խղճմտանքին մէջ է եւ ոչ
արտաքին առարկայներու մէջ . երբոր , կը-
սեմ , մտածէ ասոնք , քերկրութեամբ ապրե-
լու քաղցութիւն մը կրնայ զգալ . Դեռ ամիս մը
շանցած՝ բռնելիք բնթացքս որոշեր էի , ևթէ
ոչ կատարեալ՝ դո՞ւէ պատշաճ համբերատա-
րութեամբ մը : Հասկրցայ որ ուրիշը մատնե-
լով ինքինքս աղատելու վատութիւնը յան-
ձըն չառնելով կառավնարանէ կամ երկար
բանտարդելութենէ զատ ուրիշ բան չունէի
սպասելիք : Հարկ էր համբերութեամբ կրել :
Պիտի ասլրիմքանի որ կենաց շունչ մը ձգուի
ինձի , կըսէի եսինձի , եւ երբոր զայն ալքա-
շեն հանեն ինձմէ , ամեն հիւանդներուն ը-
րածը կընեմերբոր վերջին վայրկեանը կը հաս-
նի . այսինքն կը մնոնիմ : —

Ինքինքս կը վարժեցընէի ոչ մէկ բանէ-
մը զանգատ չընելու եւ ամեն հնար եղած
քերկրութիւնները որտիս տալու : Աիրելի եւ
սովորական զգացմունքս էր մի առ մի թուել
այն բարիքները որ կենացս օրերը դեղաղար-
դեր էին . բարի հայր մը , դորովախիրտ մայր մը ,
աղնիւ քոյրեր ու եղբայրներ , այս կամ այն
բարեկամներս , լաւ կրթութիւն մը , դրա-
կանութեան սէրս , եւ այլու Ո՞վ ինձմէ աւե-

ի երջանկութեամբ լցուած էր : Ինչո՞ւ
փառք չտամ Աստուծոյ ասոր համար , թէ եւ
հիմա բարօրութիւնս խոռված է ձախորդու-
թեամբ : Արբեմն այս թուումը ըրած ատենս
սիրտ կը շարժէր եւ վայրկեան մը կուլայի .
բայց քաջալերութիւնն ու զուարթութիւնը
շուտով կը վերահասաատուէին սրտիս մէջ :

Բանտարկութեանս առջի օրերէննոր բա-
րեկամ մը գտեր էի : Ասիկա ոչ բանտարկեան
էր եւ ոչ պահապաններէն կամ դատաստա-
նիս քննութիւններն ընելու պաշտօն ունեցող
անձերէն մէկն էր : Ասկայն խօսքու մարդկեղէն
արարածի մը վրայ է : Ո՞վ էր այս բարեկամը և
-Հինդ վեց տարեկան խուլ-համբ տղայ մը :
Հայրն ու մայրը չարագործներ ըլլալով օրէն-
քը պատուհասեր էր դանոնք : Խեղճ որրը՝ ու-
րիշ նոյն վիճակի շատ տղայոց հետ ոստիկա-
նութեան վրայ մնացեր էր : Ասոնք ամենն ալ
բանտիս գիմացը սենեակ մը կը քնակէին , եւ
օրը քանի մը անզամ այն սենեակին դուռը
բացուելով դուրս կը հանուէին որպէս զի քիչ
մը օդ առնուն բակին մէջ :

Խուլ-համբը պատուհանիս տակը կուղար , կը
ծիծաղէր եւ նշանացի խօսքեր կընէր խճի . եւ
ալ մնէ կտոր մը հաց կը նետէի անոր . կառնէր
զայն ու բախութեամբ ցաւակատելով , կը վաղէր

ընկերներուն քով, եւ ամենուն ալ տալէ եւ-
տեւ՝ կուդար իր ձեռքը մնացած բաժինն ալ
որատուհանիս մօտ կուտէր՝ գեղեցիկ աչքե-
րուն ժաղիատվն իր շնորհակալութիւնը ինձի
յայտնելով :

Միւս աղայքը հեռուէն կը նայէին ինձի,
բայց չէին համարձակեր մօտենալու, խակ խուլ
համրը ջերմ համակրութիւն մը ունէր վրաս,
որուն շարժառիթը միայն շահը չէր : Երբեմն
իրեն հացնեաէի նէ կը վարանէր թէ ինչ ընէ,
եւ նշանացի կը հասկըցընէր ինձի թէ ընկեր-
ները կուշտ էին եւ չէին կրնար ուտել : Աթէ
տեմնէր որ պահապան մը կուդար սենեակս,
հայն անոր կուտար որ ինձի ետտայ, թէպէտ
ինէ բան մը չէր յուսար այն ժամանակը, բայց
դարձեալ զմայլելի շնորհքով մը կը խա-
ղար պատուհանիս առջեւ, եւ ուրախ կըլլար
իրեն նայելուս վրայ: Անդամ մը պահապաննե-
րէն մէկը թող տուաւ որ այս տղան բանտա-
մանէ : Եերս մանելուն պէս վաղեց ծունկե-
րուսփաթառեցաւ ուրախութեան աղաղակով
մը : Գրկեցի զինքը եւ շեմ կրնար ըսել ո՛րսլի-
սի հրճուանծք զիս գգուեց : Ո՛րչափ սէր կար
այն փոքրիկ տղուն սրախն մէջ : Ո՛րչափ կու-
զէի կարող ըլլալ դանի դաստիարակել տալու
եւ դանուած անարդ վիճակէն ազատելու :

Չկըցայ երբէք դիտնալ անոր անունը. ինք
ալ չէր դիտեր թէ ունէ՞ր անուն մը. Միշտ դը-
ւարթ էր, եւ երբէք չտեսայ անոր լալը, բայց
մէկ անգամ մը չեմ դիտեր ինչո՛ւ համար բան-
տապետէն ծեծ ուտելով լացաւ, Զարմանալի՛
բան: Անանկ տեղ մը ապրիլը յետին տարա-
բաղդութիւն կը թուի. եւ սակայն այս տղան
ստուգիու այնչափ նրջանիկ էր՝ ո՛րչափ կրնար
ըլլալ իշխանի զաւակ մը այն տարիքին մէջ:
Այս մտածութիւնը ընելով կը հատկընայի թէ
մէկ մարդ մը կրնայ իր մտաց տրամադրութիւ-
նը տեղերուն ազդեցութենէն աղատել, կառա-
վարենք երեւակայութիւննիս, եւ գրեթէ ա-
մեն տեղ գոհ կը լանք: Օրը շուտով կանցնի,
եւ երբորիրիկուան մարդ մը անկողին կը մըտ-
նէ առանց անօթի ըլլալու եւ առանց սուր ցա-
ւեր զգալու, ի՞նչ փոյթ եթէ այն անկողինը
բանտի մը պատերէ կամ տան մը կամ պալա-
տի մը գեղանկար որմերէ շրջապատեալ ըլլայ:

Կատարեալ մտածութիւն: Բայց երեւա-
կայութիւնս ի՞նչպէս կառավարելու էր: Ասոր
կը կրթէի ինքզինքս, եւ երբեմն կը կարծէի
թէ խիստ լաւ կը յաջողէի, բայց երբեմն ալ ե-
րեւակայութիւնա բոնաւորաբար կը յաղթէր.
այն ժամանակը ես ինձմէ դժոհն ըլլալով՝ տը-
կարութեանս վրայ ապշած կը մնային

ԳԼՈՒԽ Ը

Տարաբաղդութեանս մէջ տակաւին եր-
ջանիկ եմ ես , կըսէի , որ ինձի տրուած բան-
տը դետնի հաւասար է եւ այս բակին վրայ կը
նայի , ուր ինձմէ չորս քայլ հեռու այս սիրուն
տղան կուգայ , որուն հետ նշանացի խօսակցի-
լըն այնչափ քաղցր է ինձի : Ի՞նչ սքանչելի է
մարդուս խմացութիւնը : Ի՞նչ բաներ կըսէինք
իրարու , ան ու ես , նայուածքի ու դէմքի
հազարումէկ կերպնշաններու օգնութեամբ :
Ի՞նչպէս վայելուչ կերպով կը կաղմէ իր շար-
ժումները երբոր կը ժպտիմ իրեն : Ի՞նչպէս
զանոնք կուղզէ երբ կը նշմարէ որ հաճոյ չեն
ըլլար ինձի : Ի՞նշպէս կը հասկընայ որ կը սի-
րեմ զինքը՝ երբոր իր ընկերներուն մէկը կը
դզուէ կամ իր կերածէն անոր ալ կուտայ :
Մէկը շկրնար միտքէն անցունել թէ ես պա-
տուհանէս կրնամ կերպով մը այս խեղճ փոք-
տիկ արարածը կրթել : Նշաններուն համրվար-
ժութիւնը յաճախ կրկնելով մեր գաղափար-
ներն իրարու հաղորդելու միջոցները սլիտի
կպտուրելազործենք . ԱՌՀափ տւելի զզայ թէ

ինձի հետ խօսակցելովը կը կրթուի եւ բարքն օրէ օր կաղնուանայ , ա՛յնչափ աւելի սէր սլիտի տայ ինձի , Աս իրեն համար խելքի ու բարեւրտութեան հոդի մը սլիտի ըլլամ . ինք սլիտի սովորի իր պիշտերը , բեկրութիւնները եւ յոյսերը ինձի աւանդել , ես ալ սլիտի ջանամ գանի միսիթարելու , սիրոը աղնուացընելու եւ իր ամսն ընթացքը ուղղելու : Ո՞վ գիտէ թէ իմ վիճակս ամսէ ամիս անստոյդ պահելով զիս հոս չպիտի թողուն որ ծերանամ : Ո՞վ գիտէ թէ այս տղան՝ աչքիս առջեւը մեծնալով այս տանս մէջ ալաշտօնի մը չպիտի գործածուի : Յուցրցած յաջողակութեամբը չկրնա՞ր մինչեւ . . . բայց աւա՛ղ , չատ շատ ըլլալիքը լաւ պահապան մը կամ անոր սէս բան մըն է : Սակայն գարձեալ բարի գործ մը ըրած չե՞մ ըլլար՝ թէ որ պարկեշտ մարգոց եւ ինքն իրեն հաճոյ ըլլալու բաղձանք մը իրեն աղղելու եւ վեհ զգացմանց ունակութիւն տալու նպաստած ըլլամ :

Այս միայնախօսութիւնը խիստ բնական էր : Աս միշտ շատհակում ունեցած եմ տղացոց , եւ դաստիարակի պարտականութիւնները վսեմ կերեւէին ինձի : Գանի մը տարիէ ՚ի վեր այս պաշտօնը կը կատարէի ձաքօմօի եւ Ճուղի Բօրբօի քով . երկուքն ալ գեղեցիկ

յոյսեր տեւող պատամիներ՝ որոնք բռն իմ
զաւակացս պէս կը սիրէի եւ միշտ ալ պիտի
սիրեմ։ Գիտէ Աստուած թէ քանի՛ քանի ան-
դամ բանտին մէջ անոնց վրայ խորհած եմ։
Ո՛րչափ կը ցաւէի որ անոնց դաստիարակու-
թիւնը չկրցայ զլուխ հանել։ Ո՛րչափ սրտե-
ռանդ մաղթանքներ կընէի որնոր վարժապետ
մը դտնէին ինձի չափ զիրենք սիրող։

Երբեմն կը գոչէի. «Ի՞նչ անարդ այլափո-
խութիւն. վոլսանակ ձաքօմօի եւ ձուլիօի,
զօրոնք բնութիւնն ու բազդը իրենց ամենա-
պայծառ ձիրքերովը լցուցած են, հիմա աշա-
կերտ յունիմ ինձի խեղճ վոքրիկ խուլ-համր
մը, ցնցոտազգեաց եւ զողի դաւակ . . . որ
շատ շատ բանափառապան մը պիտի ըլլայ,
որ քիչ մը աւելի անհամեստ լեզուով կալա-
նաւոր կը կոչուի։»

Այս մտածութիւնը զիս կամչցընէր, կը
ճնշէր : Բայց երբ իմ փոքրիկ խուլ-համրիա
ձայնը կը լսէի, սիրտո կը թնտար ինչպէս հօր
մը սիրտը իր որդւոյն ձայնէն։ Եւ այն ձայնը
եւ անոր տեսքը կը փարատէին մտքիս մէջէն
զանի արհամարհելու գաղափարները : - Ի՞նչ
յանցանք ունի աս խեղճ տղան՝ թէ որ խե-
ղանդամ է, ցնցոտիներով ձածկուած է եւ
զողերու որդի է : Մարդկային հոգի մը ան-

մեզութեան հասակի մէջ միշտ պատկառելի է : - Ասանկ կըսէի եւ օր քան զօր աւելի գորովասրտութեամբ կը նայէի անոր . կը թուէր ինձի որ օրէ օր խելքը կաճէր եւ ես ալ օրէ օր կը հաստատուէի անոր բարեբարոյութիւնը զարգացընելու քաղցր խորհուրդիս վրայ . եւ ամեն հաւանականութիւնները միտքս բերելով կը խորհէի թէ օր մը թերեւս կելլեմ բանտէն եւ այն ժամանակը կարող կը լամազամ այս տըղան խուլ-համերց դպրոցը դնելու եւ անանկով կալանաւորի արհեստէն լաւագոյն ապագայի մը ճամբայ իրեն բանալու :

Երբոր այսպէս բերկրութեամբ անոր երջանկութեանը կ'զրադէի , երկու պահապան եկան օր մը զիս սենեակէս դուրս հանելու :

«Չեր բնակարանը պիտի փոխուի , Պարմ :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Մեղ հրաման եղած է ձեզ ուրիշ սենեակ փոխադրել :

— Ինչո՞ւ համար :

— Ուրիշ աւելի կարեւոր թոչուն մը բըռնուած է , եւ այս վանդակը լաւագոյնն ըլլալով . . . կը հասկընաք . . .

— Կատարելապէս . այս սենեակը նոր եկալիներուն տռաջին իջեւանին է եղեր ։

Եւ առին զիս բակլին միւս կողմը տարին .
բայց աւաղ, նոր սենեակս գետնի վրայ չէր .
ալ չէի կրնար խուլ-համրիս հետ խօսակցիլ .
բակէն անցած ատենոս տեսայ այն սիրելի տը-
դան, գետինը նտուած, զարմանքի մէջ, տխուր-
համրուրեցի որ զիս կը կորսնցընէր : Ցատկեց
ուք ելաւ եւ առջեւս վաղեց : Պահապաննեւ-
րը վանտել կուղէին զանի . բայց ես զրկեցի
զայն, եւ առանց իր աշտոտոթեանը նայելու՝
համրուրեցի դորովանօք . ետքը՝ պէտք է
արդեօք խոստովանիլ՝ արտաստալից աչօք
զատուեցայ անկէ :

ԳԼՈՒԽ թ.

Խե՞ղճ սիրաս, զու որ ա'յդ չափ դխրու-
թեամբ եւ եռանդով կը սիրես, ո'քչափ բա-
ժանումներու արդէն դատապարտուեցար :
Այս բաժանումն ալ ստուդիւ միւսներէն նը-
ւադ վշառի չեղաւ . եւ այս վիշտն առաւել
զգալի եղաւ ինձի, որովհետեւ նոր բնակարա-
րանս խիստ տխուր էր : Գծուծ սենեակ մը ;
մութ, աղտոտ, միակ պատուհանով մը՝ որուն
տակլիներուն աեղ թուղթ դրուած էր . սկա-

աւերն ամօթալի նկարներով ծածկուած , եւ այնպիսի գունով մը . . . որուն անունը տալու չեմ համարձակիր : Չներկուած կողմերն ալ արձանագրութիւններ կային : Շատերը դըք-բաղդ բանտարկեալներու լոկ անուններ , մականուններ կամ անոնց հայրեննեաց անուններն էին՝ իրենց բանտարկութեան սեւ օրին թուականովը : Շատերն ալ բացականչութիւններ էին սուտ բարեկամներու դէմ , նոյն խակ հեղինակին դէմ , կնոջմը դէմ , դատաւորին դէմ , եւ այլն : Ումանք ալ համառօտ կենսագրութիւններ էին : Մէկ քանին ալ բարոյական վրաններ , Ասոնց մէջ Բասքալին սա խօսքերը կային :

« Անոնք որ կրօնի դէմ կը մաքառին , առաջ դոնէ թող հասկընան թէ ի՞նչ կրօնք է այն : Եթէ կրօնքը պարծենար որ Աստուծոյ Վրայ յստակ տեսութիւն մը ունի եւ անըսքող կերպով զանի ստացած է , անոր հերքում եղած կըլլար երբոր ըստէր Աւալերէն Հեղին բայց ուշեւաստիր որ զանէ այնպիս բայցոյց իւրական շայութեած բայց որ կը ընդհակառակն թէ մարդիկ խաւարի մէջ են եւ Աստուծմէ հեռացած են . թէ Աստուծ ինքինք անոնց ծանօթութենէն ծածկած է , եւ թէ ինքինքն խակ այնպէս կը կոչէ Ա. կըոց

մէջ՝ Ասուած՝ անհաօի իւ եռ ըսելով . . . , ի՞նչ օգուտ կրնան քաղել՝ երբոր ըստ իրենց խոստովանութեան ճշմարտութիւնը վնասուելու անհոգութիւններնուն մէջ կը պառան թէ զանի իրենց ցուցընտղ բան մը չկայ : Տակն ալ նոյն հեղինակին սա խօսքերը կային .

« Հոս խնդիրը օտար անձի մը թեթեւ շահուն վրայ չէ , այլ մեր վրայ եւ մեր բոլորին վրայ է : Հոգւոյ անմահութիւնը այնչափ կարեւոր բան է մեզ համար եւ այնչափ խորին մերձաւորութիւն մը ունի մեզ , որ անոր ինչ ըլլալը դիտնալու անհոգութիւն ընողը ամեն զգացում կորսնցուցած ըլլալու է : »

Ուրիշ մ'ալ սա խօսքերը դրեր էր :

« Կօրհնեմ բանտը՝ որ մարդոց ապաշընորհութիւնը , իմ թշուառութիւնս եւ Աստուծոյ բարութիւնը ինձի ճանչցուց : »

Այս խոնարհութեան խօսքերուն քով ամբարտաւան անէծ քներ կը տեսնուեր ինքնինք անպատուած հրատարակող մարդէ մը դրուած , որ Աստուծոյ դէմ կապստամբէր՝ որպէս թէ քիչ մը վերը զանի ուրացած ըլլալը մոռցեր էր :

Էջ մը հայհոյութիւններէ ետեւ՝ ուրիշ էջ մ'ալ թշնամանք կար չորսիւներուն դէմ

(ասանկ կը կոչէր այն անձինքը) զորոնք բանտարգելութեան դժբաղդութիւնը կրօնասէր կընէ :

Այս քարուականքը պահապաններէն մէկուն ցուցընելով հարցուցի՝ թէ ո'վ զրերէր :

«Գո՞ն եմ այդ արձանագրութիւնը զանելէդ, ըստ . այնչափ շատ կան, որ վնատը ունելու դանելու ժամանակ չունիմ: »

Եւ առանց ուրիշ բան մը ըսելու՝ սկսաւ պատը դանակով քերել, որպէս զի այն գրրւածը չնջէ :

« Ինչո՞ւ կաւրէք, ըսի իրեն:

— Վասն զի ասմոք զրող չուառականը՝ որ դիտմամբ մարդասպանութիւն ըրած ըլլալուն համար ՚ի մահ դատապարտուեցաւ, ետքը զզջաց ու ինձի աղաչեց որ ասոնք չնջեմ:

— Առառած ներէ իրեն, ըսի: Ի՞նչ սպանութիւն եք ըրած:

— Եթ մէկ թշնամին չկրնալ սպաննելով, վրէժառնելու համար անոր զաւակը սպաններէր, աննման գեղեցիկ տղայ մը, »

Սուկումէս դողացի: Վայրագութիւնը կրնայ մինչեւ հօն համսիլ: Եւ ասանկ հրէշ մը՝ մարդկային ամեն տկարութիւններէ աղատ մարդու մը պէտ թշնամանիչ բերա՞ն կըրանե-

ցընէր : Անմեղ մը սպաննել . խեղճ տղիկ մը
խողիսողել :

ԳԼՈՒԽ Ժ.

Համար ով այս առաջարկութեան քան նու շուրջ 2
դրամի գու , մասն տար պահանջանաւուած ու ուժաւ

Նոր սենեկիս մէջ՝ որ խիստ մութ եւ զա-
ղիրէր , զուրկ իմ սիրուն փոքրիկ համրիս ըն-
կերութենէն , արտամութիւնը զիս կ'ընկճէր .
Ժամերով կը կանգնէի պատուհանին առջեւ՝
որ ճեմելիքի մը վրայ կը նայէր , եւ ճեմելիքին
անդիի կողմն ալ առաջին սենեկիս պատու-
հանն ու առջեւի բակին ծայրը կը տեսնուէր .

— Ո՞վ զրուեր էր իմ տեղա : Մարդ մը կը
տեսնէի հոն՝ որ անդադար եւ շուտ շուտ կը պը-
տրտէր սաստիկմտայուղութեամբ տագնապեալ
անձի մը պէս Երկու երեք օր ետքը տեսայ որ
զրիշ թուղթ եւ այլն տուեր էին անոր , եւ ալ
այսուհետեւ բոլոր օրը սեղանին առջեւ նստած
էր .

Վերջապէս ճանչցայ զանի՝ երբոր պա-
հապանին հետ սենեակէն ելեր ու դատաստա-
նական քնութեանց ներկայանալու կերթար .
Մելքիոր Շօյան էր .

Սլորտա ճմլեցաւ : Դու ւն ալ հոս , մե՛ծ քաղաքացի : -(Անիկա ինձմէ տռելի բաղդաւոր եւղաւ : Քանի մը ամիս բանտարկութենէ ետեւ՝ արձակուեցաւ :)

Ամեն բարի արարածներու տեսքը զիս կը միսիթարէ , ինձի սէր կաղղէ , ինձի խորհըրդածել կուտայ : Ո՞հ , խորհին ու սիրելը մեծ բարիք մըն են չօժարութեամբ կեանքս կուտայի Շօյան բանտէն ազատելու համար . եւ սակայն անոր տեսքը զիս կ'սփոփիէր :

Երկար ժամանակ անոր նայելէս ետեւ , անոր շարժումներէն մտքին հանդարտութեանը կամ անհանդատութեանը վրայ կարծիքական դատողութիւններ ընելէս եւ իրեն համար բարեմաղթութիւններ ընելէս ետեւ , վրաս աւելի դօրութիւն մը՝ աւելի ընգարձակ դաղափարներ եւ ինքզինքէս աւելի գոհութիւն կ'զգայի , որովհեան մարգկեղէն սիրելի արարածի մը ներկայաւթիւնը բաւական է միայնութիւնն սփոփելու : Այս բարիքը ըրին ինձի նախ խեղճ խովանամը մը . հիմա ալ մեծ տաղանդի տէր մարդու մը ներկայութիւնը , թէպէտ եւ զինքը հեռաւէն կը տեսնէի :

Պահապաններէն մէկը անշուշտ անոր իւմացուցեր եր իմ ուր ըլլալս . Անաւոտ մը պա-

տուհանը բանալուն՝ թաշկինակն երեցուց
զիս ողջունելու համար։ Ես ալ նոյն նշանով
պատասխանեցի իրեն։ Ո՞հ, ի՞չ սպիսի քերկրու-
թեամբ սիրտս լցուեցաւ այն վայրկենին։ Կը
թուէր թէ հեռաւորութեան միջոցը վերցեր
էր եւ երկուքս ՚ի միասին էինք։ Այրուհին
տեսնող տարփաւորի մը սկէս սիրտս կը դար-
նէր Զեռքով ու շարժուածներով կը խօսէինք
իրարու հետ՝ առանց իրար հասկընալու։ բայց
այնպիսի շուտափութութեամբ մը որ գիտես
թէ իրարու միտք կը հասկընայինք, կամ մտ-
նաւանդ ստուդիւ կը հասկընայինք իրար Այն
շարժուածները մեր սրտին բոլոր զդացում-
ները կը նշանակէին, եւ երկուքս ալ իրարու
զդացմանց քաջածանօթ էինք։

Այն բարեկամական ողջոյններէն ի՞նչ մը-
խիթարութիւններ չպիտի գանէի ասլաղա-
յին մէջ։ Ապագան եկաւ, բայց այն ողջոյն-
ները չնորոգեցան։ Ամեն անդամ որ Ճօյան իր
պատուհանը կը տեսնէի, թաշկինակս կերեր-
ցընէի, բայց պարտապ տեղը։ Պահապաններն
ըսին ինձի թէ անսանկ ձեռքով ու շարժում-
ներով հետս խօսակցին արդիլուեր էր իրեն։
Այսու ամենայնիւ յաճախս կը նայէր ինձի։ ես
ալ նոյնապէս անոր կը նայէի. եւ մերնայուած քը-
ռակաւին հազար բան կը հասկըներ իրարու։

ԳԼՈՒԽ ՃԱ.

Պատուհանիս առջեւի ճեմելիքին մէջ՝ որ
դրեթէ բանտիս հետ հարթ հաւասար էր՝ ա-
ռաւօտէն մինչեւ իրիկուն ուրիշ բանտարկ-
եալներ կանցնէին կը դառնային մէկ մէկ պա-
հապաններու հետ։ Ասոնք հարցափորձի կեր-
թային կամ ետ կը դառնային։ Շատը ստորին
կարգի մարդիկ էին։ Բայց մէջերնին մէկ քա-
նի ալ տեսայ որ առելի բարձր վիճակէ անձինք
կերեւէին։ Թէպէտ այնչափ շուտ կանցնէին
որ խիստ հարեւանցի կը տեսնէի զանոնք, ոյ-
սու ամենայնիւ ուշադրութիւնս կը դրաւէին։
Եւ ամենն ալ քիչ շտա դութս կը շարժէին։
Առջի օրերն այս տիտուր տեսարանը տրամու-
թիւնս կաւելցընէր, բայց քիչ քիչ վարժուե-
ցայ, եւ վերջապէս միայնութեանս սոսկաւմը
նուազեցընելու ալ նպաստեց։

Նմանապէս շտա ալ բանտարկեալ կանայք
կանցնէին սենեակիս տռջեւէն։ Ճեմելիքին
մօտ կամարայարկ ճամբու մը միւս կողմը
բակ մը կտր, հոն էր կանոնց բանտն եւ դադ-
զիական ախտիւ վարակելոց հիւանդանոցը։

Բարակ պատ մը միայն իմ սենեակս բանտարկեալ կանանց սենեակներուն մէկէն կը դատէր։ Շատ անգամ այս թշուառներն ականջս կը խուլցընէին իրենց երգերովը եւ երբեմն ալ կոիւներովը։ Կրիկունները երբոր ժամանակն անցնէր եւ դուրսի ձայները դադրէին, ասոնց խօսակցութիւնները կը լսէի։

Թէ որ ուղէի՝ կրնայի ես ալ խօսակցիլ հետերնին։ բայց զգուշացայ, չեմ դիտեր ինչո՞ւ համար, ու եներոտութեամբ թէ մեծամըստութեամբ, կամ այնպիսի վատ վիճակի մէջ գանուող կանանց հետ բարեկամանոլու խոհական երկիւղով։ Կը կարծեմ թէ այս երեք պատճառներն ալ միանգամայն աւնէի, և կինը քանի որ իր պարտուպատշաճ դիրքին մէջ է՝ վսեմարարած մընէ։ Զանի տեսնելը, լսելը, հետը խօսիկը՝ ազնիւ խորհուրդներով հոգիս կը լեցընէ։ բայց երբոր նուաստացեալ եւ արահամարհելի վիճակի մէջ է՝ զիս կը խռովէ, կը վշտացընէ եւ սրտիս բանառտեղծական աշխոյժը կը մարէ։

Եւ սակայն . . . (այստահմանաւորիչ պայմաններն անհրաժեշտ են մարդս նկարագրելու համար՝ որ խիստ խրթին էտել մընէ) այս կանանց ձայներուն մէջ քաղցր ձայներ կային, եւ այն ձայները՝ ինչո՞ւ չըսեմ՝ սիրելի էին

ինձի ։ Մէկը մանաւանդ միւսներէն անուշէր , անոնցմէ քիչ կը լոււէր , եւ ընաւ գուեհիկ մտածութիւններ չեր արտաքերեր : Շատ ալ չէր երգեր . երգելու ալ ըլլար նէ՝ շատ անգամ սա սրտաշարժ տողերն էր .

«Ո՞վ պիտի ես դարձունէ թշուառին իր երջանկութիւնը : »

Երբեմն աղօթքներ կերգեր , Ընկերներն ալ ձայնակից կըլլային տնոր . բայց ես կընայի որոշել Մագդաղինսէին ձայնը միւսներէն՝ որոնք դիտես թէ դիտմամբ անոր ձայնը խափանելու կը ջանային :

Այս՝ այս դժբաղդ կնոջ անունը Մագդաղինէ էր :

Երբոր Ընկերներն իրենց ցաւերը կը պատմէին , անի կը մեղքընար զանոնք հեծեծաւլով , եւ միշտ կըսէր . « Մի վհատիր , սիրելիս , Տէրը ոչ մէկ մարդ մը երեսի վրայ չձգեր . »

Ո՞վ կընար զիս արգիլել որ զանի գեղեցիկ չերեւակայէի , աւելի դժբաղդ՝ քան թէ յանցաւոր , առաքինութեան համար ծնած եւ առաքինութեան զառնալու կարող թէ որ խոստրած ալ էր առաքինութենէն . Ո՞վ կընայ զիս մեղաղընել թէ որ սիրու կը շարժէր անոր ձայնէն , թէ որ ակնածութեամբ մտիկ կընէի անոր ձայնը , թէ որ մասնաւոր ջերմնուանդու-

թեամբ մը կաղօթէի անոր համար :

Անմնդութիւնը պատուական է . բայց ո՞ր չափ պատուական է զղջումն ալ . Մարդկանց ամենաբարին՝ մարդացեալ Աստուածը՝ մեղաւոր կանանց վրայ գորովագութ աչօք չէ՞ր նայեր, անոնց ապաշառ չէ՞ր յարդեր, եւ զանոնք իր ամենէն սիրելի հոգիներուն կարդը չէ՞ր դասեր : Ինչո՞ւ համար ուրեմն վատ վիճակի մէջ ինկած կինը արհամարհենք :

Այսպէս խորհրդածելով հարիւր անդամ մատարերեցի ձայնս հանել եւ եղբայրական սիրոյ յայտարարութիւն մը ընել Մադդաղինէնին : Անդամ մը անոր անուան տռաջին վանկը արդէն արտասաներ էի . « Մադդ . . . » բայց զարմանալի բան . սիրտս կը բարտիսէր տասնեւհինգ տարեկան տարիաւորի մը սրտին պէս . եւ սակայն երեսուն եւ մէկ տարեկանն էի , եւ տղոց պէս սիրտս թեթեւ բաներէ խըսքելու ժամանակն անցած էր :

Չկրցայ անկէց աւելի արտասանել . նորէն կ'սկսէի . « Մադդ . . . Մադդ . . . » բայց տմեն ջանք անօդուտ եղաւ . ինքզինքո ծիծաղելի կը գտնէի , եւ բարկութեամբ « Մամթօ » եւ ոչ Մադդ » կը գոչէի :

* Խառլերէն . խենդ կամ յիմար :

ԳԼՈՒԽ ԺԲ

Այսպէս լմնցաւ իմ վիստասանութիւնս այս
թշուառ կնոջ հետ ։ Սա կայ որ քանի մը շա-
բաթ քաղցր զգացմուն քններով սիրտս շարժե-
լու պատճառ եղաւ ։ Շատ անդամ տիրուր էի ,
եւ անոր ձայնը զուարթութիւն կուտար ին-
ձի ։ Շատ անդամ ալ մարդոց ցածութեանն ու
ապաշնորհութեանը վրայ խորհելով կը բար-
կանայի վրանին եւ բոլոր աշխարհ կատէի .
բայց Մազդապինէի ձայնը զիս կարեկցութեան
ուներդամտութեան կը բերէր :

— Ասուած տար որ ծանր պատժոյ մը
չդատապարտուէիր , ո՞վ անծանօթ մնդաւո-
րունի . կամ ինչ պատժոյ ալ որ դատապարտ-
ուիս՝ կարենաս անկէց օգուտ քաղելով ազնիւ
զգացմանց դառնալ եւ Տէրո՞ը սիրելի կեր-
պով ապրիլ ու մնոնիլ ։ Երանի՛ թէ քնզ
ճանչողներուն ամենն ալ քեզ մնդքընան ու
յարգեն ինձի ոլէս՝ որ քեզ չէի ճանչեր :
Երանի՛ թէ ամեն քեզ տեսնողներուն համ-
բերութիւն , քաղցրութիւն , առաքինութիւն
եւ Աստուծոյ վրայ վստահութիւն աղջետ ,

ինչպէս որ ինձի աղղեցիր, ինձի՝ որ առանց
տեսնելու քեզ կը սիրէի: Նրեւակայութիւնս
կարելի է խարուեցաւ՝ քեզ գեղեցիկ կին մը
կարծելով, բայց քու սիրադ՝ անտարակոյս եմ
որ գեղեցիկ էր: Գու ընկերներդ անքաղա-
քավարութեամբ եւ գոեհնկարար կը խօսէին,
բայց գու պարկեշտութեամբ եւ շնորհքով: Անոնք կը հայհոյէին Աստուծոյ դէմ, դու
կ'օրէնէիր: Անոնք կոփի. կընէին իրարու հետ,
դու կը խաղաղէիր զանոնք: Թէ որ մէկը քեզ
անպատութեան ճամբէն հանելու համար
ձեռք երկրնցուց քեզի, թէ որ կրցաւ ազնը-
ւարար քեզի բարիք մը ընել, թէ որ քու ար-
տասուքդ սրբեց, ամեն միսիթարութիւններ
անձրեւի պէս տեղան անոր վրայ, անոր որդ-
ւոց եւ թոռանցը վրայ: —

Սենեակիս մէկ քովն ալ ուրիշ բանստ մը
կար որուն մէջ քանի մը մարդիկ կը բնակէ-
ին: Ասոնց ալ խօսակցութիւնները կը լոէի:
Մէջէրնէն մէկը միւմներուն վրայ իշխանու-
թիւն կը բանեցընէր, չէ թէ անոնցմէ բարձք
վիճակէ ըլլալուն համար, այլ առաւել ճոռո-
մարան եւ յանդուդն ըլլալուն համար: Այս
մարդը՝ ինչպէս կըսեն՝ ինքզինքը վարդապե-
տի տեղ դրած էր: Կը վիճէր, իրեն դէմ խօսադ-
ները կը լոեցընէր իր հրամայական ձայնովն

ու կրակոտ խօսքովը . եւ վճռաբար կը սովորնցընէր անոնց ինչ որ պէտք էր խորհեին ու զգային : Անոնք ալ քիչ մը դէմ կենալէ ետեւ վերջապէս անոր իրաւունք կուտային ու մենք բանի մէջ :

Այս թշուառներուն մէջ մէկը չկար որ բանտին տաղտուկը մեղմացընելու կարող ըլլար՝ սպարկեշտ զգացումներ յայտնելով, քիչ մը կրօնք եւ սէր ցուցընելով :

Խումբին գլուխը զիս ողջունեց . ես ալ փոխադարձարարողջունեցի զինքը, չարցուց ինձի թէ ի՞նչպէս կը տանէի այս անիծեալ վիճակը : Պատասխան տուի թէ վյանակ մը՝ որչոտի եւ տիսուր ըլլայ՝ անիծեալ չէր ինձի համար, եւ թէ մինչեւ 'ի մահ պէտք էր խորհելու եւ սիրելու բերկրանքը վնասել :

— Բացատրէ ըսածգ , Պարոն, բացատրէ :

— Բացատրեցի , բայց հասկրցող չեղաւ : Եւ երբոր ճարտարխօսական վարպետ նախադպուչութիւններով համարձակեցայ Ապղադինէին ձայնէն զգացած խանդաղատանքս օրինակ բերելու , խօսակիցս բարձր ծիծաղ մը բրցուց :

— Ի՞նչ կայ , ի՞նչ կայ , գոչեցին ընկերները : — Նմբարիչան սկսաւ ծամածուելով հեղանել իմ խօսքերս , եւ ընկերներն ալ միաձայն

ծիծաղեցան՝ կատարեալ անմիտ մը զիս համարելով։

Բանան ալ աշխարհի ալէս է։ Անոնք որ իրենց խմասութիւնը՝ զրգոելու, դանդատելու, հայհոյելու վրայ կը դնեն, յիմարութիւն կը համարին կարեկցութիւնը, սէրը, մտաց աղնիւ միսիթարութիւնները, վերջապէս ինչ որ մարդկութեան եւ անոր երկնաւոր արարչին պատիւ կը ըերէ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թողուցի զանոնք որ ծիծաղին, եւ վանդալը անդամ պատասխան չտուի։ Նրկու երեք անդամ խօսիլ ուղեցին հետս, ևս մունջկեցայ։

— Ալ մէկ մ'ալ սլատու հանը չպիտի ելլէ, ըսին։ — Դացեր է։ — Մադդաղինէին հառաչանքը մտիկ կընէ։ — Աւր ծիծաղները զինքը վիրաւորած ըլլալու են։

Քիչ մը առևն այսպէս խօսքեր ըրին. վերջապէս գլխաւորնին սաստելով լոեցուց վրաս մամռացողները։

« Եռեցէք , տիսմարներ , ըսածնիդ չէք
դիտեր , ըսաւ , Դրացինիս ձեր կարծածին չափ
էշ չէ : Դուք կարող չէք բանի մը վրայ խոր-
հըրդածելու : Ես , կը ծաղրաբանեմ , բայց
ետքը կը խորհիմ : Ամեն չար սրիկայները կըր-
նան մեզի պէս կատաղութիւն բանեցընել : Քիչ
մը աւելի հաճողաբա զուարթութիւն , քիչ մը
աւելի գութ , քիչ մը աւելի հաւատք երկնից
բարերարութեանը վրայ , ասոնք ամենքը՝
անկեղծաբար խօսելովի՞նչ կընշանակեն ձեր
խելքովը :

— Հիմա որ ես ալ կը խորհիմ ասոնց վրայ ,
ըսաւ մէջերնէն մէկը , կը կարծեմ որ ասոնց-
մով մէկ մարդ մը քիչ մը պակաս սրիկայ կըլ-
լայ :

— Կեցցես , պոռաց զլխաւորը Ստէնտորի*
ձայնով մը . այս անզամ քիչ մը համարում ու-
նենալ կ'ոկոխմ քու խոշոր դլխուդ վրայ , »

Թէպէտ ինձի պատիւ մը չէր այս մարդիկ-
ներէն քիչ մը պակաս սրիկայ համարուիլս , այ-
սու ամենայնիւ ուրախութիւն մը դդացի երբ

* Տրովադայի պաշարմանը դացողյոյն պա-
տերազմողներուն մէկն էր , որուն համար կը-
սեն թէ 50 մարդու ձայնի չափ դօրաւոր ձայն :
ունէր :

տեսայ այս թշուառները որ վերջապէս կը
հասկընային գործվանաց զգացումները մը-
շակելուն կարեւորութիւնը :

Այն ժամանակը պատուհանին փեղկը շար-
ժեցի որպէս թէ պատոհանը կնլլէի : Դրացի-
ներուու դլխառորը զիս կանչեց, ես ալ պատաս-
խան տուիրուսալով որ ինձի պէս բարոյական
խօսելու կը հաճէր : Բայց կը սխալէի : Հասա-
րակ միտքերը կը փախչին լուրջ խորհրդածու-
թիւններէ : Թէ որ մնձ ճշմարտութիւն մը աչ-
քերնուն փայլի, կարող են վայրկեան մը անօր
վրայ զմայլելու . բայց քիչ մը ետքը աչքեր-
նին անկէ կը դարձունեն, եւ ինքոյնքնին ի-
մաստուն ցուցընելու համար՝ զանի երկրա-
յութեան տակ կը ձգեն՝ ու վրան կը ծաղրա-
բանեն :

Ետքը հարցուց ինձի թէ պարտքի համար
բանոք դրուած էի :

«Ոչ :

— Թերեւս դողութեան համար ամբա-
տանուած ես : Զուր տեղը կուզեմըսել, կը
հառկընաս ո՛ :

— Ուրիշ բանի համար ամբատանուած եմ:

— Տարիակա՞ն դործերու համար :

— Ոչ :

— Մարդասպանութեա՞ն համար :

- Աչ :
- Քառապօնարիութեա՞ն համար :
- Ըշդիւ ատոր համար :
- Եւ ի՞նչ են աս քառապօնարիները* :
- Ես ալ աղէկ մը չեմ գիտեր որ քեզի
հասկըցընեմ :

Պահապահներէն մէկը բարկութեամբ խօս
սակցութիւննիս կարեց . եւ ամեն թշնամանք
դրացիներուս զլիսուն տեղալէ ետեւ , դարձաւ
ինձի , եւ տիրոջ մը քան թէ կալանաւորի ծանա
րութեամբ ըստու . «Ամօթէ ձեղի , Պարոն , ա-
տանիկ ամեն տեսակ մարդոց հետ ինօսակցելու
խոնարհիլ զիտէ՞ք որ այս մարդիկը գող են»
Ամչցայ . ետքն ալ ամչնալուս վրայ ամըշ-
ցայ . ինձի թուեցաւ որ աւելի բարեօրառութիւն
քան թէ յանցանք էր ամեն տեսակ թշտառ
ներու հետ խօսակցելու զիջանիլ :

* Քառապօնարի . բառական նշանակութեամբ
այս բառը , Քաղաքական ծածուկ ընկերութիւն
մընէր՝ իննեւտաններորդ դարուս սկիզբները
խոալիոյնոր հասարակապետութեանց կործա-
նումէն ետեւ կազմուած : Նոյատակնէր օտա-
րազդիներն խոալիայէն վոնտել եւ հասարա-
կապետական կառավարութիւն մը հաստատել :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Հետեւեալ առաւօտուն պատուհանը եւ-
լայ Մելքիոր Ճօյան տեսնելու , բայց աւա-
զակներուն հետ չխօսեցայ : Միայն իրենց ող-
ջունին պատասխանելով ըստ թէ իրենց հետ
խօսիլն արդիլուած էր ինձի :

Դաստաստանատամն դիւանագալիրը՝ որ զիս
հարցաքններ էր՝ եկաւ խորհրդաբար իմացուց
ինձի թէ բերկրառիթ այցելութիւն մը պիտի
ըլլար ինձ . եւ երբոր զիս բաւականապէս
պատրաստած կարծեց , ո Չերկընցունեմ , հայ-
րըդ է եկողը , ըսաւ . հաճեցէք հետս գալու .»

Առջեւս ինկաւ , վար իջանք դիւանա-
տունը : Աիրուս կը բարախէր ուրախութե-
նէս ու դորովանքէս , եւ կը ջանայի դուարթ-
դէմք մը ցուցընելու , որպէս զի խեղճ հօրս
սիրան հանդարտեցընեմ :

Նըրոր բանտարկուիլս լսեր էր , յուսացեր
էր որ թեթեւ կասկածներէ յառաջեկած բան
մըն էր եւ շուտով կելէի բանտէն : Բայց տես-
նելով որ բանտարկութիւնս կերկարէր , Միլան
եկեր էր ազատութիւնս հայցելու Աւստրիայ

կառավարութենէն Դժբա՛ղդ պատրանք հայ-
րական սիրոյ Զէր կրնար հաւատալ որ օրինաց
խոսութիւնը վրաս բերելու չափ յանդուզն
կրնայի ըլլալ . Եւ հետը խօսելու ատեն երե-
սանց յայտնած զուարթութիւնս ալ զինքը
այնպէս համոզեց թէ բնաւ վախնալու բան մը
չունէի :

Մեզի չնորհուած կարճ տեսակցութիւնը
սիրոս այնչափ շարժեց որ անհնարէ նկաբաղ-
րել , մանաւանդ զի կը ջանայի սրտայուղու-
թեան երեւոյթներս զսպելու : Այս ջանքս ա-
ւելի դժուարին եղաւ իրարմէ բաժնուած ժա-
մանակնիս :

Խտալիոյ դանուած պարագայներուննայե-
լով հաստատութեամբ կը հաւատայի թէ Աւա-
տրիա կարդէ դուրսխստութիւն մը պլիոփ բանե-
ցընէ՝ ահաւոր օրինակ մը տալու համար . Եւ ես
ալ մահուան կամ երկար բանստարկութեան պի-
տի դատապարառուիմ : Այս համոզումը հօրմես
պահե՛լ . մօտաւոր ազատութեան մը յոյսեր
տալով զանի խարե՛լ . զանի ողջագուրած ժա-
մանակս , մօրս , եղբարցս եւ քերցս վրայ խօ-
սած ատենս զորոնք աշխարհի վրայ մէկ մ'ալ
տեսնելու յոյս չունէի՝ աչքէս արտասուք չը
թափե՛լ . հանդարտ ձայնով զանի աղաչել որ
եթէ կրնայ նէ զիս նորէն տեսնելու դա՛յ . եր-

բէք այսպիսի բռնութիւն մը ինքղինքիս ըրած չէի բոլոր կենացս մէջ։

Հայրս մեկնեցաւ ինէ՝ բոլորովին մխիթարուած։ Ես ալ բանտս դարձայ սիրտս ցաւով լցուած։ Ինքղինքո մինակ տեսնելուս պէս՝ յուսացի որ համարձակ լալով կրնամ ինքղինքըս սփոփին ։ Այս տիտիանքը չկրցայ ձեռք քերել։ Կը հեծկլատայի, բայց չէի կրնար կաթիլ մը արտառոք թափել։ Մեծ կոկիծներու մէջ՝ չկրնալ լալը թշուառութեանց տմենէն անգութնէ, եւ քանի՛ քանի անդամ ասոր փորձը կրած եմ։

Հրատապ տենդ մը զիս բռնեց դժնդակ գլխացաւով մը ։ Բոլոր օրը դրդակ մը թան չըկրցայ խմել ։ « Առտուած տա՞ր որ այս հիւանդութիւնս մահացու ըլլար եւ չարչարանքս կարճեցընէր ։ կըսէի։

Վատ եւ անխիե՛լք տղօթք։ Աստուած չընդունեց զայն, եւ հիմա վառք կուտամ իրեն։ Փառք կուտամ՝ ոչ միայն անոր համար որ տան տարի բանտարկութենէ. ետեւ սիրելի ընտանիքս տեսայ եւ կրնամ ինքղինքս երջանիկ կոչել, այլ եւ անոր համար որ տառապանքը մարդս կտղնուացընէ, եւ կը յուսամ որ ինձի ալ անօդուտ չեղաւ։

բանի նկատման մասնաւութ էն, այսինք գույք

ԳԼՈՒԽ ՃԵ

առաջանաւ մասնաւութ էն, այսինք գույք
այս ժամանակ պատճեն առաջանաւ մասնաւութ էն
այս ժամանակ, առաջանաւ մասնաւութ էն այս ժամանակ

Երկու օր ետքը հայրանորէն ելաւ : Այն
դիշերն հանդիսաւ քնացեր էի եւ տեսող չունէին
Նորէն անհոգ եւ ուրախ դէմք մը կեղծեցի,
այնորէս որ մէկը չկրցաւ նշմարել այն սաստիկ
տառապանքը որ սիրտս կրեր էր եւ տակաւին
կը կրէր :

« Կը յուսամ, ըստ հայրս, թէ քիչ օրէն
թօրինո կը դառնաս : Արդէն պատրաստեցինք
սենեակդ, եւ անձկութեամբ քեզ կ'սպասենք :
Պաշտօնիս պարտաւորութիւնները դիս թօրի-
նօ դառնալու կը հարկադրեն : Զանա, կազա-
չեմ, ջանա շուտով հոն համնելու : »

Եր դորովալից եւ տրառմ բարեկամու-
թիւնը սիրտս կը խոշտանգէր : Կեղծաւորու-
թիւնը որդիական սիրոյ հարկ մը կը թուէր
ինձ, եւ սակայն խղճիս ալ կը դաշէր : Աւելի
արժանաւոր չէ՞ր ըլլար հօրս եւ ինձի՛ եթէ ը-
սէի անոր : - Թերեւս մէկ մ'ալ իրար չաղիտի
տեսնենք այս աշխարհիս մէջ : Բաժնուինք իւ-
րարմէ արփարար՝ առանց քրթմնաջելու, առ-

ունց հեծելու , եւ հայրական օրհնութիւնդ
ընդունիմ դլխուս վրայ :

Այս խօսքերն հազարապատիկ նախամեծ-
ծար կը դասէի կեղծիքէն . բայց կը նայէի այն
պատկառելի ծերունիին աչքերուն , երեսին
խորշումներուն , աղերէկ մազերուն , եւ ինձի
կը թուէր թէ անանկ յուսահանական գոյժեր
լսելու չէր կրնար դիմանալ դժբաղդ մարդը :

Եւ եթէ զանի խարել չուղելուս համար
յուսահատութեան մէջ իյնա՛ր , թերեւումարէ՛ր ,
թերեւս (սոսկալի՛ մտածութիւն) յանկարծա-
մահ թեւերուս մէջ իյնա՛ր :

Ուստի չկրցայ ճշմարիտը ըսել անոր , եւ
ոչ իսկ նշմարել տալ . Առերեւայթ զուարթու-
թիւնս բոլորովին խարեց զանի . Առանց այ-
տասուելու բաժնուեցանք իրարմէ ։ Բայց եր-
բոր բանտս դարձայ , առաջին անգամին պէս
կամաւելի սարսափելի . կերպով սիրու ճմլիլ
սկսաւ : Պարանգ տեղը արտսուքն օդնութեան
կանչեցի :

Երկար կապանաց սոսկութներուն համբե-
րել , չարչարանաց համբերենլ , կարողութենէս
զեր բան մը չէր . Բայց հօրս , մօրս , նղրարցս ,
քերցս զզալիք անդութ կուկիրմին համբերելու
քոլոր կարողութիւնս բաւական չէր .
Այս ժամանակը ինկայ դետինը երկրորդ-

դոթիւն ըրի՝ այնպիսի ջերմեռանդութեամբ
մը որուն նմանը երբէք ունեցած չէի, եւ սա
աղօթքը ըսի :

— Աստուած իմ, քու ձեռքէդ ամեն բան
կընդունիմ. բայց բաւական զօրութիւն տուք
այն որաերուն որոց պէտք էին, որպէսզի կա-
րող ըլլանինէ անցնելու, եւ անոնցմէ ոչ մէ-
կուն կեանքն օր մը անդամ չկարճընայ այս
պատճառաւ :

Ո՞վ բարերարութեան աղօթից: Քանի մը
ժամ չարունակ միտքս առ Աստուած բարձրա-
ցուցի, եւ յոյսս կաւելնար քանի որ Աստուծոյ
բարութեանը վրայ կը մտածէի, քանի որ
մարդկային հոգւոյն մեծութեանը վրայ կը մը-
տածէի՝ երբ որ իր անձնասիրութիւնը մէկդէ
թողլով՝ անհուն խմաստութեան կամքէն ու-
րիշ կամք չունենալու կը ջանայ:

Այս՝ կընայ ըլլալ այս: Այս՝ այս է մար-
գուն պարտականութիւնը: Բանականութիւ-
նը որ Աստուծոյ ձայնն է, բանականութիւնը
կըսէ մնզի թէ ամեն բան զոհել պէտք է ա-
ռաքինութեան: եւ միթէ ցաւսդին պարա-
գաներու մէջ՝ առաքինութեան Աղբիւրին կա-
մացը դէմ մաքառիլը՝ առաքինութեան պար-
ագան եղած դոհերնիս կատարել կըլլայ:

Երբոր կախաղանը կամ ուրիշ որ եւ իցէ

մարտիրոսութիւն մը ամհրաժեշտ է, վատարար
գողակ եւ չէրը օրհնելով համարձակ մնոնելու.
Հերթալը՝ ողբալի ցածութեան ու տգիտութեան
ապացոյց տալ է : Եւ մենք պէտք է հաճինք
ոչ միայն մեր մահուանը, այլ եւ մեր սիրելի-
ներուն վշտակրութեանը. Մեղիներելի եղա-
ծըն է խնդրել միայն Աստուծմէ որ անոնց կրա-
կիծը թեթեցընէ եւ ամենուն օգնութեան
հասնի : Այսպիսի աղօթք մը միշտ լսելի կը-
լայ :

ԳԼՈՒԽ ՃԶ.

Քանի մը օր անցաւ եւ ես նոյն վիճակին
մէջ էի, այսինքն՝ քաղցր տխրութեան մը մէջ՝
լի հանդարտութեամբ եւ աստուածակաշտա-
կան մտածութիւններով : Կը թուէր ինձի թէ
ամեն տկարութեան յաղթեր էի եւ ալ այնու-
հետեւ ոչ մէկ անհանգստութիւն մը չէր կրնար
սրտիս տիրել : Յիմա՞ր պատրանք: Մարդս միշտ
պէտք է ամենակատարեալ հաստատամտու-
թեան նկրտի, բայց այս աշխարհիս մէջ չկըր-
նար հասնիլ ամոր: Ո՞վ կրցաւ զիս նորէն վըր-

դովել : Դժբաղդ բարեկամի մը տեսքը , խեղձ
բիէոօիս տեսքը , որ ինձմէ քանի մը քայլ
հեռուէն անցաւ ճեմնիքին մէջ՝ երբորեսպա-
տուհանն էի : Իր սեննեակէն հաներ՝ եղեռնա-
ւորաց բանտը կը տանէին զանի :

Այնչափ շուտով անցան ինքն եւ հետի
մարդիկը , որ հաղիւ ժամանակ ունեցայ զանի
ճանչնալու եւ բարեկամական ողջոյն մը տռ-
նուլ տալու :

Խե՛ղճ երիտասարդ : Ծաղիկ հասակի մէջ,
այնպիսի հանճարով մը բարեմասնեալ՝ որ
խիստ բարձր յոյտեր կուտար . պարկեշտ , փա-
փուկ եւ սիրող բնաւորութեան մը տէր . կեան-
քը փառաւորապէս վայելելու համար ստեղծ-
ւած . քաղաքական գործերու համար բանտը
ձգուիլ այնպիսի ժամանակ մը ուր տնհար էր
օրինաց ամենածանր պատուհամներէն ինք-
զինք ազատել :

Այնպիսի կարեկցութիւն մը զդացի անոր
վրայ , այնպիսի կսկիծ մը զդացի զանի չկրնալ
աղատելուս կամ գոնէ ներկայութեամբս ու
խօսքերովս զանի չկրնալ մխիթարելուս հա-
մար , որ հանգստութիւնս բոլորովին կորուսի
Գիտէի ո՞րչափ կը սիրէր իր մայրը , քոյքերը ,
քեռացըրը , քեռորդիները . ո՞րչափ կը ջանաք
անմնց երջանկութեանը նպաստելու . ո՞րչափ

սիրելի էր իր այն ամենն սիրոյ առարկայներուն։
Կը հասկընայի ո՞րչափ դառն ըլլալու էր անոնց
ամենն մէկուն կակիծը այսպիսի մեծ դժբաղ-
դութեան մը մէջ։ Զգացած անհնարին թաղ-
ծութիւնս չեմ կրնար խօսքով բացատրել։ Եւ
այս վիճակս այնչափ երկար տեւեց որ սրաիս
անդորրութիւն գտնալէն յաւիտեան յուսա-
կըտուր կըլլայի։

Այս երկիւզս ալ պատրանք մըն էր։ Ո՞վ
վշտակիրք, որին քդինքնիդ անսպառ, սոսկալի
եւ միշտ աճեցուն տրտմութեան մը որս եղած
կը կարծէք, համբերեցէք քիչ մը եւ սխալել-
նիդ կը հասկընաք։ Ոչ ամենակատարեալ սըր-
տի անդորրութիւնը եւ ոչ ամենաբուռն սրաս-
յուղութիւնը չեն կրնար միշտ տեւել։ Այս
ճշմարտութեան համոզուիլ պէտք է, որպէս
զի երջանկութիւնն ժամանակ չմեծամտինք
եւ ձախորդութեան ժամանակ ալ չնուասատ-
նանք։

Այս երկար յուսաբեկութեան յաջորդե-
ցին տկարութիւնն եւ անզգայութիւն։ բայց
անզգայութիւնն ալ տեւողական չէ, եւ վախ-
ցայ որ այսուհետեւ անդադար այս երկու ծայ-
րայիդութիւններուն մէջ պիտի տատանէի։
Այսպիսի ապագայի մը դադափարը զիս սոս-
կացուց, եւ այս անզամ ալ նորէն ազօթքի։

Դիմեցի :

Խնդրեցի Աստուծմէ որ օգնէ խեղճ Բիեռոիս՝ ինչպէս ինձի, օգնէ անոր ընտանեացը՝ ինչպէս իմինիս : Այս խնդրուածքը քանի մը հեղ կրկնելով կրցայ ստուգիւ սիրտս հանդարտեցընել :

ԳԼՈՒԽ ԺԷ

Բայց երբօր միտքս խաղաղեր էր, կրած յուսահատութիւնս կը յիշէի եւ տկարութեանըս վրայ գրգռելով ինքզինքս անկից բժշկելու ճարը կը փնտոէի, Ասոր համար սա հնարքը մտածեցի : Ամեն առաւօտ, ինձի առաջին զրադմունք ըրի, Ստեղծովին համառօտ վտարանութիւն մը մատուցանելէ ետեւ, խնամով եւ քաջութեամբ յիշել սիրտս խռովելիք ամեն հնարաւոր դէպքերը : Ամեն մէկ ենթադրութեան վրայ միտքս կը հաստատէի եւ ինքզինքս անոր կը սլատրաստէի : — Ամենին սիրելի անձանց այցելութենէն սկսեալ մինչեւ

դահճին այցելութիւնը մի առ մի երեւակայութեանս առջեւ կը բերէի : Այս տխուք վարժութիւնը քանի մը օր անտանելի երեւցաւ ինձ . բայց յարատեւութեամբ չարունակեցի եւ չատչանցաւ գոն եղայ :

1821 տարւոյն առաջին օրը Լուինի կոմման հրաման ստացեր էր գալու զիս տեսնելու : Մէջերնիս եղած դողտր եւ սերտ բարեկամութիւնը, իրարու շատ բաներ խօսելու պէտքերնիս , ատենադպրի մը ներկայութենէն սրտերնիս իրարու բանալու արգելքը , մէկ տեղ դանուելու համար շնորհուած ժամանակին կարճութիւնը , զիս տադնապեցընող չարաշշուկ նախազգացութիւնները , սիրտերնիս հանդարտ երեւցընելու համար երկուքիս ալ ըրածնիգերը , առոնք ամենը կը թուէր թէ զարհուրելի կերպով ոլորտս տակն 'ի վրայ պիտի ընէին : Երբոր այն գերազանց բարեկամս բաժնուեցաւ ինէ , ինքզինքս հանդիստ գտայ - խանդադատեր էի , բայց հանդարտ էի :

Այսչափ օգտակար բան է բուռն սրտայուգութեանց դէմինքզինք նախապատրաստելը :

Անխռով խաղաղութեան մը հանելու առաջադրութեանս շարժառիթը՝ դժբաղզութիւնս թեթեւցընելու բաղձանքէն աւելի՝

սրտատանջութիւնը ինձի գծուծ եւ մարդոց
անարժան երեւիլն էր Յուղեալ միտք մը չկըր-
նար խորհրդածել. մինչեւ անգամ կը պատահի.
որ գաղափարներուն չափազանցութենէն յա-
ռաջելած մտաւորական անկարգութեան մէջ՝
մարդ՝ առանց իր ուղելուն՝ անխելք, կատաղի
եւ ապիրատ տրամաբանութեան մը կանոններ
կ'ստեղծէ իրեն համար : Ասանկ վիճակ մը հա-
կառակ է թէ՛ փիլիսոփիայութեան եւ թէ՛ քը-
րիստոնէական զգացմանց :

Եթէ ես քարողիչ ըլլայի, սրտատանջու-
թիւնը հալածելու հարկը յաճախ կը քարողի՛ի
Մարդ մը այս պայմանով միայն կրնայ բարի
ըլլալ : Ո՞րչափ խաղաղ է՞ր իրանձին եւ այլոց
հետ Այն՝ որուն պէտք է տմննքս ալ նմա-
նինք : Չկայ հոգւոյ մնձութիւն, չկայ արդա-
րութիւն՝ առանց գաղափարներու չափաւո-
րութեան, առանց այնպիսի միտք մը ունեւ-
նալու՝ որ այս կարճատեւ կենաց դիպուած-
ներուն վրայ տւելի ժամանակու տրամադրեալ
ըլլայ՝ քան դայրանալու : Բարկութիւնը այն
գժուարադէալ առթին մէջ միայն քիչ մը ար-
ժէք ունի, ուր կը յուսացուի թէ կրնայ ան-
շպամ մարդ մը խոնարհցընելու եւ անօրէնու-
թեան համբէն հանելու ծառայել :

Թերեւս իմ զիտցածներէս տարրեր եւ

նուազ դատապարտելի բարկութիւններ ալ ըլ-
լան։ Բայց իմ վրայ մինչեւ այն ժամանակը տի-
րող դայրոյթը լոկ վշտակը թիւն մը արդասի ք
չէր։ Շատ ատելութիւն կը խառնուէր միշտ հե-
տը, բաղում վախաք անփծելու, եւ մարդկային
ընկերութիւնը եւ այս կամայն անձերը գար-
շելի դոյներովնկարելու։ Այս բանը համաճա-
րակ ախտ մ'է աշխարհիս մէջ։ Մարդիկ ուրիշ-
ներն ատելնուն համար իրենք զիրենք լաւա-
գոյն կը կարծեն։ Կը թուի թէ ամեն բարե-
կամներ իրաբու ականջն ՚ի վար այսպէս կը սեն։
« Միայն իրար սիրենք մեր մէջը, եւ բարձրա-
ձայն գոչենք թէ մենէ դուրս մնացած բոլոր
մարդիկը սինլքորխութան մ'են։ Ասանկ ընե-
ցու ըլլանքնէ մեզ կիսաստուածներու տեղ կը
դնեն»։

Զարմանալի՛ բան է որ մարդիկ այսպէս
կատաղութեան մէջ առըելէ այնչափ հաճոյք
զգան։ Կերպ մը դիւցազնութիւն կը բանեցը-
նեն այս վարժունքիս մէջ։ Եթէ այն անձը՝ ո-
րուն վրայ երէկ բիւրանէծք կը տեղային՝ մնու-
նելու ըլլայ, իսկոյն ուրիշ մը կը վնասուն անոր
տեղ Ռ՞վ անփծեմ այսօր։ Ռ՞վ նշաւակ ըլլայ
իմատելութեանո։ Սա հրէշը Ռ՞վ ուրա-
խութեանս, ահա դտայ։ Եկէ՛ք, բարեկամ-
ներ, բղքանք զանի։

Այսպէս կերթայ աշխարհու . եւ առանց
զանի վիրաւորելու՝ կրնամըսել թէ զէշ կեր-
թայ :

ԳԼՈՒԽ ՃԸ

Դրուած սոսկալի սենեակէս տրատնջա
շատ անիրաւ չէր հարեւաղդաբար լաւադոյն
սենեակ մը պարպուելով՝ զանի ինձի տալու ա-
նակընկալ աւետիսը բերինինձի :

Այս լուրին վրայ պէտք չէ՞ր որ զմայլէի .
— Եխակը ըսելով . չկրցայ առանց տրատնելու.
Մագդաղինէն միաքս բերել : Խնչ տղայտմը-
տութիւն : Միշտ մէկ բանի մը յարիլ, և ան ալ
տուանց հաստատուն պատճառներու . Այն զէշ
սենեակէն դուրս ելած ատենս՝ վերջին ան-
գամ մը դարձայ նայեցայ այն պատին՝ որուն
կը կրթնէի, մինչդեռ անոր ետեւի կողմն աղ՝
թերեւս քանի մը մատնաչափ անդին՝ դժբաղդ
մեղաւորուհին կը կրթնմէր : Կուզէի անգամ
մըն ալ լսել սա երկու որտաշարժ տողերը .

«Ո՞վ պիտի ետ դարձունէ թշուառին իր
երջանկոթիւնը : »

Ունայն բաղձանք : Ահա նոր բաժանում
մ'ալ իմ թշուառ կենացս մէջ : Չեմ ուզեր եր-
կար խօսք ընել ասոր վրայ, որպէս զի վրաս չը
խնդացընեմ . բայց կեղծաւորութիւն ըրած
կըլլայի եթէ չխռատովանէի թէ այս բաժանու-
մը զի ոքանի մը օր տիմրեցուց :

Գացած ժամանակս մնաք բարովը իմ
դրացի խեղճ դողերէն երկուքին որ պատու-
հանն ելած էին : Պետք հոն չէր . բայց ընկեր-
ներէն խմանալով ան ալ պատուհանը ելաւ ու
զիս ողջունեց . Յետոյ սկսաւ երդել . «Ո՞վ պի-
տի ետ դարձունէ թշուառին » : Ասով զիս
ծաղրել կուզէր արդեօք : — Գրաւ կը դնեմ
որ այս հարցումը միտուն հոգիի ընեմ՝ քառա-
սունեւ ինը ռԱյտ ։ կը պատասխանեն : Սակայն
ես կը յօժարիմ հաւասարութէ բարեմիտ սա-
տանսն ինձի հաճոյ բան մը ընել կուզէր անով.
Պոնէ ես ասանկ մնկնեցի զայն, եւ վերջին
նայտւած քով մը շնորհակալութիւնս յայտնե-
ցի անոր : Ան ալ ձեռքը պատուհանին վանդա-
կասիւներէն դուրս երկնցընելով զլսարկը կե-
րեցընէր ու նշան կընէր ինձի՝ բայց ես դար-
ձայ սանդուղքն 'ի վար իջնելու :

Երբոր բակը մտայ, քաղցր միսիթարու-

բութիւն մը զգացի : Խուլ-համրս ճեմելիքին
տակն էր : Զիս տեսաւ , ճանչեց , եւ կուզէր
դիմացս վազել : Բանտապետին կինը՝ չեմ դե-
տեր ինչ պատճառաւ՝ զանի օձիքէն բռնեց ու-
տաւնէններս վոնտեց : Շատ դժարս եկաւ զա-
նի չկրնալ համբուրելուս վրայ . բայց ինձի
դիմելու համար ցատքը տեղուած սիրտս բերկ-
րագին խանդաղատանքով մը շարժեց : Այս-
չափ անուշ բան է սիրուիլը :

Այն օրը մեծ արկածներու օր մ'էր : Ան-
կէց երկու քայլ անդին տռաջին սենեակիս
պատուհանին առջեւ հասայ , ուր Մելքիոր
Ճօյա կը նստէր :

— « Ոզնոյն , Մելքիոր , ըսի անցած ժա-
մանակս , Գլուխը վեր առաւ , եւ դէպ՚ի ինձի
վազելով ողջոյն , Ակլիլիօ , պատասխանեց :

Աւազ . թոյլ չտրուեցաւ ինձի վայրկեան
մը հոն կանգ առնուլ : Դարձայ մեծ դրան տա-
կը , փոքր սանդուղքէ մը վեր ելայ , եւ զիս
փոքրիկ սենեակ մը զրին , որ Ճօյայի սենեա-
կին վրան էր , եւ բաւական մաքուր էր :

Երբոր անկողինս հոն բերուեցաւ ևւ պա-
հապանները զիս մինակ թողուցին , առաջին
դործս եղաւ պատերն աչքէ անցունել : Հա-
մառօտ ծանօթութիւններ կային դրուած , ո-
մանք մատիտով , ոմանք ածուխով , ոմանք ալ

Արածայր նիւթերով՝ Արկու տուն գեղեցիկ ու-
տանաւոր երդ մը գտայ գաղղիերէն լեզուաւ որ
դոց չընելուս վրայ կը ցաւիմ հիմա։ Արկու քին
ներքեւ ալ Դաստիարակութեան ստորագրութիւնը
դրուած էր։ Ակսայ այս տանաւորները երգել՝
խեղճ Մագդաղինէիս եղանակը կրցածին չափ
անոնց յարմարցընելով։ Եւ ահա յանկարծ մօ-
տէս ձայն մը նոյն տողերն սկսաւ երգել ուրիշ
եղանակաւ մը։ Երբոր լմնցուց, « կեցցե՞ս » զ
պոչեցի։ Դրացիս ողջունեց զիս՝ հարցնելով
թէ գաղղիացի՞ էի։

« Ոչ, խոալացի եմ, եւ անունս Ակլիփիօ
Բէլլիքօ է։

— Յը աւելաց ո՞ւ Ուհակին հեղինա՞կը։

— Այո՛, նոյն խոկ։»

Ասոր վրայ՝ պատուասիրական շողոքորթ
գովեստ մը եւ բանտարկութեանս վրայ ալ
առվորական ցաւակցութեան խօսքեր ըրաւ-
ինձի։

Հարցուց թէ Խոալիոյ ո՞ր մասին մէջ ծը-
նած էի։

« Բիէմօնթէի Աալու ձձա քաղաքը, ըսի՞ »
Հոսնորէն յարդանաց խօսքեր Բիէմօն-
թեցւոց ընաւորութեանն ու մտքին վրայ եւ
մամնաւոր գովեստ Աալու ձացի մեծահան-
ձոր մարդոց եւ յատկապէս Պօտինիի վրայ։

Այս գովինդատները կարճ եւ՝ փափուկ էին։
Բնչպէս որ կը վայլէ քարելիրթ մարդու մը :

« Ենծի ալ ներեցէք, Պարոն, ըսի, հար-
ցընել ձեզի թէ դո՞ւք ովէք : »

— Ան որ ձեր քիչ մը առաջ երգած հա-
մակօտ երգը յօրինած է :

— Խ՞նչ կըսէք. այս ողատին վրայ դրսւած
երկու գեղեցիկ ոտանաւորները ձե՞րնեն :

— Այս, Պարոն :

— Ուրեմն դուք

— Տարաբարդիկ Նորմանտիոյ դու՛ւքն
եմ : »

ԳԼՈՒԽ ՃԹ.

Այս միջոցին բանտառեւոց մեր պատու-
հաններուն տակէնանցնելով, մեղի հրամայեց
որ լոենք :

— Խ՞նչ տարարադիկ Նորմանտիոյ դուքս
է այս, կըսէի ես ինձի մասածելով : Այս անու-
նը Լուդովիկոս Ֆանքարին արդւոյն տրուած

պատուանունը շէ՞ր մի՛ բայց այն խեղճ տղամ՝
մեռած է եւ հնար չէ երկբայիլ ասոր վրայ ։
Ուրեմն իմդրացիս այն յիմարներէն մէկն է ո-
րոնք դանի դեռ ողջ կարծեցընելու ելան ։

Արդէն քանի մը անձեր ինքվինքնին լու-
գովիկոս Ժէերորդը ձեւացոցին, բայց խա-
բէութիւննին յայտնուեցաւ ։ ի՞նչպէս կարե-
լի է ասոր ալ հաւասար ։

Թէպէտ եւ կը ջանայի երկբայութեան
մէջ մնալ, այսու ամենայնիւ անյաղթելի ան-
հաւանութիւնն մը միշտ կը յաղթէր մտացս մէջ,
եւ մինչեւ ցայտօր ալ շարունակ տիրած է մըտ-
քիաւ Սակայն որոշեցի որ խեղճը չվիրաւորեմ՝
որչափ զրաբանութիւններ ալ պատմելու ըլ-
լայ ինձի ։

Գիշ մը ետքը նորէն սկսաւ երդել եւ նո-
րէն խօսակցիլ սկսանք ։

Իր անձին վրայ հարցում ընելուս՝ պա-
տասխանեց թէ ինքը ստողիւ լուղովիկոս
Ժէերորդն էր, եւ սկսաւ չարաչար կշտամբել
իր հօրեղբայր լուղովիկոս Ժէերորդը՝ որ իր ի-
րաւունքը յափշտակեր էր ։

— Բայց այդ իրաւունքդ ի՞նչպէս չքալե-
ցոցիր Պուրապոնեաններուն Գաղղիոյ մէջ վե-
րահաստատուած ժամանակը ։

— Այն ժամանակը ես Պոլոնիա մնալու

Հարկադրուեր էի ծանր հիւանդութեամբ մը :
 Առողջանալուս պէս՝ մնե տէրութեանց ներ-
 կայացայ, բայց եղածը եղած էր : Հօրեղբայրը
 վատութեամբ չուզեց զիս ճանչել . քոյր ալ
 անոր հետ մէկ եղաւ զիս ուժքի տակ առնելու .
 Միայն բարետիրտ քօնտէի իշխանը թեւաստ-
 րած ընդունեց զիս . բայց անոր բարեկամու-
 թիւնը կարող չէր բան մը ընելու . Դրիկուն մը
 Փարիզի փողոցներուն մէջ սիկարեաններ դա-
 շոյններով վրաս յարձակեցան, եւ հրաշիւք
 տղատեցայ ձեռուընուն : Ժամանակ մը Նոր-
 մանտիոյ մէջ թափառելէ ետեւ . Խտալիա եկայ
 ու Մօտենա նստայ . Հոնկից նամակ նամակի
 վրայ զրելով Եւրոպայի թագաւորներուն, եւ
 մասնաւորապէս Աղէքսանդր կայսեր որ խիստ
 սիրալիր կերպով կը պատասխանէր ինձ, իրա-
 ւունքս ձեռք բերելու բոլոր յոյս չէի կորսրն-
 ցուցած, կամ գոնէ թէ որ քազաքականութիւ-
 նը իմ իրաւունքս Գաղղիոյ գահին զռնել պա-
 հանջէր, պատշաճ հրիտակ մը ձեռք բերել կը
 յուսայի : Բայց զիս բռնեցին, Մօտէնայի դըք-
 ութեան սահմանագլուխը տարին եւ Աւա-
 րիոյ կառավարութեան ձեռքը մատնեցին .
 Ահա ութ ամիս է որ հոս թաղուած եմ, եւ
 Խօսուած զիտէ ե՞րբ պիտի գուրս ելնեմ :
 Այսխօսքերուն հուատք չընծայեցի. բայց

հոն թաղուած ըլլալը ճշմարտութիւն մ'էր ,
եւ խորին կարեկցութիւն մը աղջեց ինձի :

Աղաչեցի որ իր կենաց համառօտ սպառ-
մութիւնը ընէ ինձի : Մի ըստ միոջէ պատմեց
այն ամեն մասնաւոր անցքերը որ արդէն զի-
տէի լուդովիկոս ԺԸերորդին վրայ . վատ կոշ-
կակար Սիմոնին հետ գրուիլը . իր դժբաղդ
մօրը Մարիամ Անթօանէթ թաղուհեոյն վա-
րուցը դէմ նիւթուած սոսկալի դրազարտու-
թեան մը համար իրմէ վկայութիւն առնուիլը ,
եւ այլն , եւ այլն : Վերջապէս աւելցուց թէ
գիշեր մը եկան զինքը բանտէն վերցուցին , իր
տեղը Մաթիւրէն անուամբ ապուշ տղայ մը
դնելով զինքը փախուցին : Քառաձի կառ ք մը
կ'սպասէր փողոցը . ձիերուն մէկը փայտաշէն
մեքենայ մըն էր , զինքը անոր մէջ պահեցին ,
Յաջողութեամբ մինչեւ Ուն հասան , եւ սահ-
մանն անցնելիուն պէս . . . զօրապետը (անունը
ըստ բայց միտքէս ելեր է) որ զինքը ազատեր
էր՝ ժամանակ մը իրեն դատիարակութիւն
ու հայրութիւն ըրաւ . ետքը զինքը Ամերիկա
զրկեց կամ տարաւ : Հոն՝ այս դահազուրկ
պատանի թագաւորը բաղդին հազար կերպ
շեղականութեանցը ենթակայ եղաւ . անա-
պատաներուն մէջ անօթութիւն քաշեց , զին-
ուոր եղաւ , Պրէզիլիայի թաղաւորին տրքուն-

եաց մէջ պատուով եւ երջանիկ ապրեցաւ .
յնառյ զրագարտուեցաւ , հալածեցաւ , փախ-
չելու հարկադրեցաւ : Նաքօլէոնի թագաւո-
րութեան վերջին ժամանակները Եւրոպա դար-
ձաւ , Նաքօլիի մէջ բանտարկուեցաւ Յովակիմ
Միւրայէն (որ այն ժամանակը Նաքօլիի թա-
գաւոր էր) . ետքը երբոր ազտուեցաւ ու Գաղ-
ղիոյ գահը պիտի խնդրէր , Պոլոնիայի մէջ այն
աղետալի հիւանդութենէն ըռնուեցաւ , որուն
միջեցին Լուդովիկոս Ֆլերորդ Գաղղիոյ թա-
գաւոր պատկուեցաւ :

ԳԼՈՒԽ Ի .

Այս վէպն այնպէս հաւասարի կերպով մը
կը պատմէր որ մարդ կը հիանար : Զէի կրնար
հաւասար , բայց կ'զմայլէի : Գաղղիոյ յեղա-
փոխութեան ամենն անցքերուն քաջ ծանօթու-
թիւն ունէր . բնական ճարտարանութեամբ մը
կը խօսէր անոնց վրայ , եւ ամեն առթիւ մանր

հետաքրքրական պատմութիւններ մէջ կը բերէր : Խօսուածքին մէջ զինուորական ոճ մը կարքայց զուրկ չէր քարելիրթ ընկերութեանց մէջ սովորական եղած վայելչութենէն :

« Ներեցէք , ըսի . որ առանց արարողութեան վարուիմ ձեզի հետ եւ պատուանունեւրով ձեզ չկոչեմ : — Ես ալ ստանկ կը փափաքիմ , ըսաւ : Կրած ձախորդութիւններս դոնէ մնափառութեանցվրայ ծիծաղիլ սովորեցուցին ինձի : Հաւատացէք որ աւելի պատիւ կը համարիմ ինձի մարդ ըլլալ՝ քան թէ թադաւոր ։ »

Առտու իրիկուն երկարօրէն կը խօսակցէինք . եւ թէպէտ գիտէի որ կատակերգութիւն մէր խաղացածը , այսու ամենայնիւ իր սիրաք քարի , աննենդ եւ առաքինութեան յօժարամէտ կերեւէր ինձ , « Բանի՝ քանի անդամ մտաքերեցի ըսել իրեն . » « Ներեցէք , կուղէի հաւատալ թէ դուք կուդովիկոս Ժէերորդնէք . քայց անկեղծութեամբ կը խոստովանիմ թէ միտքս հակառակին համոզուած է . եկէք անկեղծարար հրաժարեցէք այդ կեղծիքէն : Եւ մոօքս դեղեցիկ ճառ մը կը սրտորաստէի ամեն կերպ ստութեանց՝ մինչեւ անգամ խիստ անմեղ երեւցածներուն ունայնութեանը վրայ բայց օրէ օր կը յապաղէի՝ սպասելով որ մտերմութիւննիս տակաւին քանի մը աստիւ-

ճան աւելնայ, եւ երբէք չհամարձակեցայ դի-
տաւորութիւնս ՚ի գործ զնելու :

Երբ կը խորհիմ այս երկչոտութեանս վը-
րայ, երբեմն զայն կարդարացընեմ մարդա-
վար ըլլալու հարկով, սիրտ չկոտրելու պար-
կեշտ երկիւղով, ի՞նչ գիտնամ: Բայց այս
արդարացումը զիս գոհ չըներ, եւ չեմ կրնար
չխոստովանիլ որ աւելի գոհ պիտի ըլլայի ես
ինձմէ: թէ որ մտքիս մէջ պատրաստած գե-
ղեցիկ ճառս կոկորդիս մէջ մնացած չըլլար,
Սուտի մը հաւատալ ձեւացընելը վատասրր-
տութիւնէ: կը կարծեմ որ մէկ մալ չեմ ը-
ներ :

Այս, վատասրտութիւն: Անշուշտ որչափ
փափուկ յառաջարաններով բարեքենք, ծանր
է ըսել մէկու մը թէ «Չեմ հաւատար խօսքիդ»:
Պիտի նեղանայ: իր բարեկամութեան բերկրու-
թիւնը պիտի կորսնցընենք, թերեւս թշնամանք
ալ պիտի տեղայդիլխուսուտ բայց ինչ որ ալ կոր-
սընցընենք, այս վարմունքը կեղծաւորութեւ-
նէն պատուաւոր է: Եւ թերեւս, մեղ նախատող
թշուտուականը՝ տեմնելով որ իր սուտը չենք
կլեր՝ վերջապէս մտքովը իրաւունք կուտայ
մեր անկեղծութեանը, եւ խորհրդածելով ը-
րածին վրայ կը զղջայ:

Կահապահներն հակամէտ էին հաւատու-

լու թէ ստուգիւ կուդակով ժէերորդն էր :
 Եւ արդէն շատ բաղդի փոփոխութիւններ տես-
 ած ըլլալով, կը յուսային որ օր մը կրնար Գաղ-
 ղիոյ գահը ելլել, եւ այն ժամանակը իրենց
 ծառայական անձնութրութիւնը յիշել : Արդա-
 րեւ զանի փախոցը նելու չէին նպաստեր. բայց
 ուրիշ ամեն բաղձանացը ակնածութեամբ կը
 ծառայէին :

Այս ակնածութեան չնորհիւը պատիւ ու-
 նեցայ այս մեծ անձը տեսմնելու . ՀՕ-43 առա-
 քեկան միջահասակ եւ դէր մարդ մ'էր, եւ բո-
 լորովին սպորադնեան դէմք մը ունէր . Այս
 պատահական նմանութիւնն է թերեւս որ այս
 տիտոր դերը խաղալու թելադրեր էր զանի :

ԳԼՈՒԽ ԻԱ

Պէտք է որ մարդկային յարդանայ անար-
 ժան մէկ ուրիշ գործու ալ խոստովանիմ : Դրա-
 ցիս անաստուած չէր . մինչեւ անզամ երբեմն

կրօնական զգացմանց վրայ ալ կը խօսէր՝ իրրեւ
այսպիսի մարդ մը՝ որ անոնց յարդը կը ճանչէր
եւ օտար չէր անոնցմէ. այսու ամենայնիւ շատ
մը կանխակալ անիրաւ. կարծիքներ ունէր Քը-
րիստոնէութեան դէմ, որուն ճշմարիտէութիւ-
նըն ու հոգին նկատելէ աւելի՝ զեղծումները կը
նկատէր. Այս հարեւանցի փիլիսոփայութիւնը
որ Գաղղիոյ մէջ յեղափոխութիւնէն առաջ եւ
ետքը մտքերը դրաւերէր՝ այս մարդն ալ շլա-
ցուցերէր կը կարծէր թէ մարդ մը՝ Աւետարա-
նի կրօն քին չհետեւելով՝ աւելի սրբութեամբ
կրնար զԱստուած պաշանել. Առանց խորին ծառ-
նօթութիւն մը ունենալու քօնտիյեաքի եւ
Թրասիի, զանոնք կը յարդէր իրբեւ. մեծ փիլի-
սոփայներ, եւ կերեւակայէր թէ վերջինը քը-
նպղանցութեան ամենն հնարաւոր խնդիրները
լուծերէր.

Ես՝ որ աւելի յառաջ վարուծ էի փիլիսոփա-
յութեան ուսումն, որ փորձառական վարդա-
պեառութեան տկարութիւնը կ'զգայի, որ քըն-
նադատութեան անհեթեթ սխալները կը ճան-
չէի, որոց օգնութեամբ Վոլթէոի դարը Քրիս-
տոնէութիւնը բամբասել ուղերէր էր. ես՝ որ կար-
դացերէի կէնէ եւ ուրիշ մեծ մասենազիրները
որ այն սուստ քննադատութեան դիմակը վար
առին. ես՝ որ համազուած էիթէ մէկ մարդ մը

բանաւորասպէս չկրնար զլկստուած ընդունիլ
եւ Աւետարանը մերժել։ Ես՝ որ ցած բան մը կը
համարէի հակաքրիստոնէական կարծեաց հո-
առանքին տեղի տալ, եւ չկրնալ բարձրանալ մին-
չեւ ճանչելու թէ կաթողիկէ հաւատքը՝ եր-
բոր ծաղրածութեան չառնուի, պարդ եւ վանք
է, արդ, ես՝ այս համոզումս մարդկային ակնա-
ծութեան զեհելու ցածութիւնը ունեցայ։ Դը-
րացիս ծաղրաբանութիւնները զիս կը շփոթե-
ցընէին։ Թէ եւ անոնց թեթեւութիւնը լաւ
կը հասկընայի։ Ուստի ծածկեցի հաւատքս,
վարանեցայ, հարցուցի ես ինձի թէ հա՞րկէ էր
կամ ոչ՝ գէմ խօսիլ անոր։ ըստի թէ անօգուտ
էր, եւ ինքզինքս ասով արդարացած համա-
րել ուղեցի։

Վաստութիւն, վաստութիւն։ Ե՞նչ վոյթ
է յարդ գտած կարծիքներուն գոռոզութիւնն
ու ճամարտակութիւնը՝ երբոր հիմ չունին։
Ճշմարիտէ որ անժամ եւ անխորհուրդ նախան-
ձաւորութիւնն աւելի կրնայ դրդուել չհաւա-
տացողը։ բայց ներքին համոզմամբ կարեւոր
ճշմարտութիւն ճանչցուած մէկ բան մը ան-
կեղծաբար եւ միանգամայն համեստութեամբ
խռոտովանին անհրաժեշտ պարտք մ'է, թէ
եւ հաւանութիւն չգանելէ դատ՝ ծաղու ալ
հանգիպելու ըլլայ։ Ասանկ աղնաւական խռո-

տովաճնութիւն մը միշտ կրնայ ըլլայ՝ առանց
ձախողաբարքարողէի մը դէմք առնելու :

Այս կտրեւոր ճշմարտութիւն մը խոս-
տովանիլն ամեն ժամանակ պարտք մ'է ։ վա-
սըն զի թէ որ անմիջապէս ճանշցութիւն չյու-
սացուի ալ նէ, դոնէ կրնայ միտքերն այն
կերպով պատրաստել, որ օր մը անոնց դատու-
մը աւելի անկողմնապահ ընէ, և հետեւ պար-
բռառյ յաղթութիւնն ապահովցընէ ։

մասնաւոր պահման մեջ տեսակ պահության մէջ
բացառութ ու անօրոշ և անուղղ ուժից վե
ճականական պահութ ու անօրոշ ուժից պահութը առ
անդիքայ առանց ու անուղղ պահութ ու անօրոշ ուժից
առանց ու , **ԳԼՈՒԽ ԻՐ** . ինչ առանց

Սեմեակիս մէջ ամիս մը եւ քանի մը օր
մնացի : 1824 փետրուար 18էն 19 լուսնայս
գիշերը՝ փակաղակներուն ու բանալիներուն
շառաչիւնէն արթնցայ . եւ տիտայ որ քանի մը
մարդիկ մտան սենեակս լսովուներով մը : Մէկէն
ի մէկ անանկ թուեցաւ ինձի թէ զիս խողիսո-
ղելու կողային : Բայց երբոր անհանգիստ
օրտով անոնց դէմքը կը նկատէի : Պ . . . կու

ող քաղաքավարութեամբ քովս եկաւ եւ ա-
ղաչեց որ շուտով հագուիժ ու երթանք :

Այս անակնկալ լուրը զիս ափշեցուց , եւ
յիմարաբար յուսացի որ զիս Բիէմօնթէի
տահմանագլուխը պիտի տանէին : « Հնարաւո՞ր
էր որ այսչափ մնեծ փոթորիկ մը այտէս փա-
րատէր : Խմ քաղցրիկ ազատութիւնս պիտի
դանէի՛ : Աիրելի ծնողքս , եղբայրներս , քոյ-
րերս պիտի տեմնէի՛ :

Այս պատիր մտածութիւնները վայրկեան
մը սիրտո յուղեցին : Արարնօք հագուեցայ
եւ ուղեկիցներուս ետեւէն գացի՝ առանց խեկ
վերջին մնաք բարով մը ըսելու դրացիիս :
Գուեցաւ ինձի թէ ձայնը լսեցի , եւ ցաւե-
ցայ որ չկրցայ պատասխանել :

« Ու՞ր կերթանք , ըսի կոմսին , երբոր
կառք կը նստէինք անոր եւ պահապան զին-
որաց պաշտօնակալի մը հետ :

— Չեմ կրնար ըսել ձեզի մինչեւ որ Մի-
լանէն մզնն մը հեռանանք :

Տեսայ որ կառքը Աէրչէլինայի դրան
կողմը չէր երթար , եւ յոյսերս մարեցան :

Լոեցի : Այս գիշերը խիստ զուարթադեղ
էր , եւ լումնի սլայծառ լոյս մը կար : Կը նա-
յէի այն սիրական փողոցները որոց մէջ այն-
շափ տարիներ գոն եւ երջանիկ պարտեր էի :

Կը նայէի տուները , եկեղեցիները : Ամենն ալ
հազարումէ կ հաճոյական յիշատակներ միտ-
քըս կը ձգէին :

Ո՞վ ձեմելիք Արեւելեան դրան . ո՞վ
պարտէղք հասարակաց , որոց մէջ այնչափ
պտրտեր էի Ֆօռքօլօի հետ , Մօնթիի հետ ,
Լոտօվիքօ տի Պրէմէի հետ , Բիէթրօ Պօրսիէ-
րիի հետ , Բօրբօի եւ որդւոցը հետ , ուրիշ
այնչափ սիրելի անձանց հետ , կենսալի եւ յու-
ստապատար խօսակցութիւններ ընելով : Ո՞հ ,
երբոր կըսէի մտքէս թէ ձեզ վերջին անգամ
տեսնելս էր , երբոր ձեր շուտ շուտ աչքիս
առջեւէն հեռանալը կը տեսնէի , կզգայի որ
ձեզ սիրած էի եւ տակաւին կը սիրէի : Երբոր
քաղաքին դռնէն դուրս ելանք , վեղոյրս
աչքիս վրայ քաշելով լացի՝ առանց քովիննե-
րըս զիս տեսնելու :

Երբոր մզոնէն աւելի հեռացանք Միլա-
նէն , և կարծեմ Վէրոնա կերթանք » ըսի
զ . . . կոմսին :

— Աւելի հեռու , պատասխանեց . Վենե-
տիկ կերթանք ուր ձեզ յատուկ յանձնաժո-
ղովի մը պիտի յանձնեմ : »

Վերջապէս շարունակ երթալով՝ վետր-
ուար 20ին Վենետիկ հասանք :

Ասջի տարոյն սեպտեմբեր ամսոյն մէջ .

բանտարկութենէս ամիս մը առաջ՝ վենետիկ
էիր, եւ քաղմաթիւ ընկերներով ուրախ ճաշ մը
ըրեր էի լունայի պանդոկը։ Զարմանալի՛
քան։ Կուման ու պահապան զինուորը դիմ ուղ-
ղակի նոյն պանդոկը տարին։

Պանդոկին սպասաւորը դողելաւ դիմ
անսնելով երբ նշմարեց որ զօրականներու-
ձեռք էի, թէպէտ պահապան զինուորն ու
իր երկու արրանեսակներն ինպինքնին իմ ծա-
ռայներս կարծեցընելու համար ծպտեալ է-
ին։ Այս հանդիպման վրայ ուրախացայ՝ ան-
տարակոյս ըլլալով որ սպասաւորն իմ հռն ըլ-
լալս չաս մարդոց կիմացընէր։

Ճաշ ըրինք, յետոյ դիմ առին Տօժին սպա-
լամար տարին, ուր հիմա դատաստանական
ատեանը կը նստի Բուօքուոաթիներուն սի-
րելի կամարտկապներէն ու Ֆլորիանի սըր-
ճարանին առջեւէն անցայ, ուր նախընթաց
գարնան ժամանակը գեղազուարճ երեկոյներ
պնդուցեր էի։ Ծանօթներէս մէկն ալ չտեսայ։
Ասքը . . . բիաձձէթթայէն (վոքը հրա-
պարակ) անցանք։ Նոյն հրապարակին վրայ
նախընթաց սեպտեմբեր տմույն մէջ մուրաց-
կան մը սա զարմանալի խօսքերն ըսեր էր ին-
ձի, և կը տեմնեմ, Պարոն, որ դուք օտարաւ
կան էք. բայց չեմ հասկընար թէ ինչո՞ւ հա-

մար ձեր ազնուութիւնը՝ ինչպէս նաև ամեն օտարականք՝ այնչափ կ'զմային այս հրապարակին։ Այս տեղը ուշադիր է մէ ինձի համար, եւ ես առ հարկի միայն կանցնիմ հոսկից։

— Հոս ձեզի արկա՞ծ մը պատահած է արդեօք։

— Այս, Պարոն, սարսափելի արկած մը, եւ միայն ինձի չէ։ Աստուած պահէ քեզ, Պարոն, Աստուած պահէ քեզ այնպիսի արկածէ, և շուտով հեռացն քովիւ։

Հիմա կրկին այն տեղէն անցած ժամանակը անհնար էր որ մուրացկանին խօսքերը միաքանչային։ “Նոյն հրապարակին վրայ էր, որ հետեւեալ տարին կառավինարանը ելայ մահուանս վճիռը եւ նոյն վճռոյն հնգետասանամնայ իւր բանուարդուն-իւր վոխարմկուիլը լսելու։”

Եթէ զլուխս քիչ մը աւելորդ ապաշտ զաղափարներով շփոթած ըլլար, մած համարում պիտի ունենայի այն մուրացկանին վրայ որ այնպէս ազգու կերպով գուշակեր էր թէ այն տեղն աւունք էր մ'էր։ Այս իրողութիւնը անսովոր դէպք մը ըլլալուն համար միայն կը լիշեմ։

Պալատը ելանք, Պ . . . կոմաք դաստաւորներուն խօսեցաւ ու զիս ըանտապետին ձեռ-

քը յանձնեց . յետոյ կարեկից համբոյրներով
բաժնուեցաւ ինձմէ :

ԳԼՈՒԽ ԻԳ .

Բանտապետն առջեւս ինկաւ ու ես ալ լլ-
ուութեամբ ետեւէն գացի : Քանի մը նրբաշա-
ւկղներէ եւ քանի մ' ալ սրահներէ անցնելէ ե-
տեւ : Վոքր սանդուղքէ մը վեր կապարներ ըս-
ւած տեղն ելանք, որ վ ենեափկի հասարակա-
գետութեան ժամանակէն 'ի վեր քաղաքական
յանցաւորաց յատկացեալ հռչակաւոր արգելա-
նոց մէր Հօն բանտապետն անունս տումարի մը
մէջ արձանագրեց ու ինձի յատկացեալ սեն-
եակի մը մէջ զիս փակեց : Տոմի պալատին այս
մերին մասը՝ բոլորովին կապարով ծածկուած
ըԱպաւն համար՝ կապարներ կը կոչեն :

Սենեակս մեծ պատուհան մը ունէր եր-
կաթեայ հաստ վանդակասիւներով, եւ Ա. Մար-
կոսի եկեղեցւոյն յարկին վրայ կը նայէր որ

նոյնպէս կապարով ծածկուած էր : Եկեղեցիէն անդին հրապարակին հեռաւոր ծայրը կը տեսնէի, եւ ամենն կողմ անթիւ գմբէթներ ու զանգակատուններ : Ա. Մարկոսի հոյաշէն զանգակատունը եկեղեցւոյն երկայնութեանը չափ հեռու էր ինչ, եւ կատարը գտնուող մարդոց խօսիլը կը լսէի երբոր ձայներնին քիչ մը ամուր հանէին : Եկեղեցւոյն ձախ կողմն ալ՝ պալատին մեծ բակլին մէկ մասը եւ մուտքերէն մէկը կը տեսանուէր : Բակլին այս մասին մէջ հասարակաց ջրհոր մը կար ուր անդադար մարդիկ կուդասին ջուր քաշելու : Բայց իմ բանտա այնչափ բարձր էր, որ վարի մարդիկը մանր տղայք կերեւէին ինձի, եւ ձայներնին ալ սիայն պոռացին նէ կրնայի լսել : Մնաց որ հոս Միլանի բանտերէն աւելի առանձնութեան մէջկը զըտնուէի :

Դատաստանական հարցախորձս յատուկ յանձնաժողովի մը յանձնուած էր : Այս հարցափորձին հոգերն առաջին օրերը մեծ տիսրութիւն մը ինձի պատճառեցին, որ առաւելագոյն առանձնութեան մը դժնդակ դդացումովն աւելի կը ծանրանար անշուշտ : Ասկէց զատ, ընտանիքէս աւելի հեռացած էի, եւ ամեննեւին լուր չէի ստանար անոնց վրայ : Տեսած նոր դէմքերս հակակիր չէին ինձի . բայց այնպիսի

ծանրութիւն մը կը ցուցընէին որ դրեթէ սարսափիկը հասնէր : Հա իբաւը չափաղանց մեծցուցած ըլլալով Միլանցւոց եւ խտալիոյ միւս մասերուն ազատութեան համար ըրած դաւադրութիւնները, կը թուէր թէ զիս այն խըլքրամանց ամսնէն մեղապարտ շարժիչներէն մէկը կը համարէին : Գրադիտական փոքրիկ համբաւս ծանօթէր բանտապետին, կնոջը, աղջկանը, երկու որդւոցը եւ մինչեւ երկու պահապաններուն, որոնք ամսնն ալ թերեւս ողբերգութեան մը հեղինակը կախարդի պէս բան մը կը կարծէին :

Լուրջ, կասկածոտ, եւ պատմութիւնս մանրամասնարար ինէ խմանալու հետաքրքիր էին, բայց մեծ ակնածութեամբ կը վարուէին հետո :

Առաջին օրերն անցնելէ ետեւ ամսնն ալ ընտելացան եւ տեսայ որ բարի մարդիկ էին : Ամսնէն աւելի կինը բանտապանի մը վարմունք եւ բնաւորութիւն ցոյց կուտար : Քառասուն տարեկանի մը մօտ էր, դէմքն ու խօսուածքը խիստ չոր, եւ կը թուէր թէ իր զաւկըներէն զատ ուրիշի համար բարեսրտութիւն ունենալու կարող չէր :

Սովորութիւն ունէր առաւօսները եւ իրիկուան ճաշէն ետեւ ինձի խահուէ ըերելու,

ջուր, կտաւիք, եւ այլն բերելու Սովորաբար
հետը կուգային աղջիկը՝ որ տանեւհինդ
տարեկան կար, եւ առանց գեղեցիկ ըլլա-
լու՝ սրտաշարժ նայուած ք մը ունէր. նոյնպէս
երկու մանչ տղայքը, մէկը տաներեք տարե-
կան, միւսը տասն։ Ետքը մօրերնուն հետկը
մեկնէին, եւ սենեակիս դուռը գոցելու ատեն՝
այս երեք մանկամարդ գէմքերը մեղմովետեւ-
նին կը դառնային ու ինձի կը նայէին. Բան-
տապետը՝ զիս հարցափորձի յանձնաժողովին
տանելու. համար միայն կուգար, Պահապան-
ները քիչ անգամ կուգային սենեակս, որով-
հետեւ իրենց յանձնուած էր վարի դստիկոնի
ոստիկանութեան բանաերաւն հօկողութիւնը,
որոց մէջ շատ դողեր կը գտնուէին միշտ։

Այս պահապաններէն մէկը եօթանասուն
տարին անցուցած ծերունի մ'էր, բայց զա-
նազան բանտերուն սանդուղներն անդադար
իջնել ելլելու տարժանելի արհեստին գեռ
յարմար էր. Միւսը քսանեւչորտ քսանեւհինդ
տարեկան երիտասարդ մ'էր, աւելի յօժարա-
միտ իր սիրահարութիւնները պատմելու՝ քան
իր պաշտօնը կտաւարելու։



ԳԼՈՒԽ ԻԴ.

Ո՞հ, այո՛, տէրութեան դէմոճքադործութեամբ ամբաստանեալ մարդու մը դատաստանին սրտատանջութիւնները սոսկալի են։ Ո՛րչափ կը վախնայ մարդ որ ուրիշներու մնաս չտայ . ո՛րչափ կը տագնապի մաքառելու խեր մը ամբաստանութեանց , խեր մը կատկաձներու դէմ . ո՛րչափ կը մնանայ վտանգը՝ երբոր ամբաստանութեան պատճառ տուող դէպքերն օր քան զօր աւելի գէշ կերպով կնճոռախն , եթէ դատաստանը շուտ չլմննայ , եթէ հետ զհետէ ուրիշ մարդիկ բռնուին , եթէ նորանոր անխոհեմութիւններ երեւան ելնեն՝ ոչ միայն անծանօթ մարդոց՝ այլ եւ նոյն իսկ ընկերութեան անդամ եղող անձանց կողմանէ :

Աս միտքս դրի որ քաղաքականութեան վրայ չխօսիմ . ուրեմն պէտք է որ այս դատաստանին վերաբերեալ պատմութիւնները մէկ կողմ ձգեմ : Աս կըսեմ միայն , թէ շատ անդամ երկար ժամեր հարցափորձի մէջ անցունելէս ետեւ՝ այն աստիճան դլուխս տաք-

ցած , այն աստիճանն զայրացած կը դառնայի սենեակս , որ եթէ կրօնի ձայնը եւ սիրելի ծը-նողացս յիշատակը զիս չբռնէին՝ ինքզինք կ'սպաննէի :

Այն որտի անդորրութիւնը որ Միլանի բանտն եղած ժամանակս ինձի սովորոյթ ըրած կը կարծէի , բոլորովին կորսուեր էր : Փանի մը օրի չափ յոյսս կտրեցի զանի նորէն դանեւէ , եւ այն քանի մը օրեւը դժոխային օրեր ե-զան ինձին Աղօթելէ դադրեցայ . Աստուծոյ ար-դարութեանը վրայ երկրայեցայ . մարդիկ եւ տիեզերքն անիծեցի , եւ առաքինութեան ա-նօդուա ըլլալուն վրայ ամենն հնարաւոր իմաս-ակութիւնները նորէն մտքիս մէջ յեղյեղեցի :

Տարաբաղդ եւ դայրացետլ մարդը սար-սավիելի ճարտարմտութիւն մը կունենայ իրնը-մանները եւ նոյն խակ Աքարիչը զրպարտելու : Բարկութիւնը առ հասարակ կարծուածէն շատ աւելի անխիղճ է , շատ աւելի եղեռնագործ է : Եւ որովհետեւ մէկ մարդ մը չկրնար ամրողջ շաբաթներ առաւօտէն մինչեւ իրիկուն շա-րունակ մոնչել , եւ ըստ որում մարդու հոգին՝ ամենակատաղի մոլեգնութեամբ յուղուելէ ե-տեւ հանգստի միջոցներ կունենայ , այն միջոց-ներն ալ սովորաբար մտքին բարոյական ան-կարդութեան տպաւորութիւնը կըզգան : Այն

միջոցին մարդ ինքզինք անդորրացած կը կարծէ , բայց նենդաւոր եւ ամսպարփշտ անդորրութիւն մ'է այն . անգութ եւ առանց աղնուութեան վայրենի ծիծաղ մը և անկարգութեան , արքեցութեան եւ հայնոյանաց սէր մը :

Այս վիճակին մէջ՝ եղած ատենա ժամերով կերդէի՝ այն կերպ զուարթութեամբ մը որ քալորովին ամուլ էր բարի զգացումներէ . սենեակս ով որ մտնէր՝ կը ծաղրարանէի հետը , եւ կը ջանայի ամեն բան գտեհիկ փիլիսոփայութեամբ մը , շնականներու վիլիսոփայութեամբ նկատելու :

* Հին ժամանակի Յոյն փիլիսոփաններու ազանդ մ'էր , եւ շունք կամ շնականք կը կոչուէին , որովհեաեւ շան ալէս անսմօթ էին եւ ընկերական ամեն մարդավարութիւնները կ'արհամարհին : Արսէին թէ մէկ մարդ մը չարադրծութիւն ընելէ միայն սէտք է ամաչէ : Հանդերձի զարդարանքները , հարըստութիւնը , արուեստներն ու զիտութիւնները սաստիկ կատէին : Յոլոր հագուստնին պատառատուն վերաբկու մ'էր , եւ բովանդակ գոյքերնին ալ մախաղ մը եւ ցուալ մ'էր : Անուանի Գիոդինէս վիլիսոփան այս աղանդէն էր :

Այս ողբալի տենդը քիչ աեւեց , վեց
կամ եօթին օր :

Ս . Գերքս փոշիով ծածկուեր էր : Բան-
տապետին տղոցմէն մէկը զիս շոյելով ըստ .
և կը տեսնեմ որ սա անշահ գիրքը չկարդալ-
նէդ 'ի վեր այնչափ արտում չէք :

— Քեզ այդպէ՞ս կը թուի » ըսի :

Եւ Ս . Գիրքը ձեռքս առնելով փոշին
սրբեցի թաշկինակովս . յետոյ ըստ դիպաց
բանալով հետեւեալ հատուածը աչքիս հան-
դիպեցաւ . և Ասաց եւ առ աշակերտան իւր .
և Ոչ է մարթ չդալ զայթակղութեան . բայց
« վայ այնմիկ յոյր ձեռն զայթէ . Լու էր
« նմա՝ եթէ վէմ երկտնոքար կտխէր զպաւ
« բանոցէ նորա եւ անկտնէր 'ի ծավ , քան
« թէ զայթակղեցուցանէ զմի ոք 'ի փռքը-
« կանցս յայսցանէ : »

Այս խօսքերուն պատճանիլո խորին տպա-
ւորութիւն մը ըրաւ ինձի , եւ շատապնեցայ
մտածելով որաղան Ս . Գրքիս փոշիով ծած-
կուած ըլլալէն նշմարեց որ զանի ալ չէի կար-
դար , եւ խորհեցաւ որ Աստուծոյ նկատմամբ
աւելի անփոյթ ըլլալով՝ աւելի զուարթարա-
րոյ եղեր էի :

« Ենդկատամակ տղայ , ըսի իրեն բարեկամա-
կան յանդիմանութեամբ մը եւ ցաւելով զինքը

դայթակղեցընելուս վրայ . ասի անշահ զիրք
չէ , եւ քանի մը օրէ 'ի վեր որ չեմ կարդար՝ ա-
ւելի գէշ եմ : Երբոր մայրդ քեզի թոյլ կուտայ
մայրկեան մը քովս կենալ , ախրութիւնս վա-
նելու կ'աշխատիմ . բայց եթէ գիտնայիր հրչափ
կը տիրէ վրաս երբոր մինակ կը մհամ եւ մո-
լեգնաբար երգելս կը լսեմ :

ԳԼՈՒԽ ԻԴ .

Տղան դուրս ելեր էր . բերկրութիւն մը
կ'զգայի Ս . Գիրքս նորէն ձեռքս առնելուս
եւ խստովանելուս վրայ թէ առանց անոր ա-
ւելի գէշ էի ես : Կը թուէր ինձի թէ յանիս
բաւի թշնամանեալ ազնիւ բարեկամի մը դու
հացուցիչ հաստուցում մը ըրի եւ հաշտուեցայ
հետը :

— Զեղ թողուցեր էի , Աստուած իմ , զու-
շեցի . վասթարացեր էի . կարծեր էի թէ իմ
յուսակորոյս վիճակիս՝ չնական անամօթ ծիւ-

ծաղկը վայլէր : —

Այս խօսքերն անպատմելի սրտայուղութեամբ մը արտասանեցի . Ս . Գիրքը աթոռակիս վրայ դրի . ծնկայ վրայ եկայ կարդալու համար . եւ ես՝ որ խիստ դժուարաւ կուլամ , արտառք թափել սկսայ :

Այն արտառքն հազարապատիկ քաղցր էր քան քիչ մը առջի վայրագ ուրախութիւնը : Նորէն կ'զգայի զլատուած . կը սիրէի զանի . ինքոյինքո ցածցունելով զինքը նախատելուս վրայ կ'ապաշաւէի . եւ խօսք կուտայի որ ալ երբէք չզատուիմ իրմէ ահ , ոչ երբէք :

Ո՞հ , անկեղծաբար կրօնի դառնալը որչափ կը միսիթարէ ու կը բարձրացընէ մարդուս հոգին :

Կարդացի եւ լացի մէկ ժամէն աւելի . ետքը ելայ կանգնեցայ լի վստահութեամբ թէ Աստուած հետա էր եւ մոլորմանս ներեր էր : Այն ժամանակը խիստ փոքր բաներ երեւցան ինձի դժբաղդութիւններս , դատաստանին առագնասները , կառավինաբանին հաւանականութիւնը : Ուրախ եղայ կրած տառապանաց վրայ , վասն զի պարտաւորութիւն մը կտտարե . լու առիթ մ'էր այն ինձի . վասն դի համբերութեամբ տառապելով Տէրոջը կը հնազանդէի :

Ա. զիրքը, դոհութիւն Աստուծոյ, զիտէի
կարդալ, Ալ այն ժամանակը չէր ուր զանի
վոլթէոի փցուն քննողութեամբը կը դատէի,
ծիծաղելով անոր զրուցուած քներուն վրայ, ո-
րոնք ոչ ծիծաղելի են եւ ոչ սխալ, բայց միայն՝
երբորընթերցողը՝ կամ տղիտութեամբ եւ կամ
չարամտութեամբ անոնց խմաստին հասու չըլ-
լայ, Բացայայտ կը տեսնէի թէ այս զիրքը քա-
նի՛ քանի իրաւամբ Արբութեան եւ հետեւա-
բար ճշմարտութեան օրինագիրք մ'է . որչափ
հակառակ է ոզգամիտ փիլիտփայտութեան այն
զիւրապգածութիւնը՝ որ քիչ մը ոճի թերու-
թիւններէ կը վիրաւորի, եւ գեղեցկայարմար
ձեւեր շունեցող ամենն բան անզունելու զո-
ռողութեան կը նմանի . որչափ անտեղի քան է
երեւակայել թէ այսազիտի երկիւղածութեամբ
պատուեալ զրոց հաւաքածոյ մը կրնայ անվա-
ւեր ծագում մը ունենալ . որչափ անժխտելի
է այս զրքին գերազանցութիւնը կուրանէն եւ
Հեղկաց աստուածաբանութենէն :

Շատ մարդիկ չարաչար դործածեցին զայն,
եւ ուղեցին սնիրաւութեան օրինագիրք մը ը-
նել, իրենց մեղապարտ կրից վաւերացուցիչ մը
ընել զայն. այս ճշմարիտէ . բայց մենք մը չտուր
ենք նէ հոն ենք, ամենն բան չարի կրնայ զոր-
ծածուիլ, եւ արդեօք երբէն 'ի վեր լաւագոյն

իրաց չարաչար գործածութիւնը իրաւունք կուտայ մեղ ըսելու թէ այն իրերը ինքնին դէշեն :

Քրիստոս ըստաւ թէ ամեն օրէնքներն ու մարդարէները, բոլոր սուրբ զիրքերը՝ զԱսուած եւ մարդիկ սիրելու պատուիրանին մէջ կը բովանդակին : Եւ այսպիսի զիրք մը՝ ամեն դարերու պատկանաւոր ճշմարտութիւն մը, Հոգւոյն սրբոյ յաւիտենապէս կենդանի խօսքը չըլլայ :

Այս խորհրդածութիւնները մտքիս մէջ արթնալով նորէն որոշեցի որ մարդ կային իրաց վրայ ունեցած ամեն մտածութիւններս, քաղաքակրթութեան յառաջադիմութեանը վրայ ունեցած ամեն կարծիքներս, մարդասիրական համոզումներս, հայրենեաց սէրս, մշկի խօսքով սրահիս ամեն զգայումները կրօնի ողուոյն եւ պատուիրանացը համաձայնեցընեմ :

Շնականութեան մէջ անցուցած քանի մը օրերս զիս շատ աւքեր էին : Այս զեղծման ազգեցութիւնը երկար ժամանակ զգացի եւ մեծ աշխատութիւն քաշեցի անոր յաղթելու համար : Ամեն անգամ որ մարդ իր իմացականութիւնը նուաստացընելու, Աստուծոյ գործերը ծաղու դժոխային խոշորացոյցովը զիտելու եւ աղօթից բարեքար վարժութենէն ետկենալու

փորձութեան տեղի կուտայ , իր բանադատութիւնը կը վնասի եւ նորանորանկումներու արդամադրութիւն կ'ստանայ : Քանի մը շաբաթ շաբունակ բուռն յարձակում կրեցի թերահաւատութեան գաղափարներէ , եւ մտքիս բոլոր ուժը գործածեցի զանոնք վանելու :

ԳԼՈՒԽ ԻԶ .

Երբոր այս ներքին կոխւները գաղքեցան եւ նորէն իմ ամեն կամքերուս մէջ Աստաւած փառաւորելու սովորութեանս մէջ զիս հաստատուած կարծեցի , բաւական ժամանակ անխռով խաղաղութիւն մը վայելեցի : Դատաստանական հարցափորձը որ ամեն երկու կամ երեք օրն անգամ մը յանձնաժողովն ինձի կը նէր , որչափ եւ դժողակ ալ ըլլար՝ երկարատեւ մտատանջութիւններ չէր պատճառեր ինձի : Այս փափուկ եւ դժուար գիճակիս մէջ կը ջանայի որ ոլափուայ եւ բարեկամութեան պար-

տուցդէմքան մը չընեմ, եւ մնացածն Առաջուծոյ կը յանձնէի :

Ամեն անակընկալ դէպք, ամեն սրտի վրա դովում եւ ամեն ենթադրելի ձախորդութիւն նախառեսելու օրըստօրէտկան վարժութիւնո ճշգութեամբ 'ի դործ դնել սկսայ, եւ այս վարժութիւնս նորէն խիստ օգտակար եղաւ ինձի :

Սակայն առանձնութիւնս աւելցաւ, քանի տապետին երկու որդիքը՝ որ օկիղըները երբեմն ընկերութիւն կընէին ինձի՝ դպրոց զրոկուեցան, եւ այս պատճառաւ տունը խիստ քիչ մնալով ալ չէին գար զիս տեսնելու : Ասոնց մայրն ու քոյրնալ՝ որ տղայքն հմտ եղած ժամանակը շատ անգամ սենեակս կը կենային ու հետս կը խօսակցէին, հիմա միայն խահուէ բերելու կուդային սենեակս, եւ շուտով ալ կը մեկնէին : Մայրերնուն համար շատ հոգ չէի ըներ, վասն զի կարեկցութիւն չէր ցուցընէր ինձի. բայց աղջիկը՝ թէպէտ եւ զեղեցիկ չէր, այսու ամենայնիւ նայուածքին ու խօսքերուն մէջ անուշութիւն մը ունէր որ ինձի անհանոյ չէր : Երբոր ինձի խահուէ կը բերէր ու «եսեփեցի» կըսէր, խիստ համով կուդար ինձի. երբ ո՞ր « մայրս եփեց » կըսէր, լոկ տաք ջուր մ'էր :

Այսպէս մարդէ կարօտ մնալով ուշադ-

բռնթիւնս քանի մը մրջիւններու տուի որպատուհանիս վրայ կուգային . եւ այնչափ առատօրէն կը կերակրէի զանոնք , որ դացին բիւրաւոր ընկերներ քերին , եւ շատ չանցաւ պատուհանս այս մանր կենդանիներով լցուեցաւ : Նմանապէս հոգ կը տանէի գեղեցիկ սարդի մը որ սենհակիս պատերէն մէկուն վրայ ոստայն կը գործէր : Ճանճիր ու մժեղներ կը կերցընէի անոր , եւ այնչափ ընտելացաւ ինձի , որ անկօղնիս ու ձեռքիս վրայ կողար ու իրորաը մատերուս մէջէն կառնէր :

Արանի՛թէ միայն այս միջպատճերն ըլլային ինձի այցելութիւն ընողները : Դեռ դարնան մէջէինք եւ արդէն մժեղները զարհութելի կերպով կը շատնային : Չմեռը չափազանց մնող եղեր էր , եւ մարտ ամառյ մէջ քիչ մը հովեր փչելէ ևտեւ տաքերն հասան : Չեմկընարըսել որչափ տաքցաւ բնակած խցիկիս օգը : Դիրքը հարաւի դէմ , կապարեայ յարկի մը տակ , եւ պատռհանս ալ Ա . Սարկոսի յարկին վրայնայելով , որ նոյնպէս կապարեայ էր եւ արեւոն ջերմութիւնը սարսափելի կերպով կը ցոլացընէր , շնչառութիւնս կը դժարնար կը խըլդուէի : Այսպիսի հրատապ ջերմութեան մը գաղափարն անգամ ունեցած չէի : Այս ահապին առնջանքին վրայ կաւելնային մժեղնե-

ըլն ալ՝ այնչափ բազմութեամբ որ քանի շարժէի եւ զանոնք ջարդելուզէի՝ վրաս կը թափէին։ Անկողինու , սեղանու , աթռոս, գետինը : պատերը , ձեղունը ծածկուած էին անոնցմէ , եւ օդին մէջալ անհամար բազմութիւն մը կար որ անդադար կելլէին կը մտնէին պատուհանէն դժոխային բզզանքով . Այս միջատներուն խայթումը ցաւագին է . եւ երբոր մէկը առաւտէն մինչեւ իրիկուն եւ իրիկունէն ալ մինչեւ առաւօտ այն խայթուածները կընդունի եւ անոնց թիւը նուազեցընելու տաղտկալի եւ անդուլ զրադման հարկողրեալ կըլլայ , սուզիւ կը չարչարի թէ մարմնով եւ թէ մաօք :

Երբոր այս պատուհատին մեծութիւնը փորձովս ճանչեցի , եւ բանսա փոխել տալուհամար ըլուած խնդիրս չընդունեցաւ , ինքզինքս սպաննելու խորհուրդներ ծագեցան մտքիս մէջ , եւ երբեմն ալ կը վախնայի որ կը խենդենամ : Բայց, գոհութիւն Երկնից, այս մոլեգնութիւնները երկար չէին տեւեր , եւ կրօնքը զիս կը կաղղուրէր . կը համոզէր զիս թէ մարդս պէտքէ տառապի եւ արիութեամբ համբերէ . կերալ մը հեշտութիւն զգալ կուտար ինձի մինչեւ անդամ վշտակրութեան մէջ , եւ կը բերկրէի չքաննելուք եւ ամեն բանի յաղթելուս վրայ .

կըսէի . — որչափ աւելի ցաւաղին ըլլայ
կեանքս , այնչափ քիչ կըլլայ երկիւզս՝ թէ որ
այս ծաղիկ հասակիս մէջ ինքզինքս մահուան
դատապարտուած տեսնեմ : Առանց այս նա-
խապատրաստական չարչարանքներուն՝ թե-
րեւս վաստարար կը մնոնիմ : Ասկէց զատ , եր-
ջանկութեան արժանի ըլլալու համար բաւա-
կան առաքինութիւններ ունի՞մ . եւ ուր են -

Խնքզինքս արդար խստութեամբ մը քըն-
նելով կենացս բոլոր տարիներուն մէջ խիստ
քիչ գործ կը դանէի գովութեան արժանի . մը-
նացածը յիմար կիրքեր , կռապարիչտ սէր ,
ամրարհաւաճ եւ սուտ առաքինութիւններ
էին : — Ուրեմն տառապէ , անարժան , կըսէի
ես ինձի : Եթէ մարդիկ եւ միջաաները բար-
կութեամբ միայն եւ յանիրաւի քեզ սպան-
նեն . Աստուծոյ արդարութեանը գործիք
ճանչցիր զանոնք եւ լռէ : —

ԳԼՈՒԽ ԻԷ

Մարդս ինքզինք խոնարհեցընելու . եւ իք
մեզաւոր ըլլալը խոստավանելու . համար պէտք

ունի՝ մեծ ճիգերը ընելու : Ճշմարիտ չէ որ մենք
առ հուսարակ մեր երիտասարդութիւնը մնա-
փառութեան մէջ կը ծախենք . եւ վոխանակ
մեր բոլոր ուժը գործածելու որ բարոյն առ-
պարէզին մէջ յառաջ երթանք, զանի մեծ մա-
սամբ մեզ ցածցընելու կը ծառայեցընենք : Կան
բացառութիւններ, բայց կը խոստովանիմ որ իմ
խեղճ անձիս չեն վերաբերիր, եւ ինձմէ դժուն
ըլլալովս առ արժանիք մը ունեցած չեմ ըլլար :
Երբոր ճրագ մը կամ կանգեղ մը տեմնուի որ
լոյսէն աւելի մուխ կուտայ, մեծ անկեղծու-
թիւն մը չէ ըսելը թէ պէտք եղածին պէս չվա-
սիր :

Այս, առանց ինձի անարդանիք բերելու,
առանց կրօնամոլի խղճահարութեան, մտքի
կատարեալ հանդարտութեամբ ինքզինքս նը-
կատելով, զիս արժանի կը դտնէի Աստուծոյ
պատուհամներուն Ներսէս ձայն մը կըսէր ին-
ծի . « Այս պատիմները արժանի են քեզի՝ ե-
թէ ոչ սա գործիդ համար՝ գոնէ նա գործիդ հա-
մար : Երանի՛ թէ ասոնք քեզ առ Այն տանե-
լու ծառայեն, որ նոյն խոկ կատարելութիւն
է, եւ որուն մարդիկ ըստ կարի նմանող ըլլա-
լու կոչուած են : »

Բարէ . մինչ ես ստիպուած էի Աստուծոյ
գէմ գործած հաղարատոր անհամասարմու-

թիւններուս համար զիս մեղապարտ խռստա-
վանելու , ի՞նչ իրաւամբ կրնայի տրամնջել թէ
որ մարդոց մէ ուսմնք ցած եւ ուրիշներ ալ չար
կերեւէին ինձի . թէ որ աշխարհի բարերաս-
տութիւններն ինչ յափշտակուած էին . թէ որ
բանտի մէջ պիտի մաշէի կամ բռնաման մնա-
նէի :

Այս արդար եւ սրտագդած խորհրդածու-
թիւնները մտքիս մէջ քանդակելու կը ջանայի .
այս ընելէս ետեւ տեռայ սի տռնոց համաձայն
ընթացք բռնել պէտք էր . այն ու ուրիշ կեր-
պով չէր կրնար ըլլալ՝ բայց եթէ Աստուծոյ
արդար հրամաններն օրհնելով , զանոնք սիրե-
լով , եւ անոնց հակառակ կամքերը սրտիս մէջ
խեղդելով :

Այս առաջադրութեան մէջ լաւ եւս ամ-
րանալու համար՝ խորհեցայ որ այսուհետեւ իմ
ամենզգացումներս ուշադրութեամբ զրի առ-
նելով դարգացընեմ : Դժբաղդ աբար , դատաս-
տանական յանձնաժողովը թէ պէտ թոյլտուու-
թիւն ըրեր էր ինձի կաղամար եւ թուզթունե-
նալու , բայց կը ամրէր ինձի տրուած թեր-
թերը , որոնցմէ մէկը պատռել կամ կորսնցը-
նելը խստիւ արգիլած էր , եւ ինչ բանի գոր-
ծածած ըլլալս պիտի քննէր հասկընարութուղ-
թին տեղը լեցընելու համար՝ սենեակիս մէջ

գտնուած թամնձրաշէն սեղանը ասդակիով յըղ-
կելու անմեղ հնարքը մտածեցի. յետոյ այն սե-
ղանին վրայ ամեն օր երկար մտածութիւններ
գրեցի. մարդկային պարտաւց եւ մասնաւ-
րապէս իմ պարտականութեանց վրայ :

Զափազանցութիւն ըրած չեմ ըլլար ըսե-
լով թէ այս զբաղմամբ անցուցած ժամերսեր-
բեմն հեշտալի կը թռաէին ինձ, թէ եւ սենեա-
կիս անտանելի ջերմութիւնն ու մժեղներուն
ցաւագիւխայթուածները շունչ առնուլ չէին
տար ինձի : Մժեղներուն խայթուածքէն քիչ
շատ ինքինքս պահպանելու համար ստիպ-
ուեր էի. այն սասսիկ ջերմութեան հակառակ՝
գլուխուու ոտքերս խանձարելու, ձեռնա-
ցով գրելու եւ դաստակներս երիղապնդելու,
որպէս դի մժղուկները չկրնան թեւերուս մէջ
մանել :

Դրած մտածութիւններս մեծ մասամբ
կենսագրական ձեւ մը ունէին : Մանրամատ-
նաբար կը պատմէի ամեն բարի կամ չարզգա-
ցումներն ու խորհուրդները որ մանկութիւնէն
ի վեր գոյացեր էին արտիս մէջ . կը վիճաբա-
նէի եւ ինձի հետ, ամեն տարակուսելի խըն-
դիրները լուծելու կաշխատէի, եւ ամեն մէկ
բանի վրայ ունեցած բոլոր ծանօթութիւննե-
րը : Էռլոր գաղափարներս կրցածիս չափ կը

շարադասէի :

Երբոր սեղանիս երեսը գրութեամբ կը լըց-
ուէր, կրկին և կրկին կը կարդայի, ըրած մը-
տածութեանց վրայ վերստին կը մտածէի, և
վերջապէս յանձն կառնուի, շատ անգամ
ակամայ, բոլոր գրածս ապակիով տաշել, որ-
պէս զի կարող ըլլամ նորէն խորհրդածու-
թիններս սեղանին վրայ գրելու :

Այսպէս կը շարունակէի կենացս պատ-
մութիւնը, զորյաճախ կընդմիջէի ամեն կերպ
արտուղութիւններով. բնաղանցական, բարո-
յական, քաղաքական եւ կրօնական կէտեր
վերլուծելով. եւ երբոր սեղանին երեսը լըց-
ուէր, նորէն քանի մը անգամ կը կարդայի,
յետոյ կը չնջէի :

Բոլոր յիշած բաններուս եւ զաղափարնե-
րուս վրայ ազատ հաւատարմութեամբ ես ին-
ձի հաշիւ տալու արդելք մը ունենալ չուզե-
լով, եւ հաւատաքննական այցելութիւններու
եւ հետախուզութեանց հնարաւորութիւնը
նախառնեալով, խեցրեկ ոճով մը կը գրէի,
այսինքն զիրերը ետեւ առաջ դնելով ու բա-
ռերը կրնատելով, որուն քաջ վարժուած էի :
Սակայն կառկած ըրածիս պէս այցելութիւն
մը չեղաւ ինձի, եւ ոչ ոք մտքէն անցուց թէ
իմախուր ժամանակս այսպէս լառ կանցունէի :

Երբոր բանտապետին կամ ուրիշ որ եւ է մէկու
մը գալ եւ դուռը բանալը կը լսէի, խսկոյն սե-
զանը լաթով մը կը ծածկեէի, եւ կաղամարն
ու ունառու թղթոց տետրակը վրան կը դնէի:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Այն տետրակին ալ ժամերուս մէկ քանին
եւ երբեմն մինչեւ ամբողջ օր մը կամ դիշեք
մը կը նուիրէի : Անոր մէջ դրածս ալ բանա-
սիրական նիւթեր էին : Այն ժամանակը յօրի-
նեցի Է-ՇԵՇ և ՇԱՀ-ՇԵՇ : ԽԲԱ-Շ Ա-Շ բանաստեղ-
ծութիւնները, եւ ԹԱՆԻՇԵՇ, ՌԱՆԵՇ, Է-Շ և
Վ-Շ-Շ-ՇԵՇ, եւ Ա-Շ կոչուած երգերը : Ասոնց-
մէ զատ ողբերգութեանց եւ զանազան հեղի-
նակութեանց ուրուագիծներ, որոց մէջ Լու-
սպարաեան դաշնակցութեան եւ Քրիստափոր
Քռլումպոսի վրայ մասնաւոր հագներդ ութեանց
նախաղիծներ ալ կային :

Եւ որովհեաւ, տետրակը լմննար նէ և ւ-

թիշ մը առնելու հրամանը գիւրութեամբ եւ
շուտով չէիր կրնար ստանալ, ուստի շարագրու-
թեանցու նախագաղափարը ուշանին վրայ կը
գրէի, կամ անշահ թուղթերու վրայ՝ որոց մէջ
չոր թուղ եւ ուրիշ պառզներ բերել կու-
տայի ինձի, Երբեմն ալ իրիկուան կերակուրօ
պահապաններուն մէկուն կուտայի հաւտացը-
նելով զանի թէ ախորժակ չունէի, եւ այսպէս
կը սլարտաւորէի դանիք քանի մը թերթ թուղթ
ինձի ընծայ տալու : Այս ալ այն ժամանակնեւ-
րը կը պատահէր երբոր սեղանս զրութեամբ
լցուած էր եւ դեռ չէի ուզեր տաշել : Ուստի
յանձն կառնուի անօթի տուայտիլ, եւ թէպէտ
ստակս բանտապետին քով պահեատ դրուած
էր, սակայն բոլոր օրրանեկ ուտելիք չէի ու-
զէր վախնալով որ չըլլայ թէ ճաշս պահապա-
նին տուած բլլալս կասկածէ, եւ պահապանն
ալ հասկընայ թէ զինքը խարեր էի ախորժակ
չունիմ բանելով : Երիկուանը ինքզինքս կը կադ-
դաւրէի թանձր խահուէ մը խմելով, եւ կա-
զաշէի որ Ախօրա Շանձէ (բանտապետին աղ-
ջիկը) եփէ զայն : Երբոր կարող ըլլար Շանձէ
մօրմէն գաղտուկ եփելու, չսփազանց թանձր
կընէր, սնամնել որ սրաւածոքս պարասպ ըլլալուն
զզային ցնցիւն մը կուտար ինձի՝ թէ եւ առանց
ցաւի, եւ դիշելովի բուն դիս արթուն կը բռնէր:

Այս քաղցր տրբեցութեան վիճակին մէջ՝
մտաւորական կարողութիւններս կրկնապատ-
կած կ'զգայի . կը բանաստեղծէի , կ'խմաստա-
սիրէի եւ մինչեւ առաւօտ կազօթէի ոքանչելլ.
բերկրութեամբ : Բայց ետքը յանկարծ սաստիկ
տկարութիւն մը կուգար վրաս : Այն ժամանա-
կը անկողնիա վրայ կիյնայի , եւ որչափ որ մըժ-
դուկները խնամով պատած խանձարուրներուո
մէջը մտնելով կը յաջողէին արիւնս ծծելու ,
մէկ երկու ժամ խորունկ քուն կը ննջէի :

Ասանկ գիշերները՝ որ անօթուց խմած
խահուէս այնպէս ուժպին կը յուզուէին ու-
երեւակայութեանս այնպիսի քաղցր աշխոյժ
ու խանդ մը տալով կանցնէին , ինձի խիստ հա-
ճոյ եւ օգտակար թուելով , կը ջանայի որ յաճախ
այնպիսի գիշերներ անցունեմ : Ասոր համար ,
թէ եւ պէտք մ'ալ չունենայի պահապանէն
թուղթ ուզելու , շատ անգամ իրիկուան ճա-
շիս ձեռք չէի դպցըներ որպէս զի այն դիւթա-
կան ըմպելիին հրաշալի ազդեցութիւնը վայե-
լեմայն գիշերը : Բարեբազզ էի երբոր նպա-
տակիս հասնէի : Շատ անգամ պատահեցաւ
որ խահուէն գորովագութ նշանձէն չեփեց .
այն ժամանակը անհամ ըմպելի մէկը : Այս
պատրանքը զիս քիչ մը կը դառնացընէր . վա-
խանակ աշխուժութիւն մը զգալու կը թուշ-

նայիր, կը յօրաննջէի, անօթութիւնն կիմանայիր եւ
անկողնիս վրայ կիյնայիր, բայց չէի կրնար ննջել:

Ետքը գանգատ կրնէի այս բանիս համար
Ծանծէին, եւ կարեկից կը լար ինձի, Օրին մէ-
կը խստոթեամբ զինքը կշտամբեցի որպէս
թէ ան էր զիս խաբողը · խեղճ աղջիկն սկսաւ
լալ ու ըստաւ ինձի.

— « Պարոն, ես կենացս մէջ մարդ խա-
բած չեմ, եւ ամեն մարդ զիսիաբերայ կը հա-
մարին :

— Ամեն մարդ · ուրեմն մինակ ես չեմ այս
լպրտուկ խահուէին համար գանգատաղը :

— Աս ըսել չեմ ուղեր, Պարոն · ահ, եթէ
գիտայիք Նթէ կարող ըլլայի խեղճ սիրո-
տըս ձեղի բանալու

— Բայց մի լաք այդ պէս · ի՞նչ վիշտ ու-
նիք, Ներեցէք թէ որ անիրաւ տեղը ձեղ յան-
գիմանեցի · կը հաւատամ որ խահուէս գէշ ըւ-
լալուն յանցանքը ձերը չէ :

— Ո՞հ, ասոր համար չէ որ կուլամ, Պա-
րոն :

Այս պատասխանէն ինքնասիրութիւնն
քիչ մը վիրաւորեցաւ · բայց ես ժպտեցայ ·

— Ուրեմն իմ ըլլած յանդիմանութիւննե-
րաւս առթիւը դուք ուրիշ բանի համար կու-
լուք :

— Ստուգիւ այդպէս :

— Ո՞վ է ձեզ խարեւայ համարողը :

— Տարիաւոր մը : »

Այս խօսքն ըստած ատենը երեսը կարմիւց-
ցաւ եւ միամիտ վստահութեամբ մը կէո լուրջ
եւ կէս ծիծաղաշարժ հովուերդութիւն մը ին-
ձի պատմեց , որ սրտիս դպաւ :

ԳԼՈՒԽ ԻՐ .

Այն օրէն՝ չեմ գիտեր ինչու համար՝ այս
մանկամարդ աղջկան մտերիմն եղայ , եւ սկսա-
հետա երկար խօսակցիլ :

Կըսէր ինձի . և Պարոն , դուք այնչափ բա-
րեսիրատ էք որ ձեզ հօրս աեզր կըդնեմ :

— Խեղճ պատիւ մ'է այդ որ ինձի կընէք,
ըսի ձեռքը ետ հըելով : Ես հազիս երտունու-
մեկ տարեկան կամ : Եւ դուք դիս հօրենուք
աեզր կը դնէք :

— Ուրեմն , Պարոն , եղբօղս աեղ կը դը-
նեմ :

Աւ ուժով մը ձեռքսրոնելով գորովմնոք

կը ուղղմէր : Եւ այս ամենը կատարեալ անմեզութեամբ էր : Կըսէի եւ ինձի . « Աղէկ որ գեղեցիկ չէ . ապա թէ ոչ՝ այս անմեղ ընտանութիւնը կրնար զիս շփոթել : »

Ուրիշ անդամ ալ կըսէի . « Աղէկ որ շատ փոքր է : Այս հասակի աղջկան մը սիրահարելու վասնդէն աղատ եմ : »

Սակայն երբեմն ալ սիրտս կը վրդովէր երբ կը նշմարէի որ առջի բերանը կարծածիս չափ տգեղ չէր . վասն զի կը հարկադրէի խոստովանիլ թէ մարմնոյն ձևն ու դէմքը տնկանոն չէին :

« Թէ որ այնչափ դեղնած չըլլար , եւ երբեսը քանի մը կարմիր բիծեր չունենար , դեղեցիկ կրնար համարուիլ » կըսէի :

Սաստոյդ է, որ անհնար է հրապոյր չդտնել տոռյգ եւ դորովասիրտ մանկամարդի մը ներկայութեամբ նայուած քին ու խօսակցութեանը մէջ : Ասկէց զատ, անոր բարեկամութիւնը գերելու համար բնաւ բան մը ըրած չըլլալով սիրելի եղեր էի իրեն իբրև հոյր և կամ իբրև եւ բոյր հէ՝ որն որ ուղեմու լնջու համար : Ապան զի Ֆրանչենու ու Ունժու եւ Լուչնիա կարդացեր է եւ իմ տաղաչափութիւններս զինքը շատ կը լացընեն եղեր , եւ վերջապէս վասն զի բանար գրուեր եմ՝ ուսուց հոգունիւն իւմ և ուսուց հոգունիւն :

Մէկ խօսքով, ես՝ որ Մադղաղինէին սէր տուեր էի առանց զինքը տեսնելու, ի՞նչպէս կրնայի անդգայ մ՛նալ վկարություն հայություն բանապահն եղբայրական խնամածութեանցը, սիրուն փաղաքշանացը եւ եփած պատուական խահուէին :

Ստախօս եղած կըլլայի եթէ այս աղջկան չտարփալուս պատճառն իմ խօհեմութիւնս համարէի : Չտարփացայ անոր՝ մի միայն սա պատճառաւ որ ուրիշ տարփաւոր մը ունէր որուն վրայ հոդիկուար : Վայ էր ինձի՝ եթէ ուրիշ կերպ եղած ըլլար :

Սակայն եթէ սրտիո մէջ արթնցած զգացումը սէր ըսուածը չէր, կը խոստովանիմ որ անոր մօտ բան մ'էր : Կը փափաքէի որ երջանիկ ըլլար ու իր սիրած անձին հետ ամուսնանար . ամեննեւին չէի նախանձիր. բնաւ մտքէս չէի անցուներ թէ զիս իր սիրոյնպատակ կըրնար ընտրել: Բայց երբոր գրանս բացուիլը կը լսէի, սիրտ կը բարախէր յուսալով որ Ծանծէն էր եկողը . եթէ ան չէր՝ կը տրամէի . իսկ եթէ ան էր՝ սիրտ աւելի ուժգին կը զարնէր եւ ուրախութեամբ կը խայտար :

Ծնողքն արդէն բարի համարումմը ունենալով վրաս եւ զիանալով ալ որ աղջիկնին ուրիշի մը մոլեզին սիրահարած էր, բնաւ հոգ

չեին ըներ ու կը թողուին որ միշտ ան կը բերէր առառանք իսահուէս եւ երբեմն իրիկուանըն ալ :

Հրապուրիչ պարզմտութիւն ու քաղցրութիւն մը ունէր : Կրոնէր ինձի . «Այսչափ կաթողին սիրահարած եմ ուրիշի մը , եւ սակայն մեծ հաճութիւն կրգդամ ձեր քով կենալէս : Երբոր տարիածու չեմ տեսներ՝ հոսկէ զատոր որ ըլլամ կը ձանձրանամ :

— Գիտես , ինչու համար :

— Չեմ գիտեր :

— Ես ըսեմ քեզի . անոր համար որ տարփաւորիդ վրայ խօսելու արգելք չեմ ըլլար քեզ :

— Շատ աղէկ . բայց կարծեմ որ կէս մ'ալ ձեզ յարգելուս համար է ։

Խեզ աղջիկ . սա անուշ թերութիւնը ունէր որ միշտ ձեռքս կը բռնէր ու կը սեղմէր՝ տուանց նշմարելու թէ անանկով ինձի բերկրանք ու միանգամայն շփոթութիւն կը պատճառեր

Գոհութիւն Աստուծոյ , այս բարի արտքածը յիշած ատենս խիզճս զիս չտանջեր :

◆ ◆ ◆

ԳԼՈՒԽ Լ.

Այս թերթերն աւելի զուարձալի կը լւա-
յն եթէ ծանծէ ոլրահարած ըլլար ինձի, կամ
զոնէ ես անոր : Այսու ամենայնիւ այն պարզ
համակրութեան կապը որ մեզ կապեր էր
տարփանքէն աւելի սիրելի էր ինձի : Եւ եթէ
երբեմն վախնայի որ սիրտս մոլորելով այս ըզ-
գայումն իր բնութիւնը փոխէ, ծանրապէս կը
տրտմէի :

Անգամ մը, կասկածելով որ կրնար այս
բանը պատահիլ, եւ զանի՛ չեմ գիտեր որպի-
սի դիւթական աղղեցութեամբ՝ առջի բերանը
երեւցածէն բազմապատիկ առաւել գեղանի
գտնելուս վրայ վշտագնելով, եւ իր բացակա-
յութեան ժամանակն ունեցած տիրութեանս
եւ ներկայութենէն զգացած ուրախութեանս
վրայ զարմանալով, երկու օրի չափ ինքնիք-
նեղսիրտ ցուցընել սկսայ, յուսալով որ հետո
ունեցած բնուանութիւնը քիչ մը կորանցընէ :
Աղջկան համբերութիւնն ու գործվարտու-
թիւնը այս հնարքս 'ի դերեւ հանեց : Արմուկը
պատուհանին կը կրթնցընէր ու լուռ կանգնած

ինձի կը նայէք . Յետոյ կըսէք ինձի .

«Պարսն , կերեւի թէ իմ ընկերակցութենէս կը ձանձրանաք . սակայն , եթէ կարելի ըլլար՝ օրն 'ի բուն հոս կը կենայի . վասն զի կը տեսնեմ որ դուք զբաղանքի պէտք ունիք . . . Այդ նեղարտութիւնը միայնութեան բնական արդիւնքն է : Բայց փորձի համար քիչ մը խօսակցութիւն ըրէք՝ եւ նեղարտութիւննիդ կը փարստի : Եթէ դուք չէք ուզեր խօսիլ՝ ես կը խօսիմ :

— Չեր տարփածուին վրայ , այսպէս չէ :

— Ո՛չ . միշտ անոր վրայ չէ . ես որիշ բաներու վրայ ալ կրնամիտօսիլ : »

Եւ կ'սկսէք իր ընտանեկան մանր շահուցը , մօրը խստութեանը : Հօրը միամատութեանը , եղբայրներուն սատանութեանցը վրայ խօսիլ , եւ իր պատմութիւնները պարզ ու շնորհալի էին : Բայց առանց ուշագրութիւն ընելու՝ վերջապէս խօսքը նորէն իր սիրելի նիւթին վրայ կը դարձունէք միշտ , այն է իր գըժրաղդ սիրոյն :

Իսկ ես կը շարունակէի նեղարտութիւնս , յուսալով որ վերջապէս կը գմդմնի : Բայց անմտաղրութեամմր մի ըսեմ թէ խորամանկութեամբ՝ չէր նշմարէր կամ չնշմարելու կը զարնէք . եւ վերջապէս ես ալ կը պարտաւորէի

մեղմանալու, զուարթանալու, խանգաղուածելու եւ իր քաղցր համբերութենէն շնորհակալ ըմալու :

Մէկ զի ձգեցի զինքը նեղացընկըլու ապահնորհ խորհուրդը, եւ քիչ քիչ երկիւզն փարատեցաւ : Եւ ստուգիւ սիրահարած չէի իւրին, կրկարօրէն քննեցի իմ խողճահարութիւնը, եւ այս նիւթիս վրայ ունեցած մտածութիւններս դրի առի : Այս մանրախոյզ քննութիւնս օդտակար եղաւ ինձի:

Մարդիկ երբեմն ոչինչ բաները խրտութեակ կընենիրենց : Անոնց մէ չվախնալու համար՝ բաւականէ առելի ու շաղրութեամբ եւ առելի մօտէն նկատել զանոնք :

Եւ ի՞նչ վնաս կար ինձի՝ անոր այցելութեանցը գորովալիր անհանդատութեամբ փափաքելէ, անոր գթութեանը հասկընալէ, ինձի համար ունեցած կարեկցութեանը վրայ զմայլելէ, անոր գթութեանը փախարէն գթութիւն հատուցանելէ, քանի որ մնր իրարունը կատամամբ ունեցած խորհուրդնիս մանկութեան ամենամաքուր խորհուրդներու պէս անմեղէին, եւ քանի որ անոր իմ ձեռքս սեղմելըն ու սիրալիր աչօք ինձինայելլը՝ թէ եւ քիչ մը զիս շփոթեցընէին՝ փրկաւէտ ակնածոթիւն մը ինձի կաղդէին :

իրիկուն մը՝ իր մէկ կրած մեծ վիշտը ինչ
ձի պատմած առեն՝ տարաբաղդ աղջիկը թե-
ւերը պարանոցիս վրայ ձգեց : Այս գրկախառ-
նութեան մէջ ընաւ ամբարիչա միտք մը չկար
Աղջիկ մը աւելի ակնածութեամբ չէր կրնար
իր հօրը փաթթուիլ :

Սակայն այս բանը խորին տպաւորութիւն
մը ըրաւ երեւակայութեանս վրայ : Յաճախ
միտքս կիյնար այն քաղցր փարումը , եւ ալ
չէի կրնար այն ժամանակը ուրիշ բան մտա-
ծել :

Ուրիշ անդամ մ'ալ երբորնոյն որդիական
վստահութեան խանդին տեղի տուաւ , խելոյն
ինքինքս աղատնցի անոր սիրուն բաղկացը
մէջէն՝ առանց զանի սրտիս վրայ սեղմնլու ,
առանց զինքը համբուրելու , եւ թոթովելով
ըսի իրեն .

« կաղաչեմ՝ ֆանծէ , այդպէս մի փաթ-
թուիր ինձի . աղէկ բան չէ : »

Ուշադրութեամբ մը երեսս նայեցաւ , յե-
տոյ աչքը խռնարհեցուց ու կամրեցաւ : — Ան-
շուշա այս առաջին անգամնէր որ իր նկատ-
մամբ տկարութիւն մը գործելու հնաւորու-
թիւնը կը կարդար սրտիս մէջ :

Այնուհետեւ ալ թէպէտ ինձի ընտանի ըլ-
լակէ չղաղրեցաւ . բայց իր ընտանութիւնը ա-

և լի ակնածութեամբ էր, աւելի համաձայն
էր խմբաղձանացս, եւ շնորհակալ եղայ իրմէ:

ԳԼՈՒԽ ԼԱ.

Ուրիշ մարդիկը տուապեցընող վշտաց
վրայ չեմկրնար խօսիլ . բայց կենացս սկիզբէն
ինձի վիճակոծ վիշտերուն դալով կըպար-
տաւորիմ խոստովանելու թէ զանոնք լաւ մը
քննելով միշտ խմօդտիս համար նախառահ-
մանուած գտայ . — այս, մինչեւ անդամայն դը-
ժսխըմբեր ջերմութիւնը որ զիս կընկճէր . մին-
չեւ խակ այն մժղուկներուն լէգէոնները որ կա-
տալի պատերազմ մը կընէին ինձի հետ : Հո-
գար անդամ մտածեցի ասոր վրայ : Եթէ այն
անընդհատ վշտակրութեան վիճակին մէջ չըլ-
լայի , կրնայի՞ բաւական զգաստութիւն ունե-
նալ յարաժամ սպառնացող սիրոյ նետերէն
անխոցելի մնալու համար, որ դժուարաւ կըր-
նար ողանչած ակնածութեան մը սահմաննե-
րուն մէջ րունուիլ, մանաւանդ այնպիսի զուար .
թարարոյ եւ վաղաքուշ աղջկան մը քով : թէ

որ այնպիսի վիճակի մը մէջ ըլլալով՝ երրեմն
ես ինձմէ կը զարհուրէի, ի՞նչպէս պիտի կը բր-
նայի երեւակայութեանս արտուղութիւնները
կառավարել՝ ևթէ քիչ չատ հանդիսատ եւ դուար-
ճութեանց յարմար միթնոլորտի մը մէջ ըլլայի:

Ծանծէի ծնողաց անխոհեմութեանը նա-
յելով, որ այնչափ վստահութիւն ունեցեր էին
իմ վրայ, նոյն իսկ Ծանծէի անխոհեմութեա-
նը նայելով, որ չէր մտածեր թէ կրնար ինձի
մեղամբարտ արրեցութիւն մը պատճառել, իմ
խախտա առաջինութեանս ուկար օգնու-
թեանը նայելով, տարակոյա չկայ թէ այն հնո-
ցին հեղձուցիչ տառպը եւ մժզուկներուն ան-
գութ խայթումները ճշմարիտ բարիք մ'էին
ինձի համար:

Այս մտածութիւնը զիս քիչ մը կը հաշ-
ուեցընէր այն պատռհաններուն հետ եւ կը
հարցընէի ես ինձի:

— Կուղես աղտափի ասմացմէ եւ մաքուր
օդով դպվացեալ լսու սենեակ մը երթալ՝ սիրու-
թիր Ծանծէն այլ եւ ա չաւեանելու պայմանաւ:

Ճշմարիտը ըսնմ: Այս հարցման պատաս-
խաննելու արիութիւն չտնէի:

Սրբոր մէկը ուրիշն քիչ մը բարիք ուզէ,
խիստ չնշին երեւոյթ ունեցող բաներու մէջ
ու անպատճելի ընթիրութիւն մը կը դանէ:

Ետոտ անգամ Ծանծէի մէկ խօսքը : մէկ ժը-
օլիտը , մէկ արտսուքը , իր Վենետիկեցի բար-
բառին մէկ շնորհալի զրուցուածքը , եւ մեր
երկուքին վրայ դիմով մժղուկներն իր թաշ-
կինակովը կամ հովահարովը վանելու համար
ձեռքին արագ արագ շարժումը սրտիս մէջ
անսակ մը մանկական ուրախութիւն կը ծա-
ռաէին որ բոլոր օրը կը տեւէր . Բայց աւելի
քաղցր էր ինձի տեսնել , որ հետո խօսելովը
սրտին վիշտերը կը փարատէին . իմ կարեկցու-
թիւնս սիրելի էր իրեն . խրառներս զի՞նքը կը
զօրացընէին . եւ երբեք առաքինութեան ու
Աստուծոյ վրայ կը ճառէինք՝ սիրաը կը բռ-
բռքէր :

« Երբոր մէկ անգ կրօնէի վրայ կը խօ-
սինք , կըսէր , աւելի յօժարութեամբ եւ ա-
ւելի ջերմեռանդութեամբ կ'ազօթեմ : »

Երբեմն մնուի նիւթի մը վրայ խօսած
ժամանակը՝ մէկէն կարճ կարելավ Ս. Գիրքը
կառնէր , կը բանար , բոտ դիպաց կը համբաւ-
րէր մէկ հատուածը , եւ զանի թարգմանել ու
մեկնել կուտար ինձի : Ուսույ կըսէր .

« կուզեմ որ ամեն անգամ այս հատուա-
ծը կարդացած ժամանակնիդ՝ մաքերնիդ բհ-
րէք որ ես համբուրած եմ զայն : »

Աշմարիաը խօսելով , իր համբուրներն ալ

միշտ յարմար տեղերու չէին հանդիպիր, մոռ
նառանդ երբոր Երգ Երգոցը բանար : Այն ժա-
մանակը՝ զանի չշիկնեցընելու համար՝ լատինե-
րէն չգիտնալէն օգուտ կը քաղէի, եւ դր քին
սրբութիւնն ու Ծանծէի անանդութիւնը միան-
գամայն յարդելու կերպով կը մնկնէի. վաճն դի
երկուքն ալ խորին պատկառանք կազդէին
ինձիւ Առանկ առիթներու մէջ ամեննեւին չէի
ծիծաղիր :

Սակայն աս ալ երբեմն քիչ չէր շփոթե-
ցըներ զիս՝ երբոր իմկեղծ մնկնութիւնս չհառ-
կընալով կազաչէր որ այն հատուածը բառ առ
բառ թարգմանեմ, եւ չէր թողուր որ դադտ-
նապէս ուրիշ նիւթի մը անցնէի :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Աշխարհիս մէջ տեւական բան մը չկայ :
Ծանծէ հիւընդցաւ : Հիւանդութեան սոզի
օրերը կուգար զիս տեսնելու եւ սաստիկ գըլ-
խու ցաւէ մը կը դանգատէր : Կուլար եւ վշտա-
կը թեան պատճառը չէր հասկըցըներ ինձի :

Միայն քանի մը կշտամբանք կը թոթովէր իր
տարփածուին դէմ :

« Վատ մարդ է , կըսէր , բայց Աստուած
ներէ իրեն :

Զուր տեղ աղաչեցի իրեն որ սիրտը ինձի
բանայ՝ ինչպէս որ սովորութիւն ունէր , եւ
չկրցայ հասկընալ թէ ինչ էր զանի այն աստի-
ճան վշտագնողը :

« Վադ առառու նորէն կուղամ» ըստ ին-
ձի իրիկուն մը : Բայց հետեւեալ օրը խահուէն
մայրը բերաւ . միւս օրերն ալ պահապանները
բերին : Սանծէ ծանրապէս հիւընդցեր էր :

Պահապաններն այս մանկամարդ օրինք-
զին տարփանացը վրայ այնպէս կասկածելի
քաներ պատմեցին ինձի , որոնք մաղերս ցցա-
ռեցուցին : Հրապորմնք : — Բայց ասոնք
թերեւս ըրտաբառութիւն էին : Ճշմարիտը խօ-
սելով հաւաացի , եւ սիրտս տակն ի վերայ ե-
զաւ այս մեծ չժբաղդութեան վրայ : Սակայն
կը սիրեմ հաւաաալ թէ սուտըսին ինձի :

Ամիսէն տելի հիւանդ պառկելէ եաեւ
խեղճ աղջիկը գեղ տարուեցաւ , եւ մէկ մալ
չաեսայ դանի :

Չեմ կրնաքըսել որչափ հեծեցի այս կորուս-
տիս վրայ : Ո՞հ , մրչափ սոսկայի եղաւ այսու-
հետեւ իմ միայնութիւնս : Ո՞հ , երբ կը մտա-

Ֆէի թէ այն բարի արարածը գժրաղդ սլիտի
ըլլար , այս մտածութիւնս անոր հեռացումէն
հարիւրապատիկ աւելի դժնղակ էր ինձի : Ի՞մ
թշուառութեանցս մէջ՝ ան այնչափ մխիթարեր
էր զիս իր քաղցր կարեկցութեամբը . իսկ իմ
կարեկցութիւնս ամուլ էր անոր համար : Բայց
անշուշտ համոզուած ըլլալու էր թէ ես կու-
լայի իր վրայ , իրեն մխիթարութիւն մը տա-
լու համար ամեն անձնուիրութիւն կընէի ե-
թէ հնար ըլլար , եւ չէի դադրիր երրէ ք զին-
քը օրհնելէ եւ իրեն բարօրութիւն մաղթելէ :

Ծանծէի ժոմանակը , իր այցելութիւն-
ները՝ թէպէտեւ խիստ կարճ էին , սակայն իմ
անընդհատ խոկմանցս եւ ժտուորական լռին
պարապմանցս ձանձրալի միտերպութիւնք
հաճոյապէս ընդմիջելով , գաղտիարներուա
սւրիշ ընթացք մը տոլով , ինձի քաղցր գորալ
մը ազդելով տարտրադութիւնս կը սլնա-
զարդէին եւ կեանքս կը կրինապատկէին :

Այսուհետեւ բանտը ինձի համար գերեզ-
ման եղաւ : Գևանկ մը շաբաթի չափ յետին
ախրութեան մէջ ինկայ եւ զիր զրելու անդամ
ախորժ չունեցայ : Սակայն այս ախրութիւնը
ժամանակաւ զգացած յուսահատութեանս
կետ բաղդատելով հանդարտ էր : Արդեօք ար-
դէն անբաղդութեան հետ ընտելացնը էի :

ւելի փիլիսոփան, աւելի քրիստոնեանց եղեր
էի . կամ թէ սենեկիս հրատապ ջերմութիւնը
արտմութեանս ուժը կոտրելու կարողութիւնը
ունէր : Ո՞հ, ոչ : Տրտմութեանս ուժը՝ կը յի-
շեմ որ սաստկապէս կ'զգայի սրտիս մէջ, մա-
նաւանդ սա պատճառաւ անշուշտ, որ ալ
կամք չունէի զանի աղաղակաւ և յուզմամբ
գորս չնշելու :

Արդարեւ, այս երկար վարժութիւնը ար-
դէն աւելի կարող ըրեր էր զիսնոր վշտաց զի-
մանալու եւ ինքոյինքո Աստուծոյ կամացն
յանձնելու Այնչոփ շտա ըսեր էի թէ ուռաջւլը
Հոգունիւնէ, որ վերջապէս ճայթելու կէտը հա-
սած տրտունջներս զտպել ոռվրեր էի, եւ մին-
չեւ անգամ կամաչէի արանջելու մտարերու-
թեանս վրայ :

Մտածութիւններս զրի առնելու սովո-
րոյթը շատ օգներ էր հոգիս զօրացընելու, ա-
նոր պատրանքը ցրելու եւ խորհրդածութիւն-
ներուս մեծ մասը սա եղբակացութեանց մէջ
ամփոփելու .

« Աստուած մը կայ . ուրեմն ինչ որ մեզի
հասնի՝ լաւագոյն վախճանի մը համար հրա-
մայուած է . ուրեմն մարդուս երկրի վրայ կը-
րած տատապանքը իր բարոյն համար են : »
Սանծէի հետ ծանօթանալս ալ բարիք

մ'էր ինձի համար. վասն զի բարքս մեղմացուց
ցեր էր : Անոր գորովալից քաջալերութիւննեւ-
րը քանի մը ամիս ուժ տուեր էին ինձի՝ բաղ-
դէն վերադոյն այսինքն համբերատար ըլքա-
լու , որուն ամեն մարդու պարտականութիւ-
նըն ըլլալը կըզգայի . այն քանի մը տմսուան
հաստատամութիւնը զիս համբերատարու-
թեան վարժեց :

Ծանծէ ընդ ամենը երկու անգամ զիս
բարկացած տեսաւ : Առաջինը՝ ինչպէս ար-
գէն պատմած եւմ՝ այն անշահ խահուէ ին պատ-
մուաւ էր . երկրորդը հետեւեալ առթիւ պա-
տահեցաւ :

Ամեն երկու կամ երեք շտրաթն անդամ
մը բանտապետը նամակ մը կը բերէր ինձի ըն-
տանիքէս . այն նամակը նպաս յանձնաժողովին
ձեռքէն կանցնէր ու շատ տեղերը ոեւ մելա-
նով մը աւրուած ինձի կը զրկուէր : Օր մը ,
փոխանակ քանի մը խօսք միայն աւրելու , բո-
լոր նամակը սոսկալի կերպով եղծուած էր .
բաց ՚ի « Սէրեւէ Սէլլո » խօսքէն՝ որսկիզբն էր ,
եւ սա խօսքէն որ վերջն էր . « Ահա+ + ալ+եւ ուր-
դաց էշ հ-ի-ւ-էն+ » :

Այն առտիճան զայրացայ , որ Ծանծէի առ-
ջեւ պոռչաեցի՝ անիծելով չարաչար . . . չեմ
զիսեր զով : Խեղճ աղջիկը դժաց վրաս , բայց

միանգամայն զիս յանդիմանեց թէ սկզբանցա
հակառակ կը վարուէի : Տեսայ որ իրաւունք
տնէր , եւ ալ այնուհետեւ մէկը չանիծեցի :

ԳԼՈՒԽ ԼԳ.

Օր մը սկսհապաններէն մէկը բանաս մը+
տաւ . դաղտնիք մը ունենալու . դէմքով եւ ը-
տաւ .

« Երբոր օրիորդ Շանձէն հոռ էր . . . ու-
րովհետեւ ան կը բերէր ձեզի խահուէն . . . եւ
նրկար կը կենար ու կը խօսակցէր ձեզի հետ
. . . եւ ես կը վախնայի , պարոն , որ այն դե-
ստհասակ նենդաւորը ձեր ամեն դաղտնիքը
կը լրտեսէ . . . »

— Ան աղջիկն իմ մէկ գաղտնիքս լրտե-
սած է , ըստ բարեկութեամբ . եւ ես ալ եթէ
գաղտնիք մը ունենայի , այնչափ պարզաբան
չեմ որ բերնէս առնել առյի : Շարունակեցէք
խօսքերնիդ :

— Ներեցէք , պարոն , բոել չեմուղերու որ
դոք պարզաբնակ էք . բայց ես չեի վստահիք

օրիորդ Առանձէին : Խալ հիմա , որովհետեւ մէկը
չունիք որ դայ ձեզի հետ ընկերակցութիւն
ընէ . . . կը յուսամ . . . որ . . .

— Ի՞նչ . շուտ ըսէ նայիմ :

— Բայց նախ երդում ըսէք որ դիս չէք
մասներ :

— Ո՞ . ձեզ չմատնելու համար կրնամերդ-
նուլ . որովհետեւ կհնացու մէջ մէկը մասնած
չունիմ :

— Ուրեմն անկեղծութեամբ կըսէք թէ
կերդնուք :

— Այս կերդնում որ ձեզ չեմ մասներ .
բայց անմիտ մարդ , դիացիք որ մասնութիւն
ընելու կարող մարդը՝ երդումն ալ կրնայ առ-
քել :

“Սամակ մը հանեց զրպանէն ու ինձի տը-
ռաւ զողղողակով եւ ազաէց որ կարդալէս
ետեւ պատուիմ անյայտ ընեմ” :

« Կեցիք հոս , ըսի նամակը բանալով .
կարդալուս պէս ձեր աչքին առջեւ կը ջնջեմ :

— Բայց , պարոն , սրէտքէ որ պատաս-
խանը տաք ինձի , եւ ևս ալ չեմ կրնար սպա-
սել : Ուստի սկսրտակով կարդացէք ու պատաս-
խանը գրեցէք : Միայն թէ մէջերնիս նշան մը
որոշենք : Եթէ մէկումը ոտնաձայն լսէք ,
դիացեցէք որ ևս ըլլամնէ : « Անեղի ի գեր ... »

« Երդին եղանակը կերպեմ։ Այն ժամանակը առանց երկիրդի կրնաք ամեն տեսակ թուղթերվրանիդ պահել, բայց թէ որ այս երգը չլսէք, կը հասկըցուի որ ես չեմելովը, կամ հետո ուրիշ մարդ կայ։ Այն ժամանակը թուղթի որահեք քովերնիդ, որովհետեւ կըլլայ որ խուղարկութիւն կընեն. ուստի շուտ մը պատեհցէք ու պատուհանէն դուրս նետեցէք։

— Անհոգ եղիք. կը տեսնեմ որ վարպետորդի էք. եռ ալ նոյնպէս կըլլամ։

— Սակայն քիչ մը առաջ դիս անմիտ կոչեցիք։

— Կրառունք ունիք դիս յանդիմանելու, ըսի ձեռքը սեղմելով. ներեցէք։»

Գնաց, եւ կարգացի բերած նամակը որ այս էր.

« Ես . . . (հոս նամակին հեղինակն իր անունը կուտար) ձեր վրայ զմայլողներէն մէլին եմ։ Ձեր Ֆեռնանդուս բիբին ծայրէ 'ի ծայրը զոյ դիտեմ։ Զիս բանտարկեցին . . . (հոս իր բանտարկութեան պատճառն ու թուականը կը հասկցընէր), եւ արեանս չեմ դիտեր որ չափ լիպրան կուտամորպէս դի ձեր հետը կամ զոնէ ձե-

* Վենետիկի գեղջկական տղաւաղլ լեզուով երդ մը,

րինին կից բանտիմը մէջ զքուելով՝ ձեղի հետ
խօսակցելու բարեբաղդութիւնն ունենամ. Եր-
բոր իմացայ Թրէմէրէլլոէն (այսպէս սլիտի կո-
չենք մեր խորհրդակից պահապանը) ձեր բրո-
նուիլը եւ պատճառը, սիրաս սաստիկ բաղձան-
քով մը վառեցաւ. ձեղի ըսելու թէ ոչ ոք ձեզ
ինձմէ աւելի կը սիրէ, Կը հաճի՞ք ընդունիլ
հետեւեալ առաջարկութիւնն այն է՝ միայնու-
թեան ծանրութիւնը փոխազարձարար սփո-
փել թղթակցութեամբ. Պատուոյս վրայ խօսք
կուտամ ձեղ, թէ աշխարհիս մէջ մէկը չպիտի
խմանայ ինչ այս բանը, եւ հաւաստի ևմոր
կրնամ ձենէ ալ նոյն խորհրդապահութիւնը
յուսալ՝ եթէ կընդունիք. — Եւ որպէս զի քիչ
մը զիաճանչէք, կենացս համառօտ սպասմու-
թիւնը կը գրեմ ձեղի, եւ այլն. »

Այսնամակէն ետեւ համառօտ կենաց-
րութիւն մը կար:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Քիչ մը երեւակայութիւն ունեցող ըն-
թերցողի մը զիւրին է հասկընալ թէ այսպիսի
համակ մը որ աստիճան կ'ելեկտրացընէք

խեղճ բանտարկեալ մը , մանաւանդ դիւրընա-
տել բնաւորութիւն եւ սիրող սիրու ունեցող
բանտարկեալ մը : Առաջին զգացումս եղաւ
բարեկամութիւն կապել այս անծանօթին հետ,
խանդաղատիլ անոր տարարադդութեանցը .
եւ չնորհակալ ըլլալ ինձիցուցըցած բարեկա-
մութենէն : — « Այս , գոչեցի , կընդունիմ ա-
ռաջարկութիւնով , ազնիւ մարդ : Խցի՛ւ թէ
իմ նամակներս ալ քեզի այնչափ մխիթարու-
թիւն տային՝ որչափ քու կիններդ ինձի պիտի
տան , եւ որչափ առաջին գրածդ արդէն ոը-
ուաւ : »

Եւ մանկական ուրախութեամբ մը կրկին
կրկին կարդացի այն նամակը , հարիւր անդամ
օրհնեցի զանի զրողը , եւ ինձի թուեցաւ որ ա-
նոր ամեն մէկ խօսքը փափուկ եւ ազնիւ ոըր-
տի մը յայտարարութիւն էին :

Արեւը մարը կը մանէր , եւ աղօթքիս
ժամանակն էր . Ո՞հ , որչափ կ'զգայի զԱսո-
ուած : Ո՞րշափ փառք կուտայի իրեն որ մտքիս
ու սրտիս կարողութիւնները չնուազեցընելու
նորանոր միջոցներ կը գտնէր : Ո՞րշափ կը նո-
րոգուէր ու կը զօրանար սիրու անոր ամեն
անդին պարզ եւներուն յիշատակովը :

Պատուհանիս վրայ կանգնած էի , թեւերս
վանդակասիւներէն դուրս հանած ու ձեւ քե-

ըլս իրար կցած . Ս . Մարկոսի եկեղեցին պատուհանիս տակն էր . անթիւ ազատ աղաւնիք Ներ իրար կը կացէին , կը թռչաէին եւ այն կապարեայ յարկին վրայ բոյն կը դնէին . մնձավայ յելուշ երկինք մը տարածուած էր առջևս , Անհետիկի մէկ մաք՝ որ բանտէս կը բերեար , աչքիս տակն էր , եւ մարդկային ձայներու հեռաւ : որ շշունջ մը մշղմով ականջիս կը դարներ Այն շարաշշուկ՝ բայց հիմնալի վայրէն կը խօսակցէի Անոր հետ՝ որուն աչքը միայն կրնար դիտ տեսնել . անոր կը յանձնէի հայրաւ մայրս իւ ամեն մէկ սիրելիներս . կը թուէր ինձի թէ պատասխան կուտար ինձի ըսելով . և վստահ եղիք խմ մարդասիրութեանս վրայց . ես ալ կը գոչէի , և Այս , քու մարդասիրութեանդ վրայ կը դնեմ իմ յոյսս :

Աւարտեցի ազօթքս խանդաղատեալ , միսիթ արեալ , առանց բանի տեղ դնելու մը գութեանս խայթուածքը որ այն միջոցին ընդուներ էի առանց արգիլելու :

Նոյն իրիկունք , երբոր երեւակայութեանը խանդաղատեալ , անորէն անտառէն անտառնելլ ըլլալ սկսան , եւ դէմքսու ձեռքերս վաֆթելու ալէտքը նորէն կ'զգայի , յանկարծ զուեհիկ եւ չար խորհուրդ մը միտքս եկաւ ու զիս դող հանեց , հալածելու շեցի , բայց չկրցայ :

Թրէմէրէլլօ վաս կասկած մը ինձի նշմարել տուերէր Եր Ծանծէի նկատմամբ , որպէս թէ իմ գաղտնիքս կը լրտեսէ եղեր , այն պարզ եւ անմեղ հոգին՝ որ քաղաքականութեան ընաւին տեղեկութիւն չտնէր , եւ ունենալ ալ չէր ուզեր :

Անհնար էր ինձի կառկածիլ անկէ . բայց կը հարցընէի ես ինձի . « Արնամմնոյն վստահութիւնը ունենալ Թրէմէրէլլօի վրայ ալ Եթէ այս չարաճճին նողկալի մնքենայութեան մը գործի՛ք էր . եթէ բերած նամակը նոր բարեկամի մը ձեռքով ինէ կարեւոր գաղտնիք որսալու համար չեմ , դիտեր որմէ հնարուած կեղծի՛ք մէր , թերեւս իսկ այն նամակը գրող բանտարկեալը ընաւին անգոյ է . — թերեւս անգոյ չէ , բայց նենգաւոր մ'է որ ինէ գաղտնիք իմանալ կուղէ , որպէս զի զանոնք յայտնելով իր ազատութիւնը ձեռք բերէ . — թերեւս ըստուղիւ պատռաւոր մարդ մ'է ան . այս , բայց այն ժամանակը նենգաւորը Թրէմէրէլլօն է որ ամսականին յաւելուած մը շահելու համար երկուքս ալ մատնել կուղէ : »

Ո՞հ , սոսկալի բան մ'է այս , բայց աւազ . բանտի մէջ տառապող մարդու մը խիստընական է ամենն կողմէ ատելութիւն եւ դաւաճանութիւն կասկածիլ :

Այս կասկածները զիս կը տանջէին , կը վհատեցընէին : Ոչ . Ծանծէի վրայ երբէք կառ կած ունեցած չէի : Սակայն քանի որ Թրէմէրէլլօ անոր վրայօք այն խօսքը ըրաւ , միտքս չարչարուիլ սկսաւ կէս կասկածով մը՝ չէ թէ Ծանծէի վրայ , այլ զանի թող տուղներուն որ սենեակս դար : Արդեօք իրենց յօժար կամօքը կամ բարձրագոյն հրամանէ մը հարկադրելով զիս լրտեսելու պաշտօ՞ն յանձնած էին այն աղջըկան : Թէ որ այսպէս էնէ՝ իրենց նպատակին չկրցան հասնիլ :

Խոկ անծանօթիննամակին դալով ի՞նչ ընելու է : Խոհեմութեան անունով պատուեալ երկիւղին խիստ եւ ճղճիմ խրատներուն հետեւիլ . նամակը ևտ տալ Թրէմէրօլլօի ըսելով թէ ո ֆիմուզեր խաղաղութիւնս վտանգի մէջ ձըդել : »— Խոկ եթէ նենզութիւն մը չկայ , եթէ այս անծանօթը ստուգիւ իմ բարեկամութեանը արժանի մարդ մ'է , եւ կարժէ որ ես քիչ մը վտանգ աչքս առնում անոր միայնութեան դառնութիւնը մեղմնլու համար : Ո՛վէ չուառական , թերեւս մահը քենէ երկու քայլ միայն հեռու է , կենախուզ դատակնիքդ մէկ օրէն մէկալլ կրնայ տրուիլ , եւ դու յանձն չես առնուր սիրոյ զործ մ'ալ կատարել : Ուրեմն պատասխան գրեմ՝ այժ , պէտք է որ պատասխան

զրեմ։ — Բայց թէ որ ձախողաբար թղթակցութիւննիս բռնուի, եւ որչափ որ մէկը խըղճմըտանքին հարցունելով չկրնայ զայն յանցանք մը համարիլ, այսու ամենայնիւ ճշմարիտ չէ որ սարսափելի պատիժ մը կը կրէ խեղճ թրէմէրէլլօ։ Այս նկատումը միայն բաւական չէ զիս բացարձակապէս պարտաւորելու որ գաղտնի թղթակցութեան ձեռք չզարնեմ։

ԳԼՈՒԽ ԼԵ

Բոլոր իրիկունը մտայուզութեան մէջ անցուցի ։ զիշերը չկրցայ աշքս գոցել ։ եւ այս չափ անատուզութեանց մէջ չէի զիտեր ինչ որոշում ընելիքս ։

Դեռ չլուսցած՝ անկողինէս վար ցատկեցի, եւ պատուհանիս վրայ ելայ աղօթելու ։ Դըժուար պարագայներու մէջ մարդ պէտք մը կ'զդայ աստուածային խմաստութեան դիմելու, անոր աղդմունքը լսելու եւ ըստ այնմ վարուելու ։

Անանկ ըրի ես ալ ։ երկար աղօթքէ մը ետեւ՝ վար իջայ, մժղուկները վանեցի, խայ-

թուածներով ծածկուած երեաներս մեղմավ մը
շփեցի , եւ որոշումս եղած էր : Թրէմէրէլլօին
պիտի իմացընէի իմ երկիւղս թէ այս թղթակ-
ցութիւնն իր կորստեանը պատճառ կրնար ըլ-
լալ . եթէ վարանէր՝ ետ կենացի , իսկ թէ որ
աներկիւղութիւն ցուցընէր՝ բնդունէի :

Պարտեցայ սենեակիս մէջ մինչեւ որ պայմանեալ երգին մրժունքը լսեցի : Թրէմէրէլլօ խահուէ կը բերէր ինձի :

Տարակոյսս յայտնեցի իրեն, եւ զի՞նքը
վախցընելու. համար խօսք չինայեցի : Տեսայ
որ անդրդուելի կամք մը ունէր Հայոցիւ, կը-
սէր, երա շնորհ անձնու : Այս հաստատամտու-
թիւնը բնաւ չէր համաձայներ անոր ճադարի
դէմքին եւ Թրէմերէլլօ անուանը հետ զոր
կուտայինք իրեն : Խնչ եւ իցէ, ես ալ հաստատ
կեցայ որոշմանա պրայ :

« Գինիս քեզի կը թողում, ըսի իրեն, ին-
ձի թռւղթ բեր այս նպամակագրութեան հա-
մար, եւ վստահ եղիր որ բանսալիներուն չառա-
շիւնը լսած ատենա՝ երբոր ձեր երգին մրմուն-
ջը չլսեմ՝ իսկոյն ամեն կասկածելի բաները
կը ջնջեմ։

— Ահաւասիկ թերթ մը թուղթ ձեզի,
այսուհետեւ ալ որչափ թուղթ ուղէք՝ կու-
տամ, եւ բոլորովին վատահ կըլլամ ձեր խոհե-

մաւթեանը վրայ : ۲

Քիմքս այրեցի խահուէս շուտով ըմպելու . համար : Թրէմէրէլլօ գնաց , եւ ես նստայ զրելու :

Լաւ կընէի արդեօք : Ըրած որոշումս ըստուգիւ աստուածային աղքեցութեամբ էր , չէ նէ՝ իմ ձեռներէց բնաւորութեանս , եւ ինձի հաճոյ եղածը դժողակ զոհերէ նախապատիւ բռնելու հակամիտութեանս մէկ յաղթանակն էր : Միանգամայն անծանօթին ինձի ցուցըած յարգանացը փոխարէն գոռոզ մարդահաճութիւն մը չէր . խռհական լուսթիւն մը քիչ շատ վտանգաւոր թղթակցութենէ մը նախապատիւ բռնելով վատասիրու երեւնալու երկիւղ մը չէր :

Ի՞նչպէս լուծելու էր այս տարակոյաները : Միամտութեամբ յայտնեցի ասոնք բանտարկութեան ընկերիս գրած պատասխանուոյս մէջ . բայց աւելցուցի թէ , ըստ իր կարծեաց , երբոր մէկը համոզուած է թէ տրդար պատճառներով եւ խղճմտանքին ներելովը կը գործէ , յանցաւոր դասուելէ վախնալու չէ . սակայն պէտք էր որ ինքն ալ ուշի ուշով խորհէր մեր ձեռք ղարկած կարեւոր գործին վրայ , եւ անկեղծութեամբ ըսէր ինձի թէ այս որոշումն ըրած ատենը որոնք էին իր աներկեւանութեան

կամ երկիւղի պատճառները . թէ որ վերստին
խորհեղով այս ձեռնարկութիւննիւ չափազանց
յանդռւղն գանէր , պէտք էր որ ամեն ջանք
ընելով ետ կենայինք այս թղթակցութեան
մեղի խոստացած մխիթարութիւններէն , եւ
դու ըլլայինք քանի մը խօսքերու վոխա-
նակութեամբ , որոնք թէպէտ կարճ էին , այ-
սու ամենայնիւ խորին բարեկամութեան մը
անջնջելի գրաւականներ էին :

Չորս երես գիր գրեցի անկեղծ բարեկամութեան խանդով բոցավառեալ։ Համառ օտիրու պատմեցի բանտարկութեանս պատճառը։ ընտանեացս եւ ուրիշ ինձի սիրելին եղող քանի մը անձանց վրայ խօսեցայ օրտազեղ գորովանօք։ Եւ ջանացի մինչեւ հոգւոյս խորերն անոր ծանօթ ադրբնելու։

Արիկունը նամակս տարունցաւ։ Առջի դի-
շերը քնացած չըլլալուս՝ սաստիկ յոդնած էի։
ուստի քոնս շուտով տարաւ, եւ առաւօտաւն
արթնցայ սթափ եւ ուրախ։ սիրտս կը բա-
րախէր մասձելովթէ զուցէ բարեկամիս պա-
տաղսամնն ստանալու քաղցր վայրկեանը մօտ
էր։

ԳԼՈՒԽ ԼԶ.

ԳԼՈՒԽ ԼԶ.

Պատասխանը իսահուելին հետեկաւ : Յատ-
կեցի թրէմէրէլլօի ճիշը փաթթուեցայ եւ ըսի
գորովանոք . « Աստուած վարձատրէ քու այս-
չափ բարեսրտութիւնդ : » — Իբրև եւ անծա-
նօթէն ունեցած կասկածներս փարատեր էին ,
բայց չեմկրնար ըսել ինչու համար . անչուշտ
անոր համար որ ատելի էին ինձի . անոր համար
որ միշտ զգոյշ կենալով քաղաքականութեան
վրայ յիմարաբար խօսելէ , այն կասկածներն
անօգուտ կը թուէին ինձի . անոր համար որ ա-
մեն բան սեւ տեսնելու Տակիտեան դրութեան
անսիալութեանը շատ չէի հաւատար , թէ-
պէտ եւ Տակիտոսի հանճարին վրայ կ'զմայէի :

Յուլիանոս՝ [թղթակիցս այս անունը կու-
տար ինքզինքին] ամակին սկիզբը խեր մը քա-
ղաքավարական խօսքեր ինձի ուղղելէ ետեւ՝
կըսէր թէ ինքը բնաւ երկիր չունէր մեր թրդ-
թակցութեանը վրայ: Ասկէց առիթ առած՝ զի՞-
կը հեգնէր վարանմանցս համար, առ ջի բերանը
մեղմ, բայց ետքը քիչ մը կծու կերպով: Վեր-

ջտպէս, անկեղծութեան վրայ ճարտար դո-
վեստ մը ընելէ ետեւ՝ ներռում կը խնդրէր ինչ
չծածկելու այն տհաճութիւնը որ կ'զգար՝ տես-
նելով իմ վրաս «Երկիւղած տատամասութիւն մը,
քրիստոնէական խղճմտանքի դիւրազգածու-
թիւն մը որ չէր կրնար համաձայնիլ ճշմարիտ
փիլիսոփայութեան հետ» . եւ կաւելցընէր :

« Չեզ միշտ պիտի յարդեմ, թէ եւ այս
կէտիս վրայ չկրնանք համաձայնիլ. բայց դա-
ւանած անկեղծութիւնս զիս կը հարկադրէ ը-
սելու թէ ես կրօնք չունիմ, անոնց ամենն ալ
կատեմ, եւ համսստաբար Յուլիանոս անունը
առած եմ, որովհետեւ այս բարի կայսրը քը-
րիստոնէից թշնամիէր . բայց ես անկէ շատ ա-
ւելի հեռուն կերթամ : Թագաւոր Յուլիանոսը
կը հաւատար Աստուծոյ եւ կեղծուպատիր
ջերմենոանդութիւններ ունէր : Ես անոնց մէկն
ալ չունիմ . Աստուծոյ չեմ հաւատար . եւ բատ
իս՝ ամենն առաքինութիւն՝ ճշմարտութիւնը եւ
զանի փնտռողները սիրելու եւ ինձի հաճոյ չե-
զողներն ատելու վրայ կը կայանայ : »

Այս բերնով կը շարունակէր . եւ առանց
պատճառաբանելու՝ բերնին եկածը թող կո-
տար քրիստոնէութեան գէմ . աղդու պերճա-
բանութեամբ կը գովիէր առանց կրօնքի առա-
քինութեան գերազանցութիւնը . յետոյ՝ կէս

լուրջ կէս ծաղրական ոճով Յուլիսնոս կայսեր
ուրացութիւնը եւ Աւետարանին հետքն ան-
պամ ջնջելու յարդաբանուած լուսու կը գովի՞ր :

Յետոյ վախնալով որ իմ կարծիքներուս
չափազանց դպեր էր, ինչ ներում կը խնդրէր,
եւ խստիւ կը դանդատէր անկեղծութեան այս-
պէս յաճախ պակսելուն դէմ: Վերջապէս նո-
րէն կը կրկնէր ինձի հետ յարաբերութիւն ու-
նենալու մեծ վափաքը, եւ զիս ողջունելով
նամակը կը վերջացընէր :

Ներքեւը սա յետերանուն ըրեր էր . և թէ
որ խղճիս դպչելիք բան մը կայ նէ՝ բաւական
անկեղծ չըլլան է: Ուստի չեմ կրնար ձեզնէ
ծածկել որ ձեր ինձի հետ բանեցուցած քրիս-
տոնէական լեզուն կեղծիք մը կը թուի իմ աշ-
քիս, եւ սրտանց կը վափաքիմ որ այնպէս ե-
ղած ըլլայ: Ուրեմն՝ դիմակնիդ վար առէք .
ահա ես օրինակը առեի ձեզ : »

Չեմ կրնար ըսել այս նամակին իմ վրայ ը-
րած կարգէ դուրս տպաւորութիւնը: Առաջին
խօսքերը կարդալուս՝ տարփաւորի մը պէս սիր-
ութս կը բարախէր . յետոյ ինձի այնպէս թուե-
ցաւ թէ սառուցեալ ձեռք մը սիրտա կը սեղմէր:
Խղճմտանքիս դիւրազգածութեանը վրայ ը-
րած երգիծանութիւնը զիս վիրաւորեց: Սաըր-
ջացոյ այսովիսի մարդու մը հետ յարաբերու-

թեան մտնելուս վրայ , ես՝ որ շնականութիւնը այնչափ կարհամարհեմ . ես՝ որ զանի ամենէն անոպայ եւ փիլխառփայութեան ամեննէն հակառակ բերում մը կը համարիմ . ես՝ որ յախորսանքը երբէք բանի տեղ չեմ դներ :

Երբոր նամակին վերջին խօսքը աւարտեցի . ծալլեցի զայն երկու ձեռացս բթամատին ու ցուցամատին մէջ , եւ ձախ ձեռքս վեր առնելով աջս վերէն վար իջուցի , այն կերպով որ նամակին կէսը մէկ ձեռքս , կէսն ալ միւս ձեռքըս մնաց :

ԳԼՈՒԽ ԼԵ

Նայեցայ այն երկու ծուէններուն եւ վայրկեան մը մտածեցի մարդկային իրաց յեղականութեանը վրայ : — Ո՞րչափ եռանդուն փոփոք մը ունէի քիչ մը առաջ այս նամակն ստանալու , եւ հիմա որումտութեամբ կը պատռեմ զայի : Ո՞րչափ քաղցրէր քիչ մը յառաջ այս տա-

բարաղպութեանը ընկերիս հետ ապագայ բարեկամութեան մը նախաղգացումը . որչափ կենդանի վստահութիւն մը ունէի վոխաղարձ միսիթարութիւններու վրայ . որչափ ճշմարիա տրամադրութիւն մը ունէի զանի գորովանօք սիրելու , եւ հիմա զանի ժպիրհ կը կռչեմ . —

Նամակին երկու կտորներն իրարու վրայ դրի , եւ արդէն ըրածիա պէս երկու ձեռքիսցուցամատին ու բթամատին մէջ առնելով նորէն ձախ ձեռքս վեր առի եւ աջս չուառվ վարիջուցի :

Նոյն գործողութիւնը կրկնելու վրայ էի , նամակին չորս կտորներուն մէկը ձեռքէս ինկաւ : Ծաեցայ որ առնում , եւ այս ծռելու եւ ելլելու կարճ միջոցին մէջ միտքս վոխուեցաւ . ուղեցի նորէն ընթեռնուլ այն խրոխտ նամակը :

Նստայ , չորս կտորներն իրարու քով բերի Ա . Գրքիս վրայ , եւ նորէն կարդալով հետեւեալ խորհրդածութիւնն սկսայ ընել :

— Թէ որ պատասխան չտամ , պիտի կարծէ թէ ես՝ ամօթահար կորացեր՝ չեմ համարձակիր այսպիսի հսկայի մը հետնորէն չտփուիլ : Պատասխանենք իրեն . ցոյց տանք իրեն թէ չենք վախնար վարդապետութիւններըն իրարու հետ բաղդատելէ , և առ կերպավ ցուցընենք իրեն թէ նուաստութիւն չէ մար-

դաւ իր խորհուրդներն հաստացընել , քիչ մը
վտանգաւոր երեւցած որոշումներու մէջ վա-
րանիլ . մանաւանդ երբեր մենէ աւելի՝ ուրիշ-
ներու վտանգաւոր են : Յուղ ոտիլրի թէ ճշմա-
րիտ քաջութիւնը ուրիշի խղճմտանքին վրայ
ծիծաղիլը չէ . ճշմարիտ ազնտւականութիւնը
ամբարտաւանութեան մէջ չէ . Բացատրենք
իրեն Քրիստոնէութեան սքանչելի իրաւունքը
և անհաւանութեան անզօրութիւնը :

Վերջապէս, եթէ այս Յուլիանոսը իմկարծ-
եացս բացարձակապէս հակառակ կարծիքնե-
րով կը սլարծի, եթէ կծու երգիծանութիւնները
կը շռայլէ ինձ, եթէ իմ սիրոյ զգացումս բանի
տեղ չդներ , ասիկայ ապացոյց մը չը իր լրտես
չըլլալուն : — Բայց թերեւտ խորամանկու-
թեան նրբութիւն մ'է իմ ինքնասիրութիւնս
այնպէս խստիւ ձաղկելը : — Սուկայն, ոչ . չեմ
կրնար հաւտառալ , ես չարտամիտ մ'եմ , որ անոր
յանդուդն հեղնութիւններէն վիրաւորուելով
ինքզինքս համողել կուղեմ թէ զանոնք ինձի
ուղղողը ամենացած մարդ մ'է , թմնձր չարա-
մըտաւթիւնն , զորհազար անզամ դաստակար-
տած եմ այլոցվրայ , դուրս ել սրտէս : Ոչ , Յու-
լիանոց ինչ որէ նէ անէ , աւելի քան մը չէ . ժը-
պիրհ մ'է , բայց ոչ լրտես : — Եւ ասուզիւ ու-
նի՞մ իըաւումք անոր անվայրանիւն կոչածը եւ

ուշնաբերական կոչելով կշտահրելու : Այս է եղեք
քու խօնարհութիւնդ , ով կեղծաւոր : Բա-
ւական է որ մէկը մտքի մոլորութեամբ մը
առւտ կարծիքներ պաշտպանէ եւ քու հա-
ւատքդ այպահնէ . խօկոյն զանի նզովելու իրա-
ւունք կընծայես քու անձիդ : — Աստուած զի-
տէ թէ քրիստոնէի մը սրտին մէջ տեսնուած
այդ կատաղի խոնարհութիւնը՝ այդ չարակամ
նախանձաւորութիւնը՝ այս անհաւանին յան-
գուցն անկեղծութենէն վատթարագոյն չէ :
Թերեւս անոր սաստիկ ճշմարտասիրութիւնը
իմինէս աւելի հաստատուն կրօնասիրութեան
փոխուելու համար՝ շնորհաց ճառագայթ մը
միայն կը պակսի իրեն : — Աւելի լաւ ըրած չէի
ըլլար եթէ փոխանակ բարկանալուս եւ ինք-
զինքս անկէ լաւագոյն ենթադրելուս՝ անոր հա-
մար աղօթէի : — Ո՞վ զիտէ , թերեւս եւ ասդին
իր նամակը կատաղաբար պատուած միջոցին՝
ան իմինսանորէն կը կարդար քաղցր բարեկա-
մութեամբ մը , եւ իմ բարեարտութեանս վրա-
տահելով իր անկեղծ խօսքերէն վիրաւորելու
վիս անկարող կը կարծէր : Ո՞վէ մը երկու-
քին մէջ վատթարագոյնը . ան որ կը սիրէ ու
անկեղծարար « Քրիստոնեայ չեմ » կըսէ . թէ
ան՝ որ « Քրիստոնեայ եմ » կըսէ ու չսիրեր : —
Վարդու մը հետ երկար ժամանակ կենակցէ

լէ ետքնալ դժուարէ զանի ճանչել, եւ ես կուզնէմ որ այս մարդը մէկ նամակով մը ճանչած ըլլամ։ Այսօտի հաւանականութիւններու մէջ չի կրնար ըլլալ որ այս մարդը՝ առանց ինքնիւրեն խոստովանելու՝ իր անաստուածութեանը մէջ խաղաղ սիրտ չունենալով իրեն հետ վիճաբաննելու զիս գրգռէ՝ յուսալով իր մտքին մէջ թէ իմ ցուցըցած փաստերէս կրնայ թերեւս յաղթահարիլ Ո՞հ, թէ որ այսպէսէ, Աստուած մեծ, քու ձեռքիդ մէջ ամենէն անարժան գործիքները կրնան մեծ գործ կատարել ։ ընտրէ զիս ուրեմն, ընտրէ զիս այս գործին համար։ Զօրաւոր եւ սուրբ ապացոյցներ աղդէ ինձի, որպէս զի համոզեմ այս եղկելին, որ քեզ օրհնէ, եւ սովորի թէ քենէ հեռու չկայ առաքինութիւն մը որ հակասութիւն չըլլայ։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Նամակին չորս կտորները մանր մանր պատռեցի՝ առանց ամեննեւին բարկութիւն ու-

նենալու . . պատուհանը ելայ , ձեռքս դուրս
երկնցուցի ,ու դխտեցի թէ հովն ուրեկը տանի
այն թուղթի կտորուանքը . Մէկ քանին եկե-
ղեցւոյն կատարեայ յարկին վրայ ինկան . ու-
րիշներն ալ՝ բկար ժամանակ օդին մէջ պատոյա-
կելէ ետեւ գետինը ինկան . Անրջապէս այն
կերպով ցիր ու ցան եղան որ մարդ կարող չէր
զանոնք ժողվելու եւ անոնց պարունակոթեա-
նը հասու ըլլալու :

Ետքը նստայ նամակ մը գրեցի Յուլիա-
նոսի , ամեն զգուշութիւն ընելով որ գժղմնու-
թիւն չունենամեւ ոչ ալ երեւցընեմ :

Նախ ծիծազեցայ իր այն երկիւղին վրայ
որով կը վախնար թէ ես խղճմտանքի դիւրա-
զզածութիւնն այն աստիճան կը հասցընեմ որ
չէր կրնար համաձայնիլ փիլիսոփայութեան
հետ , եւ աղաչեցի զինքը որ դոնէ այս կէտիս
վրայ իր դիտողութիւնները դադրեցընէ ոգո-
վեցի իր դաւանած անկեղծութիւնը . ապահով-
ցուցի զինքը թէ այս մասին ես ալ իրեն պէս
պիտի ընէի , եւ աւելցուցի թէ ըստիս ապա-
ցոյց մը տալու . համար Քրիստոնէութիւնը ջա-
ռագովելու կը պատրաստուէի , Աքաջ համոզ-
ուած ըլլալով , կը աէի , որ ինչպէս ես ձեր ամեն
կարծիքները բարեկամաբար լսելու միշտ յօ-
ժար եմ , դուք ալ իմիններս հանդարա ոգւով

լսելու վեհանձնութիւնը կունենաք : »

Զատագովառ թիւնս քիչ քիչ ընդարձակեցու միտք ունէի : Այս դիտաւորութեամբ ըսկըսայնախ քրիստոնէութեան էութիւնը բացատրել . — Աստուածապաշտութիւն առանց սրնապաշտութեան . — Եղբայրութիւն մարդոց մէջ . — Խռաքինութեան համելու մշտնջենաւոր փոյթ . — Խօնարհութիւն առանց գոռոս զութեան . — Եւ առոնց օրինակ Աստուածամարդ մը Ասկէց աւելի մեծ , աւելլի փիլիսոփայական ի՞նչ կրնար ըլլալ :

Յետոյ կը ջանայի հաստատել թէ ինչպէս այն վեեմ իմաստութիւնը քիչ կամ շատ տըկար կերպով տարածուէր էր այն մարդոց մէջ՝ որոնք բանակսնութեան լուսով ճշմարտու, թիւնը փնտռեր էին . բայց երբէք չէր տարածուեր բոլորովին աշխարհի մէջ . եւ ինչպէս երկնաւոր Տիրոջ աշխարհ եկած ատենը ամենապայծառ կերպով ինքնին յայտնուեր՝ այն սքանչելի ծաւալումը մարդկային ամենատկար միջոցներով կառարեր էր :

Այն բանն որ ամենէն մեծ փիլիսոփայները չկրցան կատարել , այն է՝ կուապաշտութեան կործանումն եւ Եղբայրութեան ընդհանուր քարոզութիւնը , քանի մը անշուք տառք-

եալներ կատարեցին . Այս ժամանակը գերեաց ազգատութիւնը որ քանզօր առելի յանձնեց , եւ վերջապէս առանց գերութեան քաղաքակրթութիւնը երեւան եղաւ . ընկերութեան վիճակ մը՝ որ հին փիլիսոփայներուն անհընար թուէր էր :

Վերջապէս Քրիստոսի գալուստէն 'ի վերաշխարհի պատմութեան համառօտ բովանդակութիւն մը ըրի ցուցընելու համար թէ բնէ . պէս Անոր հաստատած կրօնքը միշտ համարձայն գտնուած է քաղաքակրթութեան ամեն հնարաւոր յառաջադիմութիւններուն . հետև Ուրեմն առաջ էր այն կարծիքը թէ քաղաքակրթութիւնն իր յառաջագէմ ընթացքը շարժակելու ըլլայնէ Աւետարանը պիտի ուագրի անոր համաձայն գտնուելէ :

Սամակտիիակամնը գրով եւ խիստ երկար գրեցի , քայլ թուղթն հաւանելուն համար չկրցայ առելի երկնոցընել : Կրկին եւ կրկին կարդացի նամակին ներածութիւնը եւ տեսայոր լաւ գրուած էր : Մէջը բնաւ Յռվիանուի երգիծանութիւններուն դէմ խօսք չկար + ընդհակառակն լիցուն էր բարեկամական խօսքերուն որ սրտէս ներշնչեալ էին . որովհետեւ միլուս արդէն կատարելապէս ներսողամտութեան եկած էր :

Նրկեցի նամակը , և հետեւ ևալ առաւու-
տունանաւ մը երութեամբ պատասխանին կը ս-
ոյասէի :

Թրէմէրէլլօ ներս մտաւ ու ըստաւ .

« Պարոնը չլրցաւ պատասխան դրել ձեզ ,
բայց կաղաչէ որ զուարձարանութիւնը շա-
րունակէք :

— Զուարձարանութիւն մի , գոչեցի : Ա-
նիկա ատամնկ բան ըսած ըլլալու չէ . դուք
սինալ հասկըցեք էք :

Թրէմէրէլլօ ուսերք վեր մնկելով ո Ախալ
հասկըցեք եմ :

— Բայց աներկրայ ես զուարձարանութիւն,
ըսելուն :

— Ինչպէս որ այս միջոցիս Ա . Մարկոսի
զանգակին հնչումը լսելուս աներկրայ եմ : Ա
(Առու գիւղ զանգակը կը հնչէր նոյն միջոցին) :

Խանուհա խմեցի եւ դուռ կեցայ :

« Բայց ըսէք ինձի , այդ Պարոնը նամա-
կըս ծայրէ ծայր կարգացնեք էք :

— Կարծեմ թէ կարդացեք էք , վասն զի կը
ծիծաղեք : Խենթի պէս կը ծիծաղեք : Ժամա-
ձեր նամակը գնուուկ մը ընելով վեր կը նետէք :
Եւ երբ ըսի լրին թէ շրմանոս զանի ջնջիլու ,
իսկոյն պատուեց :

— Շատ աղէկ :

Խահուէին դաւաթթը Թրէմելիէլլօի տուի
ըսելով թէ յայտնի կը տեսնուէր որ այս խահ-
ուէն Պէմթինստ ափելնո՞ց եփածն էր :

« Փէշ էր :

— Զգուելի էր :

— Ծւ տակայն եւս երիեցի զայն , եւ հաւա-
տացէք որ խիստ թանձր շինեցի եւ մէջը դիրու
չկար :

— Գոցէ բերանս համ չկայ այսօր :

— Եղանակ ունենալով , շահն ու դժուռ պատ-
րակով պատահ ունեցած այս ժնի բառնու պար-

— Այնոր վաւառ ու դիմ ունեց մասն առնամա-

պահա նույզը մաս ու որ հետքոր ապահով մաս ու
ուստա ավելի ՓԼՈՒԽ ԼԹ :

Կոչելիք շնորհող ու բարձ վճի ունեցած տու-
շանիք ու նկատուած առաջ որ նույզը ու ու

— Առ առ դնեմու այս առջաւ կը
պատասխան մնա որ մինչ անուն մնանալով :

Տուրը առաւատը ճեմեցի սենհուևին մէջ
դողալովի — ինչ տեսակ մարդ է այս Յուլիա-
նասը : Խնչու համար նամակն զուարձարանու-
թիւն կը կոչէ : Խնչու կը ծիծաղի մրան եւ դա-
նի գնատակ կը շինէ ու կը խաղայ : Խնչու առզ-
մը անդամ պատասխան չփրեր : Ասմանկ են
ամեն ամսաւատները : Խրենց կարծեաց առկա-
րու թիւնը զգալով , երբոր մէկը զանհնը հեր-

քելու կելնէ , ականջ չեն կախեր , կը ծիծա-
ղին , եւ իրենց բարձրագոյն հանճարը ցոյց կու-
տան որ ալ բան մը քննելու պէտք չունի՞ թշշ-
ուառներ . Եւ երբ եղեր է փիլիսոփայութիւն
մը առանց քննութեան , առանց լուրջ վիճա-
բանութեան : Եթէ ստոյդ է որ Դեմոկրիտէ-
միշտ կը ծիծաղէր , անի խեղկատակ մէր բայց
արժանի էր այս ինձի ինչու ձեռք զարնէիայու-
թ զթակցութեան : Ըստնք թէ առջի բերանը
քաղցր յոյսեր ունեցայ , ներելի էր : Բայց եր-
բոր տեսայ թէ այս մարդը լիրը խօսքեր կընէր .
անմտութիւն չէր նորէն նամակ գրելս : —

Միտքս դրեր էի որ ալ բան չգրեմ անոր ,
ձուիս ժամանակը՝ Թրէմէրէլլօ գինիս առաւ ,
սրուակի մը մէջ լցուց եւ գրպանը դնելով .
«Կը կարծեմ որ , ըստւ , քովս թուղթ ունիմ ձեռ-
զի տալու : Եւ համեց տուաւ :

Երթալէն ետեւ . քանի որ այն սպիտակ
թուղթին կընայէի , միտքս կը թելադրուէր
վերջին , նամակ մ'ալ Յուլիանոսի գրելու , եւ
ժողովութեան խայտառակութիւնը լաւ . մը ի-
րեն հասկըցընելէ ետեւ յարաքերութիւնը վեր-
ջացընելու :

—Գեղեցիկ թելադրութիւն , ըօի . ետք
եւ ինձի . անոր արհամարհանացը . արհամար-
հաւթիւն հոտուցանել . Գրիստոնէն թիւնիք ա-

ուաւել եւս առելի ընել անոր՝ ցուցընելով թէ
ես՝ քրիստոնեայ՝ անհամբերութեան ու ամ-
բարտաւ անութեան անձնատուր կը լլամ։ —
Ոչ, այս չվայը եր · թղթակցութիւնը բոլորավին
դագրեցընենք · — Բայց թէ որ այսպէս մէկէն
՚ի մէկ կարեմ · չըսմը արդեօք թէ անհամբե-
րութիւնն ու մեծամատութիւնը ինձի յաղթե-
ցին · — Ու աք է նորէն անգամ մ'ալ նամակ գը-
րեմ իրեն առանց դառնութեան · — Բայց թէ որ
կընամ առանց լեզւոյ գրել · աւելի լաւ չըլլար
որ անդէտ ձեւանամ իր ծառիանացը եւ նամա-
կիս պարզեւած զուարճարանութիւն մակդիւ-
րին · Աւելի լաւ չըլլար որ քրիստոնէութեան
վրայ ջատագովութիւնս պարզաբար շարու-
նակեմ։ —

Քիչ մը խորհեղէ ետեւ · այս վերջին օրո-
շումա ՚ի գործ դնելու ձեռք զարկի Յ մէն
իրիկունը նամակիս ծրարը դրկեցի · և
հետեւ եալ առաւօտուն քանի մը տող չնորդա-
կալութիւն ընդունեցի խիստ պաղ կերպով
զրուած · սակայն մէջը կծաւ խօսք ամենեւին
չկար · բայց ոչ ալ ամենափոքր հաւանութեան
խօսք մը եւ շարունակելու հրաւեր մը կար ·
Այս տամաակը հաճոյ չեզաւ ինձի · այսու-
ամենայնիւ որոշեցի մինչեւ ծայրութերթալ
ձատելիք ինոգիրս հովատօտ չեր կընուք

թիւնը կը սիրէ : բայց ինձի պէս անպատճռուակ խօսելու անկեղծութիւնը չունին . այնչափ պիտի խօսիմ այս նիւթիս վրայ որ ձեզ պիտի բաքանչացընեմ , եւ վերջապէս խղճմտանքով նվագ պիտի հարկադրիք զիս գովելու : »

Բայց շաբաթները կանցնէին եւ այս ծանականաց վերջը չէր բերեր . իսկ ես ամեն անդամնամակ ստանալում՝ յուսալով միշտ թէ բերանը փոխած կը լլայ , հետաքրքրութեամբ ծայրէ ծայր կը կարդայի . եւ սիրութէ եւ տակաւին չէր հրապուրուած , այսու ամենայնին կը խռովէր եւ ազնիւ ու սուրբ խորհրդածութիւններէ կը քեցէր : Բարքը աւրուած մարդոց հետ խօսակցողին բարքը կաւրուի . թէ որ սոսկական մարդոց առաքինութենէն՝ իմ առաքինութենէս գերագոյն առաքինութիւն մը չունենայ :

— Ահա առիր յանձնապատանութեանդ պատիժը , կըսէի ես ինձի : Ահա այս կը լլայ այն մարդուն շահը որ քարոզիչ ըլլալու կելնէ՝ առանց անոր սրբութիւնն ունենալու : —

Օրին մէկը միտքու գրի սա խօսքերը գրել անոր . « Մինչեւ հիմա ամեն ջանք ըրի որ ձեզ ուրիշ նիւթերու զբազեցընեմ , բայց զուք միշտ անհաճոյ պատմութիւններ ինձի կը զբրիէք . արդէն անկեղծաբար ըստած եմ այս ձեզի :

Նթէ ձեզ կը յարմարի աւելի այժմանաւ որ նիւ
թերու վրայ խօսակցիլ . շարունակենք Երդա-
թացութիւնիս . ապա թէ ոչ վերջին բարե-
կը տանք սէկ մէկու ; և յւրաքանչիւրս իւրն
իրեն մնայ :

Երկու օր անպատճախանի մնացի . Եւ ոռ-
չի բնիրակր ու քամն եղայ . — Ո՞ւ , օրչնեալ ա-
ռանձնութիւն , կը գոչէի . որչափ սուազ ու ա-
զընեան քան ասանց համակրութեան եւ առ ը-
ւութեան խօսակցութիւն մը : Փոխանակ ան-
պարիկն չտ խօսքեր կարդառ տագնապելուս ,
փոխանակ Տաղեռ թեան պարծանք եղու յրդ-
գացմանց յայտարարութիւններով անոնց գէմ
մաքառելու . համար դուք տեղը յոդնելու ո . նու-
րէն պիտի արակի խօսակցիլ Աստուծոյ հետ ;
ընտանեացն եւ ճշնարիւթարենկամ . Երու ս քաղ-
ցրր յիշութակին հնաւ . “Սորէն պիտի ակախ Ա .
Գիրքը յանախ կարգալ . խորհրդածութիւն-
ներս սեղանին լինյ գրել՝ սրտիս խորը հնաւ
զօտելով եւ զանի լաւցընելու ջանալով . ան-
մեղ միսրութեան մը քաղցրութիւնը ճաշակել ,
որ հեշտադի եւ մեղապարտ նկարագրունքէն
հազարաւագանից յախտմն ծարէ : —

Ամսն առպա՛ որ Թորէ մէրէլլօ բանաս կը
նանէք Կունու պատուախան խունիմ կըսէր :
— Բարի , կը նկատամիանէի :

Նրբորդ օրը ըստ ինձի . «Պ. Ն. քիչ մը
հիւանդ է :

— Ի՞նչ ունի :

— Զբսեր ինչ ունենալը , բայց շարունակ
պառկած է անկողնին վրայ . չուտեր շխմեր ,
եւ սիրար նեղցած է : »

Միրտս շարժեցաւ մտածելով որ հիւանդ էր
եւ մէկը շունէր որ զինքը սփոփէր , Եւ սա
խօսքերը շրթ ունքէս կամ մանաւանդ սրտէս
գուրս փախան . « Երկու տող դիր գրեմ իրեն :

— Երիկուան տանիսմ ըստ թրէմէրէլլո
եւ դուրս ելաւ :

Սեղանին առջեւ նատած ժամանակս վա-
րանման մէջ չէի . — Աղէկ կը ընեմ այս թղթակ-
ցութիւնը նորէն սկսելով ; և չէի որ քիչ մը տ-
ռաջ առանձնութիւնը կ'օրհնէի իրրեւ վերը .
տին ձեռք բերուած գանձ մը : Ի՞նչ փոփոխա-
մբութիւն է իմս : Սակայն այս դժբաղդ մար-
դը չուտեր , չխմեր . անշուշտ հիւանդ է : Ա-
սանկ պարագայի մը մէ ? զանի լքանել կըլլայ ,
Վերջին նամակս խիստ էր . դուցէ անալ վրշ-
տացուցած պիտի ըլլայ գանի : Թերեւս , ինչ-
որ ալ ըլլայ մեր կարծեաց տարբերութիւնը ,
ան չպիտի խզէր երրէք մեր բարեկամութիւ-
նը : Նամակս իրօք եղածէն աւելի շարակամ
թռած պիտի ըլլայ անոր , եւ վերջին ու ար-

համարհական հրամեշումը համարած ըլլալու է
զայն : —

ԳՐՈՒԹԻՎ ԽԱ

Առաջ Ներք պահանջութ առ Վայով համա Ե
Տակ անդ մարտ, ուստի այսուհետ չեն անդ
առ ԱՌ որ Խոյացաւ, և յանդ որ համա պահանջութ
առ և Խոյացաւ որ առաջ առ Եղանակ առ

Այսպէս որ աղէկ չէք, եւ շատ կը ցա-
փիմ: Արտանց կուզէի ձեր քով ըլլալ եւ բա-
րեկամի մը ինկած ամեն խնամքը ձեզի ընել-
կը յուսամ որ երեք օրէ ՚ի վեր լուռ կենալնուդ
միակ պատճառ ձեր տկարութիւնը եղած պի-
տի ըլլայ: Սակայն իմ վերջին նամակէս ալ վի-
րաւորուած չըլլամք: Հաւստացէք որ առանց
ամենափոքր չարակամութեան դրած եմ զայն,
նպատակ ունենալով միայնոր աւելի լուրջ նիւ-
թոց վրայ դրելու ձեզ յորդորեմ: Եթէ զրելու
կայողութիւն չունիք, դոնէ ձեր առողջու-
թեան վիճակին վրայ ճիշդ լուր զբկեցէք ին-
չի եւս ամեն օրս վարեկարագի բան մը կը զրեմ
ձեզ՝ մոքերնիդ գրադեցընելու եւ ձեզի բարե-
կամ ըլլալս լիչեցընելու համար:

Նորէք չեիսպասէր կրած նաւ նա՛յին աղջա
պատասխան մը ընդունելու : Այսպէսէ՛ ականէք
իր նամակը . բարեկամութիւնս կը վ'րցընեմ
վրայէդ . եթէ դուն իմ բարեկամութիւնս չես
յարդեր . ևս ալ քուեկդ չեմ յարդեր : Ես թշնա-
մանաց ներող մարդ չեմ . անդամ մը մերժուե-
լէ ետեւ : Նորէն ետ զարձող մարդ չեմ : Որով-
հետեւ հիւանդ բլլալս դիտես , նորէն կեղծա-
ռորարար ինձի կը կողչ ս . յոսալով որ հիւան-
դութիւնն իմ ուղեզս կը տկարացընէ եւ քո-
քարոզներդ մտիկ կընեմ Այսպէս կը
շարունակէր իր նամակը շարաչար դին նախա-
տելով , հեգնելով , կրծինեւ բարոյականի վիճ-
րայ խօսածներս ծաղրելով , եւ մերջառէս
բայտարօնութիւնն ընկը ովթէ միշտ նոյն պիտի
ասպիրի եւ նոյն օփափի մեռնի . այսինքն իր վիճ-
իսովայութենէն ասորթիեր ուրիշ ամեն վիճի-
սափայութիւնները ասստիկ ատելով ու արհա-
մարհելով :

Ակշեցայ մնացի :

— Ահաւասիկ գեղեցիկ դադր մը , կըսէի
արտմութեամբ եւ դողազով : Աստուած վիրայ
է դիտաւորութիւններու անարամատութեանը
— Ո՛չ , այս թշնաման քնիքուն արժանի չեմ ենք
— Ուրեմն համբերութիւն . այս ալ նոր պատ-
րանք մ'է : Թողումնք ապս մարդը , եթէ քնոք

զինք թշնամնեալ կերեւակայէ . որպէս զի
ջներելու բերկը թիւնն ունենայ : Ես պար-
տաւոր չեմ ըրածէս աւելին ընելու : »

Սակայն քանի մը որ ետքը սրտմառու-
թիւնա իջաւ , եւ մտածեցի որ այն կատաղի
նամակը կրնար կրից կարձատեւ զրգուու-
թեան մը արդասիք ըլլալ : — Թերեւս ար-
դէն ամօթահար եղած է անոր վրայ , կըսէի ես
ինձի . բայց մեծասիրտ է . ըրած պակասու-
թիւնը չխոստովանիր : Հիմա որ ժամանակ
անցած եւ կիրքը հանդարտած է , վեհանձնու-
թիւն ըրած չեմ ըլլար եթէ նորէն նամակ մ'ալ
զրեմ անոր : —

Նատ ծանր էր ինձի ինքնասիրտ թեանս
այս մեծ զոհն ընել . սակայն ըրի : Ան որ կը խո-
նարհի առանց դձձութեան , որչափ անիբաւ
արհամարհանք ու կրելու ըլլայ : պատիւը չէ
կորսնցըներ :

Նամակ մը պատասխան ստացայ որ
ելլի մեղմ էր , բայց դարձեալ թշնամնայից
էր : Կըսէր ինձի այս անողոքելին թէ իմ աւե-
տարանական հեղութեանս վրայ կ'զմայէր :

« Վերսովին սկսինք ուրեմն թղթակցու-
թիւննիս , կըսէր . բայց յստակ խօսինք : Մենք
իրար չենք սիրեր . բայց զրօնելու համար .
թղթակցինք՝ մաքերնու անցածը ազատա-

բար թուղթին վրայ թափելով . դուք ձեր Աը-
րովրէական գաղափարները , ես ալ հայհոյու-
թիւններս . դուք ձեր հիացմունքը մարդոց եւ
կանանց արժանապատութեանը վրայ . ես ալ
խմ պղծութեանցս անկեղծ պատմութիւնը ,
երկուքս ալ իրար դարձունելու յուսով : Այս
պայմանիս հաճիք նէ պատասխան տռէք ին-
ձի :

Պատասխանեցի . « Ձեր այդ պայմանը
պայման չէ , զուարձարանութիւնէ : Ես ձե-
զի բարեկամութիւնն շխնաւեցի : Հիմա խըղճ-
մըտանքս ուրիշ պարտք չդներ վրաս , բայց
միայն ամենն հնտրաւոր բարիք մաղթել ձեզ՝
թէ այս եւ թէ մրւս կենաց համար :

Այսպէս լմնցան այս մարդուն հետ ունե-
ցած գաղտնի յարաբերութիւններս . . . : Ո՞վ
գիտէ . թերեւս շար մարդ մը չէր . բայց թըշ-
տութիւնը զինքը դառնացուցեր եւ յուսա-
հառաւթիւնն ալ մոլորեցուցեր էր :

—————♦—————

ԳԼՈՒԽ ԽԲ .

Նորէն անգամ մ'ալ անկեղծութեամբ
օքնեցի առանձնութիւնը, եւ ժամանակ մը օ-
րերս անցան առաջոց նոր դէպքի :

Ամառ անցաւ, եւ ուստեմբերի երկրորդ
կէսին մէջ առ քը մեղմացներ էր : Հոկտեմբերին
եկաւ եւ կուրախանայինոր սենեակիս ձմեռը շա-
շլալու էր : Բայց ահա առառօս մը բանապե-
տըն եկաւ ու ըստ ինձի թէ բանաս փոխելու
հրաման եղած է իրեն :

«Եւ ուր պիտի դնեն դիս :

— Ասկէ քանի մը քայլ անդին առելի դով
սենեակ մը :

— Եւ ի՞նչու այդ բանը չմտածեցին երբոր
ես տաքէն կը մեռնէի, եւ օդը մժեղներով ու
անկողինս մլուկներով լիէր,

— Հրամանը հիմա եկաւ :

— Համբերութիւն . երթանը :

Թէպէտ եւ շատ ներկութիւն քաշեր էիայս
բանակին մէջ, այսու ամենայնիւ այստեղովիձը-
զեցի, ոչ միայն անոր համար որ ձմռռի խստ

լաւ պիտի ըլլար , այլ ուրիշ չատ պատճառներու համար ալ : Հոն էին այն մրջիւնները որ կը սիրէի եւ կը մնուցանէի այնողիսի խնամով մը՝ որուն հոյւթա պիտի ըոէի եթէ այս խօսքս ծիծաղելի չըլլար : Քանի մը օրէ 'ի վեր , այն սիրուն սարդ : ալ՝ որուն վլյայ արդէն խօսած եմ՝ գացերէր , չեմ գիտեր ինչ պատճառաւ : կըսէի . — Ո՞վ դիտէ , թե երեւս պիտի յիշէ զիս . թե երեւս պիտի դառնայ գայ : Եւ հիմա որ ես կերթամ , գալու ըլլայ նէ բանտս թափուր պիտի գտնէ . կամ եթէ նոր հիւր մը գտնուի , թե երեւս սարդերու թշնամի մէկ մը եղած կըլլայ , որիր հողաթափուլը կը վերցընէ այս գեղեցիկ ոստայնը եւ խեղճ կենդանին ալ կ'ոպաննէ : Առկէց զատ , այս տիսուր բանտը չգեղեցկացաւ ինձի համար Նանծէի գորովագթութեամբը : Սա պատուհանին էր որ չատ անգամ կը կրթնէր , եւ առատաբար քաքարի փշրանք կը թափէր մրջիւններուս : Սա տեղը սովորութիւն ունէր նստելու . հոս կը պատմէր ինձի սա բանը . հոն՝ նա բանը . դարձեալ սա տեղն էր որ սեղանիս վրայ ծռելով աղատութեամբ կարտասուէր :

Նոր դրուած սենեակս ալ կապարներուն ներքեւ էր , բայց հիւսիսի եւ արեւմուտքի դէմ էր , եւ երկու պատուհան ունէր , մէկը հիւսիսէն , մըւսը արեւմուտքէն , մշտնջիւնաւ ու

հարբուխի եւ սարտափելի ցորաի օթեւան մը
ձմեռուան խստաշունչ ամիսներուն մէջ :

Արեւմտեան կողմի պատուհանը չատ մեծ
էր . հիւսիսայինը վոքրու բարձր , եւ անկող-
նիս վրայ էր :

Նախ մեծ պատուհանէն դուրս նայեցայ ,
եւ տեսայ որ Պատրիարքական պալատին վրայ
կը նայէր : Ուրիշ բանտեր ալ կային խմինիս մօտ՝
աջ կողմէն քիչ մը տարածուած թեւին եւ դի-
մացս երկնցած շէնքի մասին մէջ : Վերջի մասին
մէջ երկու բանտ կար իրարու վրայ : Տակինը
մեծ պատուհան մը տնէր , որուն մէջէն կը
տեսնէի որ չնորհքով հապուած մարդ մը կը¹
սկսուէր ներսը : Այն մարդը Պ. Քարօռալի տիր
Ջէղէնան էր : Տեսաւ դիս , քանի մը նշաններ
ըրաւ ինձի , եւ անուննիս իրարու լսինք :

Ետքը ուղեցի հասկընալ թէ միւս պատու-
հանս ուր կը նայէր : Սեղանը անկողնիս վրայ
դրի , սեղանին վրայ ալ աթոռ մը , եւ բազում
ող ժուարութեամբ վրան ելայ նայեցայ որ սկա-
լատին տանեացը մէկ մատին դուգահաւասար
էր սենեակս : Պալատին անդին քաղաքին եւ-
լնին մէկ մեծ մասը կը տեսնուէր :

Երկար նկատեցի այն զեղեցիկ տեսքը , եւ
թէ պէտ իմացայ որ դուռս կը բանային , սաւ-
կայն չշարժեցայ տեղիու : Դուռս բացողը բոն-

տապեսն էր . երբոր դիս այնպէս օդին մէջ
դարեալ տեսաւ , մոռնալով որ անհնար էր ինձի
մկան պէս անցնիլ դուրս ելլել վանդակաձողեւ-
րուն մէջէն , կարծեց թէ փախչելու փորձ կը-
նէի . շփոթելով ցատկեց անկողնիս վրայ ելաւ .
առանց իր ազդերյօդ ացաւընայելու , եւ ոտ-
քերէս բոնած դիս վար քաշել սկսաւ արծիւի
պէս պոռալով :

« Բայց չես տեսներ ըստ , ապուշ մարդ ,
որ այս վանդակաձողերը թող չեն տար ինձի
փախչիլ . Զես հասկընար որ ես լոկ հետաքըրք-
րութեան համար ելեր եմ հոս :

— Կը տեսնեմ , Պարոն , կը տեսնեմ . . .
կը հասկընամ . բայց վար իջիր , վար իջիր ,
այդ բանը քեզ փախչելու կընայ թելաղբել . »
Եւ որովհետեւ պէտք էր , ծիծաղելով վար
իջայ :

ԳԼՈՒԽ ԽԳ .

Քոիի բանտերուն պատուհաններէն ուրիշ
վեց ժարդիկ տեսայ որոնք ալ քաղաքականու-
թիւն դուրծերու ոլատճառաւ բանատրիկեն :

Այսպէս ահա առաջինէն աւելի ամայարը՝
նաև առանձնութեան պատրաստուած ժամա-
նակս՝ աւեսակ մը ընկերութեան մէջ գտայ
ինքղինքս։ Առջի բերանը դո՞ւ չեղայ։ Պատ-
ճառը՝ կէս մը երկար ժամանակ առանձին մնա-
լը էր որով անընկերասէր բնաւորութիւն մը
ստացերէի, կէս մ' ալ Յուլիանոսի հետ ունե-
ցած յարաքերութեանց անհանոյ ելքն էր որ
զիս կասկածուած ըրեր էր ։

Սակայն, շատ չանցաւ, անոնց հետ թէ
ձայնով եւ թէնչանացի ըրած համառօտ խօ-
սակցութիւններս ինձի ըարիք մը թուեցան ։
Եւ եթէ ոչ ուրախութեան, դմէ զբաղանաց
առիթ մը համարեցայ։ Իսկ Յուլիանոսի հետ
ունեցած յարաքերութեանցս վրայ եւ ոչ մէ-
կուն խօսք ըացի ։ որովհետեւ պատռոյ վրայ
երդում տուեր էինք իրարու որ այս դադունի-
քը մեր մէջ թաղուած մնայ ։ Եւ եթէ հիմա
այս յիշատակադիրներու մէջանոր խօսքը կը-
նեմ, պատճառը սա է որ եթէ երբէք մէկը կար-
դայ ասոնք, անհնարի որ այս բանաերուն մէջ
փակուած այնչափ անձանց մէջ Յուլիանոսն
ով ըլլալը կարենայ գուշակել ։

Քանի մը բանտակիցներու հետ ոկտած այս
բարեկամական յարաքերութեան վրայ ուրիշ
մալ առելցաւ որ նոյնողէ ո չատքաղորեղաւ ինձի,

Մեծ պատուհանէննայած ատեն , դիմացը երկընցած բանտերուն ետեւի կողմը անթիւ տանիքներ կը տեսնէի՝ վրանին ծխնելոյզներով , հովանոցներով , զանգակատուներով եւ գմբէթներով , որոց երկար շարքը հեռուն երկինքին ու ծովին հետկը խառնուեր Ամէնէն մօտ գտնուող տանը մէջ՝ որ Պատրիարքարանին մէկ թեւը ձեւացուցած էր , բարի ընտանիք մը կը բնակէր , որ իմ վրայ զդացած գութը իր ողջոյններովն ինձի յայտնելով շնորհակալութեանս վրայ իրաւունք ստացաւ : Տարաբաղդ մարդոց տրուած մէկ ողջոյնը , մէկ կարեկցութեան խօսքը՝ մեծ գթութիւն է :

Այն տանը պատուհանին մէջ նախ տղայ մը տեսայ ինն տասն տարեկան որ իր փոքրիկ շեռքերը դէալ 'ի ինձի կը վերցընէր , եւ լսեցի որ կը դոչէր .

« Մայրիկ , մայրիկ , նա միերը կապսիրներուն մէջ մէկը դրեր են : Խճզճ բանտարկեալ , ով ես դու :

— Աիլլիօ Բէլլիքօն եմ սպատամիանեցի : Ուրիշ անկէ մեծկակ տղայ մ'ալ վաղեց պատուհանը եւ գոչեց .

« Դուն Սիլվիօ Բէլլիքօն ես :

— Այո , եւ դուք , սիրուն տղայք :

— Ես Անթօնիո : Ա իլլ կոչուիմ , եւ

եղբայրս Յովաէլի : »

Յետոյ անդին դարձաւ ըսելով . « Ուրիշ
ինչ կրնամ հարցունել : »

Տիկին մը՝ որ կարծեմ մայրերնին էր եւ կէս
մը պահուըտած էր , քաղցր խօսքեր կը թե-
լագրէր այն սիրուն տղայոց . անո՞նք ալ կը կըրկ-
նէին դանո՞նք ինձի . Ես այ որտազին խանդա-
դատանօք չնորհակալ կըլլայի :

Այս խօսակցութիւնները կարճ էին . եւ
ալ է ոք չէր երկնցընել , կամ զի բանտապէտը
կը պօռար . բայց ամսնօր կը նորոգուէին , ա-
ռաւօտուն : ցերեկին եւ իրիկուան , եւ շատ կը
միսիթարուէի : Երբոր ճրագները կը ժառուէ-
ին , այսկինը կը գոցէր պատռհանը . եւ տղայ-
քը՝ զիշեր բարի . Աիլլիօ , կը գոչին ինձի :
Մայրերնին ալ մութէն քաջալերուելով խը-
ռովիուլ ձայնով մը կը կրկնէր . « Կիշեր բարի ,
Աիլլիօ , մը զիատիր : »

Երբոր տղայքը նախաձաշ կընէին կամ
բան մը կռւաէին . կըսէին ինձի . « Ո՞հ , եթէ
կարենայինք մեր կաթովլ խահուէին քեղալ
տալ Ո՞հ , եթէ կարենայինք մեր քաքարներէն
քեղալ տալ : Այդ բանտէն աղատած օրդ մի
մոռնար , եկո մեղ տես . քեզի տղոր ու տաք
քաքարներ եւ հաղար համբոյր տանք : »

ԳԼՈՒԽԻ ԽԴ

Հոկտեմբեր ամիսը իմ տարեղարձներուս
ամեննէն դժողակն է : Նոյն ամսոյն 15ին էր որ
քանուէր էի նախընթառ տարին : Նոյն ամիսն
ուրիշ տիսուր յիշառակներ ալ միտքս կը ձգէր :
Երկու տարի առաջ , հոկտեմբեր ամսոյ մէջ ,
ընտիր մարդ մը որ շատ կը յարդէի , աղէտալի
արկածով մը թիշինօ գետին մէջ խղզուեր էր :
Երեք տարի առաջ ալ Յուրօրատօ Պրիքէ անուն
պատանի մը՝ որ զաւկի պէս կը սիրէի՝ յակա-
մայից ինքզինք սպաններ էր հրացանով մը :
Պատաննեկութեանս սկիզբներն ալ ուրիշ դժմ-
բազդութիւն մը եկեր էր գլխուս հոկտեմբեր
ամսոյ մէջ :

Թէպէտ ես նանրահաւատ չեմ , ուակայն
այսչափ դժբազդութեանց ձախողակի նոյն
ամսոյն մէջ հանդիպումը խորին տիսրութիւն
մը ինձի կը պատճառէր :

Պատուհանէս այս սիրուն տղայոց եւ կա-
լանակիցներուս հետ խօսակցած ժամանակս՝
վիս զուգորդ կը ցու ցընէի . բայց իշշակս մը -

տածիս պէս՝ անպատմելի թաղծութիւն մը կը
ծանրանար սրտիս վրայ :

Գրիչը ձեռ քս կառնէի քանի մը տող շա-
բաղբելու կամուրիշ գրական նիւթոյ մը ինք-
զինքո վարժեցընելու համար . բայց գիտեսթէ
անընդ դիմակաց զօրութիւն մը զիս կը բռնա-
գատէր ուրիշ բան զրելու : ի՞նչ : Երկար նա-
մակներ որ չէի կրնար զրկել : Երկար նամակ-
ներ սիրելի ընտանեացս ուղղուած , որոց մէջ
սրտիս բոլոր զգացումները դուրս կը թափէի :
Սեղանին վրայ կը զրէի , ետքն ալ կը քերթէի
Գրածներս խանդաղաղատանաց հերմ յայտարա-
րութիւններ էին եւ երջանկութեան քաղցր
յիշատակներ որ իմ այնչափ ներողամիտ եւ
այնչափ գորովասիրտ ծնողացս , եղբարցս եւ
քերցս քով վայելեր էի : Զիս անոնց քաշող
բաղձանքը՝ խեր մը խանդաղառնիւթեր կաղ-
դէր ինձի : Ամբողջ ժամներով զրելէ ետեւ , տա-
կուն բացատրելիք ուրիշ զգացումներ ալ կը
մնային :

Ըրածս՝ նոր ձեւով մը կենսագրութիւնս
նորէն շինել էր , եւ անցեալս նկարադրելով ու
ձեռքէս ելած երջանիկ ժամանակին վրայ բռո-
նաբար աչքս կեցընելով ինքզինքս խարել էր
Բայց , Աստուած իմ , քանի քանի անդամիմ
ամենադեղէցիկ օրերուա պատճեռ թիւնը կեն-

գանի պատկերիմը մէջ նրազրելէ ետեւ, ինք-
պինքս խօսակցած անձերուս հետ կառձելու
չափ երեւակայութիւնս արբեցրնելէս ետեւ,
յանկարծ ներկան միտքս գտղով գրիշը ձեռ-
քէս կիյնար եւ սոսկ համբ կը դողայի: Այն
վայրինաներն ստուգիւ օարսաինլի էին: Ար-
դէն այնպիսի վայրինաներ կրեր էին երբե-
մըն, բայց առ իշխոցին կրած անձկութեանցս
նմանները երբէք չէին կրած:

Այս յուզգ նունքն եւ այս սարսափելի անձ-
կութիւններն զգացմանցս չափաղանց գրդըռ-
ուելէն յառաջ եկած կը համարէի, որուն պատ-
ճառն ալ գրութիւններո նամակի ձեւով ընելս
եւ զանոնք սիրելիններուս ուղղելու սովորու-
թիւնն էր:

Աւրիշ բան ընել ուղեցի եւ չկրցայ յաջո-
ղիլ: Աւղեցի գոնէ նամակի: ձեւը թողուլ, եւ
անհնարին եղաւ ինձի: Երբոր գրիշը ձեռքս
կառնուի ու գրել կ'ակսէի, միշտ գորովալից եւ
տիրապգեաց նամակ մը կ'արտադրէի:

—Միթէ ևս կամքիս աղատ տէրը չեմ,
կըսէի ևս ինձի: Արդեօք ուղեղս խանգարնը է
որ չուղածս ընելու կը հարկազրիմ այսպէս:
Մինչեւ հիմա այս բանը չէր պատահած ինձի:
Այսպիսի վլրակ մը եթէ բանտարկութեանս
առաջին օրերը պատահ էլի, ըսելիք չկար: բայց

Հիմա որ միտքս կատարելապէս հանդարտած ալէտք է ըլլար , հիմա որ բաւական մեռալ եմ փիլիսոփայական եւ կրօնական մտածութիւններով , ի՞նչպէս գերի եղերեմ սրտիս կոյր բաղձանացը : Ի՞նչպէս այս աստիճան տղայամիտ կընամ ըլլալ : Ուրիշ բանի մտադիր ըլլանք :

Ուստի կը ջանայի աղօթք ընելու . կ'աշխատէի որ գերմաներէն լեզուն սովորելու զբաղելով յաղթեմ մտքիս : Ունայն ջանք , Յանեկարծ կը աեւնէի որ նորէն ուրիշ նամակ մը կը գրեմ :

ԳԼՈՒԽ ԽԵ .

Մտաց այսպիսի վյանակ մը ձշմարիտ հիւնանդութիւն մ'էր . չեմ դիտեր թէ տեսակ մը քնաշը ? կութիւն էր չեմ կրնար ըսել : Անտարակոյս երկար մտախոնութիւններէ ու քննատութիւններէ յառաջեկած տկարութեան մը արդիւնքն էր .

Աւելի հեռուն դացի : Գիշերները տեսք
մը գալ սկսաւ վրաս եւ չէի կրնար քնանալ :
Իրիկունները խահուէ խմելէ դաղբեցայ, բայց
օգուտ մը չեղաւ . քնաստութիւնա նոյն էր :

Կը թուէր ինձի թէ երկու կերպ մարդ կար
վրաս . մէկը միշտ նամակ դրել կուղէր . միւսն
ալ ուրիշ բան մը ընել կուղէր :

— Ուրեմն, կըսէի ես ինձի, իրաւախուն
ըլլանք . նամակ դրէ, բայց գերմաներէն լեզ-
աով . ասի միջոց մը կըլլայ գերմաներէն լեզուն
սովորելու :

— Ակսայ այսուհետեւ ամեն բան աղա-
ւաղ գերմաներէնով մը դրել, եւ այս կերպով
գոնէ քիչ մը յառաջ դացի այն լեզուին մէջ :

— Առաւօտուն, երկար արթնութենէ ե-
տեւ, ուղեղս յոդնած, կերպ մը զգայազրկու-
թեան մէջ կիյնայի : Այս ժամանակը երազնե-
րուս կամ մանաւանդ մաքիս դանդաչումնեւ-
րուն մէջ՝ հայրս, մայրս, կամ ուրիշ սիրելի
անձ մը տեսնէի որ վիճակիս վրայ կուլար .
կը լսէի անոնց ցաւադին հեծութիւնները, եւ
յանկարծ կարթնայի նոյնպէս հեծկլաւով եւ
օարսափէ դարնուած :

Նրբեմն այս կարճատեւ երազներուս մէջ՝
կը թուէր թէ մօրս ձայնը կը լսէի որ միւսները
կը միսիթարէր . յետոյ անոնց հետ բանուս մրտ-

նելով սուրբ խօսքիր կը բնձի համբերուա-
թեան վրայ . եւ նոյն միջոցին որ մեծապէս
կուրախամայի իր եւ միւսներուն արթարտու-
թեանը վրայ , յանկարծ արտառուել կ'ս'տէր եւ
ամեն մարդ կու լային Անհար է ու լի ի'նչպէս
չարտաշար կը տանջուէր հոգիս այն ժամանակը :

Այս տանջանքէն ինքինքս ազատելու
համար միտքս կը գնէի որ մնաւ անլողն չ ըտ-
նեմ : Կանդեզս բոլոր դիշերը վառ կը պոհի
եւ սեղանիս առջեւնառած կը կարդայի ու կը
դրէի : Բայց ի'նչ : Կուզար վարդիա : Եւ ուր
թէ եւ արթունէի եւ կը կարդայի : բայց ք ան
մը չէի հասկընար . եւ դուխս բայսրձայ-
սէս անկարող էր իր խորհրդաւու քիւները
կանոնաւորելու : Ան ժամանակը կ'ս'տէի : առ-
ուածներօրինակը . բայց փոխանակը օշինայա-
ծիս վրայ խորհելու , ուրիշ բաւեր : վրայ կը
կ'որհէ : տարաբազութիւններս կը մտածէի :

Եթէ անկողին մտնէի , աւելի դէշ էր :
ի'նչով եւ ինչ զիրք ու որ պս ո . ջլու ին
սաստիկ ցնցաւմներով կը տաստանէի . եւ հազիկ
կըլլար ելնելնստիկ : Կամ , թէ որ քիչ ու նուջէի .
յուսահատակական երազներ : ար կը կը կը մտածէի :
աւելի կը շարչս բէին զիս :

Ազօթքնեւս չոր ու ցանաք էն , այսու
ամենաքնիւ յաճախ կ'աղօթէի : Երկար կ'օս-

քեր չէի ուղղեր Երկնից, բայց սիրտա առ Աստ-
ուած կը բարձրացընէի, առ մարդացեալն
Աստուած՝ որ ամեն մարդ կային վիշտերը կրեց :

Այս սոսկալի գիշերներուն մէջ՝ երբեմն եռ-
բեւսկայութիւնս այն աստիճանն կը բորբոքէր,
որ թէ եւ արթուն էի, այսու ամենայնիւ կը
թուէր ինձի թէ մերթ հեծութիւններ եւ մերթ
մարած ծիծադներ կը լսէի բանտիս մէջ : Ման-
կութենէս 'ի վեր երբէք հաւատք ընծայած
չունէի վ՛ուկներու եւ ոզիներու . բայց հի-
մա այս հեծութիւններն ու ծիծադները զիս
կը պակուցանէին : Չէի դիտեր ինչ մեկնու-
թիւն տայի ասոր, եւ վերջապէս կը հարցընէի
ևս ինձի Կէ արդեօք անծանօթ եւ չար զօրու-
թեան մը խաղալի՞կ եղեր էի :

Քանի քանի անգամ ճրագը առի դողալով
եւնայեցայ որ անկողնիս ներքեւ մէկը պահ-
ուըսած չըլլայ զիս ծաղրելու համար : Քանի
քանի անդամեկարծիք ըրի թէ գուցէ զիս առ-
ջի սենեակէս վերցընելով հոն բերելնուն պատ-
ճառը այս էր որ վերջինին մէջ դաշտնի դուռ
մը կառ դևանին վրայ, կամ պատերուն մէջ
գաղտնի ծակ մը, ուսկից կալանաւորներս կըր-
նային իմ ամսն ըրածս լրտեսնել եւ անլիթարար
զիս զարհութեցընելով զուարճանալ :

Աւզունիս առջեւ հստած ժամանակս, կը

թուէր ինձի երբեմն թէ քղանցս կը քաշէին .
երբեմն գիրքս կը հրէին որ դետինը կիյնար .
երբեմն ալ գիտես թէ մէկը ետեւէս փշելով
ճրագոմարել կուզէր Այն ժամանակը կը ցատ-
կէի կելնէի , չորս զիս կը նայէի , կասկածելով
կը պաշտէի սենեակիս մէջ , եւ կը հարցնէի ես
ինձի թէ խննդ էի արդեօք թէ խելքս դլուխս
էր : Ինչ որ կը առանէի , ինչ որ կ՝ զդայի , ամե-
նուն մէջ ալ չէի կրնար իսկութիւնը պատրան-
քէն դանաշանիլ եւ անձկութեամբ կը գոշէի .

« Աստուած իմ , Աստուած իմ , ընդէր
թողեր զիս :

ԳԼՈՒԽ ԽԶ .

Անգամմը արշալոյաէն քիչ մը առաջ պառ-
կելով . աներ լմիտ գիտէի որ թաշկինակս բար-
ձիս տակը գրած էի : Քիչ մը թմրութենէ ե-
տիւ . ըստ սովորութեան արթընցայ եւ թուն-
ցաւ ինձի թէ զիս կը խղդէին : Պարանցս

պինդ մը կապուած էր : Զարքա՞մովի՞ բան : Թաշկինակս ա հուր մը վլիս փաթթուած եւ քանի մը կատերով նզմուած էր : Կրնայի երդնու որ այն կապերո ես չեի կապած , եւ թաշկինակս անուած ձեռք չեի դպջուցած քանի որ քարձիա ներգեւը զրեր էի : Պէտք էր որ երազիս մէջ կա մ մոքիս զառաց բարին ըրած ու բոլորովին մուցած ըլլայի : բայց չեի կրնար հաւասար ասոր . եւ այնուհետեւ ամեն դիշեր կը վախնայի որ զիս պիտի խղդէին :

Այս խենդութիւններն ուրիշներուն որչափ ծիծաղելի պիտի երեւին՝ կը հասկընամ . բայց ես՝ որ զանոնք կ'զգայի , այնչափ գէ շութիւն եւ տաղնապ կը կրէի անոնց Ռէ՝ որ առկաւին մինչեւ հիմա միտքս գաննէ կը սոսկամ :

Ուտաւօսները կը փարառէին . եւ քա՞ի որ ցերեկուան լոյնը տեւէր , այն աստիճան հոգիս զօրացած կ'զգայի այս արհաւիրքներուն գէմ՝ որ այնուհետեւ նորէն զիս վախնընեին անհընա . կը թուէր ինձի : Բայց արեւը մարը մանելուն պէս կըսկսէի դողալ , եւ ամեն դիշեր առջի գիշերներուն սոսկալի խօլականները կը նորոգուէին :

Որչափ տ'յար էի գիշերուան մութին մէջ , այնչափ ցերեկը զիս զուարիթ ցուցընելու կը զահայի երբոր կը խօսալցէի ընկերներուն ,

պատրիարքարանի երեխու տղայոց եւ պահանջանեաներուս հետ : Ըրած դռւարճաբանութիւնն ներս լուզը չէր կրնար այնպիսի ողբարի տկարութեան մը ենթակայ ըլլալս մտքէն անդամ անցունել : Այս ջանքով կը յուսայի սիրու դօրացընելու, բայց ամեն ջանք անօգուտ էին : Այն զիշերային երեւոյթները՝ որ ցերեկը խօսական ցնորքներ կը համարէի, իրիկուան զարձուրելի իսկութիւններ կը լային ինձի համար :

Եթէ համարձակէի, յանձնաժողովին պիտի աղաչէի որ սենեակս փոխէր, բայց վրաս խնդացընելու երկիրւդիւ շկրցայ ընել :

Ա երջադէս ամեն խորհրդածութեանց, ամեն որոշմանց, ամեն սղարապ նանց եւ ամեն աղօթից անծդուտ ըլլալը տեսնելով, Աստուծամէ բուրովլին եւ ընդ միշտ լքէալ ըլլաւու առակալի դաղախարը տիրեց վրաս :

Նախախմբամութեան դէմ մտարերուած այն ամեն թշու առ խմաստակութիւնները՝ որ քանի մը շաբաթ առաջ՝ մտքիս առողջ լինակին մէ ջյիմարութիւն կը թուէին ինձի, մեքենայարար բզզալ սկսան ուղեղիս մէջ, եւ ուշադրութեան արժանի երեւցան : Քանի մը օր մաքառեցայ այս փորձութեան դէմ, բայց ետքը անձնատուր եղայ :

Կրօնի բարութիւնը ժխտեցի : Ամենէն կա-

ուաղի անաստուածներուն պէս , ժամանակաւ .
Յուլիանոսին ինձի դրածին պէս՝ ես ալ սկսայ
ըսել թէ կրօնքը մտքերը տկարացընելէ զատ
ուրիշ արգիւնք մը չունի : Ամբարտաւանու-
թեամբ կարծեցի թէ զԱստուած ուրանալով
միտքս իր զօրութիւնը նորէն պիտի գտնէր :
Անմի՛տ յոյս , զԱստուած կուրանայի եւ չար
ու աներեւոյթ էակներուն գոյութիւնը չէի
կրնար ուրանալ , որոնք գիտես թէ բոլորափ-
քըս առած՝ իմ ովհշտերէս իրենց ճարակ գտնիլ
կուզէին :

Ի՞նչ անուն տալու է այս չարչարանքին ,
Բաւական է ըսել թէ հիւանդութիւն մ'էր :
Կամ թէ միանդամայն Աստուծոյ կողմէն պա-
տուհաս մէ չէր իմամբարհաւաճութիւնս կոտ-
րելու եւ ինձի սովորեցընելու համար որ առանց
լուսոյ՝ կրնայի ես ալ Յուլիանոսի պէս անհա-
ւատ եւ անկէ աւելի անմիտ ըլլալ :

Ինչ եւ իցէ , Աստուած զիս այս մեծ չարի-
քէն անակինկալ կերպով մը աղատեց :

Առաւօտ մը , խահուէս խմելէս ետեւ ոաս-
տիկ խիթ եւ փախում մը բռնեց զիս . կարծեցի
թէ զիս թուշաւորեր էին : Փախումներէն յոդ-
նելով քրտնեցայ եւ անկողին մտայ : Կէս աւուր
մօտ հանգիստ քուն մը ննջեցի որ մինչեւ իրի-
կուն տեւեց : Արթընցայ՝ զարմանալով այնչափ

երկար հանգստութիւն մը վայելելուս վրայ, եւ ալ աւելի ննջելու պէտք չզգալով ելայ կանգնեցայ :

— Ուտքի վրայ ըլլամնէ աւելի զօրաւոր կը լլամ իմ սովորական արհաւիրքներուս դէմ, ըսի ևս ինձի : —

Բայց արհաւիրքները չեկան : Անպատմելի եղաւ ուրախութիւնս, եւ շնորհակալութեանս եռանդին մէջ Աստուածական սուստութեան դգացումս նորոգուելով գետինը ինկայ իրեն երկըրպագելու եւ քանի մը օր զինքը ուրանալու համար թողութիւն հայցելու : Այս ուրախութեան զեղումը զիս ուժաթափ ըրտ, եւ քանի մը վայրկեան ծունկի վրայ աթոռակի մը կրթնած մնալէ ետեւ՝ նորէն քունը զիս կոխեց, եւ այն դիրքին մէջ ննջեցի :

Մէկ կամ քանի ժամեատքը (չեմ գիտեր որ չափ) կէս մը արթնցայ եւ հազիւ կրցայ ինքինքս անկողինիս վրայ նետել առանց հանու ելու, անմիջապէս քունս տարաւ եւ մինչեւ արշալոյս ննջեցի : Հետեւեալ օրն ալ մինչեւ իրի կուն զգայազրկութեան վիճակի մէջ էի : Իրի կունը կանուխ պառկեցայ եւ զիշերն իրուն ննջեցի Չեմ գիտեր ի՞նչ յանկարծական եւ բուռնճիղ մէք օր բնութիւնը գործեր էր վրաս . բայց բաշկուեր էի :

ԼՈՒԽ ԽԵ

Այն ժամանակը դադրեցաւ ստամոքսիս
նողկանքը որ երկար ժամանակէ 'ի վեր կը քա-
շէի զիմուս ցաւը փարատեցաւ, եւ ախորժակս
կարգէ դուրս կերպով բայուեցաւ : Կերած ս
խիատ աղէկ կը մարսէի եւ օր ըստ օրէ կը կազ-
դուրէի : Աքանչելի՛ նախախնամութիւն . զիս
խոնարհեցընելու համար ուժու առեր էր, եւ հի-
մանորէն կուտար, վասն զի դատաստաններուն
ժամանակը կը մօտենար, եւ ինքը չէր ուզեր
որ մէկէն 'ի մէկ իմացած ատենս ընկճէի :

Նոյեմբեր 24 ին, մնր ընկերներէն մէկը՝
Տոքթոր Ֆօրէսթի՝ յանկարծ կապարներէն հան-
ուեցաւ եւ չկրցանք իմանալ թէ ուր կը տա-
նէին : Բանտապետը, կինը եւ պահապանները
սասաներ էին: Մէկն ալ չէր ուզեր ինձի յայտ-
նել այս գաղտնիքը :

«Ի՞նչ կուզէք իմանալ, կըսէր ինձի թրէ-
մէրէլլո, եթէ բարի բան մը չկայ ձեզ իմացը-

նելիք : Արդէն բաւականէն աւելին լսի ձեզի .
բաւականէն աւելին :

— Ուրեմն ի՞նչ օգուտ ունի ձեր այդ Ա-
ռութիւնը ըստ դողալով . միթէ ես չասկըցայ :
Մահուան դատապարտուեր է :

— Ո՞վ . . . ան . . . Տոքթոր Ֆէրէսթին . ո
Թրէմէրէլլօ կը վարանէր . բայց շատխօսու-
թիւնն ալ իր դմխաւոր առաքինութիւններէն
մէկն էր :

« Ետքը չըսէք ինձի համար թէ շատա-
խօս է . ես չէի ուզեր այս կերպ բաներու վրայ
բերանս անդամ բանալ , դուք զիս բռնադա-
տեցիք . ետքը չմոռնաք :

— Այո , այո , ես բռնադ ատեցի ձեզ . բայց
մի վախնաք , ըսէք ինձի ամեն բան : ի՞նչ ը-
րին խեղճ ֆօրէսթիին :

— Ո՞հ , տէր , զանի Սօսմիրիի կամուրջէն
անցուցին : Եղեռնագործներուն բանտը դըր-
ուած է : Թէ ան եւ թէ ուրիշ երկու անձինք
իրենց մահուան դատակնիքը լսեցին :

— Եւ այն դատակնիքն ՚ի գործ պիտի
դրուի . . . Երբ : Ո՞հ , եղինակները : Եւ ով են
միւս երկուքը :

— Ասկէց աւելի բան մը չեմ գիտեր . ա-
մենեւին չեմ գիտեր . դատակնիքը դեռ չէ հը-
րատարակուած : Ա ենետիկի մէջ խօսք կայ թէ

մէկ քանի անձանց կեանքը պիտի շնորհուի : Աստուած տայ մէկն ալ չմնոնի : Աստուած տայ որ եթէ ամենն ալ մահուանէ չկրնան աղատիլ , գոնէ դուք աղատիք . վասն զի ձեզ . . . ներեցէք համարձակութեանս . . . եղբօր պէս կը սիրեմ : »

Եւ սիրտը շարժելով դուրս ելաւ գնաց : Ըսթերցողը կրնայ երեւակայել ինչ սաստիկ յուզման մէջ ինկայ այն օրը , հետեւեալ գիշերը եւ յաջորդ քանիմը օրերը՝ առանց աւելի բան մը խմանալու :

Անստուգութիւնն ամիս մը տեւեց : Վերջապէս առաջին դատաստանին վերաբերեալ վճիռներն հրատարակուեցան : Բազմաթիւ ամբաստանեալներ դատապարտութիւն կրերէին , որոց ինը մահուան - բայց յետոյ կեանքերնին շնորհուելով շղթայակապ բանտարկութեան դատապարտուեր էին , ոմանք քսան տարի , ոմանք տասնեւհինդ տարի , եւ այս երկու կարգն իրենց պատիժը Մօրավիայի Պըրիւն քաղաքին մօտ Սրիլպէրկի բերդին մէջ պիտի կրէին . ուրիշներ ալ քիչէն քիչ տամն տարի բանտարկութեան դատապարտուեր էին , եւ այս վերջիններն ալ Լուպիանայի բերդը պիտի դրուէին :

Այս առաջին դասու դատապարտելոց

պատժոյն փոփոխութիւն չնորհուիլը՝ երկրորդ
գտառը գատապարտելոց ալ կեանքը չնորհ-
ուելուն նշան մ'էր. կամ թէ առաջինները՝ ծա-
ծուկ ընկերութեանց գէմելած հրամանագի-
րերուն հրատարակուելէն առաջ բռնուած ըլ-
լանուն համար՝ այս չնորհը միայն անոնց եղած
էր. իսկ ետքէն բռնուողներն օրինաց բոլոր
խստթեամբը ողիսի պատժուէին.

— Ոյս տարակոյաներուն լուծումը հեռու
չկրնար ըլլալ, կըսէի ես ինձի: Ուրեմն գոհու-
թիւն Երկնից, որ ինձի ժամանակ կուտայ մա-
հը կանխաւ տեսնելու եւ ինքինքս պատրաս-
տելու: —

ԳԼՈՒԽ ԽԸ

Իմ միակ մտածութիւնս էր քրիստոնէ ա-
բար եւ պատշաճ արիութեամբ մնունիլ: Իս-
խաղանէն աղատելու համար անձնապանու-
թեան խորհուրդ ծագեցաւ մտքիւ մէջ, բայց

փարատեցաւ : Ի՞նչ առաւելութիւն ունի ինք զինք սպաննելը դահճի ձեռօք մեռնելէ : Իր պատիւն աղասիլու միջեց մ'է : Ե՞ս . տղայանութիւն չը արդեօք կարծելը թէ դահճին խաղխաղալէն աւելի պատուաւոր է : Երբոր վերջապէս մռանիլ հաւելէ : Անթաղը իսկ թէ քրիստոնեայ եղած չըլլայի , անձնապահութիւնը՝ լաւ մտածելով անմիտ եւ անօգուտ դոհացում մը կը թուէր ինձի :

—Եթէ կենացս վախճանն հասած է , կըսէի ես ինձի , բաղդաւոր չեմ այս կերպով համելուն հա բար որ ինձի ժամանակ կը թողումը տախտակալու , մարդոյ արժանի փախաքներովեւ զղջամբ խղճ մտանքս մաքրելու : Ուամեկին աչքին , կախազանի վրայ մռանիլը մահուան ամեննէն դէշ տեսակնէ . բայց իմաստունին աչքին , այս կերպ մահը լաւադոյն է այն մահերէն որ հիւանդութեամբ կը համան՝ երբոր մնը ի նայականութիւնը տ' լարացած է , եւ հոգիննու կարող չէ երկրաւոր խորհուրդներէ վերբարձրանալու : —

Այս նույնը բացութեամբ ու դշութիւնն այս պիսի խորին տպաւորութիւնը մը ըրտու մտքին վըրայ , որ մահուան եւ մինչեւ անդամայս տեսակ մահուան մը սոսկումը բոլորովին փարատե-

ցաւը Երկար մուածեցի սուրբ խորհությներուն
վրայ որ այն հանդիսաւոյ վայրկեանին մէջ զիս
պիտի զօրացընէին . եւ ինք զինք բաւական
համարեցայ անոնց աղջութիւններով զա-
նոնք ընդունելու : Այս հոգւոյ բարձրութիւ-
նը՝ որ ունենալ կը կարծէի, այս խոտղաղութիւնը,
այս ներողամիտ սէրը մինչեւ անգամ առել-
եացս վրայ, այս ուրախութիւնը՝ որ կեանք ա
Աստուծոյ կամացը զոհելու կարողութեան
համար ունէի, այս ամեն բարի տրանսգրու-
թիւնները պիտի կրնայի՝ պահնել թէ որ զիս
մեռնելու տանէին : Աւագ՝ հրչափ հակառա-
թիւն կայ մարդուն վրայ : Մինչեւ անդամ վր-
ջին աստիճան առերբ եւ հապառառուն թուած
ժամանակը՝ մէկ վայրկեանը բաւական է զանի
արևարութեանց եւ սիսոլ ճանոյ մէջ գուհա լիժե-
լու : Ուրեմն պիտի կրնաք արժանաւոյն ու մեռ-
նիլ . Աստուծոյ միայն գոտէ : Նու առիլայ հաս-
տատելու չախ համարում չունիք վրաս :

Ասիայն մահուն հաւանակա՞յս մերձումը
այն աստիճանն երեւակայութիւնս այս պաղա-
փարին վրայ կը հաստատէր, որ մահը ոչ միայն
հարաւոր կերեւէրինձ, այլ եւ կը թուէր թէ
անիրիստելի նախաղդաշութիւններով ինձ կը
յայտնուէր : Աիրսան ընուաւ յոյս չէր ընդունել

այս վախճանէն աղառելու , եւ ամենն անգամ որ ոտքի կամ բանալեաց ձայն կը լսէի , ամենն անգամ որ դուռս կը բանային , կը սէի ես ինձի . — Մը վախճար . ահա կուզանն զիս տանելու որ մահուանս վճիռը ինձի կարգան . Մտիկը ընմանք դայն աշխատավիճն հանդարտութեամբ , եւ օրնինք Տէրը : —

Կը խորհէի մերջին անգամ ընտանեացս , եւ մասնաւորապէս հօրս , մօրս , ամեն մէկ եղբարցս . առեն մէկ քերցս գրելիքներուս վըրայ , եւ խորին ու նուիրական զգացյանց բացատրութիւնները մտքիս մէջ պատցընելով սիրտս քաղցրադին խանգաղատանոք կը շարժէր , եւ կուլայի . այս արտառոքը չէր կրնար իմ համբերատար կամքս խախտել :

Խնչպէս քննատութիւնը նորին չպիտի գար : Բայց որչա ի տարրեր էր առաջինէն : Ոչ հեծութիւն կը լսէի սենեակիս մէջ եւ ոչ խընդալ . ոչ ալ պահուըտած մարդիկ կամ դեւեր կերեւակայէի : Գիշերը ցերեկէն աւելի հեշտացի էր ինձի , վասն զի կեանքս օր քան զօր աղօթից մէջ կա ըլութէի : Ճամը չորսին միջնոցներն անկողին մանելու սովորութիւն ունէի , եւ երկու ժամու չափ խաղաղ քունմը կը ննջէի : Երբոր կարթնայի , անկողինք չէի ելներ , որպէս զի հանգչիմ : Ժամը տասնեւմէկին կելնէի :

Դիշեր մը սովորականէս քիչ մը առաջ պատկելով . հազիւ քառորդի մը չափ քը նացեր էին ահա յանկութ արթնցայ ու դիմացս պատին վրայ պայծառ լոյս մը աեւսայ : Աը վախնայի որ նորէն զառանցանացս մէջ ինկեր էի . բայց տեսածս ցնորք չէր : Լոյսը դըլիուս վերեւը եղած հիւսիսակողման փոքր պատու հանէն ներս զարկած էր :

Կը ցատկեմ կի՞ ջնամ վար , ոեզանը կառնեմ անկողնիս վրայ կը դնեմ , անոր վրայ ալ աթոռ մը եւ կելնեմ վեր . — Կը տեսնեմ ամենազեղեցիկ եւ ամենասարսափելի տեսարան մը՝ որ չէի կրնար երեւակայել : Այն էր մեծ հրդեն մը՝ մեր բանտէն հրացանի գնառակ հանճելու շափ հեռու : Կրակը հասարակաց փուռերուն տունէն ելեր էր եւ զանի մօխիր դարձուց :

Դիշերը խիստ մութ ըլլալով , բոցելուն ու ծովխերուն ընդարձակածաւալ շեղջերն աւելի լաւ կը փայլէին՝ բռնաշունչ հովի մը յուղուելով : Ամեն կողմ կայծեր կը թռչէին , եւ դիտես թէ հրեղէն անձրեւի պէս երկինքէն վար կը տեղային : Մօտակայ լիձն հրդենը իր մէջ կը ցոլացընէր : Բազմաթիւ մակոյկներ կերթային կուգային : Հրկիղեալ եւ շրջակայ տուներուն բընակչաց սարսափին ու վասնզը մտածելով կը դթայի անոնց վիճակին վրայ : Հեռուէն արանց

եւ կանանց ձայներ կը լսէի որ իրար կը կանչէին. Թօկնինա , Մօմոլո՛ , Պէքրօ , Ծանծէ : — Ահա նորէն Ծանծէի անունը կը դարնէ ականչիս : Անենետիկի մէջ հազարաւոր Ծանծէ կայ , այսու ամսնայնիւ կը դողայի որ բանտապետին ազջիկը չըլլար , որուն յիշատակը այնչափ քաղցըր էր ինձի : Դժբանղդ ազջիկ , չըլլայ թէ հոն ըլլայ , եւ գուցէ բոցերուն մէջպաշարուի : Ո՞հ , եթէ կարենայի յօգնութիւն սլանալ իրեն : —

Արտիս շարժելէն , սարսափէս եւ պակչու մէս դողալով մինչեւ արշալոյս պատու հանը կեցայ : Յետոյ վար իջայ մահապին տրտմութեամբ մը ընկճեալ : Եղած վնասը իրականէն շատ մեծ կը կարծէի : Թրէմէրէլլօ ըստ . ինձի թէ միայն փուռներն ու . շրջակայ մթերանոցները եւ շատ մ'ալ սպարկերով ալիւր ճարակի եղեր էին այս հրդեհին :

ԳԼՈՒԽ ԽԸ .

Քանի մը իրիկուն ետքը , դեռ երեւակայութիւնս այն հրդեհին անուարանէն պաշար-

ուած, սեղանիս առջեւ նստեր, ցուրտէն սալր-
սըռելով կը կարդայի, եւ ահա մօտէն աղա-
ղակ մը բրդաւ: Բանտապետը, կինը, իրենց
տղայքը եւ պահապահները միաձայն կը գոչէ-
ին: Եթու այս, իշու այս, Ո՛հ, Սարք կը, Սարքաւ, ոչ ու
իշու ինք:

Խակոյն սարսուոս կտրեցաւ: Աթոռիս վր-
բայէն վայր ցատկեցի, եւ տրիւն քրտինք եղած
առդին անդին նայեցայ թէ բոց կը տեսնմ:.
եւ բան մը չտեսայ:

Սակայն հրդեհը պալատին մէջն էր. բան-
տերուն մօտը եղած զրասենեակները բռնկեր
էին:

Պահապահներէն մէ կը կը գոչէր. « Բայց,
տէր, ի՞նչ պիտի ընենք այս ամեն բանտարկ-
եալները, թէ որ հրդեհը ծաւալի: »

Բանտապետն ալ կը պատասխանէր. « Խմ
սիրսս չներեր թողուլ զանոնք որ այրին: սա-
կայն բանտերն ալ սուանց յանձնաժողովին հը-
րամանին չեն կընար բացուիլ. վաղէ շուտով
հրաման ուղէ: »

— Ահա կերթամ, տէր, բայց մինչեւ որ
պատասխանը գայնէ հոս բանը բանէն կանց-
նի. ան ալ գիտէք: »

Եւ ուր էր այն միջոցին իմ դիւցաղնա-
կան համբերատարութիւնս որով ՚ի մահ եր-

Բայրու այնչափ վաստահ կը կարծէի ես զիս : Ինչու համար ողջ ողջ այրելու դագափարը տեսնց կը պատճառէր ինձի որպէս թէ պարանոցս օնդմաւելով մնանիլը՝ հրով այրելէն աւելի բերկրադի էր : Այս խորհրդածութիւնն ընելով ամչցայ տկարութեանս վրայ : Պիտի գոչէի սրբնապանին որ բանափս դուռը բանալու դըմութիւն ընէ , բայց ինքզինքս բռնեցի : Ասկայն վախոը զիս սկաշարեր էր : Ահա այսչափ պիտի ըլլայ իմ արիութիւնս , կրտէի ես ինձի , թէ որ կրակէնս ազատելով սպաննուելու տարուիմ : Ինքզինքս պիտի բռնեմ , վատութիւնս ուրիշներէն պիտի ծածկեմ , բայց պիտի դողամ . . . Ասկայն . . . քաջութիւն չէ երկիւզը ծածկելու ինքզինք աներկիւզ երեւցընելն ալ : Մի թէ վեհանձնութիւն չէ մէկու մը՝ ինքզինք այն ասաինան զսպել : որ տալ չուզած բանը յօժարութեամբ տայ : Միթէ մէկ մարդ մը ակամայիսկ հնազանդինէ՝ հնազանդութիւն ըրած չըլլամք : —

Ազմուկն այնչափ մնծ էր բանառապետին տանը մէջ որ կը ցուցընէր թէ վտանգը քանի կերթար կը մնձնար : Մեզ զուրս հանելու համար հրաման բերելու զացող պահապանն ալ ետ չէր դառնար : Վերջապէս ինձի թուեցաւ որ ձայնը լսեցի : Մտիկ ըրի , բայց խօսքերը չէի

կրնար որուել : Կ'սպամեմ , կը յուռամ , բայց ա-
նօդուտ տեղը : Մարդ չէր դար : Հնամք է որ
մեզ կրակէն ազատել չուզին : Բայց թէ որ հը-
նար չկայ փախչելու : Թէ որ բանտապեան ու-
ղնտանիքը դժուարութիւն կը քաշեն ինք-
պինքնին ազատելու եւ խեղճ բանտարկեալնե-
րը մտածող չկայ :

— Մնաց որ , կըսէի , այս ըրածս փիլիսո-
փայութիւն չէ . կրօնք չէ : Աւելի լաւ չը՞Ար
որ բոցերուն սենեակօ դալ մանել ու դիս լա-
վիելը տեսնելու պատրաստուիմ : —

Սակայն աղմուկը կը հանդարտի , եւ քիչ
քիչ ձայները բոլորովին կը լուեն : Արդեօք հըր-
դեհին մարելուն նշան մ'է այս : Կամ թէ փախ-
չիլ կրցողները փախսան եւ միայն բանտարկեալ-
ները թողուեցան դժնդակ մահուան մը զոհ
ըլլալու :

Լոռւթիւնը շարունակելով սիրտս հան-
տարտեցաւ : Հասկըցայ որ կրակը մարած ըլ-
լալու էր :

Ելայ սպոկեցայ . կրած երկիւղս վա-
սութիւն համարելով զիս մեղադրեցի . եւ հի-
մա որ ալ բոցերուն մէջ կորնչելու վտանգ չը-
կար , կը ցաւէի հրոյ ճարակ չըլլալուս վրայ :
Փոխսանակ քանի մը օրէն մարզոց ձեռքով ըս-
պաննուելու :

Հետեւեալ առաւօտուն թրէմէրէլլօ պատմոց ինձի հրդեհին պարագաները, եւ վախցած ըլլալուն վրայ ծիծաղեցայ . որպէս թէ իմ կը բած երկիւզա անոր կրածէն պակաս էր կամ մանաւանդ տուելի չէր .

ԳԼՈՒԽ Ծ.

1822 յունուար 11 ին առաւօտեան ժամը ինչին միջոցները թրէմէրէլլօ առիթ մը գտնելով սենեակս եկաւ եւ շփոթեալ դէմքով մը ըստ :

— Գիտք, Պարոն, որ վենետիկի մօտ Ամս Միքէլէ տի Մուրանօ կղղւոյն մէջ բանտ մը կայ ուր թերեւս հարիւրէն աւելլի ուրախութէ կը գըտնուին :

— Արդէն քանի մը անգամ ըստած էք ինձի : Է՞՞նչ ըսել կուզէք . շուտ ըսէք . անոնց մէ՛ ումանք դատապարաւունը ին :

— Այս :

— Որո՞նք :

— Զեմ զիտեր :

— Խեղճ Մարօնչէլլի բարեկամս ալ մէ-
ջերնի՞ն է :

— Ո՞հ, Պարոն, չեմ զիտեր : Չեմ զիտեր
որո՞նք են դատապարտեալները : Եւ խռովեալ
սրառվ դուրս ելաւ : Կարեկիցնայուածք մը վը-
րասնետելով :

•Քիչ մը ետքը սենեակս մտան բանտապե-
տը, պահապանները եւ ուրիշ մարդ մը որ եր-
բէք տեսած չէի : Բանտապետը չփոթած կե-
րեւէր : Նոր եկողը բերանը բացաւ ու ըսաւ .

— Պարոն, յանձնաժողովը ձեզ կը հրամա-
յէ որ հետս դաք :

— Երթանք, ըսի. եւ դուք նվէք, Պա-
րոն :

— Աան Միքէլէի բանտերուն դռնապանն
եմ, ձեզ հոն պիտի տանիմ :

Ա-Դ-Հներուն բանտապեան այս վերջինին
յանձնեց իմ ատակս որ իր ձեռքն էր : Թողար-
ութիւն խնդրեցի եւ ստացայ քիչ մը ոլարդեւ-
տալու պահապաններուն . հանդերձներս կար-
գի դրի . Ա . Գիրքս թեւխտակն առի եւ դուրս
ելայ : Երբոր այն անհատնում սանդուղքէն
վարկիջնէի, թրէմէրէլլօ ձեռքս ուղմնեց, եւ
կը թուէր թէ ինձի ըսել կուղէր . « Խեղճ մարդ,
գործու լմնցած է : »

Լճին վրայ բացուած դոնէ մը դուրս ե-
շանք , ուր մակոյկ մը կ'սպասէք նոր բանտա-
պետին երկու պահապահներուն հետ : Մակոյ-
կը մտայ հաղարսումէի հակառակ զգացումնե-
րով : Մէկ կողմանէ կը ցաւէի Կողմէներէն մեկ-
նելուավրայ , ուր շատ վիշտ քաշեր էի , բացց
մէկը սիրեր էի հոն , կամ մէկը զիս սիրեր էր :
Միւս կողմանէ կը թերթիքէի երկար ժամանակ
նեղ սենեակի մը մէջ դոցուած մնալէ ետև
զիս բաց օդի մէջ գտնելուս , երկինքը , ջուրը
եւ քաղաքը տեսներու վրայ , առանց երկաթ-
եայ ձողերէ շրջապատեալ ըլլալուս : Կը յիշէի
այն ուրախալի մակոյկը որ երջանկաւէտ ժամա-
նակ մը պիտ նոյն լճին վրայ կը պաշտպանէր : Կը
յիշէի քօմօիլճին մակոյկները , Մաճճիօրէ լճին
մակոյկները , թա գետին վրայի թեթեւ նա-
ւակները , Ոօն եւ Աօն գետերուն վրայինները
.... Ո՞հ , գեղազուարճ տարիներ՝ յաւիտենա-
սղէս կորսուած : Ո՞վ աշխարհիս մէջ ինձի չափ
երջանկութիւն վայելեր էր :

Գորսպագոթ ծնողաց որդի , այնպիսի
պայմանի մը մէջ ծնած , որ աղքատութիւն
չէ , եւ որ քեզ հաւասարապէս բացակայ պա-
հելով հարուստէնու աղքատէն , այս երկու վի-
ճակն ալիրենց ճշմարիադէմքով կը ճանչցու-
նէ քեզ , պայման մը որ ամենմէն նպաստաւորը

կը համարէի սրաի բարի զգացումները մշակելու : Ըստանեկան ամենաքաղցր խնամքներով անցած մանկութենէ մը եւաեւ՝ Վիոն դացի մօրս մէկ ծեր հօրեղբօրսրդւոյն քով . մնծահարուստ՝ բայց իր հարստութեանը արժանի մարդ մը : Հոն վայելչութեան եւ սիրոյ անյագուրդ բաղձանքով վառուած սիրտ մը զմայլեցընող ամեն զուարձութիւնները՝ պատանեկութեանը առաջին եռանդը արբեցուցեր էին : Ետքը իտալիա դառնալով եւ ծնողացս հետ Միլան երթալով , հոն շարունակեր էի ուսման սլարասլիլ , ընկերութիւնն ու դիրքերը սիրել . ընտիր բարեկամներ եւ քաղցր գովեսաններ գտննելովամեն աեղ : Մօնթի եւ ֆօոքօլո՝ թէսլէտ եւ իրարութշնամի , մի եւ նոյն բարեկամութիւնը ունէին ինձի : Բայց ես առաւել յարած էի վերջինին . եւ այս ցասկոտ մարդը՝ որ իր դաժան խստութեամբը զրեթէ բոլոր բարեկամները իրմէ կը պաղեցընէր , ինձի հետքաղցրաբարոյ եւ մասրիմէր . եւ ես ալ գորովալից մնծարանօք զինքը կը յարդէի : Ուրիշ երեւելի դրագէաններն ալ զիս կը սիրէին , եւ ես ալ նոյն սէրն ունէի անոնց վրայ : Երբէք նախանձնն ու զրագարտութիւնը չկրցան ինձի դպչիլ . կամ եթէ երբեմն դպչիլ ուզեցին ալ նէ , այնպիսի ստորին եւ համարումը զուրկ մարդոցմէ

կուգային, որ չէին կրնար վնասել ինձի, իստալիոյ թագառութեան անկումն ետեւ՝ հայրս նորէն տունը Թօրինօ փոխադրեր էր. իսկ ես սիրելի ընտանեաց քով երթալնատելու դիտաւորութիւնս միշտ որ աւուր ձգելով, վերջապէս Միլան մնացեր էի, ուր երջանկութիւնս այնչափ մեծ էր որ անկէ բաժնուիլս չէր դար.

Լաւագոյն բարեկամներէս երեքը, Տ. Բիէթը ըստ Պօրսիէրի, Մօնտինեոո Լուտօվիքօ տի Պրէմէ եւ Լուիճի Բօրրօ Լամպէրթէնկի կոմսը՝ որ Միլան էին, ուրիշ ամենը կը գերազանցէին որտիս մէջ: Եսոքը աւելցաւ նաևւ Ֆէտէրիքօ կօնֆալօնիէրի կոմսը: Բօրրօի որդւոց դաստիարակութիւնը վրաս առած ըլլալով, տղայոց հետ հօր պէս էի եւ հօրերնուն հետ ալ եղբօր պէս: Այն տունը կը յաճախէին ոչ միայն Միլանի բնակչաց ամենէն ընտիր ծաղիկները, այլ եւ բազմաթիւ երեւելի ճանապարհորդներ: Հոն ճանչցայ Աթալ տիկինը, Շլէճէլ, Պայոըն, Ցալիս, Հօպհառուզ, Պրօմ եւ ուրիշ շատ նշանաւոր անձինք՝ որ Եւրոպայի զանազան կողմերէն խոսլիա կուգային: Ո՞հ, ասսանկ մեծահանճար մարդոց ծանօթանալը որչափ կը զուարթացընէ եւ ազնուանալու կը գրգռէ մարդուս հոգին: Այս, երջանիկ էի ես: Խմզինակս թագաւորի մը վիճակին չէի փոխեր:

Արդ, ասանկ քաղցր վիճակէ մը յանկարծ բան-
տապաններու ձեռք իյնալ, բանտէ բանտ քաշ-
քըշուիլ, եւ մերջապէս խեղդամահ սպան-
նուիլ կամ չղթայներու մէջ մեռնիլ.

ԳԼՈՒԽ ԾԱ.

Այս մտածութիւններն ընելով Սան Մի-
քէլէ հասայ, Հռն զիա սենեակի մը մէջ փակե-
ցին, որ բակի մը վրայ կը նայէր, եւ լիճն ու
Մուրանօի գեղեցիկ կղզին ալ առ ջեւն էր, Մա-
րտնչէլի վրայօք լուր խնդրեցի բանտապե-
տէն, կնոջմէն եւ չորս պահապաններէն, Բայց
ասոնք համառօտ այցելութիւններ կը նէին ին-
ձի, կամկած ոտ զգուշաւորութեամբ, եւ չէին
ուզեր բան մը ըսել:

Սակայն ուր որ հինգ վեց մարդ կայ, զըժ-
ուարաւ կը պատահի որ անոնց մէջ կարեկցու-
թեան ընդունակ եւ խօսիլ սիրող մէկը չգտնը-
ուի, Այսպիսի մէկը գտայ ասոնց մէջ, որ հե-

տեւեալ լուրերը տուաւ ինձի :

Մարօնչէլի՝ երկար ժամանակ առանձին մնալէ ետեւ՝ Քամիլլօ լատէրքի կոմսին հետ դրուեր էր : Այս վերջինը անմնղ ճանչցուելով քանի մը օր առաջ բանտէն ելեր էր և Մարօնչէլի նորէն մինակ մնացեր էր : Մեր ընկերներէն տակաւին իրրեւ անմնղ արձակուեր էին Ճիան-ջօմինիքօ Ռօմակնօղի դասատուն եւ ջօն ծ օվաննի Արրիվապէնէ կոմսը : Իէծիա հարիւրապէտը եւ Քանովա մէկ տեղ էին : Իէսսի դասատուն ալ այս երկու վերջիններուն կից բանտի մը մէջ մահանըրձ պառկեր էր :

— Ուրեմն բանտէն չելլոզներուն վճիռն ալեկած է , ըսի : Եւ ինչու չեն յայտներ : Թերեւս կողասեն որինեղա թէսսին մառնի , կամ քիչ մը աղէկի դառնայ որպէս զի կարենայ իր դատակնիքը լսել . այնպէս չէ :

— Կարծեմ որ այդպէս է :

Աղն օր լուր կը հարցընէի տարաբաղդ թէսսին վիճակին վրայ :

— Խօսիլը կորանցուց : — Նորէն խօսիլը կըսաւ , բայց կը զառանցէ եւ մարդ չճանչեր : — Դնու կենդանութեան նշաններ կերեւին վրան : — Յաճախ արիւն կը թքնէ եւ զառանցանքը կը շարունակէ : — Քիչ մը լաւ է : — Աւելի դէշ է : — Հոգեվարք է : —

Քանի մը շարաթ շարունակ այս պատճա-
խաններն ստացայ , մինչև որ առաւօտ մը Ե-
կան ըսին բնձի թէ մեռաւ :

Արտասուեցի վրան , եւ ետքը ինքզինքն
միիթ արեցի խորհելով թէ իլր դատապարաւ-
թիւնը չէր իմացած :

Հետեւեալ օրը , 21 փետրուար 1822, բան-
տապեսն եկաւ գիս սանելու . Ճամը առաւօտ-
եան տասն էր : Զիս յանձնաժողովին սրահը
տարաւ ու ինքը զորս ելաւ : Նախագահը , հար-
ցաքնիչը եւ երկու օժանդակ դատաւորներն
իրենց աթոռներուն վրայ նստած էին : Ներս
մանելուս ոքսամննն ալ եկան կանգնեցան :

Նախագահը ազնիւ ցաւակցութեամբ մը
ինձի ըստ թէ դատակնիքս եկեր էր , եւ սար-
ստիելի էր . բայց կայսրը մեղմացուցեր էր
զայն :

Հարցաքնիչը կարդաց դատակնիքս .

— Ի Մա՞ դատապարաւեալ : Յետոյ կայսե-
րական հրամանադիրը կարդաց . — Մահուն
պատիթը տանեւ հինգ տարի Սրիլաքէրկի բեր-
դին մէջ չղթայակապ բանտարկութեան վո-
խարկուած : —

— Ասու ծոյ կամքն ըլլայ . ըսի :

Եւ ճշմարտիւ դիտաւորութիւն ունէի այս
ահագին հարուածը քրիստոնէաբար ընդունե-

լու եւ ո եւ իցէ մէկուամը դէմ ոխ չցուցրնել ու
եւ ոչ իսկ տածելու :

Նախագահը դովեց իմ չսփառութիւնս
իւ յորդորեց որ միշտ պահեմ, առելցընելով թէ
այս համբերատարութիւնս կրնար թերեւս եր-
կու կամերեք տարի ետքը աւելի մոծ շնորհի
մը զիս արժանի ընել : (Փոխանակ երկու կամ
երեք տարիին՝ ուրիշ չափ տարիներ անցան) :

Միւս դատասորներն այ մխիթարութեան
եւ յուսոյ խօսքեր բրին ինձի . բայց մէջերնեն
մէկը՝ որ դատաստանիս մէջ միշտ թշնամա-
րար վարուեր էր իմ հետա , չեմ գիտեր ինչ
քաղաքավարական խօսք մը ըստ որ ինձի
չառ ծանր եկաւ : Այն քաղաքավարութիւնը
ինձի այնպէս թուեցաւ թէ աշուշները սուտ
կը հանեին , եւ կրնայի երգնուլ թէ թշնամա-
րիչ որախութիւն մը կը փայլէր անոնց մէջ :

Հիմա չեմ երգնուր այնպէս ըլլալուն վրայ
եւ կարելի է որ խարուեր էի այն ժամանակը :
Բայց արինս տակն ՚ի վերայ եղաւ , եւ դըժ-
ուարաւ կրցայ զայրոյթ ո զսպել : Ծածկեցի , եւ
մինչ անոնք տակաւին իմ քրիստոնէական համ-
բերութիւնս կը գովեին , ես արդէն զայն կո-
րուսեր էի որտիս մէջ :

— Յաւ է մեզի . ըստ հարցաքննիչը ձեր
դատակինիքը վաղը հրապարակաւ . ձեզի ծա-

նուցանել, բայց պաշտօնական արարողութիւն
ժ'է, չենք կրնար զանց ընել:

— Այսպէս թող ըլլայ, պատասխանեցի:

— Այս վայրկենէն, ըստ, կրնաք ձեր
բարեկամին ընկերակցութիւնը վայելել:

Եւ բանտապետը կանչելով զիս նորէն ա-
նոր յանձնեցին՝ հրաման ընելով որ զիս Մարօն-
չէլլիի հետ դնեն:

ԳԼՈՒԽ ԾԲ.

Ո՞րչափ քաղցր եղաւ բարեկամիս եւ ին-
ձի համար այն վայրկեանը որ իրար նորէն տե-
սանք՝ տասնեւհինգ ամիս բաժնուելէ եւ այն-
չափ մեծամեծ վիշտեր քաշելէ ետեւ, բարե-
կամութեան ուրախութիւնները վայոկեան մը
մռացուցին մեղի մեր դատապարտութիւնը:

Սակայն շուտով Մարօնչէլլիի թեւերուն
մշջէն բաժնուեցայ եւ գրիչը ձեռքս առի որ
հօրս նամակ մը դրեմ: Ալ վասփաքէի որ իմ

ափսուը պիճակիս գոյթը ևս տամբ ընտանեացս եւ .
ոչ ուրիշները , որպէս զի այն ախրելի պատերուն
դառն կսկիծը մեղմանայ իմ խօսքերուն քրիս-
տոնէ ական հանդարտութեամբը : Դատաւոր-
ները խոռոշացան որ նամակս շուտով յուղար-
կեն :

Այնուհետեւ Ապօնէլլի իր դատաստա-
նին անցքերը ինձի պատմեց . ես ալ խմիններս
պատմեցի անոր : Յետոյ մեր բանտարկութեան
միջոցին մեզի պատահած արկածները պատ-
մեցինք իրարու . Ետքը պատուհանը ելանք , եւ
մեր բարեկամներէն երեքը տեսնելով իրենց
պատուհաններուն մէջ՝ ողջունեցինք : Առնք
էին նախ Քանովա եւ Ռէծիա որ մէկ տեղ դըր-
ուած էին , առաջինը վեց տարի շղթայակապ
բանտարկութեան դատապարտեալ , երկրոր-
դը երեք տարի : Երրորդն էր Զէղարէ Արմա-
րիւթիշկը որ քանի մը ամիս առաջ առաջընթառն
տակը դրացիս էր : Ասք դէմ վեճին մը տրուած
չէր , եւ քիչ օրէն անմեղ ճանչուելով արձակ-
ուեցաւ :

Օրն ՚ի բուն եւ խրիկունը խօսնկցեցանք
իրարու հետ , եւ այն խօսակցութիւնը հաճո-
յական դրազօննք մը եղաւ մեղ : Բայց երբ որ
անկողին մտանք , ճրագը մարեցաւ եւ ընու-
թիւնը տիրեց , անհնապ եղաւ . ինձի ննջել : Գը-

լուխս կրակի մէջ էր, եւ սիրուս կը կտրուէր եր-
քոր ընտանիքս կը մտածէի .—Խնդէ ծեր ծնող-
քը պիտի կրնան դիմանալ այս մեծ գժբաղ-
ջութեան : Խրենց միւս զաւակները բաւական
պիտի ըլլան դիրենք միսիթարելու . ամենն ալ
ինձի չափ սիրելի էին եւ աւելի արժանաւոր
սիրելի ըլլալու . Բայց հայր մը՝ մայր մը՝ իրենց
մնացած զաւկըներուն մէջ կորառածին տեղը
բռնելու բան մը երբէք կը դառնեն :

Ահ, եթէ միայն ծնողացա եւ ինձի սիրելի
եղող ուրիշ քանի մը անձանց վրայ խորհէի :
որոց յիշատակաւը սիրուս կը մորմոքէր եւ կը
խանդաղատէր : Բայց վերը յիշուած դատաւո-
րին կաբծեցեալ ուրախութիւնը, թշնամանիչ
ծիծաղը, դատաստանու, դատապարտութեանա
պատճառը, քաղաքականութեան կիրքերը .
եւ այնչափ բարեկամներուն վիճակն ալ միտքն
եկան . . . եւ այն ժամանակը անհնարեղաւ ին-
ձի ներդամատութեամբ դատել իմ հակառա-
կորիններս : Ասսուած զիս մեծ վորձի մը տակ
կը դնէր : Իմ պարուքս էր այն վորձը քաջու-
թեամբ կրել . բայց ոչ այն քաջութիւնը ու-
նեցայ եւ ոչ կամքը : Ատելու հեշտութիւնը
ներելու քաղցրութենէն նախամնծար բռնե-
ցի : Վերջապէս այն գիշերը դժոխային գիշեր
մեղաւ ինձի համար :

Առաւօտուն աղօթք չըրի ։ Տիեզերքը
բարւոյն թշնամի զօրութեան մը զործ կերե-
ւէր ինձի ։ Արդէն ուրիշ անդամ ալ զրպարտիչ
եղեր էի Աստուծոյ ։ բայց երբէք չէի կարծեց
որ տանակ քիչ ժամու մէջնորէն կրնայի ըլլալ ։
Յուլիանոս անդամ իր առենքն ստատիկ մոլիգ-
նութեան Ժամերուն մէջ ինձի չափ ամբարիչտ
չէր կրնար ըլլալ ։ Նրբոր մէկը իր մտքին մէջ ա-
տելութեան խորհուրդներ միայն յեղյեղէ ։
մանաւանդ տնենամնեծ թշուառութեամբ զար-
նուած մարդ մը՝ որ ընդհակառակն աւելի բա-
րեպաշտ պէտք էր ըլլար ։ այնպիսի մարդ մը՝
թէ եւ արդար ալ եղած ըլլայ ։ վերջապէս չար
կըլլայ ։ այս ։ թէ եւ արդար ալ եղած ըլլայ
կըսկս ։ յան զի մէկ մարդ մը չկրնար առսնց
սմբարտառնութեան առել ։ Կ' ։ ովեսդու ։
թշուառ մահկանացու ։ որ կը պահանջես որ
քունմաններէղ ոչ մէկը քեզ խստի չդատէ ։
որ կուզես որ մէկը չկրնայ բարի մտօք անդամ
քեզ վնասել ։ կարծելով թէ ըրածն արդա-
րութիւն մ'է ։ որ կը տրանջես երբոր Աստուած
թոյն կուտայ որ դու նեղութիւն քաշես այս
կերպով մանաւանդ եւ ոչ այն կերպով ։

Խնքզինքս թշուառ կ'զդայի չկրնալ աղօ-
թելուս համար ։ բայց ուր ամբարտառնու-
թիւն կը տիրէ ։ հան մարդ ինքզինքէն զար

ուրիշ աստված չկրնար գտնել :

Կուղէի վշտահար ծնողքն գերազոյն մը-
խիթարչի մը յանձնել . եւ ես դադրեր էի անոր
հաւատալէ :

այս որ զանուր զանձնել բարեւածուն և ու-
ղաց ուն : բայց ովն ամենուառ ու մեծապես իր
առջապահ գումբ ու մեծ ու ուժուած ուժու-
ան չափ նշանակ առջապահ առջապահ բար-
եւ զանուր :

ԳԼՈՒԽ ԾԳ

Ե միաբանութեանը յա մարմուտածաւուն
է ուսի մեջ առ զանձնութեանը ունախաւ :

առի զանուր առջապահ օճախութեանը առջապահ
առջապահ առջապահ մասնաւուն առջապահ

Առաւտեան ժամը իննին մեզ մակոյեկ մը
դրին , Մարտիչէլլի ու զիս , քաղաքը տանելու
համար : Մակոյկը Տօմին⁴ պալտուին մօտեցաւ
եւ բանտը ելանք : Մեզ այն սենեակը դրին ,
ուր քանի մը օր առաջ Պ. Քարօրալի կը նստէր :
Չեմ զիտեր այս վերջինն ուր տարուեր էր :
Խն կտմ տամն կալանաւոր նստած էին հոն
մեզ պահպանելու համար . եւ մենք ալ ճեմե-
լով հրապարակը ելնելու վայրկենին կ'սպա-
սէինք : Կէս աւուր միջոցներն հարցաքննիչը

Այսպէս կը կոչուէր Ա ենետիկի մնձ դուք -

եկաւ մեզ իմացնոց թէ պիտի երթայինք Բը-
ժիշկն ալ եկաւ եւ մեզի առաջարկեց որ դա-
ւաթ մը անանխոյ ջուրիսմենք Ծնողունեցինք
եւ շնորհակալ եղանք իրեն այս հոգածութեա-
նը եւ մանաւանդ գթութեանը համար որ բա-
րի ծերունին կը ցուցընէր մեր վրայ ։ Այս բը-
ժիշկը Տոքթոր Տոսմօն էր ։ Յետոյ կալանա-
ւորաց գլուխը քովերնիս եկաւ, երկաթեայ ձե-
ռակասիներ դրաւ մեզ, եւ դուրս հանեց ։ Միւս
կալանաւորներն ալ քովերնուս կուգային ։

Հսկայից հոյակապ սանդուղքէն վար ի-
ջած ատեննիս՝ Մարինօ Ֆալիէրօ Տօֆը միտ-
քերնիս եկաւ որ այն սանդուղքին վրայ գըլ-
իսատուերէ էր Մեզ այն մեծ կամարայարկ ճամ-
բան մացուցին որպայտատին բակէն Բիածէթ-
թա հրապարակը կը հանէ ։ Հոն համնելնուս
ձախ կողմը դարձանք դէպի լինը ։ Բիածէթ-
թայի մէջ անզը կառավինարանը բարձրացած
էր ։ ուր պիտի ելնէինք Հսկայից սանդուղքէն
մինչեւ կառավինարանը երկու կարգ աւստրի-
ացի զօրական շարուած էր ։ անոնց մէջին ան-
ցանք ։

Կառավինարանին վրայ ելնելնուս բոլոր-
տիքնիս նայեցանք, եւ հոն դումարուած ան-
թիւ ժողովրդեան վրայ սարսափ մը տիրած
տեսանք ։ Հեռուն ուրիշ զօրականներ կը տես-

Նուէին՝ որ խումբ խումբ բաժնուած հրապարակին զանազան կողմերը կ'սպասէին. Ըստն մեղի թէ հոն էին թնդանօթները լցուած, պատրաստուած, եւ պատրոյդները վառած :

Այս Բիածէթթան էր ուր 1820 ին սեպտեմբերի մէջ, լանտարկուելէս ամիս մը առաջ, մուրացկան մը ինձի ըսեր էր . «Այս հրապարակն աղետալի անդ մէ» :

Այն մուրացկանը միտքս եւկաւ, եւ ըստ
մտօքս թէ գուցէ այն բիւրաւոր հանդիսաւես-
ներուն մէջ էր եւ դիս կը ճանչէր:

Աւստրիացի հարիւրապետը պոռաց մեզ
որ պալատին կողմը դառնանք եւ աչքերնիս
վեր վերցընենք : Հնագանդ եցանք, եւ տեսանք
որ պալատին ճեմելիաց ներքեւի կամար-
ներուն տակ դատաստանական սլաշտօնատար
մը կանգնած էր ձեռքը թուղթ մը բռնած, որ
մեր դատավճիռն էր, եւ բարձր ձայնով կար-
դաց :

Խորին լուսւթիւն մը ափրեց մինչեւ սա
խօսքը . Դատավորութեան է առ : Այն ժամանակն
ընդհանուր կարեկցութեան շնչիւն մը ելու
բաղմութեան մէջ : Նորէն լուսւթիւն ափ-
րեց լնիթերցուածին մնացորդը լսելու համար ,
եւ նոր շնչիւն մը ելաւ երբոր սա խօսքերը
կարդացուենան . Ես առաջարկուեմ այս

դուրսել. Մուրանութեալի ժամանակ, եւ Բելլի ժամանակները ուղարկել :

Հարիւրապետն աչք ըրբաւ մեզ որ վար իջնենք : Մենք ալ վար իջանք՝ նորէն անդամ մալ աչքերնիս մեր բոլորտիքին վրայ պողոցնելով : Մեղ նորէն բակը մացուցին, սանդուղութէն վեր հանեցինու վերջին անդամդըրուած սենեակնիս հանեցինու հանկէց ալ Սան Միքելէ տարին .

ԳԼՈՒԽ ԾԴ.

Մենէ առաջ դատապարտուողներն արդէն կուպիանա եւ Արիլադէրի դաշեր էին ոստիկանութեան գործակալի մը հետ : Մեղ տանելու պաշտօնն ալ նոյն գործակալին յանձնուած ըլլալով, ամիս մը անոր ետ դառնալուն սպասեցինք :

Այս միջոցին բոլոր ժամանակա խօսակցու-

թիւն ընելով կամ այլող խօսակցութիւնը լսելով կանցունէի : Ասկէց զատ, Մարօնչէլի իր դրաւոր աշխատութիւնները ինձի կը կարդար, ևս ալ ի բնաներս անոր կը կարդայի : Իրիկուն մը՝ պատռհանէս կա՞եւ ո՞ւնի ողբերգութիւնը կարդացի քանիօվային, ոէ ծիային ևւ Զեղարէ Արքարին : Հետեւեալ իրիկունն ալ ի՞նչ ո՞ւ Ա՞նին կարդացի :

Բայց գիշերը կը դոդոյի, կուլայի, քիչ կը ննջէի կամ բնաւ չէի ննջեր :

Կը փափաքէի, բայց միանդամայն կը վախնայի գիշեալութէ ծնողքս բնչպէս Ասերէին իութեառութեանս լուրը :

Վերջապէս հօրմեսնամայ մը հկաւ : Ո՞րչափ մնած եղաւ արտմութիւնս երբ իմացայթէ վերջին նամակին չուտով չէր դրկուեր, որուն համար այնչափ աղաչերէի հարցաքննչին Տարարադդ հայրս՝ որ միշտ յոյս ունեցեր էր թէ ես անսպարտ կ'արձակուիմ, օր մը Անդամնի կալէթ լրագրուտ առնելով դատապարտութիւնս կարդացեր էր մէջը : Այս գժնդակդէպէս ինք կը պատմեր ինձի, ևւ իր սրտին որչափ կտրառած ըլլալն ալ ինձի կը թողուր երեւակայել :

Ո՞հ . հօրս, մօրս ևւ բոլոր ընտանեացն իրայ զգացած սիստհման կարեկցութիւնս հր-

չափ դիս կը զայրացընէր նամակս ժամանակին
պրկուած չըլլալուն համար ։ Այս յապաղումը
անշուշտ թշնամական դիտաւորութեամբ չէր,
բայց ինձի թուեցաւ թէ դժոխային նմնգու-
թիւն մը կար անոր մէջ , վարօնետ բարբարո-
սութիւն մը , դադանական բաղձանք մը , որպէս
զի դիս զարնող կայծակը մի եւ նոյն սաստկու-
թեամբ անմեղընտանիքս ալ զարնէր : Կուզէի
որ այս երեւակայեալ անզթութիւնը պատժե-
լու համար ծովու չափ արիւն թափելու կարո-
դութիւնունենայի :

Հիմա որ առանց կրից կը խորհրդածեմ ,
այս բանը հաւանական չերեւիր ինձի : Այն յա-
պաղումը՝ անտարակոյս՝ անհոգութենէ զատ-
որիշ պատճառ ունեցած չէ :

Խիստ զայրացած ըլլալուածող ելայ երբոր
լսեցի թէ ընկերներս ճամբայ ելնելնէն առաջ
իրենց Զատիկը պիտի ընէին , եւ զգացի որ ես
ներելու կամք չունենալով պէտք չէր որ ա-
նոնց պէս ընէի : Ո՞հ , եթէ առած ըլլայի սյս
դայթակղութիւնը :

ԳԼՈՒԽ ԾԵ ·

Ա երջապէս ոստիկանութեան դործակալը
հասաւ գերմանիայէն եւ եկաւ մեղի ըսաւ թէ
քիչ օրէն ճամբայ պիտի ելնէինք . եւ աւել-
ցոց .

— Ուրախ եմ , որ ձեզի մխիթարական
լուր մալ տալու բարդաւորութիւնն ունիմ .
Արիլուէրկէն դառնալուս՝ վիէննայի մէջ վ .
կայսրը տեսայ որ ինձի ըսաւ թէ ձեր բանտար-
կութեան օրերը տասներկու ժամ պիտի ըլլան
եւ ոչ քսանուչորս : Ըսել է թէ պատիժը
կէսի իջած էր :

Այս լուրը ետքէն չհաստատուեցաւ պաշ-
տօնական կերպով . բայց դործակալն ալ սուտ
ըսելու երեւոյթ մը չունէր , մանաւանդ որ այս
լուրը դազանի չէր տար մեղ , այլ յանձնաժո-
ղովին հաճութեամբը :

Սակայն ես չկրցայ ուրախ ըլլալ այս լու-
րին վրայ : Իմ մաօքս եօթն ու կէս տարի շըդ-
թայակառ բանտարկութիւնն այ տասնեւ հին-

գէն պակաս սոսկալի չէր . եւ ինձի անհնար
կը թուէր այնչափ երկար ժամանակ ապրիլ :

Առողջութիւնս գէշցեր էր : Կործքս շատ
կը նեղէր զիս . կը հազայի եւ . կը կարծէի թէ
թոքերս հիւանդացած են : Քիչ կուտէի , եւ
այն քիչն ալ չէի մարսեր :

Մարտի 25էն 26 լուսնալու գիշերը ճամ-
բայ ելանք : Թոյլտուութիւն եղաւ մեղ պաղ-
տուելու մեր բարեկամ Տոքթոր Զէղարէ Արմա-
րիին հետ : Ետքը կալանաւոր մը աջ թեւէն ձախ
ուաքիս շղթայ մը անցուց որ չկրնանք վախչիլ :
Մակոյլ մը նստանք եւ պահապաներնիս թիա-
վարելով Ֆուզինա տարին մեղ :

Հօն երկու պատրաստ կառք գտանք : Ռէ-
ծիա եւ Քանտվա մէկին մէջ նստան , ես ալ Մա-
րտնչէլլիի հետ միւսին մէջ նստայ : Առաջինին
մէջ դործակալլ նստած էր իր երկու բանտարկ-
եաներով : Երկրորդին մէջ ալ իր երկրորդը
նստած էր մեր հետ : Վեց կամ եօթն ոստիկա-
նութեան զինուորներ՝ սուրերով եւ հրացան-
ներով զինեալ՝ ուղեկից էին մեզ , ոմանք կառ-
քերուն մէջ նստած , ոմանք ալ կառավարին
նստարանին վրայ :

Թէպէտ միշտ դառնէ հայրենի քէն տարա-
բաղզութեամբ մեկնելու հարկադրիլը . բայց
մեկնիլ շղթայակապ , սարսափելի լլիմաներու .

տակ երթալ նստելու եւ տարիներով չարչար-
ուելու համար, կալանառուրներէ շրջապատ-
եալ, այն աստիճանն դժնդակ բանէ որ խօս-
քով չկընար նկարագրուիլ :

Ալպեան լեռները չանցած՝ աղքս ժամէ 'ի
ժամ աւելի սիրելի կըլլար ինձ որովհետեւ ա-
մեն տեղ ամեն դէմերնիս ելլողները գութ կը
ցուցընէին մեր վրայ . ամեն քաղաքներու եւ
մինչեւ ամենէն փոքրիկ գեղերու մէջ՝ ամեն
մարդ մեր դատապարտոթիւնը քանի մը շա-
րաթէ 'ի վեր իմացած ըլլալով մեզ կ'սպասէին :
Անանկ տեղեր եղան, ուր ոստիկանութեան
դործական ու պահապանները դժուարութիւն
կը կրէին մեզ շրջապատող բաղմութիւնը հե-
ռացընելու: Զարմանալի բանէր մեր վրայ ցոյց
արուած համակրութիւնը :

Ուտինէի մէջ անակնկալ բայց քաղցր տե-
սակցութիւն մը պահուած էր մեզ: Պանդոկը
հուսնելնուս, ոստիկանութեան դործակալը ժո-
ղովորդը հեռացընելով բակին դուռը զոցել
տուաւ: Մեղի սենեակ մը որոշեց եւ հրաման
ըրաւ սպասաւորներուն որ մեր ճաշն եւ պառ-
կելու համար ինչոր պէտք էր՝ բերեն: Քիչ մը
ետքը երեք մարդ ներս մտան մէկ մէկ անկո-
ղին շալկած: Ո՛րչափ մեծ եղաւ զարմանքնիս
երբոր տեսանք որ այն երեք մարդոցմէն մէկը

միայն պատող ոկին սպասաւորն էր . միւս երկու-
քը մեր ծանօթներն էին : Անոնց օդնել ձեւա-
ցուցինք անկողինները վար առնելու համար ,
եւ գաղտնաբար ձեռքերնին սեղմեցինք :
Արտսուքը ամենուս ալ սրտէն կը բղխէր Ո՞հ ,
որչափ սրտերնիտ ճմլեցաւ որ այն արտսուքը
համարձակ չէինք կրնար թափել եւ իրար թե-
ւերնուս մէջ սեղմել :

Գործակալները չնշմարեցին այս սրտա-
շարժ տեսարանը . բայց պահապաններէն մէ-
կուն վրայ կատկած ըրի թէ գաղտնիքը կոտ-
հեց , վասն զի բարեսիրտ Տարիօխն իմ ձեռքս
սեղմելլ տեսաւ : Այն պահապանը վենետիկցի
էր : Երկուքիս ալ երեսը նայեցաւ , զոյնը նե-
տեց եւ զիտես թէ վարանեցաւ որ պէտք էր
ձայն հանել թէ ոչ . բայց լուս կեցաւ եւ չը-
տեսնելու զարնելով անդին նայեցաւ : Եթէ չը
կըցաւ գուշակել որ այն անձինքը մեր բարե-
կամներն էին , դոնէ ենթադրեց թէ մնդի ծա-
նօթ սպասաւորներ էին :

ԳԼՈՒԽ ԾԶ.

Առաջաւուն կանուխ մեկնեցանք Ուտիւնէն : Ազնիւ Տարիօ արդէն՝ վտղոցն էր՝ վերարկուին մէջ վախթուած . նորէն մեզ ողջունեց ու խեր մը տեղ ետեւնուս եկաւ : Կառք մ'ալ տհանք որ ետեւնուս եկաւ երկեւ երեք մզոն տեղ , եւ մէջը տիկին մը կար որ թաշկինակիք կերերցընէր : Վերջապէս նորէն Ուտինէ գարձաւ : Ո՞վ էր այն տիկինը , չկրցանք հասկընալ , բայց կասկածեցինք :

Ո՞հ , օրհնեալ ըլլան Աստոծմէ այն աղնիւ սիրտերը որ ամօթէ չեն համարիր թշուառները սիրել : Ա՞հ , ասանիներուն յարգը լաւ կը հանչեմ , վասն զի ձախորդութեանս օրերը այնպիսի վատ մարդիկներ տեսայ որ զիս ուրացան եւ ինձի ուղղուած թշնամանքներու արձադանդ ըլլալէն բան մը շահիլ կարծեցին Բայց այս վերջինները քիչուոր էին , եւ առաջինները շատ :

Կը սխալէի մտածելով թէ խտալիոյ մէջ ամեն տեղ մեղի ցոյց տրուած կարեկցութիւ-

Նը օտար երկիր մտնելնուս պէս պիտի դադրէր Ա՛ն , բարի մարդը ամեն տեղ դժբաղդներուն հայրենակիցն է : Երբոր Աւատրիոյ կլիրիա դաւառը մտանք , նոյն կարեկցութիւնը հոն ալ տեսանք . ամեն մարդ կափառսար մեր վրայ՝ « խեղճ սլարմններ » ըսելով :

Երբեմն նոր երկիր մը մտած ատեն կառքերնիս կանգ առնելու կը պարտաւորուէին՝ իշեւանի տեղ որոշելու համար : Այն ժամանակ ժողովուրդը բոլորտիքնիս կը լցուէր եւ մեղի կարեկցութեան խօսքեր կընէր , որ ստուդիւ սրտէ բղխած խօսքեր էին : Այն աղղին բարեսըրտութիւնը իմ հայրենակիցներուս բարեսըրտութենէն աւելի կը շարժէր սիրտս : Ո՛հ , որչափ չնորհակալ էի ամենուն ալ . ո՞հ , որչափ քաղցր էր մեր նմաններուն դութը , եւ որչափ քաղցր է զանոնք սիրել :

Ասկէ դտած միսիթարութեամբս մինչեւ անգամ թշնամիներս համարուած անձանց դէմ ատելութիւնս կը մնդմանար :

Ո՞վ դիտէ , կըսէի ես ինձի , թէ որ ես անոնց երեսը եւ անոնք ալ իմս մօտէն անսած ըլլայինք , թէ որ ես անոնց սրտին մէջը եւ անոնք ալ իմս կարողալու կարող ըլլայինք , թերեւս կը հարկադրէի համողուելու որ անոնց քով պիտի ատութիւնն չկար . ինչպէս նահեւ անոնք ալ

իմ քովս չպիտի դանէին : Ո՞վ գիտէ թէ այն ժամանակը չպիտի մեղքնայինք իրար ու չպիտի սիրէինք :

Խիստ շատ անգամ, աւաղ, մարդիկ իրար չճանչելնուն համար կատեն . երբոր քանի մը խօսք փոխանակել բաւական էր իրարու բարեկամական ձեռք երկնցընելու համար :

Լուպիանա հասած ատեննիս՝ օր մը կեցանք, ուր Քանովա եւ Ռէծիա մենէ զատուելով բերդը տարուեցան . դիւրին է հասկընալ թէ այս անջատումը որչափ դառն եղաւ չորսերնուն համար ալ :

Լուպիանա հասնելնուս իրիկունք եւ հետեւեալ օրը Պարտնմը քաղաքավարութեամբ քովերնիս եկաւ մեղի ընկերանալու : Ըսին մեղիթէ տեղւոյն քաղաքական ժողովին քարտողարն էր . քարեսիրտ մարդ մը՝ որ զգայուն լրջութեամբ մը կրօնի վրայ կը խօսէր : Խնձի թուեցաւ թէ քահանայ ըլլալու էր : Աւստրիոյ մէջ քահանայներն աշխարհականի կերպարան քով են : Այս անձը յարդանք դրաւող բաց դէմք մը ունէր . ցաւեցայ որ աւելի երկար ծանօթութիւն մը չկրցայ ունենալ անոր հետ, եւ աւելի կը ցաւիմ որ անունը միտքս չպահեցի :

Ո՛րչափ քաղցր պիտի ըլլար ինձի նաեւ

գիտնալ քու անունդ , ով ծաղկահառակ օրի-
որդ , որ Աթերիոց զիւղերուն մէկուն մէջ
ետեւնուս եկար բազմութեան հետ : Երբորմեր
կառքը քանի մը վայրկեան կանդ առաւ , դու
մեզ սղջունեցիր երկու ձեռօք , եւ յետոյ մեկ-
նեցար՝ թաշկինակդ աչքիութ բանած եւ պատա-
նիի մը թեւին կրթնած , որ իր խարտեաշ մա-
զերէն գերմանացի կերեւէր . բայց թերեւս ի-
տալիա ճանապարհորդած ըլլալով մերտարա-
մաղդ ազդին վրայ գորովալի յիշատակ մը կը
պահէր արտին մէջ :

Ո՞րչափ քաղցր պիտի ըլլարինձի զիտնալ
ձեր ամեն մէկուն անունը , պատուական հայ-
րերու մայրեր , որ այլ եւ այլ տեղեր քովիեր-
նիա մօտենալով կը հարցընէիք թէ ծնողք ու-
նէինք , եւ երբոր կիտմանացիք թէ ողջ են , եւ
բեմներնուդ գոյնը դեղնելով կը գոչէիք
ո՛հ . Աստուած ձեզ շուտով այն խեղճ ծե-
րերուն դարձնենէ :

ԳԼՈՒԽ ԾԷ

Ապրիլ 10ին երթալու տեղերնիս հասանք :
Պահանջման մայրաքաղաքնէ , եւ
հոն կը նստի Մօրավիայի եւ Ալէզիայի գաւա-
ռաց կառավարիչը : Վեղեցիկ հովտի մը մէջ
շնուած է , եւ ճոխ երեւոյթ մը ունի : Բազմա-
թիւ չուխայի գործարաններ կային հոն , որոնք
այն ժամանակը խխատ ծաղկեւալ էին եւ յետոյ
ինկան : Բնակչաց թիւը երսուն հազար հոգիի
չափ կար :

Քաղաքին պարիսպներուն մօտ արեւմըտ-
եան կողմը բլուր մը կայ որուն վրայ բարձ-
րացած է Արիլալէրկի չարաշուք դղեակը որ
երբեմն Մօրավիայի իշխաններուն պալատն
էր , եւ հիմա Աւստրիոյ միապետութեան ամե-
նէն խխատ արդելանոցն է : Այս դղեակը քաջա-
մուր բերդ մ'էր , բայց գաղղիացիք Աւսթէր-
լիցի հոչակաւոր պատերազմին ժամանակը
ուրակոծելով առին (Աւսթէրլից գեղը շատ
հեռու չէ այս բերդէն) : Ետքը վերստին ամրոց
ըլլալու կերպով չնորոգուեցաւ . այլ միայն պա-

ըլսպին խարիսալեալ մասը շինուեցաւ : Երեք
հարիւրի չափթշուառ մարդիկ , մեծ մասը դող
ու մարդասպան , հմտ փակուած են , ումանք
էւր եւ միւսներն այլ իշխանութեան դա-
տապարտեալ :

Խէստ բանութեան է աշխատութեան բըռ-
նագատուիլ , ուաքերը շղթայ կրել , մերկ տախ-
տակներու վրայ ննջել , եւ ամենախեղճ ուտե-
լիքով առլրիլ : Խստ բանութեան է՝ աւելի
դժուկակ կերպով կատուիլ , երկաթէ գօտի մը-
մէջը եւ անկէց շղթայ մը ողատին դամուած ,
այն կերպով որ մարդ մեծ դժուարութեամբ
կրնայ դասնալ իրեն անկողին եղող տախտա-
կին բոլորտիքը , Ռւտելիքը նոյն է , թէ եւ օ-
րէնքը ջուր եւ հաց կը հրամայէ :

Մենք որ տէրութեան ոչ է մշանցաւոր դատ-
ուեր էինք՝ Խէստ բանութեան դատապարտուած
էինք :

Բլուրն ՚ի վեր ելած ժամանակնիս աչքեր-
նիս ետեւնիս կը դարձընէինք աշխարհիս մը-
նաս բարով ըսելու . համար , որովհետեւ չէինք
դիտեր թէ այն վիճը՝ որ մեզ ողջ ողջ ողիտիսի կը լ-
նէր՝ վերստին պիտի բացուէր մեղ համար .
Դուրսէն հանդարտ կերեւէի . բայց ներսէն
կը մոնչէի : Պարագ անզը ՚ի իշխուիայութեան
կը դիմէի սիրտսիաղաղելու . համսոր . փիլիսո-

փայտոթեան վիաստերն անբաւական էին ինձի :

Այիննայէն ճամբայ ելած ժամանակնիս
տկար էի : Ճանապարհորդութիւնը զիս աւելի
դէշ վիճակի մէջ ձգեց : Գլուխս ու մարմինս
կը ցաւէր . ջերմը զիս կը լափէր : Այս ֆիզի-
քական ցաւէն բարկութիւնս աւելի կը գըր-
գրէր . անտարակոյս բարկութենէս ալ ֆիզի-
քական ցաւս կը բազմապատկէր :

Մեղ բերդին վերակացուին ձեռքը յանձ-
նեցին : որ մեր անունը չարագործաց տումա-
րին մէջ արձանագրեց : կայսերական գործա-
կալը մենէ բաժնուած ժամանակը կարեկից
սրտիւ համբուրեց մեզ : — Մամնաւորապէս
կապսպրեմ ձեզ , ըստ , որ հրութիւն ընէք .
վասն դի ամենափոքր կանոնազանցութիւնը
խստիւ կը պատժուի բերդին վերակացուէն :

Յանձնարարութիւնը լմննալէ ետեւ , զիս
ու Մարօնչէլլի ստորերկրեայ նրբաշաւիղ մը
տարին , ուր իրարմէ զատ երկու մթին սեն-
եակներ բացուեցան մեզ համար . եւ ամեն մէ-
կըս իր որջին մէջ գոցեցին :

Քիոդանարական ուստի մարդ չն միան
մաս տառապ գումարէ պարզ . անույն մըցած
ու մըցուք .  Առաջ առաջ մարդ ու մարդ ու մարդ ու մարդ

፭፻፻፲፯፻፲፯

Խիստ դժնողակ բանէ , երբոր մէկ մարդ
մը արդէն այնչափ սիրելիներէ բաժնուած է ,
երբոր երկու թշուառ բարեկամ միայն մնա-
ցած են , ո՞հ , այժ , խիստ դժնողակ բան է տա-
կաւին բաժնուիլ : Մարօնչէլի ինէ զատուած
ժամանակը կը տեսնէր որ հիւանդ էի , եւ կու-
լար՝ մտածելով որ զիս յաւիտեան չպիտի տես-
նէր : Ես ալ Մարօնչէլիի վրայ կուլայի , այն ա-
ռոյդ եւ պայծառ երիտասարդութեան ծաղկին
վրայ որ թերեւս յաւիտեան զրկուած էր արե-
ւուն կենսանորոգ ճառագայթներէն : Եւ այն
ծաղիկը , ո՞հ , ի՞նչպէս անցաւ : Այդարեւ տե-
սաւ օր մը լոյսը , բայց աւազ , ի՞նչ վիճակի
մէջ :

Նըրոր զիս մինակ դտայ այն սոսկալի ան-
ձաւին մէջ որուն՝ դուռը փակաղակներով դո-
ցեցին վրայէս, երբոր վերէննեղ պատուհանէ-
մը եկած լուսով նշմարեցի ինձի անկողին ըլ-
լալիք չոր տախտակն եւ պատին դամուած ա-
հագին զդժան, դողալով նստայ այն անկողինին

վրայ, շղթան ձեռքս առի, եւ երկայնութիւնը չափեցի մտածելով որ ինձի համար պատրաստած էր:

Կէս ժամ ետքը բանալիներուն շանչիւնը կը լսեմ. դուս կը բացուի եւ բանուապանը սափոր մը ջուր կը քերէ:

— Ասի խմելի քնիդ է, ըստ տիսուր ձայնով մը, վաղնալ հաց պիտի քերեմ:

— Շնորհակալ եմ, բարի մարդ:

— Ես քարի չեմ:

— Աւելի գէշ քեղի համար, ըսի ցւումամբ: Այս շղթան կարծեմին ձի համար է:

— Այո, պարոն, եթէ հանդարտ չկենաք: Եթէ կատղիք: Եթէ գէշ խօսքեր ըսէք: Բայց եթէ խելօք կենաք, այն ժամանակը միայն ոտքերնիդ շղթայ մը պիտի անցունենք: Գործառորը զանի պատրաստելու զրազած է: —

Եւ ծանր ծանր կը պարտէր սենեակիս մէջ՝ երկայնքին եւ լայնքին՝ իր սոսկալի բանալիներուն արցակը հնչեցընելով: Ես ալ զայրագին աչօք անոր ծեր վատուժ եւ յաղթանդամ անձը կը դիտէի, եւ թէպէտ գէմքին գծագրութիւնը հասարակ չէր: այսու ամենայնիւ ինձի կը թուէր թէ գաղանական խոտութեան մը նողկալի տպաւորութիւնը կար իր վրայ:

Ո՞հ, որչափ սնիրաւ են մարդիկ երբոք

մէկ քանը ըստ երեւութին եւ իրենց ամբար-
հաւան հայսապաշարմանը համեմատ կը դա-
տին : Այն մարդը՝ որ իմ կարծեօքս իրեն զը-
ուարձութիւն կը համարէր իր տիտոր իշխա-
նութիւնը ինձի զգացընելու համար բանալի-
ներն հնչեցընել . այն մարդը՝ որ երկար ժամա-
նակ անգիտութեան վարժուելով լրրացած կը
կարծէի , կարեկցութեան մտածութիւններով
կը յուղուէր , եւ անշուշտ այս զգացումն ինձ-
մէ ծածկելու համար էր որ դաժան եղանակ մը
կուտար իր խօսուածքին . թերեւս ծածկել
կուղէր վախնալով որ տկար կերեւի եւ ևս ալ
իր գիտութեանը անարժան կը գանուիմ . բայց
միանդամայն ենթադրելով որ ևս կրնայի առա-
ւել դժբաղդ մէկ մը ըլլալ քան թէ յանցաւոր ,
ուզեց զայննշմարել տալ ինձի :

Իր ներկայութենէն եւ մանաւանդ այրա-
կան դէմքէն ձանձրանալով մտածեցի զանինը-
ուաստացընել . եւ իշխանաբար ըսի իրեն իբրեւ
սպասաւորի մը . — Զուր մը տուր ինձի : —

Երեսնայեցաւ այնպիսի դէմքով մը որ
ըսել կը թուէր : — Գուսող , հոս պէտք է կոր-
սընցընել հրամայելու սովորոյթը :

Բայց լոեց , իր երկար քամակը ծոեց ,
սափորը գետնէն առաւ ու ինձի տուաւ : Ցե-
սայ որ առած ժամանակը կը դողար . այն դո-

դըիր ծերութեանը տալով, գթոյ եւ միանգամայն ակնածութեան զգացումմը եկաւ եւ գոռողութիւնս բարեխառնեց :

— Քանի՞ տարեկան էք, ըսի իրեն քաղցրութեամբ :

— Սօթանասուն եւ չորս, Պարոն։ Ես արդէն շատ դժբաղդութիւններ տեսած եմ, թէ իմ եւ թէ ուրիշներունը : —

Այս վերջին խօսքը նորէն դողալով ըսաւ երբոր սափորը ձեռքէս կառնէր, եւ մտածեցի որ այս դողը ոչ միայն ծերութեան հետեւանք կրնար ըլլալ, այլ եւ ազնուական գթութեան մը արդիւնք։ Այս դաղափարը ջնջեց սրտէս այն ատելութեան տպաւորութիւնը որ մարդուն առաջին տեսքը ազդեր էր ինձի :

— Ի՞նչէ անուննիդ, ըսի իրեն։

— Բաղդը զիս հեզնել ուզեց՝ մեծ մարդու մը անունը տալով։ Անունս Շիլլէր է : —

Ասկէց սկսելով՝ հասկըցուց ինձի համառօտիւ իր երկիրը, ազգատոնմը, տեսած պատերազմները եւ առած վէրքերը,

Ազգաւ Զուիցցեր էր, գեղացի ընտանիւքէ. զինուորութիւն ըրեր էր Տաճկաց դէմ լաւտոն զօրապետին հրամանին տակ՝ Մարիամ թէրէզայի եւ Յովուէփ Բի օրովը. ետքն ալ Դաղղիոյ դէմ Աւստրիոյ քրանք անեն պատե-

բազմներուն մէջ գտնուեր էր մինչեւ Նաբօւ
լէուի անկումը և

— Այս ժամանակ աշխարհական պատմությունները առաջ են գալիք և առաջ են գալիք աշխարհական պատմությունները —

ԳԼՈՒԽ ԾՐ.

Երրոր առաջ դէշ կարծած մարդու մը վը-
րայ լաւագոյն կարծիք մը ունենալ կ'սկսինք .
այսուհետեւ անոր դէմքը կերպարանքը եւ-
շարժմունքը դիտած ժամանակնիս գիտես
թէ հանստութեան անսխալնչաններ կը գըտ-
նենք . Այս գիւտը ստոյգ է : Շատ կը կասկա-
ծիմ որ մաքի պատրանք մը ըլլայ . վասն զի
նոյն դէմքը . նոյն կերպարանքը , նոյն ձայնը ,
նոյն շարժմունքը առաջ ալ չարութեան ան-
սրխալնչաններ կը թուէին մեզ : Բարոյական
որակութեանց վրայ մեր դատումը փոխեցնուս
աղէս՝ մեր իստրադիմայական դիտութեան հե-
տեւութիւններն ալ կը փոխենք : Ո՞րչափ դէմ-
քեր կան որ կը յարդենք՝ վասն զի դիտենք որ
անոնց տէրերը բարի մարդիկ էին , մինչդեռ
նոյն դէմքերն ուրիշ մարդոց վրայ տեսած ժա-

մանակնիս՝ բնաւ յարգանք ազդելիք յատկու-
թիւն մը չպիտի գտնէինք . նմանապէս ասոր
անգրադարձը : Որ մը շատ խնդացի տիկնոջ մը
վրայ, որ կատիլինայի արձանին դլուխը Կոլա-
տինոսի դլուխը կարծելով, Լուկրետիայի մահ-
ուանը համար Կոլատինոսի զղացած վերմ
տրամութիւնը անոր վրայնկարուած կերեւա-
կայէր : Եւ սակայն այս պատրանքները հասա-
րակ բան մ'են :

Իսել չէ թէ չեն դանուիր այնպիսի պար-
կեցաւ մարդոց դէմքեր՝ որոնք յայտնապէս բա-
րութեան նկարադիրը կը կրեն իրենց գծագ-
րութեանը վրայ, եւ չար մարդոց դէմքեր՝ ո-
րոնք նոյնպէս քաջայայտ կերպով չարու թեան
նկարագիրը կը կրեն . բայց կը հաստատեմ թէ
շատեր ալ կան որոց նկարադիրը խիստ երկ-
րայելի է :

Վերջապէս, ծերունին Շիլէր քիչ մը հա-
մարումը շտկելով իմ առջեւու , սկսայ առաջ-
ուանէն աւելի ու չադրութեամբ դիտել զինքը .
Եւ դադրեցաւ ինձի անհաճոյ ըլլալէ : Ճշմա-
րիաը ըսելով, իր խօսուած քն ալ երբեմն ազ-
նիւ հոգւոյ մը նշաններ ունէր իր խօսութեա-
նը մէջ :

— Զինուորութեան մէջ լիսնապետ էլ .
իլլուէր : իլլուէր հրաժարման ոտքիկ ինչպէս որ

իլը աւեսմէք՝ բանտապամի ախուր տաշտոնը
տուին ինձի . զիտէ Առառւածորաւելի սիրելի
էր ինձի կեանքո վանդի մէջ զնել պատերազ-
մի զաշտերուն վրայ :

Զղջացի այնպէս գոռողաբար իրմէ ջուր
ու զելուս վրայ : — Աիրելի Շիլէր , ըսի ձեռքը
սեղմնելով , դուք պարտալ տեղը կուրանաք .
ևս կը տեսմեմոր դուք բարի մարդ մ'էք . եւ
որովհետեւ այս փորձութիւնը պիտի դայ նղեր
դմխուս , վառք կուտամ Աստուծոյ . որ ձեզ ին-
ձի պահապան տուած է :

Մտիլ ըրաւ այս խօսքս , զլոխոք չարմեց ,
եւ պատասխան տուաւ . ձեռքը ճակատին վրայ
պարտցրնելով իրրեւ դժողակ մասնեւթիւն
մը ունեցող մէկը :

— Ես չար եմ , Պարոն . ինձի երգըւմ մը
ընել տուած են որ երբէք չեմ կրնար աւրել .
իմ ամեն բանտարկեալներուս հետ մի եւ նոյն
անաշառութեամբ վարուելու հարկաւզքեալնմ
առանց անոնց աստիճանին նայելու . առանց որ
եւ է կանոնազանցութեան թույլառութիւն ը-
նելու , մանաւ անոյ տէրութեան զէմ յանցանք
քով բանտարկեալներուն : Ապյարը զիտէ իր ք-
րածը . եւ իմ պարտականութիւնս անոր հա-
զանդիլ է :

— Դուք քաջ մարդ մ'էք , եւ ես ալ կը

յարդեմ ձեր այդ խղճմտան քիւ պարտականութիւն համարած ըլ ։ Այս որ անկեղծ խղճմտան քովկը գործէ ։ կրնայ երբեմն խարսիլ ։ բայց Աստուծոյ առջեւ անմեղէ ։

— Խեղճ Պարոն ։ համբերութիւն ըրէ քեւինձի մինեղանաք ։ Ես երկաթի պէս խիստ եմ իմ պարտականութիւններս կատարելու մասին ։ բայց սիրտս . . . ո՞հ, սիրտս շատ կը ցաւի որ չեմ կրնար թշուառաց օգնութիւն ընել ։ Այս էր որ ըսել կուզէի ձեզի ։

Երկուքիս ալ սիրտը ելած էր ։ Աղաչեց ինձի որ հանդարտ ըլլամ ։ չղայրանամ ուրիշ շատ դատապարտելոց պէս ։ եւ զինքը չհարկադրեմ ինձի խստութիւն ընելու ։

Յետոյ ձայնը խստացուց որպէսօթէ սըրտին ելնելը ինչ ծածկելու համար ։ եւ ըստ ։

— Հիմա պէտք է որ երթամ ։

Ետքը դարձաւ հարցուց ինձի թէ երբէն ի վեր էր որ ունեցած թշուառ հաղս կը ահեւէր ։ եւ մնձկակ յիշոց մը արձակեց բժշկին զէմ որ նոյն իրիկունք ինձի այցելու թեամ չէր դար ։

— Պարոն ։ դուք ձիու տենոք ունիք ըստ ։ Ես կը ճանչնամ ։ Ձեղի դոնէ խոտէ անկողին մը պէտք է գնայց մենք առանց բժշկին հրամանին չենք կրնար առալ ։

Դուրս ելաւ ։ դուը դացեց եւ ես տարած ։

ուեցայ այս կարծը տախտակին վրայ՝ սաստիկ տենդէ եւ կուրծքի ցաւէ տանջուելով . բայց առջի չափ գրգռեալ , առջի չափ մարդոց թշր նսմի չէի , եւ ոչ ալ Աստուծմէ այնչափ հեռացած :

ԳԼՈՒԽ Կ.

Եղանակ ու ուժամբ պարզ : Եղանակ պարզ չու սիրառիլի : Եղանակ պարզ չու սիրառիլի : Եղանակ պարզ չու սիրառիլի :

Իրիկունը քերդին վերատեսուն եկաւ խոզարկութիւն ընելու , Շիլէրին , մէկ ուրիշ յիանապետի եւ երկու պինուորի հետ :

Ամեն օր երեք անգամ խոզարկութիւն կը ըստ , առաւօտուն , իրիկուան եւ կէս դիշերին : Բանտիս ամենն կողմը աչքէ կանցունէին : ամենասիրքը բաները կը քննէին : Յետոյ ստորակարգեալները դժւրս կենէին , եւ վերատեսուցը՝ որ առաւօտուն եւ իրիկուան չէր պակսէր բնաւ այցելութենէն : Քիչ մը կը կենար ու հետա կը խօսակցէր :

Առաջին անգամ որ այս փոքրիկ խումբը տեսայ , կարգէ դուրս մտածութիւն մը եկաւ

ինձի : Դեռ անծանօթ ըլլալով այս անհաճոյ սովորութեան, եւ տեհնդի զառանցանքէն երեւակայոթիւնս շփոթած, կարծեցի թէ զիս խողխողելու կուդային, իսկոյն քովս կեցած երկար շղթան ձեռ քս առի որ քովս մօտեցողին գանկը անով ջախջախեմ :

— Ի՞նչ կընէք, ըստ ինձի վերատեսուչը : Մենք քեզի վնաս մը չունինք . ասիկա լոկ կանոնական այցելութիւն մ'է որ ամեն բանտերուն մէջ կընենք՝ ապահով ըլլալու համար թէ ամեն բան կարդին է : —

Վլ զարանէի հաւատալու . բայց երբոր տեսայ Շիլէրը որ քովս մօտեցաւ եւ բարեկամաբար ձեռքը ինձի երկնցուց, իր հայրական տեսքը զիս քաջալերեց . Վար ձգեցի շղթան եւ անոր ձեռքը բռնեցի :

— Ո՞հ, կրակի պէս տաք է ձեռքը . ըստ վերատեսչին : Այժէ կարելի է նէ՝ գոնէ խոտէ անկողին մը արուէր պարոնին : —

Այս խօսքերն այնպիսի տրտում կերպով եւ համակրութեամբ մը ըստ որ սիրաս խանդաղատեցաւ :

Վերատեսուչը բաղկերակս զնեց եւ կարեկցութիւն ցուցուց ինձի Փաղաքավար մարդ մ'էր . բայց չէր համարձակեր ինքիրմէ բան մը բնելու :

— Հոս ամենն ըան խստութիւն է , մինչև
անգամինձի համար , ըստ . եթէ ինձի տրուած
հրահանգը ըառ առ ըառ չկատարենմ , պաշտօ-
նէս վոնտուելու . վտանգի մէջ կիյնամ : —

Նիւլէր շրթունքը երկնցուց եւ զրաւ կը
դնեմ որ մտքէն կըսէր . — Եթէ ես վերատե-
սուչ ըլլայի , այսչափ երկիւղ չէի ունենար . եւ
եթէ այսպէս հարկին սլահանջմամբն արդարա-
նալիք եւ տէրութեան շահուն ընաւ վնաս չու-
նեցող որոշում մը ընէի , մեծ յանցանք մը ը-
րած չէի կրնար երբէք համարուիլ :

Երբոր մինակ մնացի , սիրտս՝ որ քանի մը
օրէ 'ի վեր աստուածպաշտութեան խորին ըզ-
գացում մը ունենալու անկարող էր , շարժեցաւ
եւ աղօթք ըրի : Ըրած աղօթքս օրհնութիւն
մ'էր Նիւլէրի . յետոյ առ Աստուած ուղղելով
կ'աւելցընէի . — Այնպէս ըրէ , Աստուած իմ ,
որ ուրիշներուն վրայ ալ լմէկ մէկ բարեմաս-
նութիւններ դտնեմ որով սիրելի ըլլան ինձի :
Բանտին ամեն չարչարանքը կընդունիմ , բայց
գոնէ թոյլ տուր որ սիրեմ , եւ ազատէ զիս ,
Աստուած իմ , նմաններս ատելու տանջանքէն:
Կէս զիշերին ոտքի ձայն լոեցի նրաշաւղին
մէջ : Բանալիները շոնչեցին , զուռը բացուե-
ցաւ եւ յիանապետը երկու պահապահով ներս
մտաւ . այցելութիւն ընելու :

— Ո՞ւր է իմ ծեր Շիլէրս, զոչեցի աշրամալից ձայնիւ : Շիլէր նրբաշաւդին մէջ կեցեր էր :

— Հոս եմ, հոս եմ, պատասխանեց : Եւ ներս մանելով քովս եկաւ նորէն, բաղկերակս զննեց, եւ անձկութեամբ վրաս ծռեցաւ երեսս նայելու համար, ինչպէս հայր մը իր հիւանդ որդւոյն մահճին վրայ :

— Եւ հիմա որ կը յիշեմ, վաղը հինգշաբթի է, մումուաց քթին տակէն այս, վաղը հինգշաբթի է :

— Ի՞նչ ըսել կուզէք ատով :

— Ըսել կուզնմ թէ բժիշկը սովորաբար երկոչաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ առաւ օսմերը կուզայ, եւ դժբաղդաբար վաղը չպիտի . զայ :

— Ասոր համար սիրտ մի հատցունէք :

— Սիրտ չհատցունմ մի : Քաղաքին մէջ ամեն մարդ ձեր հոս հասնելուն վրայ կը խօսին : անշուշտ բժիշկն ալ իմացած է : Ինչու համար անգամ մը աւելի չդար : Այնչափ մեծ աշխատութիւն մ'է :

— Ով դիտէ . թերեւս վաղը կուզայ, թէ եւ հինգշաբթի ըլլայ : —

Մերունին ուրիշ խօսք չըրաւ . բայց ձեռքս սեղմեց այնպէս ուժգնութեամբ ոյ

Հարծեցի թէ կոտրուեցաւ, եւ թէ պէտ սառ-
տիկ ցաւեցաւ, բայց եմ զուարձութիւն զգա-
ցի, այն զուարձութիւնը որ տարիիաւոր մը
կ'զգայ երբոր պարելու ատեն սիրուհին դիպ-
ուածով իր ոտքին վրայ կոխէ ։ Ասանկ դիպ-
ուածի մը մէջ մարդ փոխանակ ցաւէն պուա-
զու կը ժպտի իր սիրուհին եւ զինքը երջա-
նիկ կը սեպէ ։

ԳԼՈՒԽ ԿԱ

Այս գիշերը մեծ տառապանօք անցուցի :
Հինդ շարթի առտու ինքովն քո տկարացած ,
ոսկերքս տախտատիներէն կոտրտած եւ մար-
մինս քրտինքի մէջ թաթխուած գտայր Այցել-
լութիւնը եղաւ , բայց վերատեսուչը հետ չէր .
Ժամը իրեն յարմար չըլլալուն համար՝ ետքը
քիչ մը ուշ կուգար :

Ըստ Նիլէրին .— Զեռքդ մարմինիս գըպ-
ցուր եւ տես ինչպէս քրանած եմ: Արդէն քրո-

ախնքս սլաղիլ սկսած է մարմինիս վրայ , եւ
հարկ է որ շատիկս շուտով փոխեմ :

— Այդ անհարինէ , գոչեց վայրագ ձայ-
նով մը : —

Բայց կամացուկ մը նշան ըրաւ ինձի աշ-
քովն ու ձեռօքը : Յիսնապեան ու պահապան-
ները երթալէն ետեւ երկրորդ նշան մը ըրաւ
ու դուռը գոյնեց դնաց :

Վայրկեան մը ետքը եկաւ իր շապիկնե-
րէն մէկը բերելով , որ իմ երկու երկայնու-
թիւնս ունէր :

— Գիչ մը երկայն է ձեզի համար ըսաւ ,
բայց առ այժմ հոս ուրիշ շապիկ չունիմ :

— Շնորհակալ եմ ձենէ , բարեկամ՝ բայց
ես սնտուկ մը լեցուն կտաւիք բերած եմ Արիլ-
պէրկ , կը յուսամ որ իմ շապիկներուս դոր-
ծածութիւնը չեն պլանար ինձ . կը խնդրեմ եր-
թայիք մէկ հատ մը ուղէիք վերատեաչէն :

— Զեր կտաւիքը ձեզի թողուլ արդիլ-
ուած է : Ամեն կիրակի այս տանը շապիկներէն
հատ մը պիտի արուի ձեզի , ինչպէս ուրիշ դա-
տապարտելոց ալ :

— Բարի ծեր , ըսի իրեն , կը տեսնէք ինչ
պիճակի մէջ ըլլալու Հաւանական չէ որ ես այս
տեղէս ողջ դու թու ելնեմ : Ուստի չպիտի կրնամ
երբէք այս ըրած բարիքներնուդ փոխարէն ե-

ըախտագիտութիւնս յայտնել :

— Քառ լիցի , պարոն , քառ լիցի , դոչեց .
վարձատրութեան խօսք մի ընէք այնպիսի մար-
դու մը որ ծառայութիւն մը չկրնար ընել , եւ
որ շատ շատ՝ հիւանդի մը մարմնոյն վրայ վա-
զած քրաինքը սրբելիք կտոր մը միայն փոխ
կրնայ տալ գաղանաբար : —

Եւ իր երկայն շապիկը ուսիս վրայ նետե-
լով գնաց մոմոալով , եւ մոլեգին դղորդմա մք
դուռը դոցեց :

Երկու ժամու չափ ետքը կտոր մը սեւ հաց
բերաւ :

— Ահա երկու աւուր հացդ , քսաւ :

Յետոյ ոկսաւ մոմոալով քալել սենեակիս
մէջ :

— Ֆնչ ունիք , ըսի իրեն . ինձի դէմբար-
կացած էք : Փոխ տուած շապիկնիդ ահա ըն-
դունեցի :

— Բժշկին դէմ կը բարկանամ : Այսօր
հինգշաբթիէ թէպէտ , բայց կրնար անգամ մը
գալ ձեզ տեսնել :

— Համբերութիւն , պատախանեցի :

«Համբերութիւն» կըսէի , բայց չէի կրնար
ընաւ . հանգչիւ այն տախտակներուն վրայ՝ ա-
ռանցիսկ բարձ մը ունենալու : Բոլոր ոսկերքու
շարաշար կը ցաւէին :

Ժամը տասնեւ մէկին ձաշս բերուեցաւ
դատապարտեալի մը ձեռօք որուն հետ էր Շիլ-
էր ալ , ծաշը կը բաղկանար երկու երկաթեայ
ամանէ , որոց մէկուն մէջ զղուելի թան մը
կար , միւսին մէջ ալ ընդեղէն կերակուր մը
այնպիսի համնմով մըյարդարուած՝ որուն հո-
տը միայն բաւական էր նողկանք պատճառե-
լու :

Ուզեցի քանի մը դրդալ թան ուտել ,
բայց անհնարին եղաւ :

Նիւթէր կըսէր .— Պէտք է որ ինքնինքնիդ
բռնէք , այս կերակուրներուն վարժուիք . ա-
պա թէ ոչ , ուրիշ շատերու գլխուն եկածը ձե-
ղի ալ կուգայ . քիչ մը հացէ զատ բան շուտել
եւ տեկարանալով մեռնիլ : —

Ուրբաթ առտու եկաւ վերջապէս Տոք-
թոր Պայէր : Տենդ գտաւ վրաս , խոտէ անկո-
ղին մը հրամայեց ինձի համար , եւ պատուիրեց
որ այն ստորերկրեայ տեղէն զիս անպատճառ
հանեն եւ վերի դստիկոնը գնեն : Այս վերջի ը-
սածը անհնար էր . վերի դստիկոնը տեղ չկար .
բայց տեղեկագիր մը այս բանիս համար գըր-
ուելով Մորավիայի եւ Ալէգիայի գաւառաց կա-
ռավարիչ Միթրօվսքի կոմսին որ Պրիւն կը
նստէր . կոմար պատասխանեց թէ հիւանդու-
թիւնը ծանր ըլլալուն համար բժշկին հրամանը

կատարել պէտք էր :

Ինձի տրուած երկրորդ սենեակին մէջքիչ
մը լոյս կը մտնէր, եւ նեղ պատուհանին եր-
կաթեայ վանդակաձողերուն կաչելով կրնայի
տեսնել բերդին առջեւի ձորը, Պրիւնի հովտին
մէկ մասը, արուարձան մը փոքրիկ պարտէզ-
ներով, գերեզմաննոցը, Դէրթօզայի լճակը,
եւ այն անտառախիտ բլուրները որ Աւմթէր-
լիցի դաշտերը մենէ կը բաժնէին :

Այս տեսքը զիս կըզմայլեցընէր : Ո՞հ, որ-
չափ ուրախ սլիտի ըլլայի եթէ կարող ըլլայի
զայն Մարոնչէլիի հետ վայելելու :

ԳԼՈՒԽ ԿԲ.

Այս միջոցին մեր բանտարկեալի հաղուս-
տը կը պատրաստուէր, եւ հինգերորդ օրը իմս
բերին :

Այս հաղուստն էր՝ հաստ կտաւէ բան-
դալոնմը՝ որուն աջ կողմը մոխրաղոյնէր, եւ

ձախ կողմը շէկ . երկայն պատմուճան մը նոյն
գոյներով . բանկոն մը նոյնպէս երկդոյն, բայց
հակադարձ կերպով շինուած , ձախ կողմը
մոխրագոյն եւ աջ կողմը շէկ : Գուլպաները
թանձր բուրդէ էին . շապիկը խծուծի կը-
տաւէ ըլլալուն՝ խայթոցներով լի էր եւ խոր-
դէ մը սարքերութիւն չունէր . նոյն կտաւէն
փողպատ մը : Կոշիկներն աններեկ մորթէ էին
եւ խրացաւոր : Գեղոյրը ճերմակ էր :

Այս համազգեստը կատարեալ ըլլալու հա-
մար ուժքերնիս շղթայ մը որ մէկ սրտւնքէն միւ-
սը կերթար եւ որուն ծայրի օղակները սալի
վրայ տափարակեալ բեւեռներով գամուեցան :

Այս գործողութիւնը ինձի ընող գործաւորը
կարծելով թէ ես գերմանմքէն չէի հասկընար ,
ըստ պահապաններէն մէկուն . — Հիւանդ ըլլա-
լուն համար այս խաղը կրնար խնայուիլ իրեն :
Երկու ամիս չանցած՝ մահուան հրեշտակը պի-
տի գայ ազատէ այս ողորմելին :

— Աստուած տայ , ըսի անոր Գերմաններէն,
Ճեռքս կամաց մը ուսին զարնելով :

Խեղճ մարդը վեր ցատկեց եւ կարմրեցաւ .
յետոյ ըստ ինձի :

— Կը յուսամ որ մարդարէ չեմ ըլլար , եւ
կը փափաքիմ որ ուրիշ հրեշտակ մը ազատէ
Ճեղ :

— Ասանկ ասդրելուս տեղ , մահուան հը-
րեշտակին գալն ալ հաճոյ չթուի՞ր ձեզ , ը-
սի :

Գլխավով « այս քրառ , և մինակիս վրայ
գթալով գնաց :

Եւ արդարեւ յօժարութեամբ յանձն կառ-
նուի մոռնիլ , բայց ինքնինքս սպաններու
կամք չունէի : Կը յուսայի որ թոքերուս ար-
կարութիւնն օր քան զօր աւելնալով զիս կը¹
լմնցընէ : Բայց Աստուած չկամեցաւ : Ճանա-
պարհորդութեան խոնջութենէն հիւանդու-
թիւնս ծանրցեր էր , հանդստութիւնը քիչ մը
դիս սփոփեց :

Գործաւորին դուրս ելնելէն քիչ մը ետքը
նորէն կուանի հարուածներ լսեցի գետնայր-
կէն , Շի՛լէր տակաւին դուրս ելած չէր սենեա-
կէս :

— Մաիկ ըրէք սա կուանարութիւնը ,
ըսի անոր : Անշտագն խեղն Մարտնչէլլիի շը-
թաները կը պամեն : —

Եւ այս խօսքն ըստ ժամանակս : Միլուս
այնպէս ճամփեցաւ , որ գոզդոջեցի , եւ եթէ բա-
րի ծերը զիս չըսնէր կիյնայի : Աէս ժամէնա-
ւելի մնացի այնպիսի . մինակի մը մէջ՝ որ մա-
րելու կը նմանէր , բայց չէր : Չէի կընար խօ-
սիլ , բազկերակս հաղիս կը զարնէր , սկադ

քրտինք մը զիս կողողէր գլխէս մինչեւ ուսուըներս . այսու ամենայնիս Երվանդի ամեն խօսքերը կը լսէի , եւ անցեալին յիշառակն ու ներկային զգացումը բնաւ կորուսած չէի :

Վերատեսչին հրամանն եւ պահորդներուն աչալրջութիւնը մինչեւ այս ժամանակը բոլոր շրջակայ բանտերուն մէջ լուսթիւնպար հերէին : Միայն երեք չորս անգամ իւսալերէն երգերու ձայն լսերէի , բայց անմիջապէս պահնորդները գոչելով լուցուցերէին :

Բազմաթիւ պահորդներ ունեինք մեր պատուհաններուն առջեւի բարձրաւանդակին վրայ եւ մինչեւ մեր բանտերուն նրբաշաւդին մէջ . պահորդ մ'ալ կար որ չարունակ կը պըտըտէր նրբաշաւդին մէջ՝ դուներուն ականջ դնելով եւ ծակերէն ներս նայելով , որպէս զի ձայն չհանուի :

Օր մը , իրիկուան դէմ (ամեն անգամ որ միտքս կը բերեմ , այն վայրկենին կրած որուիս բարախումը կը նորոգի), բարեբաղդ դիպուածով մը պահորդներն ու չաղրութիւն չընելով , քովի բանտէս երդի ձայն մը լսեցի որ մեզմ աւաչով չարունակեց :

Ո՞հ , ինչ ու բախութիւն , ինչ յանկարծական սրամի շարժում մը գրաւեց զիս այն վայրկենին :

Նլայ սնկողնէս , ականջ դրի , եւ երբոր
ձայնը լռեց , չկրցայ տարատուքս լունել :

—Ո՞հ , ով ես դու , տարաբաղդիկ մարդ :
Դոչեցի , ով ես , ըստ ինձի անունու : Ես Ալրիփո
Բէլիքօն եմ :

—Ով Ալրիփո , պատասխանեց դրացիս , քեզ
անձամբ չեմ ճանչեր , բայց չատուց ՚ի վեր քեզ
կը սիրեմ : Պատուհանին քով եկո , եւ խօսակ-
ցինք՝ առանց պահորդներուն ականջ կախե-
լու :

Պատուհանին քով դացի , անունը ըստ
ինձի , եւ քանի մը խօսք փոխանակեցինք :

Անթօնիո Օրօպինի կոմսն էր , Թօվիկօի
մօտ Ֆլութթա գեղը ծնած , քսան եւ իննատա-
րու երիտասարդ մը :

Աւագ . պահորդները չուտով խօսքերնիս
կտրեցին իրենց սպառնալից գոչիւններովը .
Նրբաշաւդին մէջ պտըտող պահորդն ալ իր հը-
րացանին ոտքը ուժվնութեամբ մերթ իմ դը-
րանս , մերթ Օրօպինիի դրանը կը զարնէր :
Մենք չէինք ուղեր , չէինք կրնար հաւզանդիլ :
Սակայն պահորդներուն սպառնալիքներն այն
աստիճան շատցան որ մտիկ լնելու պարտաւո-
րեցանք՝ խօսք տալով իրարութէ պահորդնե-
րը փոխուելու ըլլաննէ նորէն սկսինք :

ԳԼՈՒԽ ԿԳ.

կը յուսայինք, ինչպէս որ եղաւ ալ, թէ
աւելի մեղմ ձայնիւ խօսելով կրնայինք իրա-
րու խօսք լսել, եւ թէ երբեմն կարելից պահ-
նորդներ կրնային գանուիլ որ մեր խօսակ-
ցիւը չնշմարել ձեւացընէին : Շատ փորձեր ը-
նելէ ետեւ՝ վերջապէս յաջողեցանք այն աստի-
ճան մեզմով խօսելու, որ ձայներնիս իրարու-
ականջի կը հասնէր եւ ուրիշներէն չէր լսուէր
կամանլոնի կրնար համարուիլ : Թէ պէտ եր-
բեմն կը պատահէր որ պահնորդներուն մէջ
սուր ականջ ունեցողներ կը գանուէին կամ
մենք մոռնալով ձայներնիս քիչ մը ամուր կը
հանէինք : Այն ժամանակը պահնորդներուն
գոչիւնը, դռներնուա հրացանի տակով հար-
ուածները, եւ որ աւելի գէշն էր՝ խեղճ Շիլ-
լէրին եւ վերատեսչին բարկութիւնը նորէն
կ'ակսէր :

Քիչքիչ մեր ամենն նախազդուշութիւն-
ները կատարելապ ործեցան : Պատ՛հ Ժամերը
այս կամ այն ուղանորդին ներկայութիւնը դի-

տեղով ընտրել սովորեցանք, եւ միշտ ալ խիստ
մեղմ ձայնով կը խօսակցէինք : Զեմ գիտեր
թէ մենք աւելի վարպետ էինք մեր զգուշու-
թիւններուն մէջ, չէ նէ պահնորդները քիչ քիչ
մեղի աչառութիւն ընելու վարժուեցան : Սա
սառյգ է որ ամեն օր բաւական երկարօրէն կը
խօսակցէինք իրարու հետ, եւ տեսուչներէն
մէկն ալ տոիթ չունեցաւ այնուհետեւ մեզ
բռնելու :

Խանդակաթ սիրով կապուեցանք իրարու
հետ : Աէկուս վիշտը կամ մխիթարութիւնը
միւսին վիշտ կամ մխիթարութիւննէր : Ո՞հ
չափ փոխադարձ քաջալերութիւններ կուտա-
յինք իրարու : Ո՞րչափ անգամ ես կամ ան՝ գի-
շերն անքուն անցունելնէս ետև, առաւօտուն
պատուհաննը ելած ժամանակնիս, իրար ող-
ջունած ժամանակնիս, իրարու սիրելի խօսքե-
րը լիած ժամանակնիս, սրտերնուս տխրութիւ-
նը կը մեղմանար եւ քաջալերութիւննիս կա-
ւելնար : Երկուքս ալ ինքինքնիս իրարու կա-
րեւոր կը ճանչէինք, եւ այս համոզմամբ սըր-
տերնուս մէջ քաղցր պէտք մը կ'զգայինք սի-
րելի ըլլալու, եւ այն բերկրութիւնը որ մարդ
կըզգայ մինչեւ անդամձանք վտանգներու մէջ՝
երբոր կրնայ իր նմանին օգնութեան հասնիլ :

Ամեն՝ մէկ խօսակցութիւննիս նորէն սկը-

սելու պէտք մը կը թողուր եւ բացատրութիւն կը հրաւիրէր : Կենդանարար խթան մէր մեր մտքին , երեւակայտթեանը , յիշողութեանը եւ սրտին :

Ի սկզբան՝ Յուլիանոսը միտքս բերելով այս նոր բարեկամիս հաստատամտութեանը վրայ կը կառկածէի : Մինչեւ հիմա , կըսէի ես ինձի , կարծեաց անհամաձայնութիւն չունեցանք , բայց մէկ օրէն միւսը կրնամ անհանոյ ըլլալ իրեն որ եւ է բանի մը մէջ , եւ այն ժամանակը երես կը դարձունէ ինչ :

Այս կասկածս շուտով փարատեցաւ . մոր կարծիքներն ամենն էական կէտերու վրայ կը համաձայնէին : Միայն թէ , բարեկամա՞ ազնիւ զգացումներով վառուած եւ ձախորդութենէ չյաղթուող վեհ սրտի մը հետ՝ քրիստոնէական ամենամաքուր եւ ամենակատարեալ հաւատք մը ունէր , մինչդեռ իմ քովս այն հաւատքը ժամանակէ մը՝ ի վեր խիստ տկարացած էր եւ երբեմն բոլորովին շիջած կը թուէր :

Օրօպօնի իմ տարակոյններս ուղիղ խորհրդածութիւններով եւ եռանդուն բարեկամութեամբ կը ցրէր : Կ'զգայի որ իրաւունք ունէր , եւ կը խոստովանէի , բայց տարակոյնները դարձեալ կուգային : Այսպէս կրլլաց այն ամենն անձանց՝ որոնք Աւետարանը պրտերնուն :

մէջ չաւնին, ողոնք իրենց նմանները կ'ապեն, և իրենց անձին վրայ կը փառնան : Հոդին վայրկեան մը կը նշմարէ ճշմարտութիւնը, բայց իր քմացը յարմար չդտնելով զայն՝ հետեւեալ վայրկենին կը պաղի անկէ, եւ կը ջանայ ուրիշ կողմնայելու :

Օրօպօնի խիստյաջողակ էր ուշադրութիւնը հաստատելու այն պատճառներուն վրայ ու բովածարդ իր թշնամիներուն ներողամիտ տէտք է ըլլայ : Արբոր ինձի առելի եզակ մէկումը վրայ խօսք ընէի : կ'ակաէր վարպետութեամբ մը զանիդագանել, ոչ միայն խորհրդածութիւններով, այլ եւ օրինակներով : Դատ մարդ դիկ վնաս հանուցեր էին իրեն : կը ջաւէր, բայց ամենուն ալ կը ներէր : եւ եթէ կրնար անմնցմէ, մէկուն մէկ բարի գործը պատմել, յօժարութեամբ կը պատմէր :

Մտքիս մէջ ծագած գրգռութիւնը՝ որ զատապարտութենէս՝ ի վեր զիս անկրօն ըրերէր՝ տակաւին, քանի մը շաբաթ տեւեց, յետոյ բուլորովին դադրեցաւ : Օրօպօնի առաքինութիւնը զիս զրաւերէր : անոր հասնելու ճդնելով՝ դոնէ ինքինքն քա անոր շաւզացը վրայ դըրիւ նրբորնորէն զօրութիւն ունեցայ ամեն մարդոց համար անկեղծ ութեամբ ալօթելու եւ մէկու մը դէմ առելութիւն չտածելու, հա-

ւատոյ վրայ ունեցած տարակոյսներո փարա-
տեցան : Ուր ՀԻ-ՌԻ-ՆԻ-Ե- Ե- Ե- Ե- Ե- Ե- :

ԳԼՈՒԽ ԿԴ.

Ճշմարիտը խօսելով, թէպէտ կրած պա-
տիժնիս շատ խիստ եւ զրդոիչ էր, սակայն սա
հազուագիւտ բարեբազզութիւնն ալ ունեինք
որ բոլորտիքնիս եղողները բարի մարդիկ էին։
Մեր դառն վիճակը ուրիշ կերպով չէին կրնար
դիւրացընել՝ բայց միայն բարեսրտութեամբ
եւ ակնածութեամբ . այս ակնածութիւնը ա-
մենուն քոյ ալ կը տեսնէինք . Եթէ քիչ մը
խստութիւն կար ծեր Շիլէիի վրայ, որտին
ազնուութիւնը կը փոխարինէր զայն . Մինչեւ
անդ ամ խեղճ քունտա (դատապարտեալ մը որ
օրը երեք անդամմեր ուտելիքն ու ջուրը կը
բերէր) կըցածին չափ կարեկցութիւն կը ցու-
ցընէր մեղ . Շաբաթը երկու անգամ սենեակ-
նիս կաւլէր . Առաւօտ մը երբոր կաւլէր՝ տես-
նելով որ Շիլէր սենեակին դռնին երկու քայլ

հեռացեր էր, կտոր մը ճերմակ հաց տուալին։
Ճի : Չը նդունեցի, բայց գործվանոք ճեռքը
աեղմնեցի : Այս բարեկամական ցոյցս խանդա-
դատեցուց զանի, եւ աղաւաղ գերմաներէնով
մը (ինքը և են էր) ըստ ինձի . — Պարօն, այն-
չափ քիչ ուտելիք կուտան ձեզ, որ հարկաւ
կը տանջուիք անօթութենէ : —

Հաստատեցի թէ ոչ . բայց հաստատածս
անհաւատալի էր :

Բժիշկը տեսնելով որ մենէ եւ ոչ մէկը
կրնար գարժուիլ մնդի արուած ուտելիքին,
հրամայեց որ Հայութ բանականով կե-
րակրուինք . այն է հիւանդանոցի կանոնով :
Օրը երեք անդամ վորքրիկ եւ թեթեւ թան մը ,
ամենափոքրիկ կոտր մը խորոված դառի միտ
որ մէկ պատառ մը կրնար ըլլալ, եւ երեք ուն-
կիի չափ ճերմակ հաց : Առողջութիւնս օր քան
զօր կազդուրելուն, ախորժակս ալ կաւելնար,
եւ Հայութ բանականով ստուդիու խիստ քիչ կուգար
ինձի : Ուզեցի առողջներուն կերակուրէն ու-
տել, բայց անհնար եղաւ . այն աստիճան կը
դանէի որ բերանս չէի կրնար դնել : Ուստի
հարկազրեցայ քառորդ բաժինով գոհ ըլլա-
լու . ֆարիէն աւելի ժամանակ անօթութեան
տանջանքնինչ անտանելի բան ըլլալը հասկը-
ցայ :

Այս տաճիչանքը աւելի դժուդակ եկաւ մեր
ընկերներէն շատերան, որոնք ինձ աւելի քա-
ջառողջ ըլլալով աւելի առաստ ու տեղիքի վար-
ժուած էին : Շատերը գիտեմ որ հաց ընդունե-
ցին Շիլլէրէն, մեր ծառայութեանը յառկացան
երկու պահուրդներէն եւ մինչեւ անդամ խեղճ
բունտայէն :

— Քաղաքին մէջ կը այս պարունա-
ներուն խիստ քիչ տաելիք կը արուի, ըստ
օր մը սափրիչը, որ գեռահատակ պատանի
մէր եւ մեր վիրաբոյժին աշկերտն էր :

— Ճշմարիտ է ըստենին, պատասխանեցի
քնականաբար :

Հետեւեալ շաբաթ օրը (սափրիչն ամեն
շաբաթ օրերը կուգար) ուղից բաւական մե-
ծութեամբ ճերմակ հաց մը տալ ինձի զաղա-
նաբար : Շիլլէր տեսաւ, բայց չտեսնել ձեւա-
ցուց : Եթէ ստամոքսիս հարցընէի, պէտք էր
որ ընդունէի . բայց չընդունեցի, որպէս զի
խեղճ աղան ուրիշ անդամինձի հաց նուիրնլու
փորձ չընէ, որն որ երթալով կը նար իրեն ծան-
րութիւն մը ըլլալ էն այս դպրութիւն մէջ տանալ ու ան-

Նոյն պատճառուաւ կը մնրժէի նաև : Շիլ-
լէրի նուերները : Քանի մը անգամ խարչած
միտքերտ ինձի՝ աղաչելով որ ուտեմ, եւ եր-
գու մէկընէր որ իրեն որի աք չէր, իու ձարչէն աւ իշխան

ցած էր . եւ ես ընդունէի նէ ուրիշի մը պիտի
տար : Արդարեւ մեծ փափաքանօք կը յօժա-
րէի առնուլ եւ ուտել այն մսին կառը . բայց
կը մտածէի , որ եթէ զայն ընդունէի . Շիլէր ա-
մեն օրինձի ուտելիք տալու պիտի փափաքէր :

Սակայն որ մը պիտակ մը կեռաս , օր մ'ալ
քանի մը տանձ բերելով ինձի , չկրցայ այն պը-
տուղներուն տես քին դիմանալ եւ ընդունեցի :
Բայց զղջացի . վասն զի այնու հետեւ չէր դադ-
բեր ինձի պառողնութիրելէ :

ԳԼՈՒԽ ԿԵ

Առաջին օրերէնորոշուեցաւ որ ամեն մէկը լրս շաբաթը երկու անգամ մէկ մէկ ժամ ճեմելու հանուինք : Ստքը այս միսիթարութիւնը երկու օրն անգամ մը շնորհուեցաւ մեղք . եւ աւելի ետքը ամեն օր , բացի տօնի օրերէն :

Խաղաղանչիւրս զատ զատ նեմելու կեր-
թայինք երկու հրաժանաւոր սրա հնորդներով :

իմ բանառ նրբաշաւողին մէկ ծայրը ըլլալով ,
ձեմնլու ելնէինէ՝ քաղաքական պատճառաւ
դատապարտեալ բոլոր խոպակացւոց բաններուն
առջեւէն կանցնէի , բաց ՚ի Մարօնչէ Աթիւ բան-
աէն որ վարի յարկն էր :

— Գեղեցի՛ կ ձեմք , կըսէին ամեն մէկը
քրթմնէլովիրենց զրանը ծակէն . բայց ինձի
թոյլ չէր արուեր կանդ տանուլ եւ մէկը ող-
ջունել :

Սանդուղքէ մը վար կիշնայինք , բակէ մը
կանցնէինք եւ հարաւի կողմը նայող բարձրա-
ւանդակի մը վրայ կը համենէինք , ուսկից կը
տեսնուէր զրիւմ քաղաքն եւ շրջակայերկրին
մեծ մասը :

Ա երը յիշուած բակին մչ ջ բաղմաթիւ հա-
սարակ դատապարտեալներ կային որ կերթե-
ւակէին իրենց աշխատութեանը համար , կամ
խումբ խումբ խոսակցելով կը ձեւմէին : Մէ-
ջերնին քանի մը խուշացի գողեր կային որ
զիս մեծ յարդանօք կողջունէին ու իրարու կը-
սէին . — Այս մարդը մեղի այէս սրբիկայ չէ , սա-
կայն իր բանապարկութիւնը մերինէն խիստ է :

Եւ արդարեւ ինչ շատ աւելի ազատու-
թիւն ունէին : Կը լսէի այս խօսքերը եւ ուրիշ
շատ խօսքեր , եւ ողջոյննին սիրով կը հատու-
առաջանէի :

Ասոնց մէ մէկը ըստ ինձի անդամ մը... Զեր
ողջոյնը ինձի բարիք կընէ : Անչուշտ երեսս
նայած ատեննիդ կրնաք հասկընալ որսորդկայի
դէմք չունիմ : Դժբաղդ կիրք մը զիս ոճիր մը
գործելու առաջնորդեց . բայց , ոչ , Պարոն ,
ոչ , ես սրիկայ չեմ : —

Եւ սկսաւ արտասուել : Ձեռքս իրեն եր-
կընցուցի , բայց չկրցաւ ոեղօնել . պահապան-
ներս զանի ետ մզեցին , չէ թէ չարակամու-
թեամբ , այլ իրենց արտաած հրահանդին հնա-
զանդելով : Պատուէր եղած էր իրենց որ բնաւ-
մէկը չմօտեցընեն քովս : Այս զատապարտ-
եալները շտատ անդամ ինձի ուղղած խօսքերնին
իրարու լսել կը ձեւացընէին , եւ եթէ պահա-
պաններս նշմարէին որ այն խօսքերն ինձի ուղ-
ղուած էին , կը լուեցընէին :

Այս բակին մէջէննաեւ զանապան վիճա-
կէ անձինք կանցնէին , որք ըերդին բնակիչ-
ներէն չէին , եւ միայն կուդային վերատեսու-
չը կամ մատրանապետը կամ յիսնապետը եւ
կամ տամնապետներէն մէկը տեսնելու .

— Ահա իտալացիներէն մէկը , կըսէին
մեղմ ձայնով , եւ կը կենային ինձի կը նայէին .
Քանի մը անդամալ սա խօսքը լսեցի որ գեր-
մաններէն լեղուով կըսէին , կարծելով թէ չէի
հասկընար . — Այս խեղճ պարոնը չպիտի կրնագ

ծերանալ . արդէն մահը երեսին վրայ է : —

Ստուդիւ , առողջութիւնս քիչ մը ժամանակ շտկուելէ ետեւ նորէն տկարացայ՝ ուտելիքս խիստ քիչ ըլալուն եւ յաճախ ալ ջերմէ բռնուելուս պատճառաւ :

1 ' ե ծ դժուարութիւն կը քաշէի ճեմնլու հանուած ատենս չղթաս կրելու , եւ բարձրաւանդակին վրայ հասած ատենս՝ դալարիներուն վրայ կիյնայիր եւ շատ անդամ հոն նօտած կը մնայի մինչեւ որ ճեմնկլուժամանակս լրանար : Պահնորդները ոտքի վրայ կը կենացին կամ քովս նատենլով հետո կը խօսակցէին : Մէկը որ Գրալ կը կոչուէր՝ Պոհեմիացի էր , եւ թէպէտ խեղճ գեղացի ընտանիքէ մը ծնած էր , սակայն քիչ մը կրթութիւն առած եւ ինքնիրեն ալ կրցածին չափ կատարելագործ ած էր՝ ողջմտութեամբ խորհրդածելով աշխարհի իրերուն վրայ եւ ձեռ քնանցած ամեն զիրքերը կարդալով : Գլօբութօք , Վիէլանս , Կէօթէ . Շիլլէր եւ ուրիշ շատ մը դերմանացի ընտիր հեղինակներ ծանօթէին իրեն : Այս զիրքերէն շատ մը հատուածներ գոց զիտէր , եւ հանձարով ու զգացմանը կարտասանէր : Միւս պահնորդը Լեհացի մ'էր Գուպիձքի անունով , տըգէտ , բայց սիրող եւ ակնածու : Ասոնց ընկերակցութիւնը սիրելի էր ինձի :

Ակերատեածին կինը երկար ժամանակէ ՚ի վեր հիւանդէ էր և որ ըստ օրէ կը հիւծէր : Երբեմն ինքզինք դուրս հանել կռւտար բազմոցով : Չնմ կրն ար ըսել որչափ դորով մնոք մարամնուս վրայ զգացած դութը կը յայտնէր :

Նայուածքը զարմանողի կերպով քաղցր ու երկշուա էր : Եւ թէպէտ երկշուա , այսու ամենայնիւ երբեմն աշխարհ ու հետաքրքիր լիսաւանութեամբ մը իրեն հետ խօսողին աշքին մէջ կը նայէր :

ՅՈՐ մը ըսկ իրեն ժպտելով ։ Պատմք, աբ-
կին, որ այս սիրելի մը ունէի, քիչ մը անոր կը
ամանիք դուք ։

կարմիրեցաւ, եւ լուրջ ու սրտաշարժ
սպարզմտութեամբ մը պատասխանեց .— Ուրիշ
մին զիս մի՛ մոռնաք երրոր մեռնիմ . աղօթե-
ցէք իմիսեղծ հոգւոյս եւ աշխարհի վրայ թո-
ղուցած խեղծ մանր որդեկացն համար : —

Այն օրէն ետեւ չկրցաւ անկողնէն ենել,
եւ ալ չտեսայ դինքը : Գտնիր մը ամիս հիւան-
դութիւն քաշելէ ետեւ մեռաւ :

Երեք արու զաւակ ունէր սիրուն ու դե-
ղեցիկ , ուրիշ մ'ալ դեռ սանդի : Տարաբարդ
կինը շատ անգամ իմ առջևու կը սիրէր դանոնք
եւ կըսէր , — Ո՞վ դիտէ որ կինը մայր պիտի ըլ-
լայ ասոնց ինէ ետեւ : Ո՞հ , ով որ ալ ըլլայ ,
Անուած մոյրական աղիք տայ անոր մինչեւ
անգամ իրմէ չձնած տպայոց համար : — Եւ կու-
լոր :

Հաղար անդամ յիշեցի անոր աղօթքն ու
արտառ քը :

Մեռնելէն ետեւ երրեմն կը համրուրէի
տղայքը , եւ խանգալատաճոք կը կրկնէի այն
մայրական աղօթքը : Կը յիշէի մայրս եւ անոր
դորովագութ սրտէն անշուշտ ինձի համար եր-
կինք ուղղուած աղօթքները , եւ հառաջանօք
կըսէի . — Ո՞հ , աւմիլի երջանիկէ այն մտցրը որ
իր զաւկըները տղայ հառակի մէջ թողլով կը
մեռնի : քան այն մոյրը որ անթիւնեղութիւն-

ներով դանոնք մեծ ցընելէ ետեւ կը տեսնէ որ
ձեռքէն կը քաշեն կառնուն :

Երկու բարեմիտ պառաւներ սովորութիւն
անէին տղայոց քով կենալու . մէ կը վերա-
տեսչին մայրն էր , միւսն հօրաքոյրը : Ասոնք
իմ պատմութիւնս իմանալ ուզեցին . ես ալ
համառօտիւ պատմեցի :

— Ո՞րչափ դժբաղդ ենք , կըսէին անկեղծ
ցաւակցութեամբ մը , որ չենք կրնար ձեզի
ծառայութիւն մը ընել : Բայց աներկբայ ե-
ղիք , որ ձեզի համար կաղօթենք . եւ եթէ օր
մը ձեզի տղատութիւն շնորհուի , մեր ընտան-
եաց համար տօնի օր պիտի ըլլայ :

Այս երկու պառաւներէն առաջնը՝ որ
աւելի յաճախ կը տեսնէի , միսիթարութիւն
տալու համար սքանչելի ճարտարխոսութիւն
մը ունէր : Ըրած միսիթարական խօսքերը որ-
դիական շնորհակալութեամբ մտիկ կընէի , եւ
սրտիս մէջ կը դրոշմուէին :

Բարեսիրտ տիկինը այնպիսի բաներ կըսէր
ինձի որ ես արդէն գիտէի , սակայն նոր բանե-
րու պէս ինձի ազդեցութիւն կընէին : Կըսէր
թէ ձախորդութիւնը մարդս չնուասացըներ ,
եթէ արդէն նուասացած չէ , այլ ընդհակա-
ռակն զանի կը բարձրացընէ . եթէ կարող ըլ-
լայինք Ասուուծոյ խորհրդոցը խելամուա ըլլա-

լու, շատ անգամ յաղթողները, բարեբաղկաները, հարուստները՝ յաղթեալներէն, տառապեալներէն, դժբաղդներէն եւ տնանկներէն աւելի ապերջանիկ պիտի դանէինք. Մարդացեալ Աստուծոյ դժբաղդներուն ցուցըցած յատուկ համակրութիւնը ծանրակշիռ բանմէ՛, եւ այէտքէ փառաւորինք այն խաչովը որի իր աստուածային ուսերուն վրայ կրեց :

Գանք որ, այս երկու բարեսիրտ պառաւները՝ որ տեսած ատենա բերկրութիւն մը կըզգայի, շատ չանցաւ՝ ընտանեկան պատճառներով Սրիլալէրկէն մննեցան Տղայքն ալ դադրեցան այնուհետեւ բարձրաւանդակին վրայ գալէ : Այս կորուստները հրչափ վշտացուցին զիս :

ԳԼՈՒԽ ԿԵ .

Ուոքիս շղթաներէն կրած նեղութիւնս արգելք կըլլար ինձինն ինչելու. եւ հետեւ աբար

առողջութիւնս աւելի խանդարելու պատճառ էը արք Շելլէր կուղէր որ բողոք ընկած էւ իլլ հաստառներթէ բժշկին պարտքն էր շըլթայնը ոտքէս հանել տալ :

Ժամանակ մը ականջ չկախեցի խօսքին, բայց ետքը հարկադրեցայ մտիկ ընելու . աղաջեցի բժշկին որ քիչ մը հանդիսաւ ննջելու համար շղթաներս դոնէ քանի մը օր հանել տայ :

Բժիշկը պատասխանեց թէ աենդս այն աստիճան ստուգական չէր որ կարող ըլլար այս խնդրոյս կատարմանը ջանալու , եւ ըստ թէ հարկ էր շղթայներուն վարժուիլ :

Այս պատասխանը զիս բարկացուց եւ ըստը ջացայ այս անօգուտ խնդիրն ընելուս վրայ :

— Ահա , ըսի Շելլէրին , ձեր խորհուրդին հետեւելով ըրած շահս :

Ճշմարիտը խօսելով , քիչ մը խստութեամբ ըսի այս խօսքը . վասն զի այն բարի մարդը՝ որ նոյնպէս խիստ էր բնութեամբ , վիրաւորեցաւ այս խօսքէս :

— Չեզի ծանր կուղայ , ըսաւ , մերժողական պատասխան ընդունիլ . ինձի ալ ծանր կուղայ ձեր այդպէս խրոխտաբար ինձի հետ վարուիլ :

Այս բերնով շարունակեց խօսքը եւ ինձի քարող մը տուաւ : — Գոռող մարդիկը , ըսաւ :

բան մը ուղեն նէ շզլացուելու , իրենց բան մը
տրուի նէ չընդունելու եւ հաղար կերտ չնշին
ու անտեղի բաներ իրենց ամօթ համարելու վր-
այ կայացած կը կարծեն իրենց մեծութիւնը :
Անմտութիւն . սուտ մեծութիւն , ճշմարիտ
պատկառանաց տղիսութիւնն ճշմարիտ պատ-
կառանքը մեծ մասամբ չար գործերէ ամաչելու
վրայ կը կայանայ : —

Ըստ ու դուրս ելաւ՝ դժոխային շառաչ-
մամբ բանալիներն հնչեցընելով :

Եփոթեցայ մնացի : Եւ սակայն այս գեղ-
ջուկ անկեղծութեան կը հաւնիմ , ըսի ևս ին-
ձի . վասն զի իրնուէրնէրուն , խրատներուն եւ
զթութեանը պէս սրտէն կը բղխի : ճշմարիտ
չըր ըսածը : Ո՞րչափ տկարութիւններ կան որ
պատիւ եւ պատկառանք կը կռչենք , բայց ի-
րոք ամբարտաւանութիւն են :

Ճաշի ժամանակ , Եփլէր դատապարտեալ
քունտան ներս զրկեց ջրով եւ երկու մանր սղը-
նակներով , եւ ինքը դրանս սեմին վրայ կեցաւ .
Ներս կանչեցի :

— Ժամանակ չունիմ , ըսաւ պազ կեր-
պով մը :

Վար իջայ անկողնէս , մօտը դացի եւ ըսի .

— Եթէ կուզէք որ ճաշս հանգարաւ սըր-
ուով ու տեմ , դէմքերնիդ այդպէս տղեղ կեր-

ոլով մի ծամածոէք :

— Եւ ի՞նչ տեսակ դէմք պէտք է ցուցը-
նել ձեզի, հարցուց, եւ դէմքը զուարթացաւ :

— Ուրախ մարդումը, բարեկամի մը դէմք
սպատասխանեցի :

— Կեցցէ՝ ուրախութիւն, գոչեց . եւ թէ-
որ հանգիստ ճաշ ընելու համար՝ խաղալս ալ
կուզէք, ահստատիկ :

Եւ իր վատուժու երկայն սրունքներովն
ակսու ցատկրուել տյնսլէս զուարճալի կերպով,
որ խնդալէն ճաթեցայ : Այ ծիծաղէ՞ն եւ սիրտս
չարժած էր :

ԳԼՈՒԽ ԿԸ

Իրիկուն մը, ես իմ պատու հանս էի , Օրծ-
պօնի ալ իրը, եւ երկուքս ալ անօթութենէ
տանջուելնուս վրայ կը գանգատէինք իրա-
րու : Չայներնիս քիչ մը բարձրացուցինք եւ
պահնարդները գոչեցին : Նոյն մրջոցին դժբագ-

դարար վերատեսուչն անցնելով՝ Շիռէրը կան-
չել տուաւ եւ խստիս յանդիմանեց որպէս թէ
մեզ լուռ պահելու համար ողէտք եղած հսկո-
ղութիւնը չէր ըներ :

Նիլլեր եկաւ բարեկութեամբ դանդառեցաւ ինձի , եւ պատուիրեց որ այսուհեռեւ անդամ մ'ալ չխօսիմ պատուհանէս : Կուզէր որ խօսք տամ :

— Աչ , ըսի , չեմ ուզեր խօսք առաջ ձեզի :

— ԱՇ, ՀԵՇ ԽՈՎՅԱՆ, ՀԵՇ ԽՈՎՅԱՆ, ՊԱՇԵՐ...

տես ինչպէս պատասխան կռւտան . «Ձեմո-
գեր» կըսե՞ն , ինձի՝ որ այս Պարտնին պատճա-
ռաւ նղոված յանդիմանութիւն մը լսեցի հիմա

— Ետու կը ցաւիմ, բարի Շիլէրս, ձեր
կրած յանդիմանութեանը վրայ. ճշմարիտ կը
ցաւիմ. բայց չեմուզեր ոյնպիսի խոստմունք
մը ընել ձեզ, որ՝ աղէկ գիտեմ չայխոի բռնեմ:

— Եւ ինչո՞ւ չպիտի բռնէք :

— Վասն զի չպիտի կրնամ . վասն զի այս
շարունակ առանձնութիւնն այնպիսի անագո-
րուն տանջանք մ'է ինձի համար , որ չպիտի
կրնամ երբէք զիմանալ քանի մը խօսք կո-
կորդէս դուքս թափելու և դրացիէս պատաս-
խան մը առնելու հարկին : Եւ եթէ դրացիս
պատասխան չտայ , պատուհանիս վանդ ակա-
ձողերուն հետ , աչքիս առջևութիւններուն

հետ, օդին մէջ ոլացող թռչնոց հետ պիտի
խօսիմ:

— Չա՞ր առանայ: Հիմա դուք չեք ուղեր
խօսք տալ:

— Ոչ, ոչ, գոչեցի:

Բանալիներուն շառաչուն արցակը դե-
ախնընեանց, ա՞ր առանայ, ա՞ր առանայ, խօսքը
կը կնելով: յետոյ վրաս վազելով ճիտս ինկաւ ու
զիս համրութեց:

— Ուրեմն պէտք է որ մարդկութենէ հը-
րաժարի՞մ այս սինլքոր բանալիներուն համար:
Պարսն, դուք իմ սիրած մարդս էք, եւ գոհ
եմ որ չէք ուղեր այնպիսի խոստմունք մը ը-
նել որ պիտի չկրնաք բռնել: Ես ալնոյնը պի-
տի ընեմ:

Բանալինմբը պետմէն վերուցի ու իրեն
տուի:

— Այս բանալիները, ըսի, ձեր ըսածին
չափ չեւ չեն, որովհետեւ ձեզի պէս համեստ
տպանապետը չկրցան չար կալանաւոր մը ընել:
Եթէ խելքս կարէր որ կարող էին ընե-
լու, ըսաւ, կառնէի մեծերուս կը առնէի ու կը-
սէի: «Եթէ ձեր բնձի տալիք հացը դահճի հաց
պիտի ըլլայ, կերթամ մուրացիանութիւն կը-
նեմ»:

Այս ըսելով գրանինթաշկինակը հանեց,

աչքերը սրբեց, յետոյդէալ ՚ի երկինք բարձ-
րացուց եւ ձեռքերն իրար կցեց աղօթելո-
գիրքով : Ես ալ ձեռքերս իրար կցեցի եւ ա-
նոր պէս լոռեթեամբ աղօթեցի : Կը հասկընար
որ իրեն համար կը բարեմաղթէի, ինչպէս որ
ես ալ քաջդիտէի թէ ան ալ ինձի համար կը
բարեմաղթէր :

գացած ատենը մեղմով մը ըստ ինձի .
— Երբոր Օրօպօնի կոմսին հետ խօսիք , հնար
եղածին չափ ցած ձայնով խօսեցէք : Առով եր-
կու լաւ բան մէկէն ըրած կըլլաք . այսինքն
թէ զիս վերատեսչին գոռումէն կանխայէք ,
եւ թէ ձեր խօսքերը չեն լսուիր , որոնք , հարկ
է ըսել , երբեմն այնոլիսի նիւթերու վրայ են
որիմացուելու ըլլաննէ՝ ձնդ պատժողն աւելի
եւսկը գրագուն —

Վ ստահացուցի զինքը թէ մեր բերնէն քը
նաւ չելնէր այնպիսի խօսք մը՝ որ ո ևւ է իցէ
մէկումը ականջը հասնելով կարենայ մեղի
վնասաբեր ըլլալ :

ԳԼՈՒԽ ԿԹ.

Արդարեւ այս զգուշութիւնն ընելու համար ազդարարութեան պէտք չունէինք : Երկու բանտարկեալիրարու հետ հաղորդակցութեան մտած ժամանակնին խիստ վարպետ են նոր լեզու մը հնարելու որով ամեն բան կրնան ըսել առանց ուրիշ լսողներէ հասկցուելու :

Առաւօտ մը պարտելէ ետ կը դառնայի . օդուստոս ամսոյն եօթնէր : Օրօպօնիի բանտին դուռը բաց մնացեր էր եւ Նիլէր ալ որ ներսն էր՝ իմ գալս չէր լսեր : Պահնորդներս կուզեն առաջ անցնիլ ու դուռը գոցել . ես անոնցմէ առաջ անցնելով բանտէններս վազեցի եւ ինք-դընքս Օրօպօնիի թեւերուն մէջ դտայ :

Նիլէր շփոթեցաւ մնաց . — Չ-՛ սունայ , դոչեց եւ մատովը ինձի սպառնացաւ . բայց աչքը արտասուօք լցուեցաւ եւ հառաչելով գոչեց . Տէր Աստուած , ողորմէ այս խեղճ երիտասարդներուն , ինձի եւ ամեն դժբաղդներուն , դու որ դժբաղդ եղար աշխարհիս վրայ :

Երկու պահնորդներն ալ կուլային : Նըրբաշաւղին մէջի պահնորդն ալ ներս վազելով

ան ալ սկզաւ լալ։ Օրօպօնի կըսէր ինձի։ Այլ վիտ, այս օրը կենացս ամենաքաղցր օրերէն մէկըն է։ Չեմ գիտեր ինչ պատասխան տուի։ Ուրախութիւնն ու բարեկամութիւնը դիս այլ յայլմէ ըրեր էին։

Երբոր Շիլէր պաղատեցաւ մեզի որբաժնուինք իրարմէ, եւ պէտք էր հնազանդիլ. Օրօպօնիի սիրութ փղձկեցաւ ու լալով ըստ ինձի. — Մէկ մ'ալ պիտի տեսնմէնք իրար այս աշխարհիս մէջ։

Եւ արդարեւ չկրցայ տեսմնել զինքը։ Քամը ամիս ետքը իր բանտը դատարկ էր, եւ Օրօպօնի սլառկած էր պատուհանիս առջեւի գերեզմանատան մէջ։

Այս կարճատեւ տեսակցութեան օրէն ետեւ կը թուէր թէ մեր բարեկամութիւնն առաջուանէն աւելի քաղցր էր եւ ջերմ։ Կրնար ըսուիլ թէ աւելի հարկաւոր եղած էինք իրարու։

Օրօպօնի դեղեցիկ եւ ազնուադէմ երիտասարդ մ'էր, բայց դեղնած եւ առողջութիւնը սաստիկ խանդարուած։ Միայն աչքերը լի էին կենդանութեամբ։ Վրան ունեցած սէրս կաւելնար իր նիհարութեանն ու դժունութեանը վրայ զգացած գթովս։ Նոյն զգացումն ունէր ան ալ իմ վրաս. երկու քս ալ ե՛զգայինք

թէ շատ հաւանական էր որ շատ չանցած՝ մենք մէկը միւսին վրայ ապրելու տարաբաղդութիւնը պիտի ունենար :

Քանի մը օր եւ քը Օրօպօնի հիւանդացաւ ես ուրիշ բան չէի ըներ՝ բայց միայն կուլայի եւ կաղօթէի անոր համար։ Քանի մը անդամ տենդէ շարչարուելէ ետեւ՝ քիչ մը ուժ առաւ եւ նորէն կրցաւ պատուհանը ելնելով հետև խօսակցիլ։ Ո՞հ, ի՞նչ մեծ մխիթարութիւն եղաւ ինձի նորէն իր ձայնին մեզմ հնչիւնը լսելու։

— Ինքզինքդ մի խարեր, կըսէր ինձի այս տեսակցութիւննիս քիչ ժամանակի համար է։ Զօրացիր եւ պատրաստուէ զիս կորմնցընելու։ Քո արիութեամբդ զիս ալ արիացու։

“Եոյն միջոցին մեր բանտերուն պատերը ճերմակ կրով ծեփել ուղեցին, եւ այս պատճառաւ մեզ ստորերկրեայ բանտերն իջեցուցին։ Գէշն ան էր որ մեզ իրարու մօտ բանտերու մէջ չդրին։ Նիւկէր կըսէր թէ Օրօպօնի առողջ էր, բայց կը կասկածէի որ ճշմարիտը չէր ըսեր ինձի։ կը վախնայի որ Օրօպօնիի արդէն խիստ տկարացած առողջութիւնը բոլորովին պիտի վատթարանար այն ստորերկրեայ նկուղներուն մէջ։”

Գոնէ այս առթիւ իմ սիրելի Մարօնչէլլիիս մօտ ըլլալու բարեբաղդութիւնն ունենայի։

Ասկայն ձայնը լսեցի : Իրար ողջ ունեցինք երգելով առանց պահնորդներուն աղաղակը մըտիկ ընելու :

Այն օրերը Որիւնի բժշկապետը մեզ այցելութեան եկաւ՝ հաւանականաբար վերատեսչին վիէննա ղրկած տեղեկադիրներուն ուատճառաւ, որոնք կերակրոց անբաւականութենէն մեր վերջին ծայր տկարացած ըլլալը կիսմացընէին, կամ թերեւս բանտին մէջ ըսքօրսիւթիւ ախարը ճարակած ըլլալուն պատճառաւ :

Այցելութեան պատճառը չգիտնալուն, կարծեցի թէ Որոպօնի նորէն հիւանդացած ըլլալով անոր համար եկերէր : Զանի կորսընցընելու երկիւղն անպատճելի մտատանջութիւն մը կուտար ինձի : Այն ժամանակ խորինք սեւամաղձութիւն եւ մնանելու իղձ մը եկաւ վրաս : Անձնատպանութեան խորհուրդը նորէն կը ներկայանար ինձի : Կը մարտնչէի այս չար խորհրդին դէմ բայց կը նմանէի այն պարտասեալ ճանապարհորդին՝ որ թէ եւ իր նըսպատակին համնելու պարտաւորութիւնը կը չի շէ, բայց միանդամայն անյաղթելի պէտք մը կ'զգայ գեանին վրայ տարածուելով հանգչելու :

Խմացերէի թէ թէ ժամանակաւ. այն խաւարչ-

աին որ ջերուն մէկուն մէջ ծեր Պոհեմիացի մը
գլուխը պատերուն զարնելով ինքզինք սպանե-
ներ էր : Անոր պէս ընելու թելադրութիւնը
չէի կրնար մտքէս վանել : Չեմ դիտեր թէ զա-
ռանցանքս մինչեւ այն կէտը չպիտի՞ հաներ ,
թէ որ ումատ մը արխւն թքնելով չկարծէի թէ
մահս մօտեցեր էր : Փառք տուի Աստուծոյ որ
ինքն այս կերպիւ զիս մնացընելու կամք ընե-
լով , կը խնայէր զիս յուսահատական գործէ
մը որուն խելքս հաճութիւն չէր տար :

Բայց Աստուծած ընդ հակառակն զիս ազա-
տել ուղեց : Արխւն թքնելովս թեթեւցան ցա-
ւերս : Այս միջոցին զիս նորէն վերի բրնձը
պարին , եւ հոն տեսնուած պայծառագոյն շոյն
եւ Օրօսլօնիի դրացնութիւնը նորէն կեանքը
սիրելի ըրին ինձի :

ԳԼՈՒԽ Հ .

Իրմէ բաժնուելէս ետեւ կրած սոսկալի
օհւամաղձութիւնս պատմեցի իրեն : Ըստ ին-

ձի թէ ինքն ալ անձնասայանութեան մատ-
ծութիւններու դէմ մաքառեր էր այն օրերը :

— Օգուտ քաղենք, կըսէր, մեզի տրուած
քիչ մը ժամանակէն, եւ կրօնի օգնութեամբը
իրար կաղղուրենք : Աստուծոյ վրայ խօսինք,
զանի սիրելու յորդորենք իրար, յիշեցընենք
իրարու թէ անի արդարութիւն, իմաստու-
թիւն, բարութիւն, դեղեցկութիւն եւ ուրիշ
ամեն սքանչելի վսեմութեանց լրումնէ : Ճըշ-
մարիտ կըսեմ քեզի, մահը ինչ հեռու, չէ : Յա-
ւիտեան երախտապարտ կըլլամ քեզ՝ ևթէ ին-
ձինպատես այս վերջին օրերո այնչափ բարե-
պաշտ ըլլալու : որչափ պէտք էր ըլլայի բոլոր
կենացս մէջ :

Այսուհետեւ մեր խօսակցութիւնները
քրիստոնէական փիլիսոփայութեան վրայ մի-
այն կը դառնային, եւ զանի զդայականաց
խեղճ վարդապետութիւններուն հետ կը բաղ-
դատէինք : Երկու քիս ալ երջանկութիւն մ'էր
քրիստոնէութեան եւ ողջմտութեան մէջ այն-
շափ համաձայնութիւն դանելնիս : Երկու քս
ալ այլ եւ այլ աւետարանական եկեղեցինները
բաղդատելով կը ճանչէինք թէ կաթուղիկէ
եկեղեցին է միայն որ իրօք կրնայ դիմանալ
քննադատութեան, եւ թէ այս եկեղեցին ա-
մենամաքուր հաւատք եւ ամենազօսմբարու-

յական մը կուտուցանէ եւ ոչ մարդկային տղի-
տութեան թշուառ դտումներ :

— Եւ եթէ անհաւասալի դիպուածով մը
մարդկային ընկերութեան մէջ մտնելու ըլ-
լանք, կըսէր Օրօպօնի, աւետարանը չդաւա-
նելու չափ վատ կրնանք ըլլալ, Կրնանք վա-
տարար ակնառութիւն ընել մարդոց, եթէ մէ-
կը ենէ ըսէ թէ բանտը մեր խելքը տկարա-
ցուցեր է, եւ խելքի տկարութեամբ աւելի
կրօնասէր եղեր ենք :

— Ափրելի Օրօպօնի, ըսի իրեն, քու այդ
հարցումդ պատասխանդ ալ կը յայսնէ ինձի,
եւ այդ պատասխանը իմս ալ է : Վատութեան
յետին ծայրն է ինքզինք ուրիշի դատու-
թեանցը գերի ընել, երբոր անոնց ստութեա-
նը համոզուած ենք : Ես չեմ հաւասար, որ դու
կամ ես այդ վատութիւնը երբէք ունենանք:

Այս սրտի զեզումներուն մէջ յանցանք
մը ըրի : Երգում ըրերէի Յուլիանոսին որ իրեն
հետ ունեցած յարսոգերութիւններս եւ իր բուն
անունը երբէք չյայտնեմ մէկումը : Օրօպօնին
պատմեցի, ըսելով : « Աշխարհի մէջ այս-
պիսի բան մը չկրնար վագսչիւ շրթունքներէս .
բայց հոս գերեզմանին մէջն ենք, եւ եթէ
դուքս ելնես նէ ալ, դիտեմ որ քու հաւա-
տարմութեանդ կրնամ վատահիւ : »

Այն համեստ հօգին լուռ կեցաւ :

— Ինչու պատասխան չիս տար , ըստ :

Վերջապէս սկսաւ զիս ծանրապէս կըշատամբեն դաղտնիք մը երեւան հանելուս համար : Ըրած յանդիմանութիւններն որդարէին : Բնաւ որեւ է բարեկամութիւն մը՝ որչափ մտերմական ըլլայ , որչափ առաքինութիւններով դօրացեալ ըլլայ , այսպիսի ուխտադրժութիւնն մը ընելու հրաման չկրնար տալ :

Յայց որովհեան յանցանքը գործուածէր , Օրօպօնի անկէց բարիք մը ծնուց : Ինքը ձանչեր էր Յուլիանոսը եւ անոր մէկ քանի բարի գործերը գիտէր որ ինձի պատմելէն եւ տեւ աւելցուց . « Այս մարդը այնչափ քրիստոնէական գործեր ըրած է , որ իր կրօնատեաց մոլեգնութիւնը չկրնար մինչեւ իր գերեզմանը հասնիլ : Յուսանք , յուսանք որ այնպէս ըլլայ . եւ գուն ալ , Անլիլիօ , սրտանց ներողամիտ եղիր անոր սրտի դառնութեան զառածանքներուն , եւ աղօթէ անոր համտր : »

Օրօպօնիի խօսքերը սուրբ էին ինձի :

ԳԼՈՒԽ ՀԱ.

Այս ամենն խօսակցութիւններս, մերթ Օրօ-
պօնիի, մերթ Շիլէրի եւ մերթ ալ ուրիշներու
հետ՝ օրիս քսան եւ չորս ժամերուն խիստ փո-
քըր մէկ մասը կը դրաւէին . շատ անգամ ալ
կը պատահէր որ առաջինին հետ խօսակցու-
թիւն մը ընել անհնար կը լար :

Ի՞նչ կը նէի այս երկար միայնութեան մէջ :

Ահաւասիկ այն ժամանակը վարած կեան-
քըս : Արշալոյսին կենէի, եւ անկողնիս մնարը
կանգնած՝ պատուհանին երկաթները կը բըռ-
նէի եւ աղօթքս կըսէի : Օրօպօնի ալ արդէն
իր պատուհանն էր կամ շատ չանցած հոն կու-
գար : Իրար ողջունելէ ետեւ՝ երկուքս ալ լը-
ռութեամբ մտքերնիս առ Աստուած կ'ամ-
բառնայինք : Ո՞րչափ բանտերնիս սոսկալի էր,
այնչափ դուրսէն աչքերնուս առջեւ պարզը-
ւած տեսարանը գեղեցիկ էր : Արկինքը, դաշ-
տերն ու լեռները, ձորին մէջի կենդանի արա-
բածոց հեռաւոր շարժումը, գեղացի տղջկանց

ձայները, ծիծաղները, երգերը մնդ կը զուարթացընէին, եւ աւելի քաղցր կերպով կ'զգացընէին մնդ Անոր ներկայութիւնը՝ որ այնչափ վսեմ է իր բարութեանը մէջ եւ որուն օդնութիւնը այնչափ հարկաւոր էր մնդի:

Յետոյ կուգար պահորդներուն առաւօտեան այցելութիւնը: Սենեակին չո՛յս կողմը աչքերնին կը պտըտցնէին՝ տեսնելու համար թէ ամեն բան կարդին էր, եւ շղթայիս ամեն մէկ օղերը դատ դատ կը քննէին՝ հասկընալու համար թէ դիպուածով կամ չար դիտաւորութեամբ կոտրած չըլլայ, կամ մանաւանդ (վասըն դի անհնար էր այն շղթան խզել) իրենց տրուած հրահանգին հաւատարմարար հնագանդելու համար: Եթէ բժշկին դալու օրն էր, Շիլէր կուգար կը հալցընէր թէ զանի տեսնելու պէտք ունէի՞նք, եւ կը նշանակէր:

Այս գործը լմնցընելէ ետեւ, Շիլէր նորէն կուգար Վոնտային հետ որ սենեակները մաքրելու պաշտօնն ունէր:

Քիչ մը ետքը նախաճաշիկնիս կը բերէին, որ կէս ամանով կարմրակերպ հեղուկ մ'էր՝ երեք ամենաբարակ շերտ հացով. ես հացը կուտէի առանց հեղուկը խմելու:

Յետոյ զրոց ընթերցման կը պարապէի: Մորմանէլլի շատ զիրք բերեր էր հոտալիայէն.

միւս ընկերներնիս ալ քիչ շատ բերեր էին, եւ
ամենը մէկէն փոքրիկ քայց ընտիր մատենա-
դարան մը կը կազմէին։ Կը յուսայինք ալ որ
կրնայինք անոնց թիւն առելցընել մեր դրամո-
վը։ Աղերսագիր դրեր էինք կայսեր որ թոյլ-
տութիւն չնորհէ մեր զիրքերը կտրդալու եւ
ուրիշներ գնելու։ պատասխանը դեռ չէր եւ
կած։ քայց Պրիւնի կառավարիչն առ ժամա-
նակեայ կերպով թոյլտուութիւն ըրեր էր ամեն
մէկուս երկերկու զիրք քովերնիս ունենալու,
եւ ուզած ժամանակնիս փոխելու։ Ժամը ին-
նին միջոցները վերատեսուչը կուգար, եւ եթէ
թժիշին ուզուած ըլլար՝ անոր հետ կուգար։

Այս միջոցէն մինչեւ ժամը տաճնեւմէ կը
որ ճաշիս ժամանակն էր՝ տակաւին ժամանակ
կը մնար ինձի ուսման պարագելու։

Այնուհետեւ մինչեւ արեւուն մարը մըտ-
նելը մարդ չէր դար սենեակս։ Այն ժամանակը
Եկեղեցիւ Քունաս կուգային ջուրս փոխելու։
Քիչ մը ետքն ալ վերատեսուչը կուգար քանի՛
մը ալահարդուղներով, եւ սենեակս ու չղթայնե-
րըս մանրաւմամսարար աչքէ կանցունէր։

Օրուան ժամերէն մէկը, մերթ ճաշէն ա-
ռաջ եւ մերթ ետքը, ըստ հաճոյից պահնորդ-
ներուն ճեմելու կերնէի։

Դրիմուան այցելու թեմէն համես, որ հիմա

յիշեցի , Օրոպօնի եւ ես խօսակցելու կելնէ-
լնք , եւ սովորաբար մեր ամեննէն երկար խօ-
սակցութեանց ժամանակն այն էր : Երբեմն ա-
ռաւօտներն ալ կամ ճաշէն անմիջադէս ետքը
կը խօսակցէլնք , բայց շատ անդամ խիստ
կարճ կերպով :

Երբեմն պահնորդները դթալով , «Պարոն-
ներ , քիչ մը առելի ցած ձայնով խօսեցէք , կը-
սէին , ապա թէ ոչ՝ մեղ պատժել կուսաք :

Երբեմն ալ չտեսնելու կուզային . յետոյ
երբոր յիանապետին գալլը կը տեսնէին , կաղա-
չէին մեղի որ լուենք՝ մինչեւ որ երթայ , եւ եր-
բոր երթար՝ կըսէին . «Պարոններ , կընաք հի-
մա խօսակցիլ , բայց հնար և զածին չափ ցած
ձայնիւ : »

Մինչեւ անդամ կը պատահէր որ պահ-
նորդներէն ոմանք մեղի հետ խօսակցելու կը
համարձակէին , մեր հարցմանցը կը պատաս-
խանէին եւ խոալիոյ վրայ լուրեր կուտային :

Երբեմն այնպիսի խօսքեր կընէին որ պա-
տասխան չէինք տար եւ միայն կաղաչէինք որ
լուեն : Կը կատկածէինք , ինչպէս որ բնական
էր , թէ անոնց խօսքերը միշտ աննենգ սրտի
յայտարարութիւններ չէին կընար ըլլալ , եւ
կը վախնայինք թէ մեր սրտին խորհուրդը
համակընալու վարդետոթիւն մը չըլլային : Աս-

կայն աւելի կը յօժարիմ հաւատալ թէ այն բարեսիտ մարդիկն անկեղծ էին :

ԳԼՈՒԽ ՀԲ.

Իրիկուն մը խիստ ներողամիտ պահնորդներ ունենալով, եռ ու Յրօպօնի իրարու հետ խօսած ժամանակնիս ձայներնիս չափաւորելու փոյթ չէինք ըներ : Մարօնչելի իր առորերեկրեայ բանտին պատուհանին փաթթուելով իմացաւ մեր խօսակցիլը եւ ձայնս ալ կրցաւ ճանչնալ : Զկրցաւ ինքզինք բոնել, եւ երդելով ողջունեց զիս : Կը հարցընէրինձի թէ ինչպէս եմ, եւ ինձի հետ մէկ տեղ դրուելու շընորհը դեռ չկրնալ ձեռք բերելուն վրայ զգացած սաստիկ տրտմութիւնը սրտաշարժ խօսքերով կը յայտնէր : Այս չնորհը ետ ալ ինդրեր էի, բայց ոչ Սրիլապէրկի վերատեսու չն եւ ոչ Պրիւնի կառավարիչը չէին համարձակեր իրենցմէ

չնորհելու։ Մեր այս փափաքը կայսեր հաղորդ-
ուերէր, բայց դեռ պատասխան մը չէր եկած։

Այս օրէն՝ ի վեր որ ստորերկրեայ քանտին
մէջ իրար ողջուներ էինք երգելով, վերի բան-
տըն երևելէս ետեւ քանի մը անդամ Մարօնչէլ-
լի երգելը լսեր էի, բայց խօսքերը չէի կրնար
հասկընալ, եւ երկար ալ չէր տեւեր, վասն զի
զի թող չէին տար շարունակել։

Այս անդամ ձայնն առելի բարձրացուց, եւ
շուտով ալ չարդիլուելուն՝ ամեն ըսածը լսեցի։
Չեմ կրնար բացատրել որչափ սիրտս շարժե-
ցաւ։

Պատասխանեցի իրեն, եւ քառորդի մը
չափ խօսակցեցանք։ Դժբաղդաբար, բարձ-
րաւանդակին վրայի պահնորդները փոխուե-
ցան եւ նոր եկողներն այնպէս հաճոյակատար
չէին։ Նորէն երգել սկսանք, բայց պահ-
նորդներուն կատաղի գոշիւններն ու հայհու-
թիւնները մնալ լոեցուցին։

Երեւակայութեանս առջեւ կը բերէի Մա-
րօնչէլլին՝ երկար ժամանակէ ՚ի վեր պառկած
այն ստորերկրեայ մութ բանտին մէջ՝ որ իմի-
նիս հետ բաղդատելով խիստ դժնղակէր։ Կը
մտածէի անոր կրած անըմբերելի տիրութիւ-
նը, առողջութեանը եղած վնասը եւ սիրտս
խորին տրամութեամբ կը ճամլէր։

Վերջապէս սկսայ լալ : բայց թափած
արասուքս չկրցաւ դիսափոփիել : Սաստիկ տենդ
մը եկաւ վրաս՝ սարսափելի դվյու ցաւով մը :
Չկրնալով ինքղինքս ուռքի վրայ բռնել, յար-
դէ անկողնիո վրայ ինկայ : Յուզմունքս աւել-
ցաւ . կուրծքս չարաչար կըցաւէր եւ ջիղերս
սոսկալի կերպով կը ձկաէին : Այն դիշերը
կարծեցի որ սպիտի մնոնիմ :

Հետիւեալ օրը տենդս գաղրած էր եւ
կուրծքիսցաւը մնդմացած : բայց ովեզս կը-
կի՛մէջ էր, եւ չէի կընար գլուխս չարժել ա-
ռանց դմնեայ ցաւ մը գրգռելու :

Վիճակս Օրօպօնիին համկըցոցի : Ան ալ
իր սովորոկանէնտեւի հիւանդ ըլլալը խմացուց
ինձիւ :

— Բարեկամ, ըստ, օրը չատ հեռու չէ, —
ուր երկուքէս մէկը չպիտի կրնայ ալ սպասու-
նը ենել : Ամեն անդամն որ հոս կուդանքիրար
ողջունելու, կրնայ վերջինն ըլլալ : Ուրեմն
երկուքս ալ սպասրաստ կենանք, մէկս մնո-
նելու, մէկս ալ մեր բարեկամին վրայ ասպրե-
լու : —

Իր ձայնը խոռված էր . խկես չէի կրնար
պատասխանել իրեն : Գիշ մը ժամանակ լուռ
կեցանք, յետոյ չարունակեց . — Որչափ եր-
ջանիկ ես որ զերմաներէն դիսնս . դոնէ կրնաս

խոստովանիլ : Ես խաղերէն դիտցող քահանայ մը խնդրեցի եւ չկայըսին Բայց Աստուած կը տեսնէ իմ փափաքս . եւ ճշմարիտը խօսելով չեմ կարծեր որ վերջին անգամ վենետիկ եղած ժամանակս խոստովանելէս 'ի վեր մեծ բեռ մը ունենամ խղճմտանքիս վրայ :

— Ես , ըստ , ընդ հակառակն վենետիկ եզրած ժամանակս խոստովանեցաք , բայց քինալից որտով : Ասի սուրբ խորհուրդները չընդունելէն դէշէ : Բայց թէ որ հիմա քահանայ մը տան ինձի , հաւատա որ արտանց կը խոստովանիմ եւ ամենուն կը ներեմ :

— Երկինք օրհնեն քեզ , զոչեց , մնձ մը խիթարութիւն մը կուտաս ինձի : Երկուքս ալ ինչ որ կրնանքնէ ընենք , այս ընենք , որպէս զիյաւիտենապէս միանանք երջանկութեան մէջ , ինչպէս որ դժբաղդ օրերնուռ մէջ միացեր ենք : —

Հետեւեալ օրը զանի սպասեցի սպասուհանը , եւ չեկաւ : Խմացայ Նիկոլէրէն թէ ծանր հիւանդ էր :

Ութ կտժտամն օր ետքը քիչ մը լաւցաւ եւ պատուհանը ելնելով զիս ողջունեց : Ես ալ հիւանդ էի , բայց դեռ կրնայի ինքնինքս բոնել : Քանի մը ստիւ , ան ալ ես ալ , մէկ մը աղել , մէկ մը դէշ , անցուցինք :

ԳԼՈՒԽ ՀԳ.

Ասանկ կրցայ շարունակել մինչեւ 1825
յունուար 11 : Առաւօտուն թևեթեւ դվառ ցա-
ւով մը անկողնէս ելայ, բայց մարելիք կուզար
վրաս : Արունքներս կը դողացին եւ դժուարաւ-
շունչ կառնէի :

Օրօնոնի ալ քանի մը օրէ 'ի վեր դէշեր եւ
անկողնէն չէր ելներ :

Ծան բերին ինձի, հաղիւ դրդալ մը կերայ
եւ մարեցայ ինկայ :

Քիչ մը ետքը նրբաշաւդին պահնորդնե-
րէն մէկը ըստդիալաց դրանս ծակէն ներս նա-
յելով զիս դետինը տարածուած եւ թանին
սկահը քովս դլտորած կը տեսնէ, եւ մեռած
կարծելով Շիլէրը կը կանչէ :

Վերատեսուչն ալ կուզայ . խելոյն բժիշկը
կը կանչեն, զիս կը վերցընեն անկողնիս մէջ կը
դնեն, եւ դժուարաւ խելքս դլուխս կուզայ :

Բժիշկը կեանքս վտանդի մէջ դտնելով
շղթայներս հանել առւաւ . չեմ դիմել ինչ զօ-

բացուցիչ դեղմը զրեց . բայց ստամոքսս բան
չէր ընդուներ : Գլխուս ցաւն ալ դարհութելի
կերպով կը սաստիանար :

Այս պիհակիս վրայ խոկոյն տեղեկադիր մը
վիշնա ղրկելով՝ զիս ինչ կերպով դարմանե-
լու վրայ հրահանդ խնդրեցին : Պատասխան ե-
կաւ որ զիս հիւանդարանը չտանին , այլ բան-
ական մէջ դարմանեն հիւանդարանի կանոնով :
Ասկէց զատ հրաման կը տրուէր վերասեսչին
որ իր խոհարանէն թան եւ արդանակ տայ ին-
ձի՝ որչափ ժամանակ որ հիւանդութիւնս ծա-
նըր ըլլայ :

Այս վերջին զգուշութիւննառջի բերանը
ահօգուտ եղաւ ինձի : Ոչ մէկ ուտելիք , ոչ
մէկ ըմակելի բերնէս վար չէր երթար : Շաբաթ
մը շարունակ պիհակս ծանրացաւ , եւ գիշեր
ցերեկ կը դառանցէի :

Քրալ եւ Քրուպիցքի հիւանդապահ տըր-
ուեցան ինձի . երկու քն ալ դորովալից կարեկ-
ցութեամբ մը կը նայէին զիս :

Ամեն անդամ որ քիչ մը խելքս գլուխս
կուղար , Քրալ կըսէր . — Պարոն , յոյադ Աս-
տուծոյ վրայ զիր . Աստուած միայն բարի է :

— Խնդրէ Անկէ ինձի համար որ զիս չըը-
ժըշէ , կըսէի , այլ իմ դժբաղդութիւնս ու
մահս իրեւ մեղացս քաւութիւն ընդունէ : —

Յորդորեց զիս որ վերջին թոշակ խնդրեմ :
— Մինչեւ հիմա չխնդրելու սպատճառը
դիսուս տկարութիւնն էր, բսի · բայց մեծ մը-
խիթ արութիւն կը լլայ ինձի սուրբ խորհուրդ-
ներն ընդունիլ :

Գրալ այս խօսքս վերատեսչին խմացուց .
ան այ բանտերուն մատրանապետը դրկեց :

Խոստովանեցայ , հաղորդուեցայ և վեր-
ջին օծում ընդունեցի : Շատ գոհ եղայ այն
քահանայէն : Անունը Աթուրմ էր : Անանկ
խորհրդածութիւնները ըրաւ ինձի Աստուծոյ
արդարութեանը , մարդոց անիրաւութեանը ,
ներելու պարտաւորութեան և աշխարհային
իրաց ունայնութեան վրայ որ հասարակ մտա-
ծութիւններ չէին : Բարձր ու մշակեալ մաքի
մը եւ Աստուծոյ ու ընկերին ճշմարիտ սիրոյն
կենդանի զգացման մը տարաւորութիւնը ու-
նէին :

፭፻፻፬፲፷፻

Առաք խորհութեան ընդունելու համար
ըրած ու շաղը ու թեան ջանքս՝ առջի բերանը
կենացս մնացորդն ալսովառելու պէս թուեցաւ,
բայց ընդ հակառակն ինձի օգուտ ըրաւ՝ խոր
թմբութիւն մը վրաս բերելով, որովնն ջեցի :

Երբոր արթնցայ, ցաւերս քիչ մը թեթեւցած էին, եւ Գրալու Շիլէր քովս տեսնելով, ձեռքերնին ըսնեցի ու շնորհակալ և դայ ինձի տարած խնամքնուն համար :

Նիւթը ըստ . — իմ աչքս հիւանդ տեսնելու վարժուած է : Եթաւ կը դնեմ որ դու չի պիտի մեռնիս :

— Զես կարծեր որ այդը բաժան տիմուր զուգակութիւն մ'է : ըսի :

— Աշ, պատասխանեց : Կինաց թշուառ թիւնները մնձ ին արդարեւ, բայց ան որ ազնուական սրտով եւ համբերութեամբ կը տանի, միշտ օգուտ կը տեսնի, ապրելէ՞ն :

Եւ աւելցուց՝ սկզբ դուք պարփակ, կը

յուսամ որ քիչ օրէն մեծ միսիթարութիւն մը
պիտի ունենաք։ Մարօնչելլին տեսնել կուզէ-
իք, այնպէս չէ։

— Քանի քանի անգամ խնդրեցի, բայց
ի զուր . եւ ալ չեմ համարձակիր յուսալ։

— Յուսացէք, յուսացէք, Պարոն, եւ
խնդրուած քնիդ նորոգեցէք։ —

Արդարեւ նոյն օրը նորոգեցի ։ Վերատե-
սուն ալ նոյնպէս յոյս տուաւ ինձի, եւ աւել-
ցուց թէ ոչ միայն Մարօնչելլի հետ տեսնուիլս
հնարաւոր էր, այլ եւ իրրեւ հիւանդապահ քո-
վը կրնար դրուիլ, եւ ետքն ալ անբաժանե-
լի ընկեր ըլլալ ինձի։

Քաղաքական պատճառաւ քանտարկ-
եալներուն ամենուն ալ առողջութիւնը քիչ
շատ խանգարած ըլլալով, Պրիւնի կառավա-
րիչը խնդրեր էր վիճնայէն որ մեզ երկերկու
հոգի մէկ տեղ դնեն, որպէս զի օդնենք իրա-
րու։

Նմանապէս թոյլառութիւն խնդրեր էի
վերջին մնաք բարով մը ծնողացս դրելու։

Նրկրորդ շաբթուն վերջերը յեղափոխու-
թիւն մը եղաւ հիւանդութեանս մշջ եւ վտան-
գը փարատեցաւ։

Սկսեր էի ոտք ելնել, առաւ տու մը սեն-
եակոքացուեցաւ եւ վերատեսու չը, Շիլլեր եւ

բժիշկը ուրախագին դիմօք ներս մտան և վերատեսուչը ինձի դիմեց ու ըստ : — Հրաման եղած է մեղ որ Մարօնչէլլին ձեզի ընկերութանք եւ ծնողացդ նամակ մը գրելութոյլտուութիւն ընենք : —

Ուրախութենէս շունչս կտրեցաւ եւ մարեցայ ինկայ : Խեղճ վերատեսուչը՝ որ իր բարի որաին անհամբերութեամբը խոհեմութիւնչէր բանեցուցեր, կարծեց թէ մեռայ :

Երբոր իմելքս գլուխս եկաւ, ինձի արուած աւետիսը յիշելով աղաչեցի որ այս մեծ ջնորհը չուշացընեն : Բժիշկը համութիւն տուաւ, եւ Մարօնչէլլի քոլս բերուեցաւ :

Ո՞հ, ի՞նչ քաղցր վայրկեան էր այն : — Տակաւին ողջ ես, գոչեցինք իրարու . բարեկամ, եղբայր, ի՞նչ երջանիկ օր ունինք եղեր տեսնելիք : Փառք Ասաուծոյ : —

Ասկայն մեր անսահման ուրախութեանը վրայ անսահման կարեկցութիւն մը աւելցաւ, Մարօնչէլլի այնչափ չպիտի դարմանար զիս վերջին աստիճան վատած տեմնելուն վրայ . վասն զի զիտէր ծանր հիւանդութիւն քաշած ըլլալս, բայց ես, թէ եւ կը մտածէի կրած նեղութիւնը, այսու ամենայնիւ առաջուան տեսածէս այն աստիճան փոխուած ըլլալը չէի կընար երեւակայել : Հաղիւ կընար ճանչուիլ :

Այս գեղեցիկ եւ առոյգ դէմքը թօշներ, տըլու-
բութենէն, անօթութենէն եւ խաւարչուտ
բանախին տպականեալ օդէն հալիք էր :

Ասելայն քիչ մը կազդուրիլ սկսանք իրար
տեսնելով, իրար լսելով, և մէկմէկու ըսելով
թէ ալ չպիտի բաժնուինք իրարմէ. հհ, որչափ
բաներունէինք իրարու ըսելու, յիշեցընելու,
կրկնելու: Ի՞նչ քաղցր բան էր միասին լալ,
Ո՞րչափ ներդաշնակութիւն կար մեր ամեն
գաղտնաբարներուն մէջ: Ո՞րչափ զոհ էինք հա-
մամիլու ըլլալնու օվրայ կրօնքի մասին, տղի-
տութիւնն ու բարբարութիւնը առելու մա-
սին. բայց նոյնպէս մարդիկ չառելու, տղիտ-
ներուն ու չարերուն վրայ դժալու և անոնց
համար աղօթելու մասին:

፭፻፲፭፻፭፻

Որովհետեւ նամակ գրելու թոյլառութիւնը տիրապէս օրհասականի մը չնորհուածէր որ վերջին բարեւ մը տալ կուզէր իր ընտանեացը, կը վախնայի թէ հիմա նամակս ուրիշ կերպ գրուելուն համար դրկել չուզեն։ Ուստի բաւական սեպեցի միայն խամնդակախ դորովանօք աղաչել ծնողքս, եղբայներս ու քոյրերս որ համբերատար ըլլան վիճակիս, ինչպէս որ ես առ համբերութեամք կը տանիէի։

Այս նամակս դրկուեր էր, ինչպէս որ ետքը իմացայ, երբոր շատ տարինսերէ եաեւ հայրենի յարկս տեսայ։ Այս նամակս էր միայն որ երկարատեւ բանտարկութեանս միջոցին խեղճ ծնողքս կրցեր էին ստանալ։ Խակ ես բնաւ նամակ չեմ ստացած անոնցմէ։ Գրած նամակնին միշտ արգիլուեր մնացեր էին վիչննա։ Տարաբաղդութեան ընկերներս ալ նոյնպէս իրենց ընսանեաց հետյարաբերութենէ զրկուած էին։

Շատ անգամ չնորհ խնդրեցինք դոնէ ուսաման համար թուղթ և մելան ունենալու եւ մեր դրամովը զիրքեր գնելու։ Մեր խնդըռուածքը երբէք լսելի չեղաւ։

Սակայն Պիտիւնի կառավարիչը միշտ թոյլ կուտար մեզ ունեցած դիրքերնիս կարդալու։

Նմանապէս մեր ուտելիքն ալ լաւցընել տուաւ, բայց, աւանդ, շատ շահեւեց։ Թոյլ ալ-

ւեր էր որ մեր ուտելիքը փոխանակ բանտին խոհարանէն ելնելու՝ վերատեսչին խոհարանէն ելնէ . եւ ասոր համար աւելի գումար մը յատկացուցեր էր : Այս բարի անօրէնութիւններն հաստատ չմնացին . բայց քանի որ տեւեցին , բաւական օդուտ տեսայ : Մարօնչելլի ալ քիչ մը կազդուրեցաւ . իսկ տարաբաղդ Օրօպօնիի համար ժամանակն անցած էր : Այս վերջինին ընկեր տրուեր էր նախ Աօլէրա փաստարանը , յետոյ 8 . Ֆօրթինի քահանան :

Երբոր մեզ ասանկ երկերկու հոգի զրին բանահերուն մէջ , պատուհաններէն խօսակցելու արգելքն ալ նորոգեցին , սպառնալով որ որ չհազարդողը նորէն առանձին բանտի մէջ պիտի զրուէր : Այս արգելքը , շխակը խօսելով , երբեմն լուծնցինք իրար ողջունելու համար . բայց երկար խօսակցութիւններ մէկմատ չեղան :

Մարօնչելլիին ու իմ ընաւորութիւնս իրարու քաջայարմար էին : Մէկիս արիութիւնը միւսը կը զօրացընէր : Եթէ մէկս տիրութիւն ունենար եւ իր վիճակին խօսութեանը վրայ բարկանար , միւսը զուարձաբանութիւններով կամ յարմարադէպ խորհրդածութիւններով իր բարեկամը կը զուարթացընէր : Քաղցր ժակիտ մը կուղար միւշտ եւ մեր տիրութիւնը կը բա-

րեխառնէր :

Քանի որ գիրքեր ունէինք, թէ եւ այն-
չափ շատ կարդացեր էինք որ զոց գիտէինք,
սրաերնուու համար քաղցր ճարակ մ'էին . ին-
չու որ այն դիրքերն անսպառ աղբիւր մ'էին
նորանոր դատումներու , նորանոր քննու-
թիւններու , նորանոր բաղդատութիւններու
եւ նորանոր ուղղութեանց : Օրուան մեծ մա-
սը կը կարդացինք եւ լուութեամբ կը խորհր-
դածէինք . միայն ճաշի եւ պարտելու ժամա-
նակ եւ իրիկուները կը խօսակցէինք :

Մարօնչէլլի իր ստորերկրեայ նկուղին մէջ
շատ մը գեղեցիկ ոտանաւորներ գրեր էր . զա-
նոնք կը կարդար ինձի , եւ նորեր կը շինէր :
Ես ալ կը շինէի ու անոր կը կարդայի , եւ յիշո-
ղութիւննիս զանոնք պահելու կը լարժուէր :
Ասանկով սքանչելի գիւրութիւն մը ստացանք
երկար բանասաեղծ ու թիւններ մաքովիս յօ-
րինելու , անհամար անգամ յզկելու , եւ թուղթի
վրայ դրուածի կատարելութեանը հասցընե-
լու : Մարօնչէլլի այս կերպով քիչ քիչ եւ միտ-
քը պահելով հազարաւոր քնարերգական ու
դիւցաղներզ ական տողեր յօրինեց : Ես ալ լե-
ռեւս ողքերդութեանը եւ որիշ այլ եւ
այլ ստեղծարանութիւններ յօրինեցի :

ԳԼՈՒԽ ՀԶ.

Օրօպօնի ձմեռուն ու դարնան հիւանդութիւն քաշելէ ետեւ՝ ամառն աւելի զէջցաւ։ Արիւն կը թքնէր եւ կը ջրգողէք։

Ընթերցողին կը թողում մտածել՝ որչափ դառն եղաւ. մեր կակիծը, երբ որ խեղճ Օրօպօնի կը շիջանէր մնար մօտը, եւ մենք չէինք կը բնար ծակել այն անսադ որուն պատը որ մեզի չէր թողուր զանի տեմնել եւ ձեռքերնէս եկած ըստ պատը իրեն մատուցանել։

Շիլէր լուր կը բերէր անկէ։ Հէզ երիտասարդը դժնեայ չարչարանքներ քաշեց. բայց ցաւը չիրցաւ. անոր քաջասրառութիւնը տկարացընել։ Հոգեւոր գոնութիւնները մատրանապետէն ընդունեց, որ բարեբազդարար դաղղիերէն գիտէր։

1825 յունիս 15ին՝ որիր տօնին օրն էր՝ մեռաւ։ Վախճանէն քանի մը ժամ առաջիր ութսընամեայ հօրը վրայ խօսեցաւ, եւ սիրուը փըղձկելով լացաւ։ Ցետոյինքինք մողվեց ըսելով։

— Յայց ինչու կուլամ իմ սիրելիներուս ամենէն բաղդաւորին վրայ , որ յաւիտենական խաղաղութեան մէջ հետսգալու միանալու վրայ է : —

Եր վերջին Խօսքերն ասոնք եղան .

— Դրույր սրտէ կը ներեմթնամիներուս : —

Տ . Ֆօրթինի զոցեց անոր աչքերը : Այս քահանան Օրօպօնիի մանկութեան բարեկամն էր , եւ բարեպաշտութեան ու դթութեան անձնաւորութիւնն էր :

Խեղճ Օրօպօնի . ի՞նչ մահարեր ցուրտ մը ծաւալեցաւ երակներնուս մէջ՝ երրոր եկան մեղի ըսին թէ մեռաւ . երրոր լսեցինք անոր մարմինը վերցընելու եկողներուն ձայնն ու քալուածքը . եւ երբոր պատուհաննեն տեսանք դանի դերեղման տանող կառքը : Այս կառքը երկու հասարակ դատապարտեալներ կը քաշէին եւ չորս պահնորդ ալ ետեւէն կերթային : Այս ախուր յուղարկաւորութեան աչքովնիս ընկերացանք մինչեւ զերեղմանատոնը կառքը դռնէններս մտաւ եւ անկիւնի մը քով կեցաւ : Հոն էր փոսը :

Քանի մը վայրկեան ետքը՝ կառքը , դատապարտեալներն ու պահնորդները ետ կը դառնային : Ասոնց մէ կը Քրուպիցքին էր , որ ըստ ինձի Կաղնիւ խորհուրդ , որ այսպիս

սի հասարակ մարդումը վրայ զարմանալի է) . — Թաղուած տեղը խնամովն շան դրի, որպէս զի եթէ օր մը իր մէկ աղգականը կամ քարեկամը թոյլտուութիւն ստանայ ոսկրներն հոնկէ վերցընելու եւ իր երկիրը փոխաղբելու, ուր հանգչած ըլլալը կարենայ դժոնել : —

Ո՞րչափ անգամ Օրթագօնի պատուհանէն գերեզմանսատան վրայ նայելով ըսեր էր ինձի .

— Պէտք է որ սա տեղը երթալ փակելու գաղափարին վարժուիմ . սակայն կը խոստովանիմ որ այս գաղափարը կը սոսկացընէ զիս : Կը թուի ինձ թէ այս երկրին մէջ թաղուողը մեր սիրելի թերակղզիին մէջ թաղուածի պէս հանգիստ չըլլար : —

Յետոյ ժպանելով կը գոչէր . — Տղայամը տութիւն . երբոր զդեստ մը հինցած է եւ թողուլ պէտք է, ուր կուղեն նէ թող հոն նետեն : —

Ուրիշ անգամ ալ կըսէր . — Ամեն օր մեռնելու կը պատրաստուիմ, բայց աւելի սիրով յանձն կառնուի եթէ վայրկեան մը հայրենի տունս մտնէի, հօրս ծունկը պազնէի, օրհնութեան խօսք մը բերնէն լսէի եւ յետոյ մեռնէի : —

Եւ հառաջելով կաւելցընէր . — Եթէ այս բաժակը չկրնար ինէ հեռանալ, Աստուած իմ,

քու կամքդ թող ըլլայ : —

Եր կենաց վերջին առաւտոն ալ Քրտլ խաչելութիւն մը իրեն ներկայացընելով, Օրօպօնի զայն համբուրեց ու ըստւ .

— Դու որ Աստուած էիր, դու ալ սոսկացիր մահէն եւ ըաիր . Ե՞՞Կ հուշ է՝ առցյալ բուժութեալ այլ թիւն : Ներէ, Աստուած իմ, եթէ ես ալ նոյնը ըստեմ . բայց կուզեմ նաև քու միւս խօսքերդ ալ կրկնել . բայց ու ուղիւ ես իշխան, ոյւ ուղիւ ու .

ԳԼՈՒԽ ՀԷ .

Օրօպօնիի մնոնելէն ետեւ նորէն հիւանդացայ : Կը կարծէի որ վախճանեալ բարեկամիա քովը ալիստի երթայի, եւ անհամբեր եռանդով մահուան կը բաղձայի : Միայն թէ ալիստի կրնայի՝ առանց կակիծի Մարօնէլլիէն բաժնուիլ :

Եաւ անգամ, երբ ան իր խոտէ, անկողնին,

վրայնստած պիրք կը կարդար կամ կը տաղաւ-
չափէր, կամ թերեւս ինձի պէս ընթերցմամբ
գրադիլ կը կեղծէր եւ՝ մեր թշուառութեանցը
վրայ կը մտածէր, ես տիրապղած սրտիւ անոր
կը նայէի եւ ինքնիրենս կըսէի. — Ո՞րչափ ա-
ւելի տխուր պիտի ըլլայ քու կեանքդ երբոր
մահուան շունչն ինձիդ պէի, երբոր այս սենեա-
կէն զիս վերցընել տահելնին տեսնես, երբոր
աչքդ գերեզմանատան վրայ յառելով ըսես.
Սիլվիօ ալ հոնէ : Եւ սիրտս կը շարժէր այն
խեղճ տպրեալին վրայ, եւ կը մաղթէի որ ա-
նորյարդը ինձի պէս ճանչելու կարող ընկեր
մը դրուէր քովը, կամ լևտուած չարչարանքս
երկնցընելով այն տարաբաղդին ալ չարչարան-
քը վշտակցութեամբ մեղմացընելու քաղցր
պաշտօնը ինձի թողուր :

Զեմ՞նշանակեր քանի անգամ հիւանդու-
թիւններս դացին ու նորէն երեւան ելան : Ա-
նոնց տեւողութեան միջոցին Մարօնչէլլիին
ինձի տարած խնամքը ամենասիրելի եղոր մը
խնամք էին : Գիտէր որ ժամանակ իր խօսքե-
րը կընային զիս սկսվիել, եւ այն ժամանակ
հոգւյս տրամադրութեանը յարմար նիւթ մը
միշտ կը գտնէր, եւ միշտ կը ջանար կամ անոնց
ուժ տալու, կամ քիչ քիչ զանոնք վոխելու :
Անոր սրտէն աւելի աղնիւ սիրտ մը երբէք տե-

սած կամ ճանչած չէի . իսկ հաւասարը խիստ քիչ . Մեծ արդարասիրութիւն մը , մեծ ներողամոռութիւն մը , մեծ վոտահութիւն մը մարդոց առաքինութեանն ու Աստուծոյ օդնութեանը վրայ , նուրբ զգացումմը արուեստից մէջ գեղեցիկը ճանչնալու ևւ սիրելու , բանաստեղծութեամբ ճոխ երեւակայութիւն մը , մէկ խօսքով՝ մտաց եւ սրտի ամենէն սիրուն ձիրքերը միացած էին զանի ինձ սիրելի ընելու համար ,

Չէի մոռնար Օրօպօնին . ամեն օր կը հեծէի անոր մահուանը վրայ . բայց շատ անգամ սիրու ուրախ կը լար խորհելով թէ այն սիրելի բարեկամու հիմա ամեն վիշտերէ ազատ եւ Աստուծոյ զիրկը երջանիկ՝ պէտք էր դոհ ըլլար զիս իրեն չափ սիրելի բարեկամի մը հետ տեսնելով :

Ավ թուէր թէ սրտիս մէջ ձայն մը կը հաւաստէր թէ Օրօպօնի քաւութեան կայանէն ելած էր . այսու ամենայնիւ չէի դադրեր անոր համար աղօթելէ : Քանիս անգամ երազիս մէջ տեսայ զինքը որ ինձի համար կաղօթէր , եւ կը սիրէի հաւասար թէ այն երազները դիպաց արգամիք չէին , այլ անոր պատկերին ստոյգ յայտարարութիւններն էին որ Աստուծած թոյլ կուտար զիս միսիթարելու . համար : Պիտի ծի-

ծաղեցընէի ընթերցողներու՝ եթէ ջանայինկարագրել այն երազներուս կենդանութիւնը, եւ օրերովի իմվրայ թողուցած ճշմարիտ հիացումը:

Բայց կրօնական զգացումներն եւ Մարօնչէլիի մտերիմ բարեկամութիւնն օր քան զօր վշտացս ծանրութիւնը կը թեթեւցընէին: Բոլոր երկիւղս սա էր, որ այս տարաբաղդ երիտասարդը՝ որուն առողջութիւնը այնչափ խանգարուեր էր, թէ եւ ինձի չափ տկարացած չէր, ինէ առաջ զերեզման կերթայ: Ամեն անդամ որ կը հիւանդանար, կը սարսափիէի: Երբոր կը տեսնէի լաւութեան դառնալը, ուրախութիւնը անպատճելի էր:

Գանի կորոնցընելու այս երկիւղս՝ աւելի մեծ ուժ մը կուտար վրան ունեցած գորովանացս . նոյն ազդեցութիւնը կընէր անոր վրայ ալ՝ զիս կորոնցընելու երկիւղը:

Ա՛հ, միակ մնացած սիրելիի մը համար երկիւղի եւ յուսոյ փոփոխակի զգացման մէջ անձառելի քաղցրութիւն մը կայ: Մեր վիճակն ստուգիւ աշխարհի վրայ եղած ամենաթշուառ վիճակներէն մէկն էր, եւ սակայն իրարու վրայ ունեցած անսահման բարեկամութիւննիս ու վարկումնիս՝ մեր տառապանացը մէջ կերպ մը երջանկութիւն կը կազմէր, եւ ճշմարիտը ըսելով՝ լաւ ի՛զդայինք:

ԳԼՈՒԽ ՀԸ.

Ըղձալի էր ինձի որ բանտին մատրանապետը՝ որումէ շատ գոհ եղեր էի առաջին հիւանդութեանս ժամանակ՝ մեզի խոստովանահայր տրուէր, եւ ժամանակ ժամանակ կարենայինք դանի տեսմնել, թէ եւ ծանր հիւանդ չըլլայինք : Փոխանակ անոր յանձնելու այս պաշտօնը, հայր Մկրտիչ անունով Օվոստինեան կրօնաւոր մը մեզի ցուցըցին, մինչեւ որ Ախէննայէն ուրիշ մէկը որոշուէր կտմայս քահանային համար հաւանութիւն դար :

Ալ վախնայի որ այս փոփոխութեան մէջ կորուստ ալիտի ընէի, բայց կը սկալէի, Հայր Մկրտիչ սիրոյ եւ զ ութեան հրեշտակ մ'էր . իր շարժմունքն ու կերպերը խիստ քաղաքավար եւ վայելուչ էին, եւ խիստ նուրբ կը խորհրդածէր մարդկային պարտեաց վրայ :

Աղաչեցինք իրեն որ յաճախ այցելութիւն ընէ մեզ : Ռւստի ամիսն անդամ մը եւ եթէ կարենար աւելի յաճախ կուզար : Քանի մը զիրք ու կը ըերէր մեզ կառավարէին թոյլտուու-

թեամբը , եւ կըսէր իր մնծաւորին կողմէն թէ վանքին գրատունը մնը տրամադրութեաններք եր : Ասի մեծ բարիք մը սլիտի ըլլար մնդ՝ եթէ տեւէր : Սակայն քանի մը ամիս օդուաքաղեցինք :

Խոստովանութենէն ետեւ՝ երկար կը նըստէր ու հետերնիս կը խօսակցէր : Խօսքերուն մէջ տղիդ , վսեմախոհ և մարդու մնծութեանն ու սրբութեանը տարիացող հողի մը կը տեսնուէր : Տարի մը բարեբաղդութիւն ունեցանք իր լոյն ու բարեկամութիւնը վայելելու , եւ երբէք չվրխպեցաւ : Երբէք վանկ մը չելաւ քերնէն որ զինքը՝ փոխանակ հողեւոր պաշտօնէի՝ քաղաքականութեան պաշտօնեայ երեւցընէր : Երբէք չտեսանք ամենափոքր պլակատութիւն մը ամենափափուկ ակնածութեանց մէջ :

Առաջ , ճշմարիտը խօսելով , կը կասկածէի աննկէ . կ'սպասէի որ իր մասց նրբութիւնը տարադէսլ հետազօտութիւններու գործածէ , Պետական բանտարկեալի մը համար խիստ ըընական է այս կասկածը : Բայց որչամի կը միխթարուի մարդ՝ երբորայս կամկածը կը վարատի եւ Աստուծոյ թարդմանին վրայ Աստուծոյ եւ մարդկութեան դատէն դատ որիշ բանի փոյթ չտեսներ :

Հ. Մկրտիչ միսիթ արելու յատուեկ կերպ մը
ունէր խիստ ազգու : Օրինակի համար , բան-
ափն կանոններուն անտանելի խատութեանը
դէմ ժամանակ ժամանակ դայրանալուս համար
ինքվինքս կամբաստանէի խոստովանութեանս
մէջ : Հ. Մկրտիչ նախ զուարթութեամբ եւ
ներելով նեղութիւն քաշելու հարկին վրայ կը
քարոյախօսէր . յետոյ կ'սկսէր իմ վիճակէս
տարրեր վիճակներու թշուառութիւնները կեն-
դանի դոյներով նկարագրեն : Ինքը երկար ժա-
մանակ քաղաքին մէջ եւ գեղերը կեցերէր,
մեծերն ու փոքրերը ճանչերէր , եւ մարդկա-
ցին անփրաւութեանց վրայ մտածերէր . ըն-
դերութեան զանազան կարգերուն կիրքերն
ու բարքերը գերազանց կերպով կը նկարագ-
րէր . ամեն տեղ հզօններ ու տկարներ , հարբա-
տահարողներ ու հարսատահարեալներ կը ցու-
ցընէր ինձի . ամեն տեղ հարկ կը ցուցընէր կամ
մերնմաններն ատելու , կամ ազնուականներու-
զամտութեամբ եւ քաղցր կարեկցութեամբ
սիրելու : Թշուառութեան ընդհանրականու-
թիւնը եւ ձախորդութենէ բարի արդիւնք ք քա-
ղելու կարելիութիւնը ինձի յիշեցընելու հա-
մար պատմած օրինակները կարգէ դուրս բա-
ներ չէին . ընդհակառակն ըստ պատմաման
թշուած իրողութիւններ էին . բայց պատմած

ժամանակին իր խօսքերն այնպիսի ուղղագա-
տութիւն մը , այնպիսի դօրութիւն մը ունէին
որ իր պատմութեանց եզրակացութիւններն
ազգուութեամբ զգայի կընէին ինձի :

Ո՞հ , այո , ամեն անգամ որ անոր դորովա-
լից յանդիմանութիւններն ու աղնիւ խրատնե-
րը կը լսէի , առաքինութեան սիրով կը բորբո-
քէի . մէկու մը դէմ ատելութիւնս չէր մնար ,
նմաններուս ամենէն յետինին համար կեանքս
զոհելու յօժարութիւն կ'զգայի . եւ կօրհնէի
զԱստուած որ դիս մարդ ստեղծեր էր :

Ա՞հ , թշուառ է այն մարդը որ խոստովա-
նութեան վսեմութիւնը չճանչեր . վայ այն
մարդուն որ ոտմիկ չերեւնալու համար զանի
ծաղր ընելու . պարտաւորած կը կարծէ ինք-
զինք : Որովհետեւ ամեն մարդ դիաէ թէ բարի
ըլլալ պէտք է , ուստի բարի ըլլալու յորդո-
րանքն անօգուտ եւ մնը անձնական խորհրդա-
ծութիւններն ու ճահաւոր ընթերցումները մի-
այն բաւական են ըսելը ճշմարիտ չէ : Ո՞չ . մար-
դուն կենդանի խօսքն այնպիսի դօրութիւն մը
ունի , որ ոչ մնը ընթերցումներն եւ ոչ մեր
սեփական մտածութիւնները չեն կրնար ունե-
նալ : Կենդանի խօսքով մարդուն սիրան աւելի
լաւ կերպով կը շարժի , եւ ընդունած տպա-
ւորութիւններն աւելի խոր կըլլան : Ազգոր մը

իսօսքին մէջ կենդանութիւնն եւ ճահաւորութիւնն մը կայ, որ շատ անդամ ունայն տեղը կը փնտռէ մարդ գիրքերու. եւ իր սեփական մը-տածութեանցը մէջ :

ԳԼՈՒԽ ՀԹ.

1824ին սկիզբները վերաստեսուչը՝ որուն գրասենեակը մեր նրբաշաւդին մէկ ծայրն էր՝ ուրիշ աեղ փոխադրեց իր բնակութիւնը, եւ դիւանին սենեակներն եւ ուրիշ հոն դանը-ուածները բանտի փոխուեցան. Հասկըցանք, աւաղ, որ խտալիայէն նոր պետական բան-տարկեաներ կային գալիք :

Յիրաւի շատ չանցաւ երրորդ դատաստա-նաւ, մը դատապարաեաներն հասան, ամենն ալ ինձի բարեկամ կամ ծանօթ : Ո՞հ, երրոր անուննին իմացայ, սիրտս տակն ՚ի վերայ ե-ղաւ : Պօրսիէրի իմ ամենէն հին բարեկամնե-րէս մէկն էր . Քօն ֆալժնիէրիի հետ անկէ եւ-

քը բարեկամացեր էի, բայց բոլորով սրտիւ : Այժէ կարող ըլլայի դժողակադոյն բանտարկութեան կամ ուրիշ որեւէ տանջանաց ինք-զինքս դատասլարտել տալով անոնց պատիմը ես կրելու եւ զիրենք ազատելու, գիտէ Աստուած որ կընէի : Զեմըսեր թէ միայն կեանքս անոնց համար կուտայի . վասն զի, ո՞հ, ի՞նչ է կեանքը տալը . տառապին անկէց աւելի է :

Այն ժամանակն էր որ Հ. Մկրտիչին մխիթարութիւնները մեծապէս պիտանի կրնային ըլլալ ինձ . դժբաղդաբար մէկ մ'ալ թոյլ չըտրուեցաւ իրեն քովերնիս դալ :

Նորէն հրաման եկաւ որ բանտին կանոններն ամենախիստ կերպավ ՚ի դործ դրուին : Այն բարձրաւանդակը որ մեր ճեմելիքն էր, նախ ցցապատ որմով մը դոցուեցաւ, այնպէս որ մարդ չէր կրնար մեղ տեսնել եւ ոչ իսկ հեռուէն դիտակով, եւ ասանկով շրջակայ ըլտրներուն եւ քաղաքին դեղեցիկ տեսարանէն զրկուեցանք : Բայց այս բաւական չէր . յիշեալ բարձրաւանդակը երթալու համար, յնչպէս արդէն ըստ եմ, բակէն պէտք էր անցնիլ, եւ բակին մէջ շատ մարդ կրնար մեղ տեսնել : Այս տեսնելը չըլլալու համար՝ բարձրաւանդակին վրայ պարաելնիս արդիլուեցաւ, եւ ուրիշ խիստ փաքը տեղ մը որոշուեցաւ մեր նրբաչաւդին

կից եւ սենեակներնուս պէս արեւմտտքի դէմ

Չեմ կրնար բայատրել որչափ սիրաս կոտրեց այս փոփոխութիւնը : Բարձրաւանդակին մնդի ընծայած ամեն միախթ արութիւնները չեմ պատմած . վերատեսչին որդեկաց տեսքը , անոնց պարզ եւ դորովալից համրոյրները նոյն իսկ այն տեղ ուր իրենց խեղճ հիւանդ մայրը անսեր էի իր վերջին օրերը . ըրած մէկ քանի խօսակցութիւններս դարբինին հետ՝ որ նոյն պէս հոն կը բնակէր . կիթառ զարնող տանապետի մը ուրախալից երգերն ու երաժշտական տաղանդը . վերջապէս այն անմեղ տարփանքը՝ ոչ խմկամ ընկերին՝ այլ բարեմիտ չունցարուհւոյ մը՝ որ տաննապետի մը կին էր եւ պտուղկը վաճառէր : Այս կինը զարնուեր էր Մարօնչէլլիի :

Արդէն , Մարօնչէլլի հետո զրուելէն առաջ՝ չունցարուհին եւ ան՝ ամեն օր իրար տեսնելով բարեկամութիւն մը հաստատուեր էր մէջերնին : Մարօնչէլլի այնչափ համեստ , աղնիւ եւ անմեղ հոգի մը ունէր , որ բնաւ չէր զիտեր խեղճ չունցարուհին սէր ազդած ըլլալը , եւ ես հասկըցուցի իրին : Առաջ չուղեց հաւատալ խօսքիս , բայց վախնալով որ ես իրաւունք կունենայի , աւելի պաղ կերպով վարչիլ սկսաւ անոր հետ : Այս զդուշութեան ա-

սաւելութիւնը՝ փոխանակ կնոջ տարիանքը
մարելու, կը թուէր թէ կարծարծէր:

Իր սենեակին պատուհանը բարձրաւան-
դակին զետնէն քիչ վեր ըլլալով, քանի մը լաթ-
արեւին չորցընելու կամ ուրիշ որ եւ է գործ
մը ընելու պատճառանօք մեր կողմը կը ցատ-
կէր, ու հոն կեցած մեզի կը նայէր, կամ եթէ
առիթ մը դտնէր՝ խօսակցութիւն կը բանար:

Մեր խեղճ պահնորդները՝ զիշերները քըն-
հատ մնալէ յոդնած, առիթ գտնելնուն պէս՝
բարձրաւանդակին այն խորշը կուգային, ուր
առանց մեծերնէն տեսմնուելու կրնային խոտին
վրայ նստիլ ու նիրհել:

Մարօնչէլի մեծ տագնապի մէջ կիյնար
այն ժամանակը, վասն զի տարաբաղդ կնոջ
կիրքը քաջայայտ կերեւէր: Ես ալ անկէ աւե-
լի կը տագնապէի: Այսու ամենայնիւ այսպիսի
տեսարանները՝ որ կրնային բաւական ծիծաղա-
շարժ ըլլալ եթէ կինը մեզի ակնածութիւն
չաղդէր՝ մեզի համար լուրջ եւ կրնամ ըսել
սրտաշարժէին: Այս թշուառ կինն այն տեսակ
դէմք մը ունէր որուն վրայ առաքինութեան
սովորոյթն ու յարդանաց պէտքընկարուած կե-
րեւէին: Գեղանի չէր, բայց այնպէս ազնուա-
կան պատկեր մը ունէր, որ երեսին քիչ մը ան-
կանոն դժագընութիւնը դիտես թէ իր ամեն մէկ

ժպիտէն , մղաններուն ամեն մէկ շարժումէն
կը գեղեցկանար :

Եթէ հոս սիրոյ վրայ խօսելու միտք ունե-
նայի , շատ բան կար խօսելիք այս առաքինի ու
դժբաղդ կնոջ վրայ , որ հիմա մեռած է : Բայց
բաւական է ինձ մեր բանաարկութեան դըժ-
ուարադէպ անցքերէն մէկը այսչափ մը նշա-
նակած ըլլալ :

ԳԼՈՒԽ 2.

Խստութեանց տելնալն օր քան զօր աւե-
լի միօրինակ եւ հետեւաբար ձանձրալի կընէք
մեր կեանքը : Ի՞նչայէս անցան 1824 , 1825 ,
1826 , 1827 տարիները : Գիրքերնիս դործա-
ծելու ազատութիւնը՝ որ Պրիւնի կառավարի-
չըն առժամանակեայ կերպով մեզի չնորհեր էր՝
արգիլուեցաւ : Ալ այսուհետեւ բանտը մեզի
համար ճշմարիտ դերեզման մը եղաւ , որուն
մէջ դերեզմանի անդորրութիւնն անգամ չէին

թողուր մեղ : Ամեն ամիս , անորոշ օր մը , ուստիկանութեան վերատեսուչը՝ տեղակալի մը հետ եւ զինուորով մը կուգար խստ խուզարկութիւն մը կընէր : Մեղ բոլորովին կը մերկացընէին , հանդերձներնուս ամեն կարանները կը քննէին որպէս դի մէջը թուղթ մը կամ ուրիշ բան մը պահած չըլլանք . մեր խոտէ անկողինները կը քակէին եւ մէջը կը զննէին : Թէպէտ եւ պահած բան մը չկրնային դանել մեր քով , սակայն այսպէս թշնամարար եւ միշտ կրկնուած քննութիւն մը չեմ զիտէր ինչնողկալի բան մը ունէր որ զիս կը բարեցընէր , եւ ամեն անդամ ինձի տենդ կը պատճառէր :

Բանտարկութեանս առաջին տարինները՝ որ այնչափ անտանելի երեւցեր էին ինձի՝ հիմա կակծալով կը յիշէի իրքեւ սիրելի քաղցրութեանց ժամանակ մը : Ո՞ւր էին այն ժամերը ուր Ս. Գրոց կամ Հոմերոսի ընթերցմանը կը պարապէի Հոմերոսի բնագիրը կարդալով կարդալով , յունարէն լեզուին ունեցած թեթեւ ծանօթութիւնս ընդարձակեր էր , եւ սիրահարեր էի այն լեզուին : Ո՞րչափ արտմնցայ այս ուսումը չկրնալ շարունակելուս վրայ : Տանթէ , Պայրըն , Բէթրարքա , Շէքսբիր , Շիլլեր , Վալթէր-Սքօթ , Կէօթէ եւ ուրիշ ի՞նչ բարեկամներ ձեռ քէս առնուեցան : Այս զիրքերուն

հետ քանի մը աւետարանական բարոյական
նի գիրքեր ալ կային, Պուրտալու, Բասքալ,
Նմանութիւն Յիսուսի, Յիլօթէա եւ այն,
եւ այն, որոնք եթէ կարգացուին այն բը-
ծախնդիր եւ աններող քննադատութեամբ
որ կիրթ ախորժակի թերութիւնը մը կամ խա-
խուտ խորհրդածութիւնը մը տեսնելուն պէս
կը պոռայ, մէկ դի կը ձգուին եւ ալ ձեռք չեն
առնուիր - բայց երբոր մէկը բարեմտութեամբ
եւ առանց տկար կողմներէն գայթակղելու կար-
գայ, իր սիրան ու միտքը կազդուրող բարձր
փիլիսոփայութիւն մը կը գտնէ անոնց մէջ :

Այս կրօնական գիրքերուն մէկ քանին ետ-
քը ընծայ դրկուեցան մեղ կայսրէն, բայց ըն-
ծային հետ միանգամայն բացարձակ արդելք
կար բանասիրական ուսմանց ծառայող ամեն
կերպ դիրքերու :

Այս ճգնաւորական գրոց ընծան 1825 ին
եղաւ մեղ դադմատեցի խոստովանահօր մը ձե-
ռօք որ Վիկնայէն դրկուեր էր եւ անունը Հ-
Ստեփաննոս Բաւլովիչ էր . այս քահանայն եր-
կու տարի ետքը Քաթարօի եպիսկոպոս ան-
ուանեցաւ : Նոյն քահանային միջնորդու-
թեամբը նաև պատարագ լսելու բարեբաղ-
զութիւն ունեցանք, չնորհ մը՝ որ մինչեւ այն
ժամանակը դպացուէր էր միշտ՝ պատճառանոք

թէ չէին կրնար մեղ եկեղեցին տանիլ և հոն
երկերկու հոգի բաժնուած պահել ինչպէս որ
պատուէր եղած էր :

Այսպիսի բացարձակ բաժնուած մը անհը-
նար ըլլալով, երեք խումբ բաժնուած կեր-
թայինք պատարագիր : Մէկ խումբը երգեհոնի
ըեմին վրայ կը կենար, մէկը տակը, այն կեր-
պով որ իրար չէին տեսներ . եղրորդն ալ վոք-
րիկ ազօթարանի մը մէջ որ վանդակով մը եկե-
ղեցւոյն մէջ կը նայէր :

Սարօնչէլլի և եռ ընկեր ունէինք մեղ այն
ժամանակը վեց դատապարաեալ՝ որոց դա-
տավճիռը մերինէն հին էր : Բայց մէկ զոյզը միւ-
սին հետ չէր կրնար խօսիլ : Այս վեց դատա-
պարաելոց երկուքը ինձի դրացի եղած էին
Ահենետիկի Կառաներուն տակ : Երկու պահնորդ
մեղ եկեղեցի կը տանէին մեղի յատկացեալ
տեղը, եւ պատարագէն ետեւ ամեն մէկ զոյզն
իր բանար կը դարձունէին : Պատարագ ընողը
քարուչին մ'էր, որ ամեն անդամ պատարագին
վերջը աղօթք մը կըսէր խնդրելով Աստուծմէ-
որ մեզ աղասիք մեր շղթայներէն, եւ այն ժա-
մանակ ձայնը կը փղձկէր : Երբոր խորանին
առ ջեւէն կը դառնար, կարելից աչք մը կը
ձգէր մեր ամեն մէկ խումբին վրայ, եւ տըս-
րութեամբ գլուխը կը ծոէր աղօթելով :

ԳԼՈՒԽ ԶԱ.

1823ին Շիլլեր ծերութեան խօթութիւնը ներէն խիստ տկարացած երեւնալով, ուրիշ բանտարկեալներ յանձնեցին իրեն, որոց պահապանութիւնը մեղի չափ աչալուրջ հսկողութեան կարօտ չէր թուեր, Ո՞հ, որչափ դըժընդակեղաւ մեզ Շիլլերին քովերնէս հեռանալը . որչափ ինքն ալ տրամեցաւ մենէ բաժնուելուն վրայ :

Անոր տեղը դրուեցաւ նախ Քրալ, որ բարեսրտութեան մասին անկէ վար չէր մնար, Բայց շատ չանցաւ աս ալ ուրիշ գործի մը դըժուեցաւ, եւ անզն ուրիշ մը եկաւ որ չար չէր նէ ալ նեղսիրտէր, եւ զորովական դդացում մը յայտնելու անկարող :

Այս փափոխութիւնները զիս դառնապէս կը վշտացընէին : Շիլլեր, Քրալ եւ Քուպիցքի, մանաւանդ առաջին երկուքը մեզ այս որէս լաւ խնամեր էին մեր հիւանդութեանց մէջ, որ հայր մը եւ եղբայր մը անկէց տւելին չէին իլրար ընել : Պարտավանցութիւնն ընե-

լուանկարող էին , բայց առանց դժնիւթեան կը կատարէին : Խրենց արտաքին ձեւերուն մէջ խստութիւն մը կարնէ ալ , գրեթէ միշտ ակամայ էր , եւ մեզի փորձով յայտնած բարեսըրտութիւնովնին լիապէս կը փոխարինէին : Երբեմն կը գրգռէի անոնց դէմ . բայց ի՞նչպէս սրտանց կը ներէին ինձի . ի՞նչպէս կը փութային մեզ համոզելու թէ մեր վրայ կարեկցութիւն ունէին : Ո՞րչափ ուրախ կը լլային մեր ալ այնպէս համոզուելուն եւ զիրենք բարի մարդիկ ճանչելնուս վրայ :

Մենէ հեռու ապրելէն 'ի վեր՝ Շիլէր քանի մը անգամ հիւանդացեր ու առողջացեր էր : Հիւանդ եղած ժամանակը որպիսութեանը վըրայ անդադար լուր կը հարցընէինք որդիական հոգածութեամբ : Երբոր ապաքինիլ սկսէր , կուգար երբեմն մեր պատուհաններուն ներքեւ կը ճեմէր : Զինքը ողջունելու համար կը հաղայինք . ան ալ վեր կը նայէր տրտմախառն ժպիտով մը , եւ մեզի լսելի ըլլալու կերպով կըսէր պահնորդին . « Ասոնք իմ զաւկներս են » :

Խեղճ ծերունի . որչափ սիրտս կը կսկծէր երբոր կը տեսնէի քեզ որ չէիր կընար հիւանդ մէջքդ քաշել , եւ ես ալ չէի կընար թեւդ մըտնելով քեզ բռնել :

Երբեմն խոտին վրայ կը նստէր կը կարդար : Խնձի փոխ տուած գիրքերն էին կարդացածը . իմ միտքս ձգելու համար անոնց մակագիրը կը կարդար պահնորդին , կամ մէջէնքանի մը հատուած ամուր ձայնով կարտասանէր : Շատ անդամ տարեցոյցի առասպելներ , կամ գրական արժէք մը չունեցող՝ բայց բարոյական իմաստ մը ունեցող վէպեր էին :

Քանի մը անդամ կաթուածահար ըլլալէ ետեւ՝ ինքզինք զինուորական հիւանդանոցը փոխադրել տուաւ . Հոն հասած ժամանակը յուսահատ վիճակի մէջ էր , եւ շատ չանցաւ՝ մեռաւ . Քանի մը հարիւր ֆիթրին ստակը ելաւ որ երկարժամանակեայ խնայութեան մը պըտուղէր : Այս ստակն իր զինուորակից բարեկամներուն փոխ տուեր էր : Վախճանին մօտ օրերը բարեկամները քովը բերել տուաւ ու ըստաւ . « Ես ընտանիք կամ ադդական չունիմ . ուստի քովերնիդ ունեցած ստակն ձեզ ըլլայ : Միայն կը խնդրեմ ձենէ որ աղօթէք ինձ համար »: Բարեկամներէն մէկը տասնեւութ տարու դուստր մը ունէր որ Շիլլէրի սանն էր : Մեռնելէն քանի մը ժամառաջ , բարի ծերունին զանի քովը բերել տուաւ : Արդէն կարող չէր որոշ կերպով խօսք մը արտասանելու : Այտէն արծաթ մասնի մը հանեց որ իր վերջին

հարստութիւնն էր, եւ աղջկան մատը դրաւ .
յետոյ լալով համբուրեց զանի : Խեղճ աղջիկը
բարձրածայն կուլար եւ արտսուքովը զանի
կողողէր : Եիլլէր թաշկինակովը կը սրբէր այն
արտսուքը : Յետոյ աղջկան ձեռքը բոնեց ու
իր աչացը վրայ դրաւ . . . : Աչքերն յաւիտեան
գոցուէր էին :

ԳԼՈՒԽ ԶԲ .

Այսպէս մէկ մէկու ետեւէ մարդկային մը-
խիթարութիւնները կը պակաէին մենէ, եւ
վիշտերն հետ զհետէ կ'աւելնային : Ինքովին-
քըս Աստուծոյ կամացը կը յանձնէի, բայց հե-
ծելով . եւ սիրտս փոխանակ թշուասութեամբ
խստանալու, կը թուէր թէ օր քան զօր աւելի
ցաւագին կերպով կ'զգար դայն :

Անգամ մը Աւկզակուրիի կազէթ լրագրին
մէկ թերթը դադանարար ինձի քերին . մէջը՝
քոյլերէս մէկուն սքեմ առնելը ծանուցանե-
լու առթիւ : ինձ հաւար ալ դարւիանալի լուր մը

կար . « Օրիորդ Մարիամ Անծիօլա Բէլլիքո ,
« դուտար եւ այլն . . . ին , այսօր . . . կրօնաւո-
« րի քօղ առաւ Թօրինօի Վիզիթաձիօնէ վան-
« քին մէջ : Յիշեալ օրիորդին եղբայր է Ֆրա-
« նքուտ ու Ռէնինի հեղինակ Ախլվիօ Բէլլիքո , որ
« այս օրերս Սրիլալէրկի բերդէն արձակուեցաւ
« Վ . կայսեր ներողութեան շնորհիւը , որն որ
« առատասիրտ վեհապետի մը արժանի դթու-
« թեան գործ մ'է , եւ որուն վրայ համայն ի-
« տալիա ուրախացաւ , եւ այլն . . . »

**Այս խօսքերէն ետեւ իմ վրաս ներբող մը
կար :**

Զէի կրնար երեւակայել ինչ նպատակաւ
հնարուեր էր իմ ներում գտնելուս լուրը : Խըմ-
բագրական սլարդ կատակ մ'էր ըսել՝ անհաւա-
տալի կը թուէր ինձի : Թերեւս աւտրիական
ոստիկանութեան կողմէն մտածուած վարպե-
տութիւն մ'էր Բայց Մարիամ Անծիօլա անուն-
ներն իմ կրտսերագոյն քրոջս անուններն էին ,
որ անշուշտ Թօրինօի կազէթ լրագրէն ուրիշ
լրագիրներու մէջ անցեր էին : Ուրեմն սուտ
չէր կրնարը ըլլալ այն ազնիւ օրիորդին կրօնաւ-
որ ըլլալը : Ա՞հ , թերեւս ծնողքը մեռած ըլ-
լալով , ինքն ալ այս պիճակն ընտրեր է : Խեղն
աղջիկ , չէ ուզեր որ միայն ես տառապիմ
բանտին մէջ . ինքն ալ միայնութեան մէջ

փակուիլուզեր է : Աստուած՝ ինչ աւելի համընդութեան ու անձնուբացութեան առաջինութիւն տայ անոր : Արդեօք որչափ անդամ իր խցիկին մէջ զիս պիտի մտածէ այս հրեշտակը : Ո՞րչափ անդամ խոտամբեր օգնութիւններ պիտի ընէ խնդրելու համար Ալտուծմէ որ իր եղբօրը տառապանացը ովովիանք չնորհէ :

Այս մտածութիւնները սիրու կը շարժէին ու կը ճամփէին Աւաղ, իմ դժբաղդութիւնս կրնար հօրս կամ մօրս կամ թերեւս երկուքին ալ կեանքը կարճել : Քանի կը մտածէի ասոր վրայ, այնչափ ինձի անհար կը թուէր որ Աւրիէթթաքոյրս՝ առանց այսպիսի կորուստ մը ընելու հայրենի, յարկն ելնէր ու կուսանաց վանքը քաշուէր : Այս գաղափարն իրրեւ ստուգութիւն կը ծանրանար սրտիս վրայ, եւ անտգորունթաղծութեան մը մէջ զիս կ'ընկղմէր :

Մարօնչէլի ալ ինձի չափ իռովեցաւ : Քանի մը օր ետքը բանաստեղծական ողք մը սկըսաւ շորապրել բանտարկելոյն քրոջը վրայ, եւ դեղեցիկ քերդուած մը յօրինեց որ տիսրութիւն եւ կոկիծ կը չնչէր : Աւարտելէն ետեւ կարդաց ինձի : Ո՞հ, որչափ չնորհակալ եղայ բարեկամիս այս վասփուկ խորհրդածութենէն : Կյոնսաւորուհեաց վրայ շինուած հաղարաւոր տաղաչափութիւններու մէջ հաւանականար այս

քերդուածնէր միայն որ բանտին մէջ յօրինուած էր , կրօնաւորուհւոյն եղբօրը համար , անոր կալանակից ընկերներուն մէկէն :

Ան այսպէս բարեկամութիւնը կը մեղմացընէր իմ վիշտերս : Ա՛հ , այն օրէն ետեւ որ մը չանցաւ որ մտօքս երկար ժամանակ կուսանաց վանքի մը բոլորտիքը չդառնայի , անոր մէջ փակուած կոյսերէն մէկ հատը գործվագին կարեկցութեամբ չնկատէի , եւ ջերմագին եռանդով չաղաչէի զԱստուած որ անոր միայնութիւնը գեղադարդէ , եւ չթողու որ երեւակայութիւնը չափաղանց սոսկալի դոյներով նկարէ իրեն իմ բանտս :

ԳԼՈՒԽ ԶԲ .

Արագրին դաղանարար ձեռքս դալէն չը կարծուի թէ յաճախ լուր կրնայի առնուլ աշխարհէս : Ոչ . շուրջս գտնուողներուն ամենն այ բարի մարդիկ էին , բայց ամենն ալ երկիւ-

ղովկաշկանդուած էին : Թէ որ երբեմն թեթեւ կանոնադանցութիւն մը գաղտնապէս դործուէր, ան ալ միայն այն ժամանակը կրնար ըլլալ երբօր խմացուելու վտանգ մը չէր տեսնուեր : Բայց շատ դժուարին բան էր վտանգէ ազատ մնալ այնչափ սովորական եւ անսովոր խուզարկութեանց մէջ :

Ես չկրցայ երբէք ծածկաբար լուր մը առնուլ ընտանիքէս, որ՝ աւաղ՝ խիստ հեռու էր ինէ, բաց ՚ի քրոջս վերաբերեալ խօսքէն որ հիմա պատմեցի :

Ծնողացս մնոած ըլլալուն վրայ ունեցած կասկածս քիչ մը ժամանակ ետքը աւելցաւ մանաւանդ՝ քան թէ պակսեցաւ՝ երբօր ոստիկանսւթեան վերատեսուչը եկաւ ինձի ըստ թէ ընտանիքս ողջ առողջ էին :

— Ա! կայսրն հրաման կընէ ինձ, ըստ, ծանուցանել ձեզ, թէ թօրինօի մէջ ունեցած ծնողքնիդ ողջ առողջ են : —

Խայտացի բերկրութենէս ու հիացումէս երբօր այս լուրն ինձի արուեցաւ, որ մինչեւ այն ժամանակը եղած բան չէր, եւ աւելի մանրամասն տեղեկութիւններ խնդրեցի :

— Շս հայր մը, մայր մը, եղբայրներ ու քոյրեր թողուցի թօրինօ, ըսի վերատեսչին . ամեննե ալ ողջ են : Ո՞հ, թէ որ անոնց մէկէն

նամակ մը ունիք, կաղաչեմ ցուցընէք ինձի:

— Չեմ կրնար ձեզի բան մը ցուցընել, պէտք է որ այսչափով դոհ ըլլաք: Այս մխիթարական զրոյցը ձեզ հաղորդելս կայսեր բարեսրտութեանը ապացոյց մ'է: Ասի դեռ ուրիշ մէկումը եղած չէ:

— Այն, կը խոստովանիմոր կայսեր բարեսրտութեանը ապացոյց մ'է: բայց կրնաք ըզգալ որ այսպիսի տարտամ խօսքերէ մխիթարութիւն մը գտնել անհնար է ինձի: Որո՞նք են այդ ողջ առողջ ընտանիքս: մէջերնէն մէկը մեռաւծ չէ արդեօք:

— Պարոն, կը ցախմոր ինձի հրամայուածէն աւելի բան մը չեմ կրնար բաել ձեզ: —

Արդարեւ այս լուրն ինձի տրուելուն նըսպատակիը զիս քիչ մը սփոփել էր: Բայց ես ընդհակառակն կարծեցի թէ կայսրը ընտանիքէ ու ոմանց թախանձանացը զիջանելով այս լուրն ինձի տալու թոյլառութիւն ըրած ժամանակը՝ միանգամայն հրաման ըրեր էր որերք քնամակ չցուցընեն ինձի, որպէս զի ընտանեացս մէջ մեռած կամ արակսած կայնէ չկըբնայի իմանալ:

Քանի մը ամիս ետքընորէն այս կերպ լուր մը ըերին ինձի, սուանց նամակի եւ սուանց բացստրութեան:

ցեսան որ այսպիսի մեծ շնորհէ մը գոհն չէի ըլլար, եւ մանաւանդ տրամաւթիւնս աւելի կը մեծնար, ալ մէկ մ'ալ ընտանեացս վրայ խօսք չըրին ինձի :

Կերեւուկայէլի թէ ծնողքս մեռած ըլլալու էին, նոյնպէս եղբայրներս ալ, նոյնպէս միւս սիրելի քոյրս ձուզէրինա . թերեւս Մարիէթ-թա ալ՝ որ միայն ողջ մնացեր էր՝ քիչ ժամանակէն պիտի շիջանէր առան ձնութեան չարչարանքներուն եւ ճգնութեամն խստամբերութիւններուն մէջ : Այս մտածութիւնս զիս որ քան զօր կանջատէր կեսանքէս :

Երբեմն սովորականն ցաւերս դժնդակ կերպիւնորոգուելով, կամ նոր հիւանդութիւններ վրաս գալով, զոր օրինակ քոլէռայի դընեայ նշաններ ունեցող սարսափելի խիթ մը, կը յուսայի մեռնիլ . այս, ճիշդ կըսեմ, կը յուսայի :

Եւ սակայն, ով մարդկային հակասութեանցս . երբոր աչքս նուազեալ ընկերիս վրայ կը ձգէի, սիրոս կը կտրտէր զանի մինակ թողլու մտածութենէս, եւ նորէն կը բաղձայի ասլրիլ :

ԳԼՈՒԽ ԶԴ.

Երեք անդամ՝ Վիէննայէն բարձրաստիւ-
ճան անձեր եկան բանտերնիս աչքէ անցընե-
լու եւ հասկընալու թէ կանոնաց դէմ բան
մը կը գործուէր : Առաջին այցելութիւն ընու-
ղըն եղաւ Վօն Միւնխ սեպուհը , որ մեր քիչ
լոյս աեմնելուն վրայ դթալով , խօսք տուաւ
խնդրելու որ օրերնիս քանի մը ժամ երկնցը-
նեն՝ բանտերնուանդունակին դուրսը կանդեղ մը
դնելով : Վօն Միւնխ սեպուհին այցելութիւնը
1825ին եղաւ : Տարի մը ետքը անոր բարի դի-
տաւորութիւնն 'ի գործ դրուեցաւ , եւ նոյն
ժամանակէն ետեւ՝ այն գերեզմանական ազօտ
նշոյլին չնորհիւը կրնայինք բանտին պատերը
տեսնել եւ առանց դլուխնիս տեղ մը դարնելու
պարտիլ :

Երկրորդ այցելութիւնն ըրաւ Վօն Վօկէլ
սեպուհը : Այս ալ առողջութիւնս ողբալի վի-
ճակի մէջ գտաւ , եւ իմանալով որ բժիշկը՝ թէ
եւ զիտէր որ խահուէն ինձի օդուա կրնար ը-
նել , բայց աւելազանց ծախուց նիւթ մը ըլլա-

լուն համար՝ հրամայելու չէր համարձակէր : հաւանութեան խօսք մը ըրաւ եւ այնուհետեւ ինձի խահուէ տրուիլ սկսաւ :

Երրորդ այցելուն եղաւ արքունեաց աւա-
դանիներէն չեմ գիտեր ով , յիսուն վաթսուն
տարեկան մարդ մը , որ իր կերպերովնու խօս-
քերովը խիստ ազնուական կարեկցութիւն մը
ցոյց տուաւ մեղ : Չէր կրնար բարիք մը ընել
մեղ , բայց ցուցըցած քաղցր կարեկցութիւնը
բարիք մ'էր արդէն , եւ չնորհակալ եղանք իր-
մի :

Ո՞հ , որչափ եռանդով բանտարկեալ մը կը
բաղձայ իրեն նման արարածներ տեսնելու :
Քրիստոնէական կրօնքը՝ որ խիստ հարուստ է
մարդասիրութեամբ , չմոռցաւ ողորմութեան
գործոց կարգը դասել բանտարկելոց այցելու-
թիւնը : Տարաբազզութեանդ վրայ գթացող
մարդոց տեսքը , թէ եւ այն մարդիկը կարող
չըլլան իրական միջոցներով քեզ միսիթարելու ,
կրած վիշտք կը դիւրացընէ :

Բացարձակ միայնութիւնը՝ թերեւս ումանց
սիրտն ուղղելու կը նսպաստէ , բայց կարծեմ որ
ընդհանրապէս աւելի օգտակար կրնայ ըլլալ
եթէ վերջին ծայրը չքչուի , եթէ ընկերութեան
մերձաւորութենէն բոլորովին չղատեն : Դանէ
ես այնսպէս եմ : Թէ որ նմաններա չտեսնեմ , ու-

րըս խիստ քիչ անձերու վրայ կամփովիեմ, եւ
մնացեալները սիրելէ կը դադրիմ. իսկ եթէ կա-
րող ըլլամ տևանելու՝ չեմ ըսեր շատ՝ բայց
պատշաճ թուով մարդիկ, եռանդուն սէր մը
կ'զգամ ընդհանուր մարդ կային ազգին վրայ :

Հաղար անդամ տեսնելով սիրաս՝ որ խիստ
սակաւաթիւ անձերու վրայ սէր ունէրեց. մը
նացեալները կատէր, կը զարհուքէիւ Այն ժա-
մանակը պատուհաննը կելնէի. նոր դէմք մը
տեսնելու փափաքով, եւ երջանիկ կը համա-
րէի զիս եթէ պահնորդը՝ պարտած ժամանա-
կը՝ բանտիս ներքեսի պատին. խիստ մօտէն
չանցնէր, եթէ բացէն անցնէր ու զինքը տերո-
նէի, եթէ հաղայինէ վերնայէր, եթէ պարկեշտ
դէմք մը ունենար : Երբոր կարեկցութեան
նշոյլ մը անոր դէմքին վրայ նշմարէի, քաղցր
բարախում մը կ'զգայի որտիս մէջ, որպէս թէ-
այն անձանօթ զօրականը մտերիմ բարեկամն
էր : Եթէ հեռանար, գորովալից տատամու-
թեամբ մը ետ դառնալուն կ'օպասէի, եւ եթէ
ինձինայելով ետ դառնար, կուրախսնայի որ-
պէս թէ մեծ բարիք մը ըրած էրինձի : իսկ եր-
բոր չերեւնալու կերպով անցնէր՝ կը տրամէի,
իբրեւ մարդ մը սր կը սիրէ, բայց կը տեսնէ որ
սիրելին անխոյթ է իր վրայ :

ԳԼՈՒԽ ԶԵ .

Մեր քովի բանտին մէջ՝ ուր Օրօպօնի նառեր էր, հիմա Տ. Ֆօրթինի քահանայն եւ Պ. Անթօնիօ Վիլլա կը նստէին: Այս վերջինը որ առաջ Հերակլէսի պէս հուժկու էր, առջի տարին շատ տանջուեր էր անօթութենէ, եւ երբոր ուտելիքը քիչ մը աւելցաւ. մարսելու կարողութիւն չունէր: Երկար ժամանակ տուապելէ ետեւ՝ երբոյ տկարութեան վերջին կէտն հասաւ, աւելի օդաւէտ բանտ մը խընդրեց եւ ստացաւ: Նեղ նկուղի մը վատառողջ օդն անշուշտիստ վնասակար էր իրեն՝ ինչպէս ուրիշ ամենուն ալ. բայց խնդրած տեղն ալ անբաւական էր: Դրուած ընդարձակ սենեակին մէջ տակաւին քանի մը ամիս ապրեցաւ, եւ վերջապէս քանի մը անգամ արիւն փախելէ ետեւ մեռաւ:

Վերջին կրօնական նպաստներն ըրին իրեն Տ. Ֆօրթինի՝ իր կալանակիցը՝ եւ Հ. Բաւլովիչ քահանայն որ Վիլլայի մերձ՝ ի մահ ըլլալը ու իւնիսա իմացուելուն պէս՝ վաղեր եկեր էր:

թէպէտ եւ Օրօպօնիի չափ մտերիմս չէր ,
այսու ամենայնիւ իր մահը մեծ կալիծ տուաւ
ինձի : Գիտէի որ կաթողիկն սիրելի էր ծնողա-
ցըն ու կոռջը : Խակ ինքը առաւել նախանձելի
էր քանի թէ կալծալի . բայց իր վրայ ապրողնե-
րը . . . :

Վ ինետիկի Կողուներուն տակն ալ ինձի
դրացի էր : Թրէմերէլլօ անոր մէկ քանի տաղա-
չամութիւնները բերեր էր ինձի , եւ իմիննե-
րըս ալ անոր տարեր էր : Ինձի դրկած տողերուն
մէջ երբեմն խորին զգացումկար :

Մեռնելէն ևեւ նշմարեցի որ կենդանու-
թեան ժամանակը կարծածէս աւելի կը սիրեմ
եղեր զինքը՝ երբորիմացայ պահուրդներէն թէ
որչափ չարչարանքով մեռեր էր : Եղկելին չէր
կրնար համբերել մեռնելու , թէ եւ խիստ բա-
րեպահտ էր : Վերջին տսախճան սոսկում կը զ-
գար այն ահաւոր անցքէն , բայց միանդ ամայն
չէրդաղբեր Տէրը օրհնելէ եւ արտառոք անոր
գոչելէ . « Չեմ կրնար իմ կամքս քու կամացդ
համաձայնեցընել , Աստուած իմ , եւ սակայն
կուզեմ : Գործէ այդ հրաշքը իմ վրայ , »

Օրօպօնիի արիութիւնը չունէր , բայց ա-
նոր նմանեցաւ՝ իր թշնամիացը ներելով :

Նոյն տարւոյն (1826) վերջը , իրիկուն մը
նրբաշտղին մէջ բազմաթիւ մարդոց մեղմ

ոտնաձայն լսեցինք : Ականջնիս քաջավարժ էր ամեն կերպ ձայներ որոշելու : Դուռ մը բացուեցաւ, այն էր Սօլերա վաստաբանին բանախն դուռը : Երկրորդ մը բացուեցաւ, որ էր Ֆօրթինիի բանտին դուռը : Գանի մը անձինք ներս կը մանմն ու ցած ձայնով կը խօսին . ոստիկանութեան վերատեսչին ձայնը կրցանք զանազանել : — Խ՞նչ պիտի ըլլայ այս, կըսէ-ինք, ասանկ ուշ ժամանակ խուզարկութիւն . ի՞նչ բանի համար :

Բայց շատ չանցած դուրս կելնեն, և ահա բարեմիտ Ֆօրթինիին ձայնը կը լսենք որ կըսէր . Ո՞ւ . Հո՞յ Բայ . Արքեղեն, ժամանակ մեջ հա-
րու Ներսը հորցաւ :

Եւ վազելով ես դարձաւ, յետոյ դուրս եւ-
լու միւսներուն քով հասաւ : Սանդուղքին
դուռը բացուեցաւ, և մինչեւ վարի ծայրը
ոտնաձայնին լսեցինք : Համկըցանք որ այս
երկու երանելիներուն ազատութիւն չնորհ-
ուեր էր, և թէպէտ շատ արտմնցանք որ ա-
նոնց հետ մեզ ալ ազատութիւն չնորհուեցաւ,
սակայն անոնց բարերազդութեանը վրայ ու-
րախ եղանք :



ԳԼՈՒԽ ԶԶ.

Մեր երկու ընկերաց ազատութիւնը մեզ
համար ալ հետեւանք մը չպիտի՝ ունենար։
Խնչպէս կերնէին անոնք, որ մողի պէս՝ մէկը
քսան եւ միւսը տաճնեւհինդ տարի բանտար-
կութեան գատապարտուած էին, առանց նոյն
շնորհը մեզ եւ ուրիշ շատերու համար ալ փայ-
լելու։

Ուրիշ չարձակուածներն աւելի յանցաւոր
դ ատուած էին. կամ թերեւս ամենս ալ արձա-
կելու միտք ունէին, բայց զոյզ զոյզ եւ իրար-
մէ քիչ տարրեր միջոցի մէջ, թերեւս ամսէ
ամիս, թերեւս երկու կամ երեք ամիսն ան-
դամ մը։

Ժամանակ մը առանկ երկրայսութեան մէջ
մնացինք, եւ երեք ամսէն աւելի ժամանակ
անցաւ՝ առանց մէկու մը ազատութիւն տըր-
ուելու։ 1827ին սկզբնէրը մտածեցինք որ դեկ-
տեմբեր ամիսը կրնար ազատութեան շնորհի
տարեղարձ ընտրուած ըլլալ. բայց դեկտեմ-
բերն անցաւ եւ ձայն մը չելաւ։ Մեր ակնկա-

լութիւնը երկարեցինք մինչեւ 1828ին ամսա-
ռը, ուր բանտարկութեանս եօթն ու կէստա-
րին կը լրանար, փոխարէն տասն եւ հինգի, ինչ-
պէս որ կայսրը խոստացեր էր, բայց պէտք էր
որ ամբաստանութեանս սկիզբէն համրուէր :
Իսկ թէ որ դատաստանի ժամանակը հետ չառ-
նուէր (եւ այս ալ հաւանականադոյն ենթադ-
րութիւնն էր), այլ դատավճռոյն հրապարակա-
ընթերցումէն համրուէր, եօթն ու կէստարին
1829ին կը լրանար :

Ամեն հաշուելի պայմանաժամերն անցան
եւ աղասութեան շնորհը չեկաւ : Սակայն Առ-
էրայի եւ Ֆորթինիի երթալէն առաջ՝ Մարտն-
չէլլիի ձափ ծունդը ուռոյց մը գոյացեր էր :
'Խսկզբան ցաւը թեթեւ էր եւ միայն զանի կը
կաղացընէր : Գետոյ դժուարաւ կրել սկսուիր
շղթան, եւ հազիւ երբեմն դուրս կելնէր :
Աշնան առաւօտ մը ուզեց հետո զուրս ենել
քիչ մը օդ շնչելու համար : Արդէն ձիւնեկած
էր, եւ զինքը չըռնած մէկ ձօխորդ մէջոցիս
սայթաքեցաւ ինկաւ : Այս անկում մէն ծունդին
ցաւը անըմբերելի կերպով սաստկացաւ : Վե-
րուցինք անկողնին վրայ տարինք, վամն զի
քալելու կարող չէր : Երբոր բժիշկը զանի տե-
սաւ, շղթաներն հանել տուաւ վերջապէս ու-
ռոյցն որ քան դօրմեծցաւ եւ ցանալ սաստ-

կացաւ : Այս տոամիճան կը առնջուէր խեղճ
ճիւանդը որ չէր կրնար հանդիսա գանել ոչ ան-
կողնին մէջ , եւ ոչ անկողնին դուրս :

Երբոր շարժիլը , ելնելը կամ պառկիլը
պէտք ըլլար , ամենայն զգուշութեամբ եւ մեղ-
մով հիւանդ ոտքը կը բռնէի եւ կամացուկ մը
իր ուղածին պէս կը տեղաւորէի : Երբեմն իր
դիրքը ամենադոյզն փոփոխութիւն մը կրած
ատեն՝ ողջոյն քառորդ մը ջզային ցնցում
զինքը կը բռնէր ոտքին անտանելի ցաւէն :

Ցզբուկները , խարանները , դժոխաքարր ,
չոր կամ թայ սպեղանիները , ամենն ալ 'ի դործ
դրաւեցան քժշկին : Ասոնք ալ ուրագապէս յա-
ւելուած մ'էին ցային՝ եւ ոչ ուրիշ բան : Դժո-
խաքարին դրաւելէն եաւ ուռոյցը հասուն-
ցաւ եւ վէրք մը եղաւ . բայց չէր սրբուկնար ,
եւ խղիսայթումն ալ ցաւը չէր մեղմացըներ :

Մարօնչելի ինչ հազարասպատիկ աւելի
թշուառ էր , եւ սակայն ես ալ անոր հետ կը
տառապէի : Հիւանդապահի պաշտօնը քաղցր
էր ինձի՝ այնպիսի քնոտիր բարեկամի մը քով .
բայց անոր երկար եւ անագորուն չարչարան-
քով հալիլը տեսնել , հասկընալ որ ծունդն ան-
բուժելի էր , աւենին զանի որ մեռնելուն աւելի
համոզուած էր քան թէ քժշկութեանը , եւ
ուրիշ բան մը չկրնալ ընել՝ բայց 'ի շարունակ

դմայլելէ անոր արիութեանն ու զուարթութեանը վրայ, ո՞հ, ասոնք սիրտս աննկարագրեալի կերպով կը արորէին :

ԳԼՈՒԽ ԶԷ .

Այս ողբալի զիճակին մէջ տակաւին ոտանաւորներ կը տողէր, կերգէր, կը ճառէր, եւ ամեն ջանք կընէր զիս յուսադրելու եւ իր կըրած ցաւերուն մէկ մասն ինձ ծածկելու։ Մարսողութիւնն ու քունը կորուսեր էր, եւ զարհուրելի կերպով կը վատէր։ Յաճախ մարելիք կուգար վրան, սակայն երբեմն կենդանութիւնն կառնուր եւ ինձի սիրտ կուտար :

Իննամիս շարունակ քաշած չարչարանքն անհնար է նկարագրել։ Վերջապէս բժշկական խորհրդակցութիւնն մը ընելու հրաման աըրուեցաւ։ Բժշկապետը եկաւ, իր արհեստակցին փորձած դարմաններուն հաւնեցաւ, եւ առանց իր կարծիքն յայտնելու հիւանդութեան ծան-

բութեանն ու այնուհետեւ պէտք եղած դարձանին վրայ , մեկնեցաւ դնաց :

Քիչ մը ետքը վերատեսչին փոխանորդը եկաւ ու Մարօնչէլլի ըստ . — Բժշկապետն իր կարծիքը ձեր առջեւ ըսել չուզեց՝ վախնաւով որ ծանուցանելլիք դժնդակ հարկը լսելու քաջասրտոթիւնը չունենաք : Ես ըսի անոր թէ ձեր վրայ արիութիւն չպակսիր :

— Կըյուսամ , ըստ Մարօնչէլլի , որ այս չարչարանքն անտրտունջ կրելով քաջասրտոթեանս փորձը տուած եմ : Արդեօք ինձի պիտի առաջարկին որ

— Այս , պարոն , ոտքերնիդ կտրուի : Միայն թէ բժիշկը ձեր մարմինը խիստ տիտրացած գտնելով կը վարանի առաջարկելու : Ուստի այդ տկար վիճակուդ մէջ անդամատութեանայլու զօրութիւն կղդաք ձեր վրայ , կուզքք ինք զինքնիդ վտանգի մէջ դընել

— Մեռնելու . եւ չսկիտի՞ մեռնիմ քիչ ժամանակէն՝ թէ որ այս չարչարանքիս վերջ մը չտրուի :

— Ուրեմն տեղեկագրով մը Պիէննա իւմացընեմ , եւ ձեր ոտքը կտրելու հրամանը իսկոյն

— Խնչ . հրաման ալ պէտք է :

— Այս, աղարոն : —

Ութ օր ևսքը հրամանն եկաւ :

Հիւանդը մեծեկակ սենեակ ո՛ր տարուեցաւ : Խնդրեց որ ես ալ հետն երթամ :

— Այնայ ըլլալ որ, ըստ, գործողութեան ժամանակը մեռնիմ . դենէ բարեկամիս թեւերուն մէջ մեռնիմ : —

Այս խնդիրն ընդունուելով հրաման եղաւ. ինձի որ քովք կենամ :

Հ. Խոպա քահանայն (Բաւլովիչին յաջորդեր էր) եկաւ սուրբ խորհուրդները մատակարելու հէք բարեկամիս . Այս երթաման դործը կատարուելէ եաւ, վիրարոյժներուն սպասեցինք, եւ չէին դար: Մարտնչէլլի սկսուտակաւին երդ մը նուազել :

Վերջապէս վիրարոյժներն եկան : Երկու հոգի էին . մէկը բանախին սովորական վիրարոյժըն էր, այսինքն մեր սափրիչը : Երբոր վիրարուժական գործողութիւն մը ընել պէտք ըլլար, իրաւունք ունէր իր ձեռօքն ընելու, եւ չէր ուզեր այս փառքն ուրիշին թողուլ : Միսը երիտասարդ վիրարոյժ մ'էր Ալեքնայի բըժը կական գ պրոցին աշակերտներէն, եւ արդէն միեծ համբառ հանած էր իր ճարտարութեամբը Պրիւնի կառավարչէն դրկուեր էր դործողութեան օժանդակելու, եւ կուղէր իսկ ինքնին

կատարել դայն , բայց հարկադրեցաւ միայն
կատարմանը հսկելու :

Հիւանդը անկողնին եղերքը նստուցին,
ոտքերը վար կախուած , եւ եռ ալ թեւերուս
մէջ բանեցի զինքը : Ծունգէն վեր , զստին այն
կողմը՝ ուրկէ վեր առողջ էր՝ կապ մը ըրին
կտրելու տեղը նշանակելու համար : Ծեր վիրա-
բոյթը բոլորի միանը մատնաչափի խորութեամբ
կարտեց . յետոյ կարտած միանը ևս քաշեց ու
մերկ մկաններն սկսաւ կարել : Արինը ուղիսօ-
րէն կը վազէր երակներէն . բայց անոնք ալ
շուտ մը կապուեցան մետաքսեայ թելերով .
հոսկ յետոյ , ոսկը սղոցեցին :

Մարօնչելի բնաւ չպսուաց նրբորիր կըստ-
րած տոքը տանելնին տեսաւ , կարելից աչ-
քով մը վրան նայեցաւ . յետոյ կարող վիրաբոյ-
ժին դառնալով ըստաւ .

— Գուք զիտ թշնամիէ մը աղատեցիք ,
բայց ձեր այդ ծառայութիւնը վոխարինելու
միջոց մը չունիմ :

Պատուհանին վրայ վարդ մը կար դաւա-
թի մը մէջ :

— Կաղաչեմ , սա վարդը ինձի քեր , ըստ
ինձի :

Տարի տուի իրեն , եւ ինքնալ ձեր վիրա-
բուժին ստաւ ըսելով .

— Շնորհակալութիւնս յայտնելու համար
ուրիշ բան մը չտնիմ ձեզ նուիրելու :

Այսպարոյժն առաւ վարդը եւ արտասուեց:

ԳԼՈՒԽ ԶԵ .

Այսպարոյժները կարծերէին թէ Արիլալէր-
իլի հիւանդարանին մէջ ամեն պէտք եղածը
կար՝ բաց ՚ի վիրաբուժական գործիքներէ որ
իրենք բերեր էին: Բայց, անդամատութիւնը
կատարուելէ ետեւ տեսան որ այլ եւ այլ ան-
հրաժեշտ նիւթեր չկային, խժաղանդ կտաւ,
սառոյց, երիզներ, եւ այլն :

Յօւզն անդամահատը պարտաւորեցաւ եր-
կու ժամապասել մինչեւ որ ասսնք քաղաքէն
բերուեցան: Ակը ջապէս տարածուեցաւ ան-
կողնին վրայ, եւ սառոյցը կտրուած զստին
վրայ դրուեցաւ :

Հետեւեալ օրը նոյն կտրուած տեղին վրայի
մակարդեալ արիւնը ջնջեցին, լուացին, մոր-

թը յառաջ քաշեցին, եւ երիդներով կապեցին:

Քանի մը որ կէս գառաթ արգանակ եւ հաւկիթի մը հարած դեղնուցը միայն առւին հիւանդին Բայց անդամատութենէն ետեւ դալիք անենդին վտանգն անցնելուն պէս, սկսան աւելի սննդաբար ուտելիքով մը զանի քիչ քիչ կազդուրել, կայօրն հրաման ըրեր էր որ մինչեւ ուժը տեղը գայնէ վերատեսչին խոհարանէն լաւ կերակուրներ տան:

Բժկութիւնը քառսուն աւուր մէջ կատարուեցաւ, ու մեղնորէն մեր քանտը դարձուցին: Այս անգամ՝ զանի մեծցուցեր էին պատը ծակելով եւ քովի սենեակին հետ միացընելով, ուր բնակեր էր նախ Օրօպօնի եւ յետոյ Վիլա:

Ես անկողինս Օրօպօնիի անկողին տեղը փոխադրեցի, ուր վերջի շունչը փշեր էր:

Տեղւոյն նոյնութիւնը ինձի շատ սիրելի եղաւ: Կը թուէր թէ իրեն մօտնէի: Յանախ երադ կը տեսնէի անոր վրայ, եւ կը կարծէի թէ հողին իսկապէս կերեւէր ինձի եւ երկնային մխիթարութիւններով սիրտս կը խաղաղէր:

Մարօնչէլիի կրած չարչարանքներուն սոսկալի տեսարանը՝ թէ ոտքը կտրուելէ յառաջ, թէ այն դործողութեան ժամանակը եւ

թէ յետոյ՝ հոգիս դօրացուց : Աստուած՝ որ
բարեկամիս հիւանդոթեան ժամանակը՝ իմ
խնամքս անոր հարկաւոր ըլլալուն համար՝ բա-
ւական առողջութիւն տուերէր ինձի, այն զօ-
րութիւնը առաւ վրայէս երրոր Մարօնչէլլի
նեցուկներով ճեմել սկսաւ : Բազմաթիւ գեղ-
ձաւոր այտուցներ ելան մարմնոյս վրայ որոնք
չատ տառապեցուցին զիս : Անոնք անցան,
կուրծքի ցաւ մը սկսաւ՝ որ արդէն ժամանա-
կաւ կրած էի, բայց այս անգամ աւելի դժնեայ
կերպով շունչս կը հեղձուցանէր . անոր հետ
մէկ տեղ դլխու պտոյտ, թանչ, եւ ջղային
ձկտումունէի :

— Հիմա կարգը ինձի եկաւ, կըսէի ես
ինձի . բայց բարեկամիս չափ համբերութիւն
պիտի կընամ ունենալ :

Եւ սկսայ կրցածիս չափ անոր առաքինու-
թեանը նմանելու ջանալ :

Մարդկային ամենն վիճակ պարտականու-
թիւններ ունի անշուշտ կատարելիք : Հիւան-
դին ուարտականութիւններն են համբերու-
թիւն, արխութիւն եւ քովը մօտեցողներուն
անհաճոյ չըլլալու ջանք :

Մարօնչէլլի՝ իրխեղն նեցուկներովն՝ առ-
ջի դիւրաշարժութիւնը չունէր, եւ վախնա-
ւով որ չէր կընար արագութեամբ ինձի ծա-

այել՝ կը տրտմէր : Կը վախնար նաեւ որ իրեն
աշխատութիւն չտալու եւ չյոդնեցընելու հա-
մար՝ պէտք եղածին չափ յաճախ իր ծառայու-
թիւնը չէի խնդրեր :

Եւ արդարեւ երբեմն կը պատահէր այս,
բայց ամեն ջանք կընէի որ չկռահէր :

Թէպէտ եւ ուժը նորոգուեր էր, բայց ցա-
ւակրսութիւնը բոլորովին չէր մնացած : Խնչպէս
որ ամեն ձեռքը կամ ոտքը կարած ան ձանց
կըլլար, Արտնչէլլի ալ ցաւ կ'զգար ջիղերուն
մէջ՝ որպէս թէ մարմնոյն կարած մասը զեռ
կենդանի էր : Կորուսած ոտքը, սրունքը եւ
ծունդը կը ցաւէին : Աւելցուր ասոր վրայ նաեւ
ուկրին լաւ սղոցուած չըլլալը, որ վրան եկած
նոր միսերուն մէջ միսելով յաճախ վէրք կը դո-
յացընէր : Վերջապէս ծունդին կարուած տե-
ղը հազիւ մէկ տարիէն կրցաւ բաւական կարծ-
րանալ եւ բացուելէ գաղրիլ :

ԳԼՈՒԽ ԶԹ.

Բայց նոր հիւանդութիւններ եկան խեղ-
ճին վրայ , զրեթէ անընդհատ կերպով : Նախ
յօդացաւ մը ոկսաւ ձեռացը յօդուածներէն եւ
յետոյ բոլոր մարմինը տամաններով չարչարեց .
անկէ ետեւ սկորրիտէ բռնուեցաւ : Այս վերջին
պատուհասը քիչ ժամանակի մէջ կասլոյտ բի-
ծերով մարմինը ծածկեց , եւ սարսափ կը պատ-
ճառէր :

Ինքինքս միսիթարել կը ջանայի ըսելով .
— Որովհետեւ այս տեղ մեռնելու ենք , ուրախ
ըլլանք որ մէկերնիս սկորրիտէ բռնուեցանք .
վասն զի այս հիւանդութիւնը տարավոխիկ
ըլլալով երկուքս ալ գերեզման պիտի տանի ,
եթէ ոչ ՚ի միասին , գոնէ իրարմէ քիչ ժամա-
նակ ետքը : —

Երկուքս ալ մեռնելու կը պատրաստուէ-
ինք խաղաղ սրտով : Իննամերայ թանտարկու-
թիւնն ու կրած սնապորուն տառապանքնիս՝
մեր երկու աւերեալ եւ հանգչելու տենչացող

մարմիններուն բոլորովին քայքայմանը դա-
դտփարին մեզ ընտելացուցեր էին : Հոգինիս՝
Աստուծոյ բարեթեանը յանձնուած՝ կը յու-
սային միանսալ այն տեղ, ուր մարդկային ամեն
ատելութիւնները կը դադրին, եւ կը խնդրէ-
ինք Աստուծմէ որ օր մը հոն մեր քով կոչէ մեզ
չսիրողները՝ ամեն ոխակալութիւններէ մեր-
կացեալ :

Նոխընթաց տարիներն սկսորբիտը խիստ
դժնդակ կերպով ճարակերէր այս բանաերուն
մէջ, Երբոր կառավարութիւնն իմացաւ Մարօն-
չէլիի այս սարսափիելի ախտէն բռնուիլը, վախ-
ցաւ որ նորէն կը ճարակի բանաերուն մէջ, եւ
հաւանութիւն տուաւ թժշկին խնդրանացը, որ
կըսէր թէ բաց օդէ զատ ուրիշ աղդու դեղ մը
չկայ Մարօնչէլիի համար, եւ խորհուրդ կու-
տար որ հնար եղածին չափ քիչ մնալու էր սեն-
եակին մէջ :

Ես ալ իրրեւ անոր սենեկակից, եւ մարմ-
նոյս մէջ ալ հիւթային անբարեխառնութիւնն
մը ունենալով, նոյն արտօնութիւնը ես ալ
վայելեցի :

Որչափ ժամանակ որ ճեմելու տեղերնիս
ուրիշ մարդ չէր զանուեր՝ դուրսը կը կենա-
յինք, այսինքն արեւուն ծագելէն կէս ժամ
առաջ սկսեալ երկու ժամու չտի . յետոյ ճաշին

Ժամանակը՝ թէ որ ուզէինք . եւ ապա իրիկուան դէմ երեք ժամու չափ՝ մինչեւ արեւուն մարը մտնելէն ետեւ . այս ալ հասարակ օրերը : Խակ տօն օրերը՝ որովհետեւ ուրիշները չէին կրնար սլաղտիլ , առաւ օտէն մինչեւ իրիկուն դուրսը կը կենայինք՝ բաց ՚ի ճաշի ժամանակէն :

Ուրիշ տարաբաղդ մ'ալ որ եօթանասուն տարիեւկանի չափ կար եւ առողջութիւնը բոլորովին խանգարած էր , մեղի ընկեր տրուեցաւ՝ յուսալով որ բաց օդն անոր ալ կրնար օդատակար ըլլալ : Այս անձն էր Գօսթանթինօ Մունարի , միրուն ծերունի մը , դրականութեան ու փիլիքառիայութեան սիրահար , որուն ընկերակցութիւնը շատ հաճոյ եղաւ մեզ :

Պատժոյս սկզբնաւորութիւնը՝ ոչ թէ ձերբակալ ըլլալում՝ այլ դատապարտութեանս թուականէն հաշուելով , եօթն ու կէս տարին 1829 յուլիս ամսոյն առաջին օրերը կը լրանար՝ եթէ կայսեր ստորագրութեան ժամանակէն հաշիւ ըլլալէր , կամ օգոստոս 22ին կը լրանար՝ թէ որ դատավճոյին հրատարակութենէն համբուլիք :

Բայց յուլիսն ու օգոստոսն ալ անցան , եւ ամսոյն յօյս մարնցաւ :

Մինչեւ այն ժամանակը՝ Մարտնչէլլի :

Մունարի եւ ես՝ մերթ ընդ մերթ յոյս կընէ-
ինք տեսնելու զաշխարհ, մեր սիրելի իտա-
լիան, մեր ծնողքն ու ընտանիքը, եւ այս յոյ-
սը՝ կարօտով, գթով եւ սիրով լի խօսակցու-
թեանց նիւթ մէր մեղ համար :

Երբոր տեսանք որ օգոստոսը, սեպտեմ-
բերը եւ ըոլոր տարին անցաւ, ալ աշխարհիս
վրայ մեր փոխադարձ բարեկամութեան ա-
նայլայլելի շարունակութենէն եւ մեր երկա-
րատեւ երաշխէպին մնացորդը արժանապէս
լրացընելու համար Աստուծոյ օժանդակու-
թենէն զատ բնաւ ուրիշ բան մը չյօւսալու
վարժեցանք :

Ո՞հ, բարեկամութիւնն ու կրօնքը երկու
անկշռելի բարիք են, որոնք մինչեւ անդամ
ազատութեան յոյսը կորանցընող բանտար-
կելոց ալ ժամերը կը դեղաղարդեն : Աստուծ
ձշմարտիւ տառապելոց հետ է, այն տառա-
պելոց՝ որ զինքը կը սիրեն :

ԳԼՈՒԽ Ղ.

Վիլայի մեռնելէն ետեւ, Հ. Բաւլովիչ
եպիսկոպոս ձեռնադրուելով, անոր տեղը մեղի
խոստովանահայր կարգեցաւ Մորավիացի Հ.
Ռւրպա քահանայն՝ որ Կոր կտակարանի դասա-
տու էր Պրիւնի մէջ, եւ Վիէննայի հոգեւորա-
կան բարձրագոյն դպրոցէն ելած էր :

Այս դպրոցը միաբանական ուխտ մ'էր՝
մեծանուն Հ. Պրինթէն հաստատուած, որ այն
ժամանակը արքունիաց խոստովանահայր էր :
Այս ուխտին անդամներն ամենն ալ քահանաց
են, որոնք արդէն աստուածաբանութեան ուս-
մունքը յաջողութեամբ աւարտելէ ետեւ՝ հոն
կը մտնեն եւ ծայրագոյն հմտութիւն ստանա-
լու. կ'զբաղին՝ խիստ հրահանգներու ներքեւ :
Հիմնադրին դիտաւորութիւնն ոքանչելի էր :
Ուղեր էր այնպիսի վարժոց մը հաստատել,
որ իբրեւ անասլառ աղքիւր մը՝ զօրաւոր եւ
ճշմարիտ հմտութիւն ծաւալէր Գերմանիա-
յի կաթոլիկ կղերին մէջ, եւ այս դիտաւորու-

թիւնն ընդհանրապէս կը կատարուի :

Ուրագա՝ Պրիւն նստելուն համար՝ կրնար թաւլովիչէն տւելի ժամանակ ունենալ մեղի նուիրելու : Հ. Մկրտիչինչ որ եղեր էր նէ մեղ համար՝ Ուրագա ալ նոյնը եղաւ . միայն թէ չէր կրնար անոր պէս դրքեր փոխ տալ մեղ : Շատ անդամ երկար խօսակցութիւններ հետը կը նէինք խիստ օգտակար դոնէ իմ կրթնական հաւ մողմանցս համեմատ այնպէս կը թուէր ինձի, եւ մեծ միսիթարութիւն մը կը քաղէի այն խօսակցութիւններէն :

1829ին հիւանդացաւ . յետոյնորպաշտօնաներ վրան առնելով՝ չկրցաւ մեր քովդալը շարունակել : Այս բանը մեզ շատ տրտմեցուց . բայց մեր բաղդէն , Ուրագայի յաջորդեց Զիաք փոխանորդը որ հմուտունշանաւոր քահանայ մ'էր :

Մեզի խօսաւովանահայր կարդուած բոլոր գերմանացի քահանայներուն մէջ՝ չտեսանք բնաւ չար մարդ մը , չտեսանք մէկը (եւ խիստ դիւրին ալէ ճանչել) որ քաղաքականութեան դործիք ըլլալ ուզէր : Ընդ հակառակն ամենն ալ ընդարձակ դիտութիւն , կատարեալ հաւատք եւ խորունկ փիլիսոփայութիւն ունեցող անձինք էին : Ո՞հ , որչափ յարգելինեն եւ կեղեցւոյ այսպիսի պաշտօնեայները :

Այս ճանչած մէկ քանի քահանայներո՞ւ խիստ բարի համարում մը ազդեցին ինձի դեր - մանացի կղերին վրայ :

Հ . Զիաք ալ նոյնպէս երկար կը խօսակցէր մեղի հետ : Իր օրինակը՝ վիշտերս դուարթութեամբ տանելու զիս կը կրթէր : Շարունակ կը տառապէր ակռայի , կոկորդի եւ ականջի ցաւով , բայց ժպիտը երբէք շէր պակսէր շրթունքներուն վրայէն :

Սակայն բաց գդը անզգայաբար անհետ ըրաւ սկորբիտի բիծերը Մարֆնչէլլիի, մարմնոյն վրայէն , եւ Մունարի ու ես ալ լաւագոյն վիճակի մէջ էինք :

ԳԼՈՒԽ ՂԱ.

Օդոստոսի առաջին օրը ծագեցաւ : Տան տարի էր որ ազատութիւնս կորուսեր էի , եւ ութ տարի ու կէս էր որ խիստ բանտարկութիւն կը կրէի :

Կիրակի օր մ'էր, ուրիշ տօն օրերու պէտ
մեր սովորական պարտելու տեղը դաշինք :
Մեզ շրջապատող որմինն վրայէն անդամ մ'ալ
զիտեցինք բիրդին ստորոտը տարածուած դաշ-
տը եւ գերեզմանատունը՝ ուր Օրօպօնի, եւ
Ախլա խաղաղութեամբ կը ննջէին, եւ խօսե-
ցանք այն հանգուռութեան վրայ որ օր մը մեր
սսկերքն ալ պիտի դանէին հոն : Եստանք մեր
սովորական նստարանին վրայ՝ սպասելու որ
խեղճ դատապարտեալները պատարագի եր-
թան, որն որ մերինէն առաջ կը կատարուէր :
Ասոնց ալ տեղը այն փոքրիկ աղօթարանն էր՝
ուր մննք կերթայինք յաջորդ պատարագին
ներկայ գտնուելու : Մեր պարտելու տեղին
կից էր :

Գերմանիոյ մէջ ընդ հանուր սովորութիւն
է, որ պատարագի ժամանակ՝ ժողովուրդը
սամերական լեզուով կ'երդէ : Եւ որովհետեւ
Աւստրիոյ կայսրութիւնը Գերմանացիներէ ու
Աքլավոններէ խառն երկիր մէ, եւ Արիլակէրկի
բանտերուն մէջ գտնուող դատապարտեալնե-
րըն ալ այս երկու լեզուեն մէկէն կամ միւսէն
են, երգերը մէկ կիրակի կամ տօնի օրը դերմա-
ներէն եւ միւս կիրակի կամ տօնի օրը սքլավո-
ներէն կ'երգուին : Նմանապէս ամեն կիրակի
կամ տօնի օր երկու լեզուով ալ քարոզ կը տըր-

ւի : Մեղի համար խիստ քաղցր էր լսել այն երգերը եւ անոնց ձայնալցով երգեհոնը :

կանայք ալ կերգէին , եւ ասոնց մէջ այնպիսիներ կային՝ որոց ձայնը խիստ սրտաշարժ էր . Եղիկելիները . մէկ քանին դեռ մանկամարդ էին : Տարիանքը , նախանձաւորութիւնը , չարօրինակը՝ զանոնք եղեռնագործութեան առաջնորդեր էին : “Նորէն լսեցի անոնց սրտաբուղիս եւ գողարիկ աւաչը” որ հոգւոյս մէջ կը հնչէր երբոր Առ-է՛ , Առ-է՛ , Առ-է՛ կը կարդային : Լսած ժամանակս նորէն արտասուեցի :

Ժամը տասնին կանայք դուրս ելան գացին եւ մեր կարդն եկաւ պատարագի երթալու : “Նորէն անդամ մ'ալ տեսայ մեր տարաբաղդութեան ընկերները որ երգեհոնի քեմին վըլրայ կեցած պատարագ կը լսէին : Մենէ խաղխամով մը միայն զատուած էին , ամենն ալ դեղնած , ծիւրած , ծնդած եւ հաղիւ շղթաներնին կրելու կարող :

Պատարագէն ետեւ աննեակնիս դարձանք : Քառորդ մը ետքը ճաշ բերին մնդի : Երբոր սեղաննիս կը պատրաստէինք , որ էր փոքրիկ տախտակ մը դնել մեր խշտեակին վրայ եւ փայտէ դրդալնիս առնուլ , բանտին երկրորդ վերաբենուչը Պ . Վ . էկրաթ ներս մտաւ :

— Եատ կը ցաւիմ ձեր ճաշը անհանդիսա

• Ընելուս վրայ, ըստ, բայց հաճեցէք հետո
դալու . ոստիկանութեան Պ. տնօրէնը հոս մօ-
տի սենեակն է : —

Եւ որովհետեւ ոստիկանութեան տնօրէնը
սովորաբար դժալհի պատճառներով կուղար,
այսինքն խուղարկութիւններ կամ հարցա-
փորձեր ընելու, ուստի մեծ դժգոհութեամբՊ.
Այսկրաթի հետ ունենդրութեան սենեակը գա-
ցինք :

Հոն դտանք ոստիկանութեան տնօրէննեւ
բանուին վերատեսութը : Առաջինը սովորակա-
նէն աւելի յարգանոք մերգ ողջունեց :

Թուղթ մը առաւ ձեռքը, եւ շնորհառաւ
խօսքերով ըստաւ . վախնալով անչուշուոր յատակ
խօսելու . ըլլարնէ մէկէն ի մէկ սաստիկ այլայ-
լութիւն մը կրնար պատճառել մեր :

— Պարոններ . . . բերկրութեամբ սրախ
. . . պատիւ անձին կը համարիմ . . . իմա-
ցընել ձեղթէ Ա. կայսրը . . . չնորհ մալ ը-
րաւ :

Եւ կը վարանէր ըսելու ինչ կերպ չնորհ
ըլլալը : Կարծեցինք թէ պատիժնիս մեղմացը-
նելու տնօրէնութիւն մը եղեր էր, այսինքն
աշխատութեան ձանձրութենէն ազատ ըլլա-
լու, կամ քանի մը զիրք ստանալու եւ կամնը-
ւագ նողկալի կերակուրներ մեղի տրուելու :

— Բայց միթէ չէք հասկընար, աւելցուց
անօրէնը:

— Ոչ, պարոն, բարեհաճեցէք մեզի հաս-
կընելու թէ ինչ կերպ չնորհի վրայ է խօսքը:

— Զեր երկու քինաղատութեանը վրայ է,
եւ ուրիշ մէկումը՝ որ հիմա պիտի համբուրէք:

Կը թուիթէ այս լուրին վրայ մեծ ուրա-
խութիւն պէտք էր յայտնէինք: Բայց մեր մը-
տածութիւնը իսկոյն մեր ծնողացն ու ընտան-
եացը վրայ դարձաւ, որոցմէ երկար ժամանա-
կէ՝ ի վեր լուր մը չունէինք: Պիտի կրնայի՞նք
զանոնք աշխարհի վրայ գտնել: Այս կասկածն
այնպէս բուռն կերպով ներկայացաւ մտքեր-
նուս, որ աղատութեան լուրէն զգալիք բերկ-
րութիւննիս բոլորովին ոչնչացաւ:

— Համբէ ք, ի՞նչ էք, ըստ ոստիկանու-
թեան անօրէնը: Ես կարդէ դուրս ուրախու-
թիւն մը կ'սպասէի ձենէ:

— Կաղաչեմ, ըսի, որ մեր չնորհակալու-
թիւնը հաղորդէք կայսեր: Բայց եթէ մեր ըն-
տանիացը վրայ լուր մը չտրուի մեզ, անհնար է
որ չփախնանք թէ մեր ամենասիրելիներուն մէջ
կորուսածներ ունինք: Այս անստուգութիւնը
մեզ կ'ընկճէ՝ մինչեւ անդամ այս վայրկեննիս որ
մեծ ուրախութիւն բերելու էր մեզ:

Ասոր վրայ՝ ոստիկանութեան անօրէնը

Մարօնչելիինամակ մը տուաւ՝ եղբօրմէն դըր-
ւած, որ մխիթարեց զանի : ինձի ալ ըսաւ թէ
ընտանիքս նամակ չկար . ասովկասկածի մէջ
ինկայ թէ դժբաղդութիւնն մը հանդիպած ըլ-
լալու էր ընտանեացս :

— Գարձէք սենեակնիդ, ըսաւ, եւ շատ
չանցած ձեր քով զրկեմ այն անձը որ ձեզի հետ
ազատութիւն ստացած է : —

Գայցինք սենեակնիս, եւ անձկալից սպա-
սեցինք մեր ազատակցին : Յանկալի էր մեզ որ
մեր ամեն կալանակիցներն ալ ազատութիւն
դտած ըլլային, բայց մէկէն աւելի չէր : Տար
Աստած որ խեղճ Մուհարին ըլլար, սա ըլ-
լար, նա ըլլար կըսէլնք, եւ մէկը չկար սրուն
համար չըղձանայինք :

Վերջապէս ռուռը բացուեցաւ, եւ տե-
սանք որ Պ. Անարէա ի՞օնէլլին էր :

Համբուրեցինք իրար : Ճաշերնիս չէլնք
կրնար ուտել :

Մինչեւ իրիկուն խօսակցեցանք, կարե-
կից ըլլալով մենէ ետքը մնացած բարեկամաց
վիճակին :

Արեւուն մտած ժամանակը ոստի կանու-
թեան անօրէնը եկաւ այն թշուառութեան
վայրէն մեզ հանելու : Արտերնիս կը հեծէր մեր
այնչափ սիրելի բարեկամաց բանաերուն առ-

ջեւէն անցած ժամանակնիս , զորոնք չէինք կրնար հետեւնիս տանիլ : Ո՞վ դիտէ տակաւին որչափ ժամանակ հոն պիտի տառապէին : Քանի՞ն արդեօք երկարատանը մահուան մը որս պիտի ըլլային հոն :

Խւրաքանչիւրիս վրայ մէկ մէկ զինուորի վերարկու ձգեցին , եւ գլուխնիս ալ մէկ մէկ դիմարկ դրին , եւ այսպէս դատապարտեալի հաղուստով բայց շղթայազերծ վար իջեցուցին մեզ Արիլպէրկի աղետալից բլուրէն , եւ քաղաքին ոստիկանութեան բանաը տարին :

Լուսնի գիշերապայծառ լոյս մը կար : Փողցները , տուները եւ դէմերնիս ելած մարդիկը խիստ նորանչան եւ քաղցր կերեւէին ինձ՝ այնպիսի տեսարան մը շատ տարիներէ ՚ի վեր տեսած չըլլալուս պատճառաւ :

ԳԼՈՒԽ ՂԲ.

Ոստիկանութեան բանտին մէջ կայսերական դործակալի մը դալուն սպասեցինք , որ

Այիննայէն պիտի դար ու մեղ թիւմոնթէի սահմանագլուխը տանէր : Մեր առջի զգեստներն ու կտաւիքը վաճառուած ըլլալով , այս սպասման միջոցիննոր զգեստ եւ կտաւիք հայթայթեցինք եւ բանտի հաղուստը ձգեցինք :

Հինդ օրէն կայսերական գործակալն եկաւ եւ ոստիկանութեան տնօրէնը մեզ անոր յանձնեց : Միանգամայն անոր յանձնեց մեր Սրիւպէրկ դաշած ատեն քովերնիս գտնուած ստակը եւ մեր վաճառուած հանդերձներուն ու զրքերուն դինը, որ ետքը մեղի տրուեցան երրոր սահմանագլուխն հասանք :

Մեր ճանապարհորդութեան ծախսքը կայսեր վրայ էր, եւ բան մը շմնայուեցաւ մեր հանգիստ ուղեւորութեանը համար :

Կայսերական գործակալն էր՝ ոստիկանութեան պաշտօնատան քարտուղարներէն Պ. Վ. օն Նոէ , բարեկիրթ եւ ազուարարոյ անձ մը : Մինչեւ վերջը խորին յարգանոք եւ ակնածութեամբ վարուեցաւ մեղի հետ :

Պրիւնէն մեկնած ժամանակս շնչառութեան սաստիկ դժուարութիւն ունէի : Կառքին ցնցումէն հիւանդութիւնս աւելի սաստկացաւ , այնպէս որ իրիկունը զարհուրելի կերպով կը հեւայի, եւ կը վախցուէր որ վայրկետնէ վայրկեան կը խղդուիմ: Ասկէց զատ բոլոր

զիշերը տապադին տենդ մը ունեցայ , եւ հետեւեալ առաւօտուն գործակալը չէր գիտեր թէ պիտիկրնայի՞ ճանապարհորդութիւնս չարունակել մինչեւ Ալիքնա : Ըսի իրեն թէ կըրնամ , եւ ճամբայ ելանք : Յաւիս ուժգնութիւնը վերջին աշտինան էր . շէի կրնար՝ ոչ ուտել , ոչ խմել , եւ ոչ խօսիլ :

Ալիքնա հասայ կիսամեռ : Մեղիլաւ սենեակ մը առւին սստիկանութեան պաշտօնատունը , եւ դիս անկողին դրին բժիշկ մը կանչուեցաւ , եւ արիւն առնուեցաւ ինչ : Ասոր վրայ քիչ մը հանդսատցայ : Ութ օր բացարձակ պահնք բռնելով եւ միայն խաչած մատանեառնեկի (տիժիթալ) ջուր խմելով անցուցի եւ բժշկեցայ : Բժիշկս էր Պ. Ալինճէր , որ սիրալիր խնամք մը տարաւ ինձի :

Մեծ անհամբերութեամբ կուղէի ճանրայ ելնել , մանաւանդ որ ֆարիզիմէջ ծաղած յեղափոխութեան լուրը մինչեւ մեր ականջը հասեր էր :

Կայսրը նոյն խել յեղափոխութեան ծագած օրը մեր աղասութեան հրովարտակն ըստորագրեր էր : Անշուշտ հիմա ետ չէր առներ տուած հրովարտակը , բայց հաւանական ալ էր , որ ֆարիզի յեղափոխութիւնը բոլոր Եւրոպայի ազդեցութիւն ընելով խտալիոյ մէջ

ալ յեղափոխական շարժումներ կասկածուէր,
եւ հետեւաբար Աւատրիոյ կառավարութիւնը
չուղէր այն միջոցին մեղ թողուլ որ հայրենիք-
նիս դառնանք : Թէպէտ համոզուած էինք որ
մեզնորէն Արիլալէրի չէին դարձուներ , բայց
կը վախնայինք որ մեղ խալիայէն հեռու քա-
ղաք մը աքսորելու կը թելադրէին կայսրը :

Թէպէտ եւ հիւանդութիւնս անցած չէր ,
բայց ես ինքոյինքս լուցած ցուցընելով կա-
զաչի Պ . Ա օն Նօէ որ մեր երթալուն հրա-
մանն ստանայ : Նոյն միջոցին կը փափաքէի
երթալ Ներկայանալ Թուրինօի արքունեաց
կողմէն Այէննա գեսալաննասուող Պ . Բրալօրմօ
կոմսին , որ մեծ բարերարութիւններ ըրեր էր
ինձի : Ազնուական յարատեւութեամբ աշխա-
տեր էր աղատութիւնս ձևոք բերելու : Բայց
մարդու հետ տեսնուիլն արդիւուած ըլլալով
ինձի , զեսալանին համար ալ բացառութիւն
չկրցաւ ըլլալ :

Հաղիւ ապաքիներ էի , մարդասիրաբար
կանք մը զրկուեցաւ մեղ քանի մը աւուր հա-
մար , թոյլ արտելով որ Այէննայի մէջ քիչ մը
սպարագինք : Գործակալին հրաման եղեր էր որ
մեզի ընկերանայ եւ չթողու մէկու մը հետ խօ-
սիլ : Ա . Ստուփաննոսի գեղեցիկ եկեղեցին
գացինք տեսանք , քաղաքին զմայլելի ձևմէւ-

լիները , և այսիթէնչթէնի մօտակայ պարտէղը
եւ Շէօնալրունի կայսերական պարտէղը պար-
տեցանք :

Երբոր Շէօնալրունի դեղազուարն ծառուղի-
ները կը պարտէինք , կայսրը եկաւ անցաւ .
գործակալը մեզ հեռացուց հռնկէ , վախնալով
որ մեր նիհար եւ գծուծ երեւոյթը զինքը կը
տրամադրէն :

ԳԼՈՒԽ ՂԳ.

Ա երջապէս ճամբար ելանք վիճննայէն ,
եւ կրցայ մինչեւ Պրուք ինքզինքս բռնել : Հան
շնչարդելութիւնս նորէն սաստկացաւ եւ ըր-
ժիշկ բերուեցաւ : Պ . Ժուաման անունով ճար-
տար բժիշկ մ'էր : Արին առաւ ինէ , զիս ան-
կողին դրաւ , եւ մատանեառունկը շարունա-
կեց : Կրկու օր ետքը նորէն խնդրեցի որ ճամ-
բարիս շարունակենք :

Անցանք Աւստրիոյ եւ Ավելիոյ գաւառ-

ները եւ անվնաս քարինթիա հասանք : Բայց
Քլակէնքուրթիմօս Ֆէլտքիրխէն անուն գեղ
մը համնելուս՝ հրաման եկաւ որ հոն մնանք
մինչեւ որ նոր հրաման մը գայ :

Ընթերցողիս կը թողում ժտածել որչափ
սրտերնիս կոտրեց այս գէպքը : Ես սա ցաւն ալ
ունէի , որ երկու ընկերներս իմ երեսէս այս
մեծ վնասը կը կրէին . զամն զի իմ շարաբաստ
հիւանդութեանս պատճառաւ էր որանոնք ալ
չէին կրցեր հայրենիքնին ժամանել :

Հինդ օր Ֆէլտքիրխէն կեցանք , եւ այն
կինդ աւուրմէջ գործակալն ամեն ջանք ըրաւ
մեղ զրօսցընելու համար : Խեղճ կատակեր-
գակներու վոքրիկ թատրոն մը կար , հոն տա-
րաւ մեղ : Ուրիշ օր մ'ալ որսով զրօսցուց մեղ:
Որտորդներն էին մեր օթեւանին տէրը , քանի
մը տեղացի երիտասարդներ եւ պեղեցիկ ահ-
տառի մը տէրը : Մենք ալ յարմար տեղ մը կե-
նալով այն տեսարանը կը վայելէինք :

Ա երջապէս Աիիէննայէն սուրհանդակ մը
եկաւ հրաման բերելով գործակալին որ մեղ
տեղերնիս տանի : Այս քաղցր լուրը ոյն եւ ըն-
կերներս ուրախութեամբ լցուց . բայց միան-
գամայն ես կը դողայի տեսնելով որ ձախող
գաղտնիք մը յայտնուելու ժամանակը կը մեր-
ձնար ինձի համար , այն ժամը որ ինձի պիտի

իմացընէր թէ հայրս կամ մայրս եւ կամ ովզ դիտէ ուրիշ որ սիրելիներս մեռած էին :

Եւ տիրութիւնս կանէր քանի որ խոալիոյ կը մօտենայինք :

Այն կողմէն խոալիս մտնելը գուարձալիչ է : Գերմանիոյ ակնապարար գաշտերէն խոալիոյ գաշտերն իջնելու համար աճուր ու առապարին ճամբայներէ կանցնուի , այնպէս որ մեր թերակղզին դեռ տեռած չեղող ճանապարհորդներն անկէց անցած ժամանակ կը ծիծաղին խոալիոյ գեղեցկութեանը վրայօք ունեցած դադախարնուն վրայ եւ կը կարծենթէ զանի չափազանց գովողներէն խաբուած են :

Նրկրին վայրենի տեսքն ալ տիրութիւնս կաւելցընէր ջիմնել մեր երկինքը, մարդկային դէմքերու հանդիսիլ որոնք հիւսիսականաց ձեւը չունէին , ամեն շրթունքներէ մեր լեզւին խօսքերը լսել , ասոնք զիս կը խանդաղատեցընէին . բայց այս խանդաղատանքը զիս աւելի կը տրամեցընէր քան թէ կուրախացընէր : Ո՞րչափ անողամ , կառքին մէջ , ձեռօքն երեսս կը ծածկէի՝ ննջել ձեռացընելով , եւ կուլայի : Ո՞րչափ դիշերներ կանցունէի առանց տչքս փակելու , սաստիկ տենդէ բըռնուած , մերթ ջերմուանդ օրհնութիւններ սուլով իմ քաղցր խոալիայիս , եւ դոհութիւն

տալով Աստուծոյ որ նորէնինձի կը դարձունէր զայն, մերթ ընտանիքէս լուր մը չունենալուս վրայ տագնապելով եւ մտացածին աղէտներ ստեղծելով, մերթ ալ մտածելով որ քիչ ժամանակէն պիտի հարկադրէի բաժնուելու թերեւս յաւիտեան՝ այնպիսի բարեկամի՛ մը՝ որ ինձի հետ այնչափ տառապանք քաշերէր, եւ իր եղբայրական բարեկամութեան այնչափ մեծ որձերը տուերէ իր ինձի :

Ա՛հ, այնչափ թաղուած տարիները չէին կըցեր իմ զգալու կարողութեանս ուժը մարել, բայց այն ուժը խիստ տկար էր ուրախութեան համար, եւ ընդհակառակն խիստ հղօր էր տրամութեան համար :

Ո՛րչափ կը բաղձայի Ռւտինէ հանողիալելու, ուր երկու ազնիւ բարեկամներ սպասառորի կերպարանք մաէր էին ծածկաբար քովերնիս դալու եւ ձեռքերնիս սեղմելու համար :

Այն քաղաքը ձախ կողմերնիս թողուցինք ու անցանք :



ԳԼՈՒԽ 27.

Քօրտէնօնէ , Քօնսէլիանս , Օսբէտալէթ-
թօ , Ալիչէնձա , Ալէքսանդր , Մանթօվա շատ-
րաներ կը միշեցրմէին ինձ : Առաջինին մէջ ծը-
նած էր ասպանողաւոր պատանի մը՝ որ իմ բա-
րեկամս եղեր էր եւ Ռուսիոյ պատերազմնե-
րուն մէջ մեռեր էր : Քօնսէլիանս այն քաղա-
քէն էր որ Ծահծէ տարուեր էր՝ կողուոց բան-
տապաններուն խօսքին նայելով : Օսբէտա-
լէթթօի մէջ ամուսնացեր էր հրեշտակագեղ
եւ դժբաղդ օրիորդ մը , որ հիմա մեռած է ,
զոր երկար ժամանակ յարգեր էի եւ տակաւին
կը յարդէի : Ա երջապէս այս ամսն տեղերը
քիչ շատ սիրելի յիշատակներ կը ձգէին միաքս,
մանաւանդ Մանթօվա : Կը թուէր ինձի որ
դեռ երեկ էր որ հան գացեր էի Լոտովիքօի հետ
48 15ին . երեկ էր որ հան գացեր էի Բօրբօի հետ
48 20ին : Եսյն փողոցները , նոյն հրապարակ-
ները , նոյն պալատները եւ այնչափ փոփոխու-
թիւն բնկերութեան մէջ , այնչափ ծանօթ ան-

ձինք մեռած , այնչափ ուրիշ անձինք աքսորուած . Երիտասարդներու մերունդ մը որ տղայ տեսեր էի : Եւ չկրնալ վազել երթալ այս կամ այն տունը , չկրնալ մէկու մը հետ խօսիլ այս կամ այն անձին համար :

Եւ 'ի լրումն թաղծոթեանս , Ամանթօվայի մէջ պիտի բաժնուէի Մարօնչէլլիէն : Երկուքս ալ ամենատիտուր դիշեր մը անցուցինք : Դատապարտութեան վճիռը լսելու վրայ եղող մարդու մը ողէս վրգոված էի :

Առաւօտուն , երեսս լուացի , եւ հայելին նայեցայ տեսնելու համար թէ բայցած ըստայ կրնար հասկըցուիլ : Լրցածիս չափ զաւարթ եւ հանդարա դիմք մը տոի : Համառօտ ազօթք մը ըրի Աստուծոյ , բայց համարիտը խօսելով՝ միտքս զրագած էր . լսելով Մարօնչէլլիի հայնը , որ իր նեցուկները շարժելով ծառայներուն կը խօսէր , զացի թեւերուն մէջ բնկայ : Երկուքս ալ քաջասիրտ կը թուէինք մեր բաժանմանը համար : Կտրուել ձայնով մը կը խօսէինք թէ եւ քիչ մը խռոված : Ոստիկանութեան գինուորաց պաշտօնակալը՝ որ դանի Ոստմանիայի սահմանագլուխը պիտի տանէր՝ եկաւ . պէտք էր երթալ : Հազիւ գիտէինք մէկ մէկու ըսելիքնիս : Գրկախառնութիւն մը , համբոյր մը , նորէն զրկախառնութիւն : Կառ-

քը նատաւու ու աչքիս առջեւէն աներեւոյթ եղաւ : Հոն ինքդինքս կորուսած մնացի :

Դարձայ սենևակս , ծունդի վբայ եկայ , դժբաղդ անդամակորոյտին համար աղօթեցի , եւ բարեկամէս բաժնուելուս վրայ սկսայ լալ ու հեծեծել :

Շատ նշանաւոր մարդիկ ճանչցայ , բայց Մարօնչէլլիի չափ քաղցր ընկերասէր , անոր չափ բարեկիրթ ու քաղաքավար , անոր չափ հեղահամբոյր մէկը չուեսայ , որ միշտ յիշերթէ առաքինութիւնը ներողամտութեան վեհանձնութեան եւ ողջամիտ դատման անդուլ կիրառութեամբը կը կազմուի : Ո՞վ իմ բաղմանայ վշտացս ընկեր , երկինք օրհնեն քեզ ուրեւ դտնուիս , եւ այնպիսի բարեկամներ քեզ պարգեւեն որ ինձի չափ քեզ սիրեն , եւ ինձմէ աւելի բարեսիրաց ըլլան :

ԳԼՈՒԽ 76.

Նոյն առաւօտուն մենք ալ ճանրայ ելանք
Մանթօվայէն Պրէսչիա երթալու համար : Հոն
աղաս թողուեցաւ իմ միւս կալանակիցս Անտ-
րէա Թօնէլլին Այս տարաբաղդը հոնիմացաւ իր
մօրը մեռնիլը , եւ իրյուսահատաղին ողբերէն
սիրտս կտրաեցաւ :

Թէպէտ եւ սիրտս հաղարումէլ անձկու-
թիւններու ճարակ եղած էր , ինչպէս որ իրա-
ւունք ալ ունէր ըլլալու , հետեւեալ սրամն-
իքսզիս քիչ մը ծիծաղեցուց :

Պահգոկին մէջ սեղանիմը վրայ թատրոնի
ծանուցում մը կար . առի ու կարդուցի . Յւ-
լուսութեան , թատրերդ , եւ այլն :

— Որու շինածն է այս թատրերդը , ըսի
սպասաւորին :

— Հեղինակն ու եղանակը շինովը չեմ
դիտեր . ըայց վերջապէս առնուն ճանչած Յւ-
լուսութեան է :

— Ամենուն ճանչածը մի . սխալ ըլլալու

էք . ես որ Գերմանիայէն կուղամ , ի՞նչպէս
կուղէք որ ձեր Ֆրանցիաները ճանշեմ :

Այս խօսքիա վրայ , սպասաւորը՝ որ բուն
Արէսչիացի մէր քիչ մը խրոխառադէմ , արհա-
արհոտ դթութեամբ մը երեստնայեցաւ :

— Ի՞նչպէս կուղեմ մի . հոս երսուն ու-
լից Ֆրանցիայի խօսք չկայ , այլ միայն մէկ Ֆրա-
նչական ու Ռինէի մը , որ Ակլիփիօի շի-
նած ողբերգութիւնն է : Հոս թատրերգի գո-
խած են զայն՝ քիչ շատ խանգարելով , բայց
միշտ նոյն ողբերգութիւնն է :

Ա , Ակլիփիօ Բէլլիքօ՝ Կը կարծեմ որ այդ ա-
նունը տեղ մը լսած եմ . նա խեղկատակը ու որ
ասկէց ութ կտմ ինն տարի առաջ մահուան եւ-
յետոյ խիստ բանտարկութեան գատապարտ-
ւեցաւ :

Երանի թէ ըրած չըլլայի այս կատակը :
Սպասաւորը չորս կողմը նայեցաւ . յետոյ եր-
սուն ու երկու գեղեցիկ ակուաները կը ճտելով
երեսսնայեցաւ , եւ եթէ ունաձայն չլսէր , ան-
շուշտ եմ որ դիս կը կոփէր :

Զդեց դնաց՝ Խուզաւու մումոալով : Բայց իմ
թեկնելէս առաջ իմացաւ ով ըլլալս : Ալ չէր
լրնար՝ ոչ բան հարցընել , ոչ պատասխանել , ոչ
զրել , ոչ քալել : Այլ միայն երեսս կը նայէր ,
ձեռքերը կը շփէր , եւ առանց պատճառի ա-

մինուն Աւա՛ Պարհ, այս' Պետք, կը սէր՝ փռնգտա-
ցող մարդու մը պէս :

Երկու օր ետքը, սեպտ, թին Միլան հա-
սայ գործակալին հետ, քաղաքին մօտեցած
ժամանակս, երբոր տեսայ դմբէթը, երբոր ան-
ցայ Լօրէթօի ծառուղին որ խմսովրական սի-
րելի ճեմելիքս էր, երբոր արեւելեան դռնէն
ներս մտայ, հրապարակը հասայ, տուները,
տաճարները, փողոցները տեսայ, տմնաքաղ-
ցըր եւ միանդամայն ամենատիտուր զգացում
մը կրեցի. այս է՝ մէկ կողմանէ բռուն իղձ մը
քանի մը օր Միլան կենալու. եւ տակաւին հոն
միացած բարեկամներս տեսնելու, ողջա-
զուրելու. միւս կողմանէ խորունկ ցաւ մը
կ'զգայի միտքս բերելով այս բարեկամներուր
Արիլպէրկ մնացեր էին, անոնք որ օտար եր-
կիրներու մէջ կը թափառէին եւ անոնք որ
մեռեր էին : Միանդամայն ջերմչորհակալու-
թիւն մը կ'զգայի՝ բոլոր Միլանցւոց ինձի ցու-
ցըցած սէրը յիշելով, եւ թեթեւ դայրոյթ մը
կ'զգայի զիս զրպարտող քանի մը անձանց դէմ
որոնք իմ յարգանքս ու բարեկամութիւնս վա-
յելեր էին :

Դացինք իշանք Պէլլա վէնէծծիա սպան-
դոկը :

Հոն քանի քանի անգամ բարեկամներուու

հետինճոյք ըրեր էի . հոն շատ ականաւոր օտարազգիներու հետաւեսակցեր էի . հոն պատուական տիկին մը՝ հասկընալով որ Միլան մընայի նէ գլխուա փորձութիւն մը պիտի դար , շատ թանիսանձեր էր զիսոր հետը Թոսքանա երթամ , բայց ես մտիկ չէի ըրեր : Ո՞վ սրտայոյդ յիշատակք , ովքը բերկրութեամբ եւ վշտօք խառն եւ երադախոյս անցելոյ մը յիշատակ :

Պանդոկին սպասաւորներն խմացան ով ըլլալս . շուտով լուրը տարածեցաւ , եւ իրիկուան դէմ շատ մարդիկ տեսայ որ հրապարակը կը կենային եւ պանդոկին պատուհաններն 'ի վեր կը նայէին : Տիկին մը՝ որ չեմ գիտեր ով էր՝ կը թռւէր թէ զիս ճանչեց , եւ երկու ձեռքը վեր վերցընելով ողջունեց :

Ո՞ւր էին , ո՞հ , թօրրօի որդիքը , զաւակներս . ինչու համար չտեսայ զանոնք :



ԳԼՈՒԽ ՂԶ.

Պործակալը զիս ոստիկանութեան պաշտօնարանը տարաւ վերատեսչին ներկայացընելու : Ո՞րչափ անցեալ վիշտեր միտքս եկան : Ա՞հ , չեմ կրնար առանց խանդաղատելու յիշելքեղ , ովք Մէլքիսէր նօյտ , բանտիդ նեղ որմերուն մէջ երկայնքին ու լայնքին շուտ շուտ քալուածքդ , այն երկար ժամերը որ անշարժ կանցունէիր սեղանին առջեւ ուր աղնիւ մըտածոթիւններդ կը գրէիր , թաշկինակովդ ինձի նշան տալդ , եւ երբոր հետս նշանացի խօսակցիւդ արգիլուեցաւ՝ տիրութեամբ ինձի նայելդ : Եւ գերեղմանդ մտածեցի որ թերեւս քեզ սիրողներուն շատին անծանօթ է , ինչպէս ինձի , եւ աղօթեցի լստուծոյ քու հողույդ հանգստեանը համար :

Յիշեցի նաեւ փոքրիկ համբը , Մադդաղինէին սրտառուչ ձայնը , սրտիս բարախմունքը , անոր վրայ զգացած զութս , զող դրացիներս , ինքնակոչ լուղովիկոս եօթնեւտաս-

ներորդը, զժրապդ դատապարտեալը որ նամակովս բանուեցաւ եւ դաւազանին ներքեւ արձակած լալապին աղաղակնականջս հաստ:

Այս եւ ուրիշ շատ յիշատակութիւններ՝ տխուր երազներու պէս զիս կը ճնշէին, բայց ամենէն աւելի այն երկու այցելութիւնները որ տան տարի առաջ խեղճ հայրս եկեր ըրեր էր ինձի այս բանտին մէջ : Ի՞նչպէս բարի ծերունին ինքպինք կը խարէր յուսալով թէ քիչ ժամանակէն կրնայի օֆուրինօ դառնալ : Պիտի կրնար դիմանալ երրոր մտածէր թէ իր որդին տան տարի բանտի մէջ, եւ ի՞նչոքս բանտի մէջ, թաղուած պիտի տեսնէր : Բայց երրոր այն պատիր յոյսերը փարատած ըլլային, կարող պիտի ըլլամբ ինքը, կարող պիտի ըլլամբ մայրս, այնպիսի դառնակամիկիծ աղետի մը դէմ մաքառելու : Պիտի կրնամ տակաւին երկուքն ալ տեսնել, մէկը տեսնել, եւ որը :

Ո՞վ սրտատանջ եւ մշտանորոգ կառկած : Գրեթէ հայրենի տանա դռւոր հասերէի եւ դեռ չէի զիտեր թէ ծնողքս աղջ էին, ընտանիքէս մէկ հոգի մը ողջ մնացեր էր :

Ոստիկանութեան վերատեսուչը զիս քաղաքարութեամբ ընդունեց, եւ վոխանակ զիս ուրիշ տեղ պահելու թոյլ տուաւոր որ Պելլւ ու եւ ականդ ուկը կենամ կայսերական դործա-

կալին հետ : Բայց պատուիրեց որ մէկումը՝ չերիւնամ : ասոր համար որոշեցի հետեւեալ օրը միևնիլ Միլանէն : Միայն թոյլտուութիւն ըստացայ բիէմոնթէի հիւպատոսը տեսնելու որոպէս զի ծնողացս վրայ լուր մը առնում : Պիտի երթայի դանի տեսնելու , բայց տեսդէ բռնըւելով եւ անկրղին մտնելու հարկազրուելով մարդ դրկեցի հիւպատոսին աղաչելու որ ինքին ձի դայ :

Հաճեցաւ չուտովինձի դալու , եւ որչափ շնորհակալ եղայ իրեն :

Բարի լուրեր տուաւ ինձի հօրս եւ մեծ եղբօրս վրայ - բայց մօրս , երկրորդ եղբօրս եւ երկու քերցա վրայ անազորուն անստոգութեան մը մէջ մնացի :

Կէս մը քաջալերուած , բայց ոչ ըստ բաւականին , կուղէի հիւպատոսին հետ խօսակցութիւնա երկարել : Զինայից ինչ իր մարդասիրական շնորհը , բայց վերջապէս պարտաւորեցաւ քովէս մեկնելու :

Երբոր մղնակ մնացի , կուղէի լալ , բայց արտուքս բռնուեր էր : Ինչու համար արդահօք երբեմն տրտմութիւնը զիս կը լացընէ , եւ երբեմն ալ (կրնամըսել շատ անգամ)՝ Երբոր կը թուիթէ արտսուքը քաղցր մխիթարութիւն մը ոլիտի բլլայ ինձ՝ լալ կուղեմու չեմ կրնար :

Վիշտս ափովիելու այս անհնարութիւնը տեհոդս
կը ծանրացընէր . սաստիկ գլխուու ցաւ մը ունէի :

Զուր ուզեցի Աթունտպէրկէրէն : Այս ան-
ձը Վիշնայի ոստիկանութեան համեստ դին-
նուոր մ'էր , որ գործակալին քով սպասառ-
րի պաշտօն կը կատարէր : Ծեր չէր , բայց դիպ-
ուածը ուզեց որ ինձի ջուր տուած ժամանակը
ձեռ քը գողզո՞նց : Այս գողզո՞նցը Շիլէրը
միտքս ձգեց , երբոր Արիլալէրկ հասնելու ա-
ռաջին օրը ջուրին սափորը խրոխտաբար ու-
զեցի ու գողզո՞նցը ինձի տուած :

Տարօրինակ բան . այս յիշատակութիւնը
միւսներուն վրայ աւելիալով սրտիս ապառա-
ժը խորտակեց եւ արտսուքս թորիլ սկսաւ :

ԳԼՈՒԽ ՆԷ .

Աեպտեմբեր 10ին առաւօտուն ազնիւ գոր-
ծակալս ողջագուրեցի եւ ճամրայ ելայ , իրար
ամիսէ մը 'ի վեր միայն կը ճանչէինք , բայց ար-

զէն հինաւուրց բարեկամի մը պէս էր ինձի համար : Այրար գեղեցկին ու բարւոյն զգացմամբը լի էր, առանց կեղծաւորութեան եւ առանց արուեստակութեան . թէպէտ խորամանկ ըլլալու չափիսելք ունէր, բայց կը սիրէր այն աղնիւ պարզութիւնը որ ուղիղ մարդոց վրայ կը տեսնուի :

Հանապարհորդ ութեանս միջոցին իջնեան ըրած տեղերնէս մէկուն մէջ մէկը զաղանաբար ըստ ինձի . « Մի վստահիք այդ ուսուցան հրեւշտին . եթէ սեւ տեսակէն չըլլար, ձեղի չէին տար :

— Շատ կը սփալիք, ըսի, քաջ համոզուած եմ որ կը սիսալիք :

— Ամենէն խորամանկները նոյն խոկ այն մարդիկն են որ ինքզինքնին կրնան խիստ պարզ երեւցընել, ըստ :

— Եթէ այդպէս է նէ, ալ մէկու մը տռափինութեանը հաւատալու չէ :

— Ընկերութեան մէջ տեսակ մը պաշտօններ կան, ուր կատարեալ բարեվայելու չձեւեր կը տեսնուին, բայց առաքինութիւն, երբէք, բնաւ երբէք :

Այս խօսքին ուրիշ պատասխան չտուի, բայց միայն . — Չափազանցութիւն, սիրելի պարոն, չափազանցութիւն :

— իմայս դատումն ուղիղ հետեւութիւն մէ՛, ըստ : Բայց նոյն միջոցին ուրիշ մարդ եկաւ վըրայ , եւ Աէյալնիցի հայութեաւ հրատակած հանգներէնը յիշեցի :

Դատ մարդիկ սասիալ եւ աննուեր տրամաբանութեամբ կը խորհրդածեն :

« Ես Աղքօչակին ետեւէն կերթամ , որ տարակոյս չունիմթէ արդարութեան դրօշակըն է : Դրացիս Բ դրօշակին ետեւէն կերթայ , որ նոյնալէս տարակոյս չունիմթէ անիրաւութեան դրօշակըն է . ուրեմն դրացիս շար մարդ է :

Ե՞ն , այդպէս չէ , կատաղի տրամաբաններ . ինչ դրօշակի ներքեւ ալ ըլլաք , այդպէս տմարդութեամբ մի խորհրդածէք : Յիշեցէք որ ձախողկարծիքէ մը ճանրայ ելնելով (եւ ուր տեղ կայ ընկերութիւն մը կամ անհատ մը որ ասանկներ չունենայ) , եւ անողօքելի խստաթեամբ մը հետեւութենէ հետեւութիւն երթալով , ամենուն ալ դիւրին է սա եղբակացութեան հասնիլ , և Մեր չորսէն դատ՝ ուրիշ ամեն մարդիկ ողջ ողջ այրելու արժանի են : Եւ մինչեւ անդամթէ որ աւելիխիստ ընտրութիւն մը ըլլուի , այն չորսին ալ ամեն մէկը սլիտի ըսէթէ հնէ գատ ամեն մարդ կենդանոյն այրելու արժանի են :

Այս ուամկական խստութիւնը տիրապէս հակառակ է վիլիստիայութեան : Չափաւոր կասկածի մէջ խռհականութիւնն կրնայ ըլլալ, բայց չափազանցին մէջ երբէք :

Այս ու-հ-ո-ռ-ն հրեւ-ս-է-ն վրայ ինձի եղած ազգարարութեան վրայ, առաջուանէն աւելի մըտադիր եղայ գործակալս քննելու, եւ օր քան զօր համոզումս կը հասաթառուէր անոր անվընաս եւ ազնիւ բնաւորութեանը վրայ :

Քիչ շատ լաւ կազմուած որ եւ իցէ ընկերութեան մը մէջ, ընկերական ամեն պաշտօնները որ ընդ հանուրին խղճմանքէն ամօթապարտ չեն դատուիր, այն ամեն ընկերական պաշտօնները որ ազնուարար հասարակաց բարւոյն նպաստամատոյց ըլլալ կը խոստանան, եւ որոյ խոստմանը չառմարդիկ կը հաւասարն, այն ամեն պաշտօնները որոց մէջ համեստմարդիկ գտնուիլը կարելի չէ առանց անտեղութեան ուրանալ, կրնան միշտ համեստ մարդիկներէ կատարուիլ :

Տեղ մը կարդացեր եմ թէ քուէյքը* մը մը սասաիկ կը գարչէր զինուորներէն : Անզամ մը զինուոր մը տեսեր է որ թամիզ դետը նետելով խղդուելու վրայ եղող դժբաղդ մը ա-

* Անզզիոյ մէջ տեսակ մը բողոքական աղանդաւորք, որ երերականք կը սուին :

զատեր է, ըսեր է ինքնիրեն . «Թէպէտ և
միշտ Քուէյքը եմ եւ Քուէյքը պիտի մնամ,
բայց զինուորներն ալ բարի արարածներ են : »

ԳԼՈՒԽ ՂԸ.

Աթունտպէրկէր հետո եկաւ մինչեւ կառ-
քը որուն մէջ նստայ ոստիկանութեան զինուո-
րաց պաշտօնակալի մը հետ որ ինձի պահապան
տրուեր էր :

— Պարոն, լաւ. փաթթուեցէք վերարկ-
ուիդ մէջ, ըստ Աթունտպէրկէր, գլուխնիդ
լաւ ծածկեցէք, եւ ջանացէք որ հիւանդ չեր-
թաք տունիրնիդ : Յեթեւ պատճառով մը կըր-
նաք պաղառնուլ : Շատ կը ցաւիմ որ չեմ կըր-
նար մինչեւ Թուրինօ հետերնիդ պալ ու ձեզի
ծառայել :

Այս խօսքերը սրտադին անլիեղ ծովետիք
եւ խորված ձայնով մը ըստ եւ աւելցույ .

— Այսուհետեւ, Պարոն, թերեւս բնաւ գերմանացի մը չպիտի ունենաք քովերնիդ . թերեւս մէկ մալ չպիտի լսէք այն լեզուն զոր խտալացիք խիստ խորթ կը գտնեն, և հաւանականաբար ալ փոյթերնիդ չպիտի ըլլայ : Այնչափ տառապանք կրեցիք գերմանացւոց մէջ, որ մեծ բաղձանք մը չպիտի ունենաք մեղ յիշելու : Եւ տակայն ես, որու անունը շուատով պիտի մոռնաք, եռ չպիտի դադրիմ, ողարոն, ձեզ համար աղօթելէ :

— Ես ալ ձեզ համար, ըտի, ձեռքը վերջին անգամ սեղմելով :

Այս խեղճ մարդը տակաւին անգամ մ'ալ դոչեց . — Ողջոյն, բարի ճանապարհ, երթաք բարով : Ասոնք եղան գերմաներէն լեզուով լսած վերջին խօսքերս, եւ խիստ քաղցր հընչեցին ականջիս՝ իրրեւ իմ մայրենիք լեզուիս խօսքերը :

Կաթողին կը սիրեմիմ հայրենիքս, բայց ուրիշ ազգերն ալ չեմ ատեր : Քաղաքակըրթութիւնը, հարստութիւնը, փառքը դանագան են այլեւ այլ ազգայ մէջ . բայց ամենուն մէջ ալ հաւատարիմ հոդինելիք կան մարդու բարձր կոչմանը, որ սիրելու արգահաւատելու, եւ օդտակար ըլլալու վրայ կը կայանայ :

Հետա ընկերացող սկաշտօնակալը սկասմեց

ինձի թէ իմ դժբաղդ Գօնֆալօնիէրի բարեկամս ձերբակալ ընտղներէն մէկն ալ ինքնէր Պատմեց ինձի ինչպէս բարեկամս փախչելու փորձ ըրեր էր, ինչպէս վրիպեր է՛ռ, ինչպէս հարկ եղեր էր իր կնոջը թեւերուն մէջէն քաշել առնուլ, ինչպէս Գօնֆալօնիէրի եւ իր կինը սրտայոյդ բայց աղնուական համբերատարութեամբ իրենց դժբաղդութիւնը կրեր էին: Գլուխս տենդէ կը բորբռքէր քանի որ կը լսէի այս ցաւագին պատմութիւնը, եւ սիրտս երկաթէ ձեռքով մը կը սեղմուէր:

Պատմիչը որ բարեմիտ եւ վատահ մարդմ'էր, չէրնչմարեր, որ թէ եւ ոխ մը չունէի իրեն գէմ, բայց չէի կրնար առանց սոսկալունայիլ այն ձեռքերուն որ բարեկամս կալ եւ կապ ըրեր էին:

Պութֆալօրա համելում՝ նախաճաշը բաւ, բայց ես հիւանդ ըլլալուս համար բան մը չկերպայ:

Ժամանակաւ, շատ տարիներ կան, երբոր Բօրրօ կումսին որդւոցը հետ Արլունօ գեղը կերթայի պարտելու, երբեմն կը պատահէր որ պառյտքս մինչեւ Պութֆալօրա կը հասցընէի թիշինօի եղերքէն:

Ուրախ եղայ երբոր գետին վրայի գեղեցիկ կամուրջնաւարտած տեսայ, որուն նիւթե-

րը ցան եւ ցիր տեսեր էի գետին լոմպարտեան եղերքը , եւ հասարակաց հետ ես ալ կարծիք ըրեր էի թէ այս շինութիւնը չպիտի ըլլար խայտացի ուրախութեամբ երբոր գետին վրայէն անցայ եւ Բիէմօնթէի հողը կոխեցի : Ա՛հ , թէ եւ ամեն ազգերը կը սիրեմ , եւ խալիոյ սիրահարն եմ , բայց գիտէ Աստուած որ խալիոյ որիշ ամեն երկիրներէն քաղցր է ինձի Բիէմօնթէի անունը , որ նախնեացս երկիրն է :

ԳԼՈՒԽ ՂԹ.

Պուֆփալորայի դիմացն է Սան Մարթինո : Հոն լոմպարտացի պաշտօնակալը քանի մը խօսք ըստ Բիէմօնթէցի հրացանաւորներուն . յետոյ դիս ողջունեց եւ նորէն կամուրջին միւս կողմն անցաւ :

— Երթանք Նովարա , ըսի կառավարին :

— Հաճեցէք վայրկեան մը սպասել , ըստ

հրացանաւորներէն միշկը :

Հասկըցայ որ դեռ ազատ չէի , եւ վախցայ որ հօրս առանք համնիլս պիտի ու շաղընեն : Ամբողջ քառորդ ժամեն՝ մը ետեւ պարսն մը եկաւ եւ խնդրեց որ հետս դայ Նովարա : Քիչ մը առաջ ելած կառքին չէթ հասեր , եւ հիմա ալիմինէս ուրիշ կառք չըլլալով երջանիկ պիտի ըլլար եթէ իմկառքս առնուի դինքը , եւ այլն :

Այս ծպտեալ հրացանաւորը զուարթարարոյ մարդ մ'էր , եւ լաւ ընկերութիւն մը ըրաւ ինձի մինչեւ Նովարա : Հոն համնելնուս , մեզ պանդոկ մը տանելու պատրուակաւ , հրացանաւորներու զօրանոցի մը առաջքը տարաւ կառքը , եւ հոն ըստ ինձի թէ պաշտօնակալի մը սենեակին մէջ անկողին մը կար ինձի համար , եւ հոն բարձրագոյն հրամաններու ոլէտքէր սպասէի :

Կը կարծէի որ հետեւեալ օրը կրնայի ձանրայ ելնել : Անկողին մտայ , եւ զիս հիորընկալող պաշտօնակալին հետ քիչ մը խօսակցելէ ետեւ , խորունկ քուն մը ննջեցի : Երկար ժամանակ կար որ այնպէս լաւ քնացած չունէի :

Առաւտուն արթնցայ , շուտ մը անկողնէս ելայ , եւ առաջին ժամերը լոիստ երկար եկան ինձի : Նախաճաշուշ ըրի , խօսակցեցայ ,

սենեակին մէջ եւ բարձրաւանդակին վրայ ճեմոցի , հիռըքնկալիս գիրքերն աչքէ անցուցի : Վերջապէս խմացուցին ինձի թէ մէկը զիս տեսնել կողէ :

Պաշտօնակալ մը քաղաքավարութեամբ եկաւ հօրս վրայոք ինձի լուր տալու . ըստ թէ հօրմէսնամակ մը կար Եռիարա եկած եւ ինձի պիտի բերէին : Զափազանց շնորհակալ եղայ իր ազնիւ մարդասիրութենէն :

Քանի մը ժամեր ալ անցան որ ինձի տարիներու չափ երկար թուեցան , եւ վերջապէս նամակը հասաւ :

Ո՞հ , ի՞նչ անպատում ցնծութիւն զգացի երբոր այն ամենասիրելի տառերը տեսայ . ի՞նչ ուրախութիւն երբոր խմացայ որ մայրս՝ աղնիս մայրս՝ կենդանի էր , խմացայ որ երկու եղբարքս եւ մնձ քոյլու կենդանի էին : Աւաղ , կրոսեր քոյլու , Մարիէթթամ , որ վիզիթաձի օնէի վանքը մուեր էր , ինչպէս որ դաղանտ բար լուր առեր էի բանտիս մէջ , ինն ամսէ՝ ի վեր մնուեր էր :

Քաղցր է ինձի մասնել թէ աղատութիւնս այսսիրելիներու շնորհիւն էր որոնք անդադար կ'աղօթէին Աստածոյ ինձ համար , մանաւանդ այն քրոջս՝ որ հրեշտակային բարեպաշտութիւնն մը մէջ մնուեր էր , Աստուած վարձապէ

այն ամեն անձկութիւնները որ անոր սիրտը կը-
րեր էր իմ չարաբաստութեանցո համար :

Օրերը կանցնէին եւ Նովարայէն մեկնե-
լու թոյլտուութիւնը չէր գար . Սեպտեմբեր
16ին առաջօտոն վերջապէս հրամանը տրուե-
ցաւ ինձի , եւ այն ժամանակ հրացանաւոր-
ներուն պահպանութենէն ազատեցայ : Ո՞հ ,
որչափ տարի էր որ ուղած տեղս չէի կրցեր
երթալ՝ սուանց պահպաններու ընկերակցու-
թեան :

Գիշ մը գրած ստացայ , հօրս ծանօթ ե-
ղող անձի մը քաղաքալարական այցելութիւնն
ընդունեցի , եւ կէս օրէն երեք ժամու չափ ետ-
քը ճանքայ ելայ : Հետո ընկեր ունէի տիկին մը ,
վաճառական մը , քանդակագործ մը եւ երկու
դեռահասակ պատկերհան որոց մէկը խուլ
համբէր : Այս պատկերհաններն Հռոմէն կու-
գային , եւ բերկրութեամբ իմացայ որ Մա-
րոնչէլլիի ընտանիքը կը ճանչէին Քանի՛ քաղ-
ցը է մեր սիրած անձերուն խօսքը ընել զա-
նոնք ճանչող անձանց հետ :

Գիշերը Աէրչէլլի անցոցինք : Անրջա-
պէս սեպտեմբեր 17ին երջանիկ օրը ծագեցաւ:
Ճանհրանիս չարունակեցինք : Ո՞հ , որչափ ծա-
նըր կերթային կառքերը : Կրիկունը Թուրինո
հասանք :

Ո՞վ կրնայ, ո՞վ կրնայ երբէք նկարագրել
սրտիս ուրախութիւնը, այն պաշտելի սըր-
տերուն ուրախութիւնը, երբոր տեսայ, երբոր
ողջագուրեցի հայրս, մայրս, եղբայրներս։
Սիրելի ձուզէբբինա քոյրս պակաս էր, Քիէրրի
մնալու հարկադրեալ ըլլալով։ բայց թուրինտ
համնելուս երջանիկ լուրն առնելունպէս՝ փու-
թացաւ եկաւ քանի մը օր հետերնիս անցու-
նելու։ Խմ այս հինգ գորովագին սիրելեացօ
քով վերադառնալէս ետեւ, մահկանացուաց
ամենէն նախանձելին էի եւ եմ։ Ա՛հ, թէ անց-
եալ տարաբաղդութեանց, թէ ներկայ եր-
ջանկութեանս եւ թէ այսուհետեւ ինձի գա-
լիք ամենն բարեաց եւ չարեաց համար օրհնեալ
ըլլայ Նախախնամութիւնը։ Մարդիկ եւ իրե-
րը՝ ուղեն չուղեն՝ անոր ձեռքին մէջ սքանչե-
լի գործիքներ են, զորս իրեն արժանի վախ-
ճաններու համար գիտէ գործածել։



ԱՅՆ	Տ-Հ	ՎԵՐԴ-Ի	Ո-Մ-Ն
40	1	վերցըներ	վերցընէր
58	5	ի՞չպիսի	ի՞նչպիսի
44	25	առաքինութենէն	առաքինութենէ
70	6	ձլ	ժլ
89	26	Ս·ԳԻՐՔԻ	Ս·ԳԻՐՔԻ
94	4	ծնկայ	ծնկան
105	5	կը ծածկէի	կը ծածկէի
110	20	կը պատճառեր	կը պատճառէր
114	24	կարմրեցաւ	կարմրեցաւ
182	5	դահճին	դահճի
191	1	Զեմ գիտեր	Զեմ գիտեր
192	11	տեսնելու	տեսնելու
192	42	ըլլալուս	ըլլալու
228	4	այս	այն
255	4	գանէինք	դտնէինք
256	5	կը հաստատեր	կը հաստատէր
260	20	տասնապետը	յիսնապետը
276	18	պատոնը	պատուհանը
279	18	Քրուպիցքի	Քռւպիցքի
282	40	Մարօնչէլլի	Մարօնչէլլի
286	45-44	որ որ	որ
294	25-26	եւ եւ	եւ
542	5	օդնութիւններ	նզնութիւններ
528	10	իւրակա	Ուրակա
529	8	վիրաբոյժը	վիրաբոյժը
554	4	Քօնուշիանո	Քօնուշիանո
554	6-7	քաղաքէն	քաղաքէն
556	10	լիշեր	լիշէր

2679

2013

Sp

5709

W.D.

